ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅՇԸ

հանրամատչելի գրքի հեղինակ

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ԲԱՑԱՀԱՅՏԵՔ ԱՍՏԾՈՒՆ ՄՏԵՐՄՈՐԵՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ՝
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՁԵՐ ՍԻՐՏԸ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ԱՍՎԱԾԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼԻՍ Է ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԻՎ ԵՎ ԿՅԱՆՔ

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

The Fear of the Lord by John Bevere
© 2013 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English
Additional resources in Armenian are available for free download at:
www.CloudLibrary.org

You are encouraged to duplicate, virally distribute, use extracts or otherwise share this message
in Armenian with others

To contact the author: JohnBevere@ymail.com

Ջոն Բիվեր «Տիրոջ երկյուղը»
© 2013 Մեսինջեր ինտերնեյշնլ
www.MessengerInternational.org
Գիրքը թարգմանված է անգլերենից

Բոլոր սուրբգրային մեջբերումները արված են Աստվածաշունչ մատյան, արևելահայերեն «Արարատ» թարգմանությունից (1896թ.), եթե չկան այլ նշումներ:

Հավելյալ նյութերը հայերեն լեզվով կարելի է ներբեռնել www.CloudLibrary.org կայքէջից:

Դուք կարող եք ազատորեն կրկնօրինակել այս ուղերձը հայերեն լեզվով, տարածել այն բոլոր հասանելի միջոցներով, օգտագործել քաղվածքներ կամ այլ կերպերով կիսվել այս նյութով մարդկանց հետ:

Հեղինակի հետ կարող եք կապ հաստատել՝ JohnBevere@ymail.com

Այս գիրքը նվիրում եմ կնոջս՝ Լիզային: Աստծուց մեծ շնորհք է, որ այսպիսի կին ունեմ կողքիս: Մի ամբողջ գիրք կպահանջվեր՝ պատմելու համար նրա առաքինությունների և աստվածապաշտ բնավորության մասին, բայց մեկ արտահայտությամբ կասեմ՝ *նա կին է, ով վախենում է Տիրոջից:*

«Նա իր բերանը բացում է իմաստությունով,
Եվ նրա լեզվի վրա շնորհալի օրենք կա:
Նա մտիկ է անում իր տան ընթացքին,
Եվ ծույլ-ծույլ չի ուտում հացը:
Նրա որդիները կանգնում են և նրան երանի տալիս,
Նրա մարդը կանգնում է և գովասանում նրան:
Շատ աղջիկներ են առաքինություն գործել,
Բայց դու նրանց ամենից էլ գերազանց եղար:
Սուտ է վայելչությունը և ունայն՝ գեղեցկությունը.
Այն կինը, ով վախենում է Տիրոջից, նա կգովվի»:

— Առակաց 31.26-30

Ես շնորհակալ եմ Քեզ, Հա՛յր, Քո դուստր Լիզա Բիվերի համար:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Իմ խորին շնորհակալություն եմ հայտնում

Կնոջս՝ Լիզային. Տիրոջից հետո դու իմ ամենամեծ սերն ու գանձն ես: Շնորհակալություն այն ժամերի համար, որ նվիրել ես այս գրքի խմբագրմանը: Ես սիրում եմ քեզ, թանկագի՛նս:

Մեր չորս որդիներին. բոլորդ էլ մեծ ուրախություն եք ինձ համար: Շնորհակալություն, որ աջակցում եք ինձ Աստծո կանչն իմ կյանքում իրականացնելու հարցում և ոգեշնչում ճամփորդելու և գրելու համար:

Ծնողներիս՝ Ջոն և Քեյ Բիվերներին. շնորհակալություն, որ իմ կյանքի սկզբում սովորեցրել եք ինձ Տիրոջ երկյուղի մասին: Դուք ինձ համար օրինակ եք եղել ձեր աստվածապաշտ ապրելակերպով:

Նրանց, ովքեր ժամանակ են հատկացրել և ներդրել իրենց կյանքի մի մասը, որպեսզի ինձ սովորեցնեն և ցույց տան Աստծո արքայության ճանապարհները: Յուրաքանչյուրիդ մեջ ես տեսել եմ Հիսուսի բնավորության տարբեր կողմերը:

«Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության աշխատակազմին. շնորհակալություն ձեր անսասան աջակցության և հավատարմության համար: Լիզան և ես սրտանց սիրում ենք յուրաքանչյուրիդ:

Ամենակարևորը՝ անկեղծ գոհություն եմ հայտնում Իմ Տիրոջը: Խոսքերով անկարելի է նկարագրել այն ամենը, ինչ արել ես ինձ և Քո ժողովրդի համար: Ես սիրում եմ Քեզ ավելի, քան երբևէ կկարողանամ արտահայտել: Ես սիրում եմ Քեզ հավիտյան:

ՅԱՆԿ

Ներածություն.....11

1.Քամի Երկնքից.....17

2.Փոխված փառքը.....29

3.Տիեզերքի քարոզը.....41

4.Կարգ ու կանոն, փառք, դատաստան. Մաս 1.....55

5.Կարգ ու կանոն, փառք, դատաստան. Մաս 2.....71

6.Նոր սրբարան.....81

7.Անհարգալից զոհաբերություն.....93

8.Հեպաշգված դատաստան.....109

9.Գալիք փառքը 127

10.Նրա փառքի վերականգնումը.....147

11.Տեսնելու կարողությունը 167

12.Փառքից՝ փառք.....187

13.Ընկերություն Աստծո հետ.....209

14.Սուրբ երկյուղի օրհնությունները.....229

Վերջաբան.....237

Սուրբ երկյուղն Աստծո վրա հաստատ հիմնվելու բանալին է. այն բացում է փրկության, իմաստության և գիտության գանձարանները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամռանը՝ 1994թ.-ին, հրավիրված էի ծառայելու Միացյալ Նահանգների հարավային մասում գտնվող մի եկեղեցում: Այդ հրավերքը դարձավ ամենատհաճ ծառայողական փորձառություններից մեկը, որ երբևէ պատահել է իմ կյանքում: Սակայն դրա պատճառով իմ սրտում կրակոտ մի ձգտում առաջացավ՝ ճանաչել և հասկանալ Տիրոջ երկյուղը:

Այդ եկեղեցին երկու տարի առաջ Աստծո զորավոր շարժ էր վերապրել: Մի ավետարանիչ չորս շաբաթով հյուրընկալվել էր այդ եկեղեցի, և Տերն Իր ներկայությամբ արթնություն էր բերել եկեղեցում: Նրանք առատությամբ վերապրում էին այն, ինչ շատերն անվանում են «սուրբ ծիծաղ»: Այդ վերապրումն այնքան էր ազդել նրանց վրա, որ եկեղեցու հովիվը և անդամների մեծամասնությունը վարվեցին այնպես, ինչպես շատ հաճախ է տեղի ունենում. նրանք շարունակեցին մնալ այդ նույն վիճակում, փոխարենը՝ շարունակեին փնտրել Աստծո երեսը: Շուտով նրանք սկսեցին ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել թարմության դրսևորումների հանդեպ, քան այն Տիրոջ, Ով տալիս է այդ թարմությունը:

Իմ ծառայության երկրորդ երեկոյի ընթացքում Աստծո Հոգին առաջնորդեց ինձ՝ քարոզել Տիրոջ երկյուղի մասին: Այդ ժամանակ իմ պատկերացումը Տիրոջ երկյուղի մասին դեռևս ձևավորվում էր, բայց և այնպես Աստված առաջնորդեց ինձ՝ քարոզել դրա մասին:

Հաջորդ երեկո եկա ծառայության՝ լիովին անտեղյակ լինելով, թե ինչ պետք է տեղի ունենար: Առանց նախապես խորհրդակցելու, հովիվը փառաբանությունից և երկրպագությունից հետո բեմ բարձրացավ և բավականին ժամանակ ուղղում էր այն, ինչ ես քարոզել էի

անցած երեկո: Ես նստած էի առջևի շարքում և գրեթե ցնցված էի: Նրա ուղղումները հիմնված էին այն գաղափարի վրա, որ Նոր կտակարանի հավատացյալները կարիք չունեն վախենալ Աստծուց: Նա հիմնավորեց իր կարծիքն Ա Հովհաննես 4.18-ով. «Վախ չկա սիրո մեջ, այլ կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախը տանջանք ունի, բայց նա, ով վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ»: Նա շփոթել էր *վախի ոգին Տիրոջ երկյուղի հետ:*

Հաջորդ առավոտյան իմ հյուրանոցից հեռու մի տեղ գտա և երկար ժամանակ անցկացրի աղոթքի մեջ: Ես բացեցի սիրտս Տիրոջ առջև՝ պատրաստ՝ ընդունելու ցանկացած ուղղում, որ Նա կցանկանար կատարել ինձանում: Ես համոզվել եմ, որ Աստծո ուղղումը միշտ իմ օգտին է: Նա ուղղում է մեզ, որպեսզի մենք կարողանանք ընդունել Նրա սրբությունը (տե՛ս Եբր. 12.7-11): Աղոթելիս անմիջապես զգացի Աստծո անսահման սերը: Ես չէի զգում, որ Նա հիասթափված էր իմ քարոզի պատճառով, փոխարենը զգացի Նրա բարեհաճությունը: Լինելով Նրա հրաշալի ներկայության մեջ՝ արցունքները գլորվում էին աչքերիցս:

Ես շարունակեցի աղոթել և որոշ ժամանակ անց հանկարծ հայտնաբերեցի, որ աղաղակում եմ հոգուս խորքից Տիրոջը ճանաչելու և Նրա երկյուղի համար: Ես բարձրաձայն սկսեցի գոչել. «Հա՛յր, ես ցանկանում եմ ճանաչել Քեզ և քայլել Քո երկյուղի մեջ»:

Երբ ավարտեցի աղոթքս, այնքան հանգիստ էի, որ հոգս չէր, թե հետո ինչ է լինելու: Ես միայն ցանկանում էի ճանաչել Նրա սիրտը: Ես զգացի, որ Նրա սուրբ էությունը ճանաչելու իմ փափագը գերագույն հաճույք էր պատճառում Նրան: Այդ օրվանից ի վեր Աստված հավատարիմ կերպով հայտնում է ինձ Տիրոջ երկյուղի կարևորությունը: Նրա ցանկությունն է, որ բոլոր հավատացյալներն իմանան Տիրոջ երկյուղի կարևորությունը:

Թեև ես միշտ գիտեի Տիրոջ երկյուղի կարևորությունը, սակայն լիարժեք չէի գիտակցում դա, մինչև որ Աստված չբացեց իմ աչքերն այդ աղոթքի ժամանակ: Ես միշտ կարծում էի, որ Աստծո *սերն է* Աստծո հետ փոխհարաբերությունների հիմքը: Ես նաև հայտնաբերեցի, որ Տիրոջ երկյուղը նույնպես հիմքային է: Եսային ասում է.

> «Տերը մեծարված է, որովհետև Նա բնակվում է բարձրում. Նա կլցնի Սիոնն իրավունքով և արդարությամբ: Նա հաստատ հիմք կլինի քո ժամանակների համար, փրկության և իմաստության և գիտության առատ պաշար. Տիրոջ երկյուղն այս գանձի բանալին է»:
>
> — ԵՍԱՅԻ 33.5,6, NIV

Սուրբ երկյուղն Աստծո վրա հաստատ հիմնվելու բանալին է: Այն բացում է փրկության, իմաստության և գիտության գանձարանները: Աստծո սերն ու երկյուղը կազմում են մեր կյանքի հիմքը: Շուտով մենք կպարզենք, որ չենք կարող ճշմարտապես սիրել Աստծուն, քանի դեռ չունենք Նրա երկյուղը, և ո՛չ էլ կարող ենք ճշմարիտ կերպով երկյուղ տածել Նրա հանդեպ, քանի դեռ չենք սիրում Նրան:

Այս գիրքը գրելու ընթացքում մեր ընտանիքը նոր առանձնատուն էր կառուցում: Ես հաճախ էի այցելում շինարարության վայրը, և Աստված օգտագործեց այդ ընթացքը, որպեսզի սովորեցներ ինձ շինարարության հիմնական սկզբունքների մասին: Իսկական շինարարությունը սկսվում է հիմքը դնելուց և տան հիմնակմախքի կառուցումից: Այն որոշում է, թե ինչպիսին կլինեն բոլոր վերջնական տարրերը՝ պատուհանները, սենյակների չափը և այլն: Երբ տունն արդեն պատրաստ է, տան հիմքը և կմախքը այլևս չեն երևում, թեև նրանք են պահում և պաշտպանում ներսի ողջ գեղեցիկ կահավորանքը և հարդարանքը: Առանց հիմքի ու կմախքի տունն ընդամենը շինանյութի կույտ կլիներ:

Այս գիրքը կառուցված է նույն սկզբունքով: Դուք կտեսնեք Աստծո երկյուղի և Նրա դատաստանի միջև տարբերությունը, իսկ հետո կխոսենք Աստծուն մտերմորեն ճանաչելու մասին: Մենք կնկարագրենք, թե ինչպես է Աստծո երկյուղը պաշտպանում մեզ դատաստանից, և գիրքը կեզրափակենք նրանով, թե ինչպես է այն օգնում մեզ կառուցել մտերիմ փոխհարաբերություն Աստծո հետ: Յուրաքանչյուր գլուխ ճշմարիտ տեղեկություններ է փոխանցում և կերպարանափոխում մեզ: Առաջին գլուխները կմախքի դեր կկատարեն գրքի մնացած մասերի համար: Դրանք զորություն կտան մեր հոգիներին՝ յուրացնելու համար այն, ինչ Աստված կհայտնի մեզ:

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

Կարդացե՛ք այս գիրքն այնպես, ասես այն կառուցվող առանձնատուն լինի: Մի՛ ցատկեք հենքի ձևավորումից դեպի գորգեր փռելը: Եթե դուք դեռ տանիք չունեք, ապա պետք է հավաքել գորգը մինչև շինարարության ավարտը: Շինարարությունը հաջորդական ընթացք է:

Ժամանա՛կ հատկացրեք, որպեսզի աղոթքով կարդաք և հասկանաք յուրաքանչյուր գլուխը՝ մինչև հաջորդին անցնելը: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն հայտնել ձեզ Աստծո Խոսքն այս գրքի միջոցով, «…որովհետև գիրը սպանում է, այլ հոգին կենդանացնում է» (Բ Կորնթ. 3.6):

Տիրոջ երկյուղը չի ընկալվում մտքով. այն փորագրվում է սրտի վրա: Սուրբ Հոգին հայտնություն է տալիս, երբ մենք կարդում ենք Նրա Խոսքը: Սա Աստծո Հոգու դրսևորումներից մեկն է (տե՛ս Եսայի 11.1,2): Աստված կշնորհի Իր երկյուղը նրանց, ովքեր փնտրում են Իրեն (տե՛ս Երեմիա 29.11-14, 32.40):

Եկե՛ք աղոթենք մինչև սկսելը.

«Հա՛յր, Հիսուսի անունով ես բացել եմ այս գիրքը, որովհետև փափագում եմ ճանաչել և հասկանալ Տիրոջ սուրբ երկյուղը: Ես գիտակցում եմ, որ դա անհնար է առանց Սուրբ Հոգու օգնության: Խնդրում եմ, որպեսզի Դու օծես ինձ Քո Հոգով: Բացի՛ր իմ աչքերը՝ տեսնելու համար, իմ ականջները՝ լսելու համար, և իմ սիրտը, որպեսզի իմանամ և հասկանամ այն, ինչ Դու ասում ես ինձ:

Թող որ կարդալու ընթացքում ես լսեմ Քո ձայնն այս գրքի բառերի միջից: Կերպարանափոխի՛ր ինձ, բարձրացրո՛ւ ինձ փառքի մի մակարդակից մյուսը, իսկ հետո կրկի՛ն բարձրացրու, որպեսզի, ի վերջո, երես առ երես տեսնեմ Քեզ: Թող որ իմ կյանքը փոխվի, որպեսզի ես այլևս նույնը չլինեմ:

Ես տալիս եմ Քեզ ողջ փառքը, գոհությունը և պատիվը այժմ և հավիտյան, ամե՛ն»:

Ջոն Բիվեր

Մի՞թե դուք կարծում եք, որ թագավորների Թագավորը և տերերի Տերը կգա այնպիսի մի տեղ, որտեղ Նրան չեն տալիս Իրեն արժանի պատիվը և երկյուղածությունը:

ԱՌԱՋԻՆ

ՔԱՄԻ ԵՐԿՆՔԻՑ

«...Ինչ մուրեցողներով պիտի սրբվեմ և
ամբողջ ժողովրդի առջև պիտի փառավորվեմ...»:
— ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 10.3

Ընդամենը տասը օր էր անցել 1997թ.-ից: Այդ կարճ ժամանակվա ընթացքում ես արդեն ծառայություններ էի անցկացրել Եվրոպայում և Ասիայում: Ես ոգևորված էի, քանի որ կրկին ինքնաթիռում էի, և այս անգամ ուղևորվում էի դեպի Հարավային Ամերիկա: Երբեք չէի եղել Բրազիլիայում և պատիվ ունեցա հրավեր ստանալ ազգային կոնֆերանսին քարոզելու համար, որը տեղի էր ունենալու երկրի երեք գլխավոր քաղաքներում: Ողջ գիշեր ինքնաթիռով թռչելուց հետո օդանավակայանում ինձ ողջունեցին մեծ ծարավ և ակնկալիքներ ունեցող ծառայողներ: Նրանք սպասում էին այդ ծառայություններին, և նրանց խանդավառությունը թարմություն հաղորդեց ինձ:

Առաջին ծառայությունը, որը տեղի ունեցավ հենց նույն օրը՝ երեկոյան, Բրազիլիայում էր: Ընդամենը մի քանի ժամ հանգստից հետո ինձ և իմ թարգմանչին հյուրանոցից մեքենայով տարան հավաքույթի վայրը: Ավտոկանգառը լեփ-լեցուն էր ավտոմեքենաներով, և պարզ էր, որ հավաքույթը մարդաշատ է լինելու: Մոտենալով հավաքույթի շենքին, կարելի էր լսել երաժշտության ձայնը շենքի պատերի և տա-

նիքի միջև գտնվող մեկուկես մետրանոց բացվածքից: Իմ խանդավառությունն ու սպասումը նույնպես ավելացան, երբ լսեցի հայտնի փառաբանության խմբերգերը պորտուգալերենով, որը Բրազիլիայի հիմնական լեզուն է:

Ներս մտնելուն պես ինձ անմիջապես ուղեկցեցին բեմ: Մոտավորապես չորս հազար տեղ ունեցող դահլիճը լեփ-լեցուն էր: Բեմը ցնցվում էր ուժգին փառաբանությունից: Երաժշտությունը բարձրորակ էր: Երգեցողությունը նույնպես առաջնակարգ էր. փառաբանության ավագներն օժտված էին շատ լավ ձայներով: Սակայն ես անմիջապես նկատեցի, որ Տիրոջ ներկայությունը լիովին բացակայում է: Ջննելով մարդկանց և երաժիշտներին՝ ես մտածեցի. *«Որտե՞ղ է Աստված»:* Այնպես որ, անմիջապես հարցրի. *«Տե՛ր, որտե՞ղ է Քո ներկայությունը»*:

Քանի դեռ սպասում էի Նրա պատասխանին, նկատեցի, թե ինչ էր կատարվում շենքում: Բեմի վառ լույսերի շնորհիվ կարողացա տեսնել, թե ինչպես էին մարդիկ անկանոն կերպով տեղաշարժվում դահլիճով մեկ: Շատերը կանգնած նայում էին այս ու այն կողմ, շատերն էլ ձանձրացած տեսք ունեին: Նրանց ձեռքերը գրպաններում էին կամ ուղղակի իջեցրած: Նրանց կեցվածքը և դեմքերը թողնում էին անկանոն ամբոխի տպավորություն, որը սպասում էր ներկայացման սկզբին: Ոմանք զրուցում էին, իսկ մյուսները թափառում էին շարքերով՝ ներս ու դուրս անելով դահլիճից:

Ես տխրեցի. սա ավետարանչական ծառայություն չէր, այլ հավատացյալների կոնֆերանս: Ես գիտեի, որ դահլիճում գտնվողներից ոմանք հավատացյալներ չէին, սակայն գիտեի նաև, որ այդ անտարբեր ամբոխի մեծամասնությունը «քրիստոնյաներ» էին:

Սպասեցի՝ հուսալով, որ մարդիկ ճշմարիտ երկյուղածություն կցուցաբերեն Տիրոջ հանդեպ և մտածեցի, որ *մթնոլորտն անկասկած կփոխվի:* Բայց այն չփոխվեց: Քսանից երեսուն րոպե անց երաժշտության տեմպը դանդաղեց՝ վերածվելով այսպես կոչված՝ երկրպագության երգերի: Սակայն այն, ինչի ականատեսը եղա, հեռու էր իրական երկրպագությունից: Նույն անփույթ վարքը, որը ես տեսա դահլիճ մտնելիս, շարունակվում էր ծառայությանը համընթաց:

Փառաբանության ծառայությունը տևեց ընդամենը քառասուն րո-

պե, բայց թվում էր, թե այն ժամից ավել է տևել: Ներկաներին խնդրեցին նստել: Նրանք նստեցին, բայց անկանոն խոսակցությունների անդադար բզզոցը շարունակվում էր: Առաջնորդներից մեկը վերցրեց բարձրախոսը մարդկանց հորդորելու համար, սակայն նրանք շարունակում էին խոսել: Նա Աստվածաշնչից հատված կարդաց և սկսեց սովորեցնել: Ուսմունքի ողջ ընթացքում ես լսում էի նույն խուլ բզզոցը, որն առաջանում էր մարդկանց խոսակցություններից և տեղափոխություններից: Շատերն ուշադրություն չէին դարձնում քարոզչի վրա: Հուսահատությամբ լցված՝ հարցրի իմ բրազիլացի թարգմանչին, թե արդյո՞ք այսպիսի վարքը սովորական է նրանց ծառայությունների ժամանակ:

Նրա համար նույնպես տհաճ էր այդ իրավիճակը: Նա շշնջաց.

– Երբեմն ես հարկադրված եմ նկատողություն անել և խնդրել, որպեսզի մարդիկ ուշադիր լինեն:

Լսելով սա՝ ես վրդովվեցի: Ես եղել էի այլ ծառայությունների, որտեղ մարդիկ նման կերպ էին վարվել, բայց ոչ այս աստիճան: Յուրաքանչյուր նմանատիպ ծառայությանը, որտեղ եղել եմ, տիրում է նույն հոգևոր մթնոլորտը. այն ծանր է և զուրկ Աստծո ներկայությունից: Ես գիտեի, որ իմ հարցն այն մասին, թե որտեղ է Տիրոջ ներկայությունը, գտավ իր պատասխանը: Նրա ներկայությունն, անկասկած, այդտեղ չէր:

Այդ ժամանակ Աստծո Հոգին խոսեց ինձ հետ և ասաց. «Ես ցանկանում եմ, որպեսզի դու անմիջապես հակառակվես այս վիճակին»:

Երբ ինձ վերջապես ներկայացրին, շշուկները նվազեցին, բայց աղմուկը լիովին չդադարեց: Ես բեմ բարձրացա և նայեցի մարդկանց: Որոշել էի ոչինչ չասել, քանի դեռ նրանք չէին կենտրոնացել: Ես զգում էի, թե ինչպես էր աստվածային ցասումը բորբոքվում իմ սրտում: Մեկ րոպե անց բոլորը լռեցին՝ զգալով, որ բեմի վրա ոչինչ տեղի չի ունենում:

Ես չներկայացա և չողջունեցի մարդկանց: Փոխարենը հարցրի նրանց.

– Ձեզ դուր կգա՞ր, եթե դուք խոսեիք ինչ-որ մեկի հետ և նա անտեսեր ձեզ կամ զրուցեր կողքինի հետ: Իսկ եթե նա խուսափե՞ր ձեր հա-

յացքից՝ անհետաքրքրություն և անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով ձեր հանդեպ:

Մի պահ ես լռեցի, իսկ հետո շարունակեցի.

– Ձեզ դուր չէր գա, այդպես չէ՞: Իսկ ի՞նչ կլիներ, եթե ամեն անգամ, երբ դուք սեղմեիք ձեր հարևանի դռան զանգը՝ նրան այցելելու համար, ձեզ ողջունեին անփույթ վերաբերմունքով և միապաղաղ հոգոցով. «Հը՜մ, կրկին դո՞ւ ես… դե՛ լավ, նե՛րս արի»:

Ես կանգ առա, հետո ավելացրի.

– Դուք այլևս չէիք այցելի նրան, ճի՞շտ է:

Հետո ասացի.

– Մի՞թե կարծում եք, որ թագավորների Թագավորը և տերերի Տերը կգա այնպիսի մի վայր, որտեղ չկա Նրա հանդեպ երկյուղածություն և որտեղ Նրան արժանավայել չեն պատվում: Մի՞թե կարծում եք, թե ողջ արարչագործության Տիրակալը կխոսի, երբ Նրա Խոսքը չեն հարգում այնքան, որ ուշադրության արժանացնեն: Դուք խաբված եք, եթե այդպես եք կարծում:

Ես շարունակեցի.

– Երբ մտա դահլիճ, ես ընդհանրապես չզգացի Աստծո ներկայությունը: Ո՛չ փառաբանության, ո՛չ երկրպագության և ո՛չ էլ զոհաբերության ընթացքում: Պատճառը հետևյալն է. Տերը երբեք չի գալիս այնտեղ, որտեղ Նրան երկյուղածությամբ չեն սպասում: Ձեր երկրի նախագահը մեծ պատվի կարժանանար, եթե այս երեկո կանգնած լիներ այս բեմի վրա՝ պարզապես այն հարգանքի պատճառով, որը դուք տածում եք նրա պաշտոնի հանդեպ: Եթե ես կանգնեի այստեղ ձեր սիրելի ֆուտբոլային խաղացողներից մեկի հետ, ձեզնից շատերը կկանգնեին իրենց նստարանների վրա: Դուք անհամբերությամբ կսպասեիք, որպեսզի լսեիք նրա յուրաքանչյուր խոսքը: Սակայն, երբ մի քանի րոպե առաջ կարդում էին Աստծո Խոսքը, դուք հազիվ էիք լսում, քանի որ թերագնահատում էիք այն:

Ես սկսեցի կարդալ այն մասին, թե ինչ է Աստված պահանջում Իրեն մոտեցողներից.

«…Ինձ մոտեցողներով պիտի սրբվեմ և ամբողջ ժողովրդի առջև պիտի փառավորվեմ…»:

— ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 10.3

Հաջորդ մեկուկես ժամվա ընթացքում քարոզեցի այն ուղերձը, որն Աստված բորբոքել էր իմ սրտում: Խոսքերը դուրս էին գալիս համարձակությամբ և իշխանությամբ, և իմ հոգը չէր, թե այդ մարդիկ ինչ կմտածեին կամ ինչպես կարձագանքեին իմ ուղերձին:

Ես մտածում էի. *«Հոգ չէ, եթե առավոտյան նրանք վռնդեն ինձ այս երկրից: Ավելի լավ է՝ ես հնազանդվեմ Աստծուն»:* Ես շատ լուրջ էի տրամադրված:

Իմ խոսելու ընթացքում դահլիճում այնպիսի լռություն էր տիրում, որ կարելի էր լսել ընկնող ասեղի ձայնը: Քարոզի մեկուկես ժամվա ընթացքում այլևս աղմուկ չկար: Այլևս չկար ոչ մի անարգանք: Աստծո Հոգին բևեռել էր մարդկանց ուշադրությունն Իր Խոսքով: Մթնոլորտը փոխվում էր րոպե առ րոպե: Ես կարող էի զգալ, թե ինչպես էր Աստծո Խոսքը կտոր-կտոր անում նրանց կարծրացած սրտերը:

Ուղերձի վերջում ապաշխարության կոչ արեցի և խնդրեցի, որ բոլորը փակեն իրենց աչքերը: Ապաշխարության կոչը կարճ էր և հստակ. «Եթե դուք անարգել եք այն, ինչ Աստված սուրբ է անվանում, եթե դուք անհարգալից վերաբերմունք եք տածել Աստծուն վերաբերող գործերին և եթե այս երեկո դուք հանդիմանվել եք Սուրբ Հոգուց, պատրա՞ստ եք արդյոք ապաշխարել Տիրոջ առջև: Ոտքի՛ կանգնեք, եթե պատրաստ եք»:

Առանց վարանելու ներկաների յոթանասունհինգ տոկոսը ոտքի կանգնեց:

Ես խոնարհեցրի գլուխս և բարձրաձայն աղոթեցի այս պարզ և անկեղծ աղոթքը. «Տե՛ր, հաստատի՛ր Քո Խոսքը, որն այսօր քարոզվեց այս մարդկանց»:

Անմիջապես Տիրոջ ներկայությունը լցրեց դահլիճը: Թեև ես չէի առաջնորդել նրանց աղոթքի մեջ, ես հեծկլտոցի և լացի ձայներ լսեցի: Աստծո ներկայության մի ալիք անցավ դահլիճով մեկ՝ բերելով մաքրություն և թարմություն: Բոլորը չէին կարող առաջ գալ աղոթքի

համար, այնպես որ նրանք ապաշխարության աղոթքն արեցին կանգնած տեղերում: Մարդիկ սրբում էին իրենց արցունքները: Նրա հրաշալի ներկայությունը շարունակում էր մնալ դահլիճում:

Մի քանի րոպե անց Աստծո ներկայությունը նվազեց: Ես խրախուսեցի մարդկանց, որպեսզի նրանք կենտրոնացած մնան Տիրոջ վրա: «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ…» (Հակոբ. 4.8):

Մի քանի վայրկյան անց Աստծո ներկայության մեկ այլ ալիք հեղեղեց դահլիճը: Հուզմունքն ավելի ուժգնացավ: Այս անգամ Նրա ներկայությունն ավելի զգալի էր և ավելի շատ մարդ զգաց Տիրոջ հպումը: Սա տևեց մի քանի րոպե, իսկ հետո կրկին մարեց: Ես հորդորեցի մարդկանց՝ հաստատուն մնալ և շարունակել սպասել Տիրոջը:

Մի քանի րոպե անց լսեցի, թե ինչպես Աստծո Հոգին շշնջաց իմ սրտին. «Ես կրկին գալիս եմ»: Ես ասացի.

– Նա կրկին գալիս է:

Ես չեմ կարող ճշգրտորեն նկարագրել այն, ինչ դրանից հետո կատարվեց: Իմ խոսքերն անչափ սահմանափակ են, իսկ Աստված՝ անչափ հրաշալի: Ես չեմ չափազանցնի, քանի որ դա նույնպես անհարգալից կլինի: Ես զրուցել եմ երեք առաջնորդների հետ, ովքեր ներկա էին այդ հավաքույթին՝ պարզելու և հաստատելու այն, ինչ հիմա գրում եմ:

Այն պահին, երբ *«կրկին»* բառը դուրս եկավ իմ բերանից, կատարվեց հետևյալը. ասես մի մեծ ռեակտիվ ինքնաթիռ օդ բարձրանար անմիջապես իմ առջևից: Ահա թե ինչի հետ է կարելի համեմատել քամու ուժգին ձայնը, որն անցավ ողջ դահլիճով: Գրեթե միաժամանակ մարդիկ սկսեցին ջերմեռանդ և ուժգին աղոթել, և նրանց ձայները բարձրացան մեկ գոչյունի պես:

Լսելով սլացող քամու ձայնը՝ ինձ թվաց, թե շենքի տանիքին շատ մոտ ինքնաթիռ սլացավ: Ես նախապես չէի ցանկանում որևէ բան վերագրել Աստծուն՝ առանց հաստատ համոզված լինելու: Ուստի սկսեցի մտովի վերհիշել, թե որքան հեռու էր այդ վայրն օդանավակայանից: Մոտակայքում ոչ մի օդանավակայան չկար, և անցած երկու ժամվա ընթացքում շենքի վերևում ոչ մի ինքնաթիռի ձայն չէր լսվել:

Եթե այդ սուլոցը ինքնաթիռի ձայն լիներ, ապա նման ձայն արձակելու համար այն պետք է թռչեր ամենաշատը հարյուր մետր բարձրության վրա: Եվ նույնիսկ այդ դեպքում ես չէի կարողանա նման ուժգին ձայն և աղմուկ լսել ավելի քան երեք հազար մարդկանց բարձրաձայն աղոթքի պատճառով:

Այն ձայնը, որ լսեցի, շատ ավելի բարձր էր և ակնհայտորեն գերազանցում էր մնացած բոլոր ձայները: Այսպիսով, համոզվելով, որ այդ քամին Սուրբ Հոգու քամին է՝ ես, միևնույն է, ոչինչ չասացի: Չէի ցանկանում ոչ ճշգրիտ տեղեկություններ հաղորդել մարդկանց կամ խաբել նրանց հոգևոր դրսևորումների մասին չափից ավելի եռանդուն հայտարարություններով: Այդ քամու ուժգին ձայնը տևեց մոտավորապես երկու րոպե: Երբ այն դադարեց, մարդիկ աղոթում և լաց էին լինում: Ողջ մթնոլորտը լիցքավորված էր սուրբ երկյուղածությամբ: Տիրոջ ներկայությունը շատ զորավոր էր և իրական:

Նրա ներկայության ազդեցությունը տևեց տասնհինգից քսան րոպե: Դրանից հետո բեմ հրավիրեցի կոնֆերանսի առաջնորդին և հետո խնդրեցի, որ ինձ անմիջապես հյուրանոց տանեն: Սովորաբար, ծառայությունից հետո, ես մնում եմ դահլիճում և զրուցում մարդկանց հետ, բայց այժմ ցանկացած պատահական զրույց անտեղի էր թվում: Առաջնորդները խնդրեցին ընթրել իրենց հետ, բայց ես հրաժարվեցի: Դեռևս դողալով Նրա ներկայությունից՝ ես պատասխանեցի. «Ո՛չ, ես պարզապես ցանկանում եմ վերադառնալ իմ հյուրանոց»:

Ինձ ուղեկցեցին մեքենայի մոտ: Ես վերադարձա հյուրանոց իմ թարգմանչի և մի ամուսնական զույգի հետ, ովքեր ծառայողներ էին: Կինը հանրահայտ երգչուհի էր Բրազիլիայում:

Նա լաց լինելով նստեց մեքենան և հարցրեց.

– Դուք լսեցի՞ք քամու ձայնը:

Ես արագ պատասխանեցի.

– Դա ինքնաթիռի ձայն էր (թեև սրտումս զգում էի, որ դա այդպես չէր, այնուամենայնիվ ցանկանում էի հաստատություն ստանալ և որոշել էի առաջինը չակնարկել այդ մասին):

– Ո՛չ,– ասաց նա և տարուբերեց գլուխը:– Դա Տիրոջ Հոգին էր:

Այդ ժամանակ նրա ամուսինը, ով, ըստ իս, լուռ և ինքնամփոփ մարդ էր, վճռականորեն հաստատեց.

– Շենքին մոտ ոչ մի ինքնաթիռ չկար:

– Իսկապե՞ս,– բացականչեցի ես:

Նա շարունակեց.

– Ավելին՝ մեր ձայնային էկրանը չգրանցեց այդ քամու ձայնը. էկրանի վրա չկային տատանումներ կամ նշումներ որևէ աղմուկի մասին:

Ես լուռ նստած էի՝ համակված խորին երկյուղածությամբ:

Ավելի ուշ իմացա, թե ինչու էր նա այդքան համոզված, որ այդ քամու ձայնը ինքնաթիռից չէր առաջացել: Շենքից դուրս կային անվտանգության և ոստիկանության աշխատակիցներ: Նրանք նույնպես լսել էին ուժգին ձայն, որը գալիս էր շենքի ներսից: Դրսում քամի չկար, պարզապես հանդարտ, բրազիլական երեկո էր:

Այդ կնոջ աչքերից շարունակ արցունքներ էին հոսում: Նա շարունակեց.

– Ես դահլիճում տեսա կրակի ալիքներ և հրեշտակներ, որոնք ամենուր էին:

Գրեթե չէի հավատում ականջներիս: Ես լսել էի նույն նկարագրությունը մի ծառայողից, երկու ամիս առաջ, Հյուսիսային Կարոլինայում անցկացվող հավաքույթների ժամանակ: Ես քարոզում էի Տիրոջ երկյուղի մասին, և Աստծո ներկայությունը զորավոր կերպով իջավ ողջ հավաքույթի վրա. ավելի քան հարյուր փոքրիկ երեխա մեկ ժամ շարունակ ուժեղ լաց էր լինում: Մի կին ծառայող, ով հյուր էր այդ եկեղեցում, պատմել էր հովվին, թե ինչպես էր կրակե գնդեր տեսել, որոնք ընկնում էին շենքի վրա: Այդ տեսիլքը նույնպես հաստատվեց երգչախմբի երեք անդամների կողմից:

Այդ պահին ես պարզապես ցանկանում էի առանձնանալ Տիրոջ հետ: Հայտնվելով իմ հյուրանոցային համարում՝ ես կարող էի միայն երկրպագել և աղոթել:

Ըստ ծրագրի՝ մինչև Ռիո դե Ժանեյրո մեկնելը ես պետք է ևս մեկ ծառայություն անցկացնեի այդտեղ: Այս անգամ, երբ մտա դահլիճ,

մթնոլորտը բոլորովին այլ էր: Զգացվում էր, թե ինչպես է վերականգնվել հարգանքը Տիրոջ հանդեպ: Այս անգամ երաժշտությունը հաճելի էր, օծված, և մթնոլորտը լի էր Աստծո հաճելի ներկայությամբ:

Դավիթն ասում է. «…դեպի Քո սուրբ տաճարը երկրպագություն կանեմ Քո երկյուղով» (Սաղմ. 5.7): Իրական երկրպագությունը խարսխված է Նրա ներկայության հանդեպ հարգանքով, քանի որ Աստված ասում է. «…Իմ սրբարա՛նը հարգեք. Ես եմ Տերը» (Ղևտ. 19.30):

Երկրորդ ծառայության ընթացքում շատերն ազատագրվեցին և բժշկվեցին: Շատերն, ովքեր կապված էին դառնությամբ և վիրավորված էին, ազատագրվեցին: Տիրոջ ներկայությունը դրսևորվում է այնտեղ, որտեղ մարդիկ Նրա հանդեպ երկյուղ ունեն, իսկ որտեղ դրսևորվում է Նրա ներկայությունը, կարիքները բավարարվում են:

Այժմ մենք կարող ենք հասկանալ Դավթի շեշտադրումը.

> «Վախեցե՛ք Տիրոջից, ո՛վ Նրա սուրբեր, որովհետև Նրանից վախեցողների համար պակասություն չկա»:
>
> — ՍԱՂՄՈՍ 34.9

Այսօր ձեր ձեռքում հենց այդ ուղերձն է Տիրոջ երկյուղի մասին: Սուրբ Հոգու օգնությամբ այս գրքի միջոցով դուք կպարզեք ոչ միայն Տիրոջ երկյուղի նշանակությունը, այլ նաև կիմանաք՝ ինչպես քայլել այդ ճշմարտության գանձերի մեջ: Մենք կիմանանք այն դատաստանի մասին, որը գալիս է սուրբ երկյուղի բացակայության դեպքում, ինչպես նաև այն փառավոր արտոնությունների մասին, որոնք կան Աստծուց վախեցողների կյանքում:

Կան մարդիկ, ովքեր հոժարությամբ ընդունում են Հիսուսին՝ որպես Փրկիչ և Բժիշկ, սակայն նրանք իրենց գործողություններով և վերաբերմունքով իջեցնում են Նրա փառքը եղծանված մարդու մակարդակին:

ԵՐԿՐՈՐԴ

ՓՈԽՎԱԾ ՓԱՌՔԸ

«Որովհետև ո՞վ կա Երկնքում, որ հավասար լինի Տիրոջը, և աստվածների որդիների մեջ, որ նման լինի Տիրոջը: Աստված զարհուրելի է սուրբերի ժողովքում և ահավոր՝ ամեն Նրան շրջապատողների մոտ»:

— ՍԱՂՄՈՍ 89.6,7

Մինչև Տիրոջ երկյուղի մասին խոսելը՝ մեր հայացքն ուղղենք Աստծո մեծության և փառքի վրա: Սաղմոսերգուն նախ հռչակում է Աստծո զարմանալի հրաշալիքները և միայն հետո հորդորում երկյուղ ունենալ Նրանից: Եթե նրա խոսքերը վերարտադրենք ժամանակակից լեզվով, ապա դրանք կհնչեն այսպես. «Ո՞վ կարող է համեմատվել Տիրոջ հետ ողջ տիեզերքում…»: Նա ցանկանում է, որպեսզի մենք մտորենք Աստծո անսահման փառքի շուրջ, որովհետև ինչպե՞ս կարող ենք արժանի կերպով հարգել և պատվել Նրան, եթե անտեղյակ մնանք Նրա մեծության մասին, կամ չիմանանք, թե ինչու է Նա արժանի մեր հարգանքին և պատվին:

Հանրահայտ, սակայն չճանաչված

Ավելի լավ հասկանալու համար, պատկերացնենք մի մարդու, ով հանրահայտ է աշխարհի ամենահզոր երկրում: Նա տաղանդավոր է և մեծ գիտելիքների տեր: Այդ երկրում բոլորը լսել են նրա մեծության և հռչակի մասին: Նա գյուտարար է, ով կատարել է մարդկությանը

հայտնի ամենակարկառուն և նշանակալից գիտական ներդրումներն ու հայտնագործությունները: Այդ ամենի հետ մեկտեղ նա ամենահայտնի չեմպիոնն է իր երկրում: Ցանկացած բնագավառում ոչ ոք չի կարող մրցել նրա հետ: Եվ վերջապես նա այդ երկրի թագավորն է և շատ իմաստուն կառավարիչ: Իր երկրի ներսում ցանկացած առիթներով նա մեծ հարգանքի է արժանանում և նրա պատվին մեծ շքերթներ են անցկացվում և փառահեղ ընդունելություններ կատարվում:

Իսկ հիմա պատկերացնենք, թե ի՞նչ կկատարվեր, եթե այս թագավորը ճանապարհորդեր մի երկիր, որտեղ մարդիկ տեղյակ չեն նրա դիրքի և մեծության մասին: Ինչպիսի՞ ընդունելության նա կարժանանար օտար երկրում, որը ցանկացած առումով զիջում է իր զորեղ պետությանը:

Հասկանալով, որ այդ երկրում ամենաակնառու մարդն էլ կզիջեր նրան իր կարողություններով՝ այնուամենայնիվ, նա որոշում է կայացնում այդ երկիր այցելել որպես հասարակ մարդ՝ առանց իր արքայական պատմուճանի, ազնվականների շքախմբի, անվտանգության ուժերի, խորհրդականների և ծառաների: Նա մեկնում է մենակ: Ինչպե՞ս կվերաբերվեն նրան այդ երկրում:

Պարզ ասած՝ նրան կվերաբերվեն այնպես, ինչպես ցանկացած օտարերկրացու: Թեև այս մարդը շատ ավելի արժանիքներ ունի, քան այդ երկրի ամենապատվելի և ամենազորավոր մարդիկ, միևնույն է նրա հանդեպ քիչ հարգանք կցուցաբերեն կամ ընդհանրապես ուշադրության չեն արժանացնի: Հնարավոր է նրան նույնիսկ արհամարհեն զուտ այն պատճառով, որ նա օտարական է: Միգուցե նրա գիտական հայտնագործությունները շատ են օգնել այդ ազգին, սակայն, միևնույն է, այդտեղ չեն ճանաչում նրան և չեն տալիս այն հարգանքն ու պատիվը, որին նա արժանի է:

Այժմ լսե՛ք, թե ինչ է ասում Հովհաննեսը Հիսուսի մասին, Ով Էմմանուելն է՝ Աստված, Ով հայտնվեց մարմնով.

> «Աշխարհում էր, և աշխարհը Նրանով եղավ և աշխարհը Նրան չճանաչեց: Իրենների մեջ եկավ, և իրենները Նրան չընդունեցին»:
>
> — ՀՈՎՀԱՆՆԵՍԻ 1.10,11

Շատ ցավալի է, որ Նա, Ով ստեղծեց ողջ տիեզերքը և այն աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, չստացավ այնպիսի ընդունելություն և պատիվ, որին արժանի էր: Նույնիսկ ավելի ողբերգական է այն փաստը, որ Նա եկավ իրենների մոտ, ովքեր սպասում էին Նրան և գիտեին Նրա ուխտը, որոնց Նա շատ անգամ ազատել էր Իր զորությամբ, սակայն պատիվ չստացավ նրանցից: Այդ մարդիկ չճանաչեցին Հիսուսին, երբ Նա եկավ, թեև նրանք խոսում էին Նրա գալստյան մասին, մշտապես տաճար գնում՝ սպասելով այդ իրադարձությանը, աղոթում և սպասում այն օրհնություններին, որոնք գալու էին Նրա իշխանության ժամանակ:

Նրա յուրայինները չճանաչեցին այդ զարմանահրաշ Անձնավորությանը, թեև դավանում էին, որ հավատարիմ ծառայում են Նրան: Իսրայելցիներն անտեղյակ էին ոչ միայն Աստծո անսահման զորությանը, այլև Նրա անսահման իմաստությանը: Այդ պատճառով զարմանալի չէ, որ նրանք չկարողացան Հիսուսի հետ վարվել այնպիսի պատվով և հարգանքով, որին Նա արժանի էր: Աստված բացատրում է սա.

> «…Որովհետև այս ժողովուրդն իր բերանով է մոտենում և իր շրթունքներով է Ինձ պատվում, իսկ նրանց սիրտը հեռու է Ինձնից, և նրանց՝ Ինձ պատվելը (անգլ.՝ նրանց երկյուղը) մարդկանց սովորեցրած պատվեր է»:
>
> — ԵՍԱՅԻ 29.13

Նա ասաց. «Նրանք սովորել են վախենալ Ինձնից՝ ըստ մարդկային պատվիրանների»: Նա նկատի ունի, որ մարդիկ նսեմացրել են Տիրոջ փառքը եղծանված մարդու փառքի մակարդակին: Նրանք ծառայում էին այնպիսի Աստծո, Ում պատկերն իրենք էին հորինել: Նրանք չէին ծառայում իրական պատկերով Աստծուն, այլ ծառայում էին իրենց սեփական չափանիշներով պատկերացրած աստծուն:

Անեղծ Աստծո փոխված փառքը

Այս վերաբերմունքը հատուկ չէր միայն Հիսուսի ժամանակվա սերնդին, թեև Նրա երկրային կյանքի ընթացքում այն հասել էր ամենացածր մակարդակի: Նույն այս շեղումը կրկնվում էր այն սերնդի մեջ, ում վստահված էր Աստծո Խոսքը և ովքեր, ենթադրաբար, նվիրված էին Նրան:

Մենք նաև տեսնում ենք, թե ինչպես այս անհարգալից վերաբերմունքը դրսևորվեց Ադամի անօրինության միջոցով: Նա ականջ դրեց օձի իմաստությանը. «Աստված գիտի, թե այն օրը, որ նրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն և Աստծո պես կլինեք՝ բարին և չարը գիտացող» (Ծնն. 3.5):

«…Ո՛վ Աստված, ո՞վ է Քեզ նման»,– հարցնում է սաղմոսերգուն (Սաղմ. 71.19): Այնպես որ, Ադամը զուր էր մտածում, թե երբևէ կարող էր լինել Աստծո նման՝ առանց Աստծո: Իր մտքի ունայնությամբ Ադամն իջեցրեց Աստծուն հասարակ մարդու մակարդակին:

Եթե դուք ուսումնասիրեք այն մոլորությունը, որի մեջ ընկան Իսրայելի զավակներն անապատում, ապա կհայտնաբերեք, որ նրանց ապստամբության պատճառը նույն արմատն ուներ: Նրանց երկյուղն Աստծո հանդեպ ձևավորված էր Աստծո փառքի մասին իրենց սխալ պատկերացմամբ:

Մովսեսը բարձրացավ Սինա սարը Աստծո Խոսքը ստանալու համար: Օրերն անցնում էին, այնպես որ «...ժողովվեց ժողովուրդը...» (Ելից 32.1): Խնդիրները միշտ սկսվում են այն ժամանակ, երբ մարդիկ հավաքվում են իրենց ցանկությամբ և իմաստությամբ՝ առանց Աստծո զորության և ներկայության: Աստծո պատվերի համաձայն՝ սպասելու փոխարեն մարդիկ հավաքվում և փորձում են ինչ-որ բան անել իրենց հաճեցնելու համար: Այն, ինչ միայն Աստված կարող է տալ, մարդիկ փոխարինում են ժամանակավոր կեղծիքով:

Շատ անգամ էին նրանք տեսել, թե ինչպես էր դրսևորվել Աստծո զորությունը, այնուամենայնիվ նրանք ոսկե հորթ ձուլեցին: Այսօր դա

միգուցե ծիծաղելի կթվար, սակայն իսրայելցիների համար այդ քայլն այնքան էլ ծիծաղելի չէր: Ավելի քան չորս հարյուր տարիների ընթացքում իսրայելցիները նման առարկաներ էին տեսել Եգիպտոսում: Ձուլածո հորթը եգիպտական մշակույթի ծանոթ մաս էր, և այդ պատճառով այն սովորական էր իսրայելցիների համար:

Ոսկե հորթը ձուլելուց անմիջապես հետո բերվեց մարդկանց առջև, ովքեր միաձայն ասացին. «…Սրանք են քո աստվածները (անգլ.՝ եզակի թվով), ո՛վ Իսրայել, որ քեզ Եգիպտոսի երկրից հանեցին» (Ելից 32.4): Դրանից հետո նրանց առաջնորդը հայտարարեց. «…Վաղը տոն է Եհովայի համար» (5-րդ խոսք): Որպեսզի մենք հասկանանք, թե ինչ էին նրանք ասում, մենք պետք է նայենք «Եհովա» եբրայերեն բառը, որը գրված է 5-րդ խոսքում: Այս բառը, որը նույնպես հայտնի է որպես «Յահվե», նշանակում է «Գոյություն Ունեցողը», որը ճշմարիտ Աստծո անունն է:

Նրանք օգտագործում էին միակ ճշմարիտ Աստծո անունը: Խոսքն այն Աստծո անվան մասին է, Ում մասին քարոզում էր Մովսեսը, Ում հետ Աբրահամն ուխտի մեջ էր և Ում մենք ծառայում ենք: «Եհովա» անունը չի օգտագործվում Աստվածաշնչի մեջ որևէ կեղծ Աստծո նկարագրելու համար: «Եհովա» կամ «Յահվե» անունն այնքան սուրբ է, որ ավելի ուշ հրեա դպիրներին չէր թույլատրվում ամբողջությամբ գրել այն. նրանք միտումնավոր կերպով բաց էին թողնում ձայնավորները՝ երկյուղածություն տածելով այդ անվան սրբության հանդեպ:

Այնպես որ, ըստ էության, ժողովուրդը, ինչպես և առաջնորդները, մատնացույց արեցին այս ոսկե հորթը և անվանեցին նրան Եհովա՝ միակ ճշմարիտ Աստված, Ով ազատեց իրենց Եգիպտոսից: Նրանք չասացին. «Սա Բահաղն է, նա, որ ազատեց քեզ Եգիպտոսի երկրից», ոչ էլ օգտագործեցին ցանկացած այլ կեղծ աստծո անուն: Նրանք այդ հորթին անվանեցին Տիրոջ անունով՝ այդպիսով իջեցնելով Տիրոջ մեծությունն իրենց համար քաջ ծանոթ հասկացողությունների և մահկանացու պատկերների մակարդակի:

Հետաքրքիր է նշել, որ իսրայելցիները դեռևս գիտակցում էին, որ

Եհովան էր ազատել իրենց գերությունից: Նրանք չժխտեցին, որ Նա էր ազատել իրենց, այլ պարզապես նսեմացրին Նրա մեծությունն այն աստիճան, որը սովորական էր իրենց համար: Հին կտակարանում Եգիպտոսից դուրս գալն աշխարհից դուրս գալու և փրկվելու խորհրդապատկերն է: Այդպես է սովորեցնում Նոր կտակարանը: Այն իրադարձությունները, որոնք տեղի էին ունենում Հին կտակարանում, Նոր կտակարանի գալիք իրադարձությունների խորհրդապատկերներն ու ստվերներն էին:

Ծառայել Աստծուն մեր ստեղծած պատկերներով

Ահա, թե ինչ է գրում մեզ Պողոսը Նոր կտակարանում.

> «Որովհետև Նրա աներևույթ բաներն աշխարհի սկզբից ստեղծվածներով իմացվելով՝ տեսնվում են, որ է՝ Նրա մշտնջենավոր զորությունը և Աստվածությունը, այնպես որ անպատասխան մնան: Որովհետև Աստծուն ճանաչելով՝ Նրան Աստծո պես չփառավորեցին կամ շնորհակալ չեղան…»:
>
> — ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 1.20,21

Ուշադրություն դարձրեք, որ նրանք արժանավայել կերպով չփառավորեցին Աստծուն: Իսրայելի զավակները տեսան Եհովայի փրկությունը, սակայն չտվեցին Նրան այն պատիվը, երկյուղածությունն ու փառքը, որին Նա արժանի էր: Նման վերաբերմունքն անփոփոխ կերպով գոյություն ունի մինչև օրս: Տեսե՛ք, թե ինչ է ասում Պողոսն այս խոսքերից հետո Նոր կտակարանի ժամանակներում ապրող մարդկանց մասին, ովքեր Աստծո հանդեպ չունեն այն երկյուղածությունը, որին Նա արժանի է.

> «Եվ անեղծ Աստծո փառքը փոխեցին եղծանված մարդու… պատկերի նմանության հետ»:
>
> — ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 1.23

Մենք կրկին տեսնում ենք, թե ինչպես է անարգվում կենդանի Աստծո պատկերը: Այս անգամ մարդիկ չեն վերածում այն հորթի, այլ՝ եղծանված մարդու պատկերի: Իսրայելի ժողովուրդն ապրում էր այնպիսի քաղաքակրթության մեջ, որտեղ երկրպագում էին կենդանիների և միջատների նմանություն ունեցող ոսկե պատկերների: Ժամանակակից եկեղեցին էլ գտնվում է այնպիսի մշակույթում, որտեղ երկրպագում են մարդուն:

Վերջին մի քանի տարիների ընթացքում այս արտահայտությունը շարունակ պտտվում էր մտքումս.

> «Մենք ծառայել ենք Աստծուն այն պատկերով, որն ինքներս ենք ստեղծել»:

Լինելով հարյուրավոր եկեղեցիներում՝ ես հանդիպել եմ այնպիսի մտածելակերպի, որը նսեմացնում է Աստծո պատկերն ու փառքը՝ հասցնելով հասարակ, եղծանված մարդու պատկերի մակարդակին: Այս մտածելակերպը տարածվում է եկեղեցիներում:

Կան մարդիկ, ովքեր հոժարությամբ ընդունում են Հիսուսին՝ որպես Փրկիչ և Բժիշկ: Նրանք դավանում են իրենց շուրթերով, որ Նա է Տերը, սակայն իրենց գործողություններով և վերաբերմունքով իջեցնում են Աստծո փառքն ապականացու մարդու մակարդակին:

Նրանք ասում են. «Աստված իմ ընկերն է: Նա հասկանում է իմ սիրտը»: Աստված իսկապես հասկանում է մեր սրտերը նույնիսկ ավելի լավ, քան ինքներս: Բայց, սովորաբար, այս դիտողությամբ մարդիկ արդարացնում են այն գործերը, որոնք հակասում են Նրա ուխտին: Փաստորեն նրանք անհնազանդ են Աստծո Խոսքին: Աստվածաշնչում ես տեսնում եմ, որ Աստված ընկերներ է անվանում միայն նրանց, ովքեր դողում են Իր Խոսքից և Իր Ներկայությունից: Նրանք առանց երկմտելու հնազանդվում են Իրեն՝ անկախ նրանից, թե ինչ գին է պետք վճարել:

Հետևաբար, երբ մարդիկ անմիջապես չեն հնազանդվում Աստծուն, Նա չի ստանում այն պատիվն ու հարգանքը, որոնց արժանի է: Նրանք պատվում են Աստծուն իրենց շուրթերով, բայց նրանց երկյու-

ղը մարդկանց կողմից սովորեցրած պատվեր է: Նրանք Աստծո Խոսքն ու պատվիրանները զտել են իրենց մտածելակերպով, որը կրում է իրենց մշակույթի ազդեցությունը: Նրանց պատկերացումը Աստծո փառքի մասին ձևավորվել է իրենց սահմանափակ ընկալմամբ: Այն չի համապատասխանում Նրա ճշմարիտ պատկերին, որը բացահայտվում է Աստծո կենդանի Խոսքում:

Այդ պատճառով եկեղեցու մարդիկ առանց մտածելու քննադատում են իշխանավորներին այնպես, ինչպես վարվում են աշխարհում: Մեր հեռուստահաղորդումները՝ հումորայիններից մինչև հարցազրույցները, մշտապես բողոքում են կառավարության դեմ: Լրատվամիջոցները ծաղրում են առաջնորդներին և մեծարում անազնիվ և ապստամբ մարդկանց: Իսկ եթե իշխանավորներն իսկապե՞ս վատն են: Ի՞նչ է ասում Աստված այս մասին: Նա ասում է. «…քո ժողովրդի իշխանին չհայհոյես» (Գործք 23.5): Թվում է, թե Աստված հավանություն է տալիս վատ առաջնորդների քննադատությանը, որովհետև մենք Նրա Խոսքն իջեցրել ենք հասարակության կարծիքի մակարդակին: Ցավոք սրտի դա տեղի է ունենում նույնիսկ եկեղեցիներում:

Ես լսել եմ, թե ինչպես են եկեղեցու առաջնորդներն արդարացնում իրենց ապահարզանը՝ ասելով. «Աստված ցանկանում է, որպեսզի ես երջանիկ լինեմ»: Նրանք իսկապես հավատում են, որ իրենց երջանկությունն ավելի կարևոր է Աստծո Խոսքին հնազանդվելուց և այն ուխտից, որն Աստված կնքել է իրենց հետ:

Մի եկեղեցական առաջնորդ ասաց ինձ. «Ջո՛ն, ես որոշել եմ բաժանվել կնոջիցս, որովհետև մենք չենք կարողանում համերաշխ ապրել վերջին տասնութ տարիների ընթացքում: Մենք միասին ֆիլմեր չենք դիտում և չենք զվարճանում: Ես սիրում եմ Հիսուսին, և եթե ես ճիշտ բան չեմ անում, ապա Նա կհայտնի ինձ»: Ինչո՞ւ Աստված պետք է առանձնակի ընդունելության արժանացնի մեզ, երբ անտեսում ենք այն, ինչ Նա արդեն հայտարարել է:

Այս մարդիկ ինչ-որ կերպով աղավաղել են Հիսուսի խոսքերը՝ իրենց արդարացնելու և բացառություն լինելու համար: Թվում է, թե

Աստված ասել է. «Երբ Ես ասացի, որ ատում եմ ապահարզանը, Ես քեզ նկատի չունեի: Ես ցանկանում եմ, որպեսզի դու երջանիկ լինես և այնպիսի կողակից ունենաս, ով կզվարճանա քեզ հետ: Համարձակ բաժանվիր կնոջիցդ: Եթե սխալվես, ապա հետո կարող ես ապաշխարել»:

Ահա թե ինչպես է մտածում մեր հասարակությունը: Մեր անխոս բառերը հռչակում են. «Ուրիշների համար ամեն ինչը սև է կամ սպիտակ, իսկ ինձ համար միջինը՝ մոխրագույն: Կան հարցեր ուրիշների կյանքում, որ մենք սխալ ենք համարում, բայց երբ այդ նույն սխալը տեղի է ունենում մեր կյանքում, մենք ասում ենք. «Ես ազատ եմ գործել այնպես, ինչպես կամենամ եմ: Եթե հնազանդությունը զրկում է իմ կյանքը հարմարավետությունից, ես կարող եմ չհնազանդվել»»:

Եթե այս բանը տեղի է ունենում մեկի անձնական կյանքում, այն կարող է տեղի ունենալ նաև մյուսների կյանքում: Այս երևույթը սկսում է եկեղեցու առաջնորդների անձնական կյանքից և անդրադառնում այն ուղերձների վրա, որոնք նրանք քարոզում են ամբիոններից: Այնպես որ, զարմանալի չէ, որ եկեղեցում Աստծո փառքն իջեցված է եղծանված մարդու մակարդակին:

Ինչպիսի՞ ուղերձ է փոխանցում հավատացյալներին Աստծո փառքի նմանօրինակ ցածրացումը: Այն ասում է. «Աստված նկատի չունի այն, ինչ ասում է»: Եվ մենք դեռ զարմանում ենք, թե ինչո՞ւ է մեղքը մոլեգնում մեր մեջ և թե ինչո՞ւ է Աստծո վախը կորել: Զարմանալի չէ, որ մեղավորներն անտարբերությամբ նստած են մեր եկեղեցիների նստարաններին և չեն հանդիմանվում մեր քարոզներից: Զարմանալի չէ, որ գաղջությունը գերակշռում է մեր «Աստվածաշնչյան եկեղեցիներում»: Զարմանալի չէ, որ այրիները, որբերը, բանտարկյալներն ու հիվանդներն անտեսված են հավատացյալների կողմից:

Վերջին քսան տարիների ընթացքում այն ուղերձները, որ մենք քարոզել ենք ամբիոններից և լրատվամիջոցներով, հաճախ այնպիսի տպավորություն են ստեղծել, որ Աստված «երկնային Բարերար» է, Ով անում է այն, ինչ ցանկանում ենք և, երբ ցանկանում ենք: Նման

պատկերացումը ծնում է կարճաժամկետ, կեղծ հնազանդություն: Այդպիսի դաստիարակությունը երեխաներին դարձնում է երեսառած: Երեսառած երեխաները չունեն ճշմարիտ հարգանք իշխանության հանդեպ, հատկապես երբ նրանք չեն ստանում *այն, ինչ ցանկանում են և, երբ ցանկանում են:* Իշխանության հանդեպ երկյուղածություն չունենալու պատճառով նրանք հեշտությամբ գայթակղվում են Աստծուց:

Ինչպե՞ս կարող է երկյուղածությունը վերականգնվել մեր կյանքում, երբ մենք այս աստիճան ընկել ենք Նրա փառքից: Ինչպե՞ս կարող է իշխել հնազանդությունը, երբ անհնազանդությունն ու ապստամբությունը բնական են համարվում: Աստված կվերականգնի Իր սուրբ երկյուղն Իր ժողովրդի մեջ և կդարձնի նրանց դեպի Իրեն, որպեսզի նրանք կարողանան տալ Իրեն ճշմարիտ փառքն ու պատիվը, որին Նա իսկապես արժանի է: Աստված խոստացել է. «Բայց կենդանի եմ Ես, որ ամբողջ երկիրը Տիրոջ փառքով պիտի լցվի» (Թվոց 14.21):

Որքան խորությամբ ընկալենք
Աստծո մեծությունը, այնքան ավելի շատ
երկյուղ կունենանք Նրանից:

ԵՐՐՈՐԴ

ՏԻԵԶԵՐՔԻ ՔԱՐՈԶԸ

«...Հոգիս ծարավ է Քեզ համար, մարմինս Քեզ է ցանկանում... որ Քո զորությունն ու փառքը տեսնեմ»:

— ՍԱՂՄՈՍ 63.1,2

Աստծո հանդեպ երկյուղածություն ունենալու համար պետք է ձգտենք ճանաչել Նրա փառքի մեծությունը: Սա Մովսեսի սրտի աղաղակն էր. «...Աղաչո՛ւմ եմ, Քո փառքը ցո՛ւյց տուր ինձ» (Ելից 33.18):

Որքան խորությամբ ընկալենք Աստծո մեծությունը (թեև այն ինքնին վեր է մեր հասկացողությունից), այնքան ավելի շատ երկյուղ կունենանք Նրանից: Այս պատճառով սաղմոսերգուն քաջալերում է մեզ. «Որովհետև Աստված ամեն երկրի Թագավորն է. իմաստության ե՛րգ սաղմոսեք» (Սաղմ. 47.7): Մենք կանչված ենք Նրա մեծությունը տեսնելու և Նրան փառավորելու համար:

Սակայն սաղմոսերգուն նաև ասում է մեզ. «Մեծ է Տերը և պետք է մեծապես փառաբանվի, և Նրա մեծությունն անքննելի է» (Սաղմ. 145.3, NKJV): Կարդալով այս խոսքը՝ ես հիշում եմ սուրբ Օգոստինոսի մահվան պատմությունը: Օգոստինոսն իր ժամանակաշրջանի մեծագույն առաջնորդներից էր: Նրա աշխատությունները մեկնում էին Աստծո զարմանալի հրաշալիքները: Այդ աշխատությունները մեջբերվել են ավելի քան հազար տարվա ընթացքում: Նրա մեծագույն աշխատություններից մեկի վերնագիրն է «Աստծո քաղաքը»:

Իր մահվան մահճին, շրջապատված ամենամտերիմ ընկերներով,

Օգոստինոսը ննջեց՝ գնալով Տիրոջ մոտ: Նրա սիրտն այլևս չէր բաբախում: Եվ խաղաղության հրաշալի մի զգացում լցրեց ամբողջ սենյակը: Հանկարծակի նրա աչքերը կրկին բացվեցին և նա հայտարարեց ներկաներին. «Ես տեսա Տիրոջը: Իմ բոլոր գրածները ոչինչ չարժեն»: Այս խոսքերից հետո նա հեռացավ իր հավիտենական բնակավայրը:

Սուրբ, սուրբ, սուրբ...

Եսային տեսիլքով տեսավ Աստծո անքննելի փառքը: Նա տեսավ Տիրոջն Իր գահի սրահում՝ բարձր և մեծարված. Նրա փառքը լցրել էր ամբողջ սրահը: Աստծո շուրջը կանգնած էին ահռելի չափերի հրեշտակներ, որոնք կոչվում են սերովբեներ: Աստծո անսահման փառքի պատճառով նրանք ծածկում էին իրենց երեսները թևերով և կանչում.

> «...Սո՜ւրբ, սո՜ւրբ, սո՜ւրբ է Զորաց Տերը. ամբողջ երկիրը լիքն է Նրա փառքով»:
>
> — ԵՍԱՅԻ 6.3

Մեր եկեղեցիների հիմնը մենք երգում ենք նույն այդ բառերով: Սակայն հաճախ մեր փառաբանության մեջ բացակայում է այն ձգտումն ու փափագը, որն ունեին այդ հրեշտակները: Կարելի է տեսնել, թե ինչպես են մարդիկ հորանջում կամ այս ու այն կողմ նայում այս բառերը երգելիս: Օ՜, որքա՜ն է Աստծո գահի սրահում մթնոլորտը տարբերվում դրանից:

Այս զորավոր, զարմանալի հրեշտակները չեն ճանճրանում և ոչ էլ անհանգստանում. դրանք սովորական երգեր չեն, որ պարզապես երգում են: Նրանցից յուրաքանչյուրը չի ասում. «Աստվա՛ծ, ես արդեն միլիոն տարի է՝ երգում եմ այս երգը: Ի՞նչ կասես հերթափոխի մասին: Ես ցանկանում եմ գնալ և ուսումնասիրել Երկնքի այլ մասերը»: Իհարկե՝ ո՛չ: Նրանք չեն ցանկանում որևէ տեղ գնալ. նրանց միակ փափագն է՝ աղաղակել և փառաբանել Աստծո գահի առջև:

Այս ազդու հրեշտակները պարզապես երգ չեն երգում: Նրանք

արձագանքում են իրենց տեսածը: Յուրաքանչյուր վայրկյան նրանք տեսնում են, թե ինչպես է հայտնվում Աստծո փառքի ևս մեկ կողմ: Համակված դրանով՝ նրանք գոչում են. «Սո՜ւրբ, սո՜ւրբ, սո՜ւրբ…»: Իրականում նրանք այնպես էին միաձայն աղաղակում, որ դռան դրանդիների հիմերը դղրդում էին նրանց ձայներից և ամբողջ սրահը լցվում էր ծխով: Ա՜յ քեզ բան… Այլ բան է, երբ ձայնային ալիքները որևէ շենք են ցնցում այստեղ՝ երկրի վրա, բայց բոլորովին այլ բան է՝ ցնցել երկնային ճարտարապետական կառույցի դռան դրանդիների հիմերը: Այս հրեշտակները շրջապատում են Աստծո գահն անհաշվելի տարիների ընթացքում, այդ ժամանակը հնարավոր չէ հաշվել: Սակայն նրանք Աստծո զորության և իմաստության անվերջանալի հայտնություն են վերապրում: Նրա մեծությունն իսկապես անքննելի է:

Նրա գործերը խոսում են Նրա փառքի մասին

Վերջին գլխում մենք իմացանք, որ մարդը Տիրոջ փառքն իջեցնում է եղծանված մարդու մակարդակին: Մենք տեսանք, թե ինչպիսի տագնապեցնող չափերի է հասել այս երևույթը եկեղեցում: Այս գլխի մնացած մասը կնվիրենք Աստծո փառքը Նրա արարչագործության մեջ դիտարկելուն: Եկե՛ք մի կողմ դնենք մեր քննարկումները և մտորենք Նրա հրաշալի արարչագործության շուրջ:

Սաղմոս 145.10,11-ում ասվում է. «Տե՛ր, Քո բոլոր գործերը պիտի գոհանան Քեզնից… Քո թագավորության փառքը պիտի խոսեն և Քո զորությունները պիտի պատմեն»:

Ես չորս որդի ունեմ: Կար ժամանակ, որ տղաներս չափից ավելի հետաքրքրված էին մի պրոֆեսիոնալ բասկետբոլիստի կյանքով: Նա ամենահանրահայտ մարզիկներից մեկն է Ամերիկայում և կուռք՝ շատերի համար: Ազգային բասկետբոլի ասոցիացիայի վերջին խաղաշրջանն իր կիզեկետում էր: Ես շարունակ լսում էի ԱԲԱ-ի մարզիկների անունները լրատվամիջոցներից, իմ որդիներից և նրանց ընկերներից:

Այդ օրերին ընտանիքիս հետ գտնվում էի Ատլանտյան օվկիա-

նոսի ափին, քանի որ ծառայություններ էի անցկացնում այդ տարածքում: Մենք վերադարձանք լողափից, և ես երեք մեծ տղաներիս հետ նստեցի զրուցելու:

Մատնացույց անելով պատուհանը, որը նայում էր օվկիանոսին՝ ես հարցրի նրանց.

– Տղանե՛ր, այս օվկիանոսը վիթխարի է այդպես չէ՞:

Նրանք միաձայն պատասխանեցին.

– Այո՛, հայրիկ:

Ես շարունակեցի.

– Դուք կարող եք տեսնել օվկիանոսը ընդամենը երկու-երեք կիլոմետր, բայց այն իրականում տարածվում է հազարավոր կիլոմետրեր:

– Ա՜յ քեզ բան…,– երեխաները լսում էին ինձ մեծ ուշադրությամբ՝ փաթաթված սրբիչներով, ջերմության և ապահովության մեջ:

– Եվ այն նույնիսկ ամենամեծը չէ: Կա մեկ այլ ավելի մեծ օվկիանոս, որը կոչվում է Խաղաղ օվկիանոս: Եվ բացի այս երկուսը, կան ևս երկու օվկիանոսներ:

Տղաները լուռ՝ գլխով էին անում՝ զարմանքով, թե ինչպիսի ուժ ունեն մեր պատուհանից այն կողմ գտնվող օվկիանոսի ծանր ալիքները:

Զգալով, որ որդիներս ինչ-որ չափով ըմբռնեցին ասածս՝ հարցրի.

– Տղանե՛ր, գիտե՞ք, որ Աստված կշռել է ամբողջ ջրերն Իր ձեռքի ափով (տե՛ս Եսայի 40.12):

Նրանց բերանները և աչքերը լայն բացվեցին անկեղծ զարմանքից: Տղաներս տպավորված էին այն հայտնի մարզիկով, քանի որ նա իր ձեռքի ափով կարող էր բռնել բասկետբոլի գնդակը: Այժմ գնդակը ձեռքի ափով բռնելն աննշան բան էր թվում:

– Գիտե՞ք թե ուրիշ ինչ է ասում Աստվածաշունչն Աստծո մեծության մասին,– հարցրի ես:

– Ի՞նչ, հայրի՛կ:

– Աստվածաշնչում ասվում է, որ Աստված կարող է չափել տիեզերքն (հայերենում՝ Երկինքը) Իր թիզով (տե՛ս Եսայի 40.12):

Վեր բարձրացնելով ձեռքս՝ ես ցույց տվեցի, որ թիզի երկարությունն իմ բութ մատի ծայրից մինչև ճկույթիս ծայրն է:

– Աստված կարող է չափել տիեզերքն Իր բութ մատի և Իր ճկույթի միջև ընկած տարածությամբ:

Անվերջանալի քարոզ

Տիեզերքը հռչակում է Տիրոջ փառքը: Կարդացե՛ք Դավթի ոգեշնչված խոսքերը.

> «Երկինքները պատմում են Աստծո փառքը, և հաստատությունն իմացնում է Նրա ձեռքի գործերը: Օրը օրին խոսք է բխում, և գիշերը գիշերին գիտություն է ցույց տալիս: Լեզու չկա և խոսք չկա, նրանց ձայնը լսելի չէ (կամ «Չկա լեզու կամ խոսք, որտեղ նրանց ձայնը լսելի չէ», NIV): Բայց նրանց բարբառը դուրս է գալիս ամեն երկիր և նրանց խոսքը՝ մինչև աշխարհի ծայրերը…»:
>
> — ՍԱՂՄՈՍ 19.1-4

Մի պահ կա՛նգ առ և մտորի՛ր անծայրածիր տիեզերքի մասին: Այդպես դու մի պահ կպատկերացնես Նրա անսահման փառքը: Դավիթն ասում է, որ տիեզերքը հռչակում է Նրա փառքը: Աստծո արարչագործությունը սահմանափակված չէ Երկիր մոլորակով. այն ընդգրկում է տիեզերքը, որը հիմնականում անծանոթ է մեզ: Նա տեղադրել է երկնային աստղերն Իր մատներով (տե՛ս Սաղմ. 8.3): Մարդկանց մեծամասնության համար դժվար է ընկալել տիեզերքի վիթխարի չափերը:

Մեր արևին ամենամոտ գտնվող աստղը նրանից 4.3 լուսատարի հեռավորություն ունի: Որպեսզի այս թիվը զուտ տեսական չլինի, թո՛ւյլ տվեք բացատրել, թե որքան մեծ է այն: Լույսի արագությունը 300 000 կիլոմետր է վայրկյանում. ոչ թե ժամում, այլ՝ վայրկյանում: Այն անցնում է գրեթե 1 080 000 000 կիլոմետր ժամում: Մեր ինքնաթիռները թռչում են մոտավորապես 800 կմ/ժ արագությամբ:

Լուսինը հեռու է երկրից մոտավորապես 380 000 կիլոմետրով: Կպահանջվեր տասնինը օր՝ դեպի լուսին ինքնաթիռով ճանապարհորդելու համար: Բայց լույսը հասնում է այդտեղ 1.3 վայրկյանում:

Արևը հեռու է Երկրից մոտ 150 000 000 կիլոմետրով: Եթե դուք մեծ ատրոբուս նստեիք և ուղևորվեիք դեպի Արև, ապա այդ ճանապարհորդությունն առանց կանգ առնելու կտևեր քսանմեկ տարի: Ի՞նչ էիք դուք անում քսանմեկ տարի առաջ: Քսանմեկ տարին երկար ժամանակ է: Պատկերացրե՛ք՝ արևին հասնելու համար այդքան երկար ժամանակ թռչել՝ առանց կանգ առնելու: Իսկ նրանց համար, ովքեր գերադասում են մեքենայով ուղևորվել… դե՛, դուք կարող էիք դա անել ամբողջ կյանքի ընթացքում: Կպահանջվեր մոտավորապես 200 տարի՝ չհաշված վառելիքի և հանգստի համար նախատեսված կանգառները: Սակայն լույսն այս տարածությունն անցնում է ընդամենը ութ րոպե քսան վայրկյանի ընթացքում:

Այժմ Արևից տեղափոխվենք դեպի ամենամոտ աստղը: Մենք արդեն գիտենք, որ այն 4.3 լուսատարով հեռու է Երկրից: Եթե մենք կառուցեինք Երկրի, Արևի և նրա մոտակա աստղի մասշտաբային մոդելը, ապա կստացվեր հետևյալը. եթե Երկիրը փոքրացվեր պղպեղի սերմի չափ, ապա Արևը կփոքրացվեր մոտավորապես քսան սանտիմետր տրամագիծ ունեցող գնդակի չափ: Նման մասշտաբի դեպքում Երկրի և Արևի միջև հեռավորությունը կլիներ մոտավորապես 24 մետր, որն ընդամենը ֆուտբոլային դաշտի մեկ քառորդն է կազմում: Սակայն հիշե՛ք, որ ինքնաթիռն այս քսանչորս մետրանոց տարածությունը կարող է անցնել ավելի քան քսանմեկ տարվա ընթացքում:

Եթե Երկիրն ու Արևն այսպիսի հարաբերություն ունեն, ապա կարո՞ղ եք պատկերացնել, թե որքան հեռու կգտնվի ամենամոտ աստղը պղպեղի սերմի չափ ունեցող Երկրից: Միգուցե մեկ կամ երկու կիլոմետր: Նույնիսկ մոտ էլ չէ: Մեր ամենամոտ աստղը պղպեղի սերմից 6.5 հազար կիլոմետր հեռավորության վրա կլինի: Սա նշանակում է, որ եթե դուք պղպեղի սերմը Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքում դնեք, ապա ամենամոտ աստղն, ըստ մեր

մասշտաբային մոդելի, կանցնի Նյու Յորքը, և Ատլանտյան օվկիանոսը 1.5 հազար կիլոմետրով:

Այս ամենամոտ աստղին ինքնաթիռով հասնելու համար կպահանջվեր 51 000 000 000 տարի՝ առանց կանգառների: Այնուամենայնիվ, լույսն այս աստղից Երկիր մոլորակին հասնում է ընդամենը 4.3 տարում:

Այն աստղերը, որ դուք տեսնում եք գիշերային երկնքում, հեռու են Երկրից՝ հարյուրից հազար լուսատարով: Սակայն որոշ աստղեր Երկրից հեռու են չորս հազար լուսատարով: Ես նույնիսկ չեմ փորձի հաշվարկել այն ժամանակը, որն անհրաժեշտ կլիներ ինքնաթիռով այդ աստղերից մեկին հասնելու համար: Բայց մտածե՛ք այս մասին. լույսի արագությունը 300 000 մ/վ է, և պահանջվում է չորս հազար տարի, որպեսզի այն աստղերից հասնի Երկրին: Սա նշանակում է, որ այդ աստղերի լույսն արձակվել է մինչև Կարմիր Ծովի կիսվելը և ընթացել 1 080 000 000 կմ/ժ արագությամբ՝ առանց դանդաղելու կամ կանգ առնելու, և հիմա հասել է Երկիր մոլորակին:

Բայց խոսքը միայն մեր գալակտիկայի աստղերի մասին է: Գալակտիկան սովորաբար միլիարդավոր աստղերի հավաքածու է: Այն գալակտիկան, որում ապրում ենք, կոչվում է Ծիր Կաթին:

Մեզ ամենամոտ գտնվող գալակտիկան Անդրոմեդան է, որի հեռավորությունը մեզնից մոտավորապես 2.31 միլիոն լուսատար է: Պատկերացրե՛ք՝ այն հեռու է մեզնից ավելի քան 2 միլիոն լուսատարով: Մի՞թե սա արդեն չի գերազանցում մեր պատկերացումները:

Գիտնականները պնդում են, որ կան միլիարդավոր գալակտիկաներ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է միլիարդավոր աստղեր: Գալակտիկաները սովորաբար խմբավորվում են: Անդրոմեդա գալակտիկան և մեր Ծիր Կաթինը ամենաքիչը երեսուն գալակտիկաներից բաղկացած խմբերի մասնիկներ են: Մյուս խմբերը կարող են պարունակել հազարավոր գալակտիկաներ:

Գինեսի համաշխարհային ռեկորդների գիրքը տեղեկացնում է,

որ 1994թ.-ի հունիսին հայտնաբերվել է գալակտիկաների նոր, բոժոժաձև խմբեր: Այս հոծ խմբավորման լայնքն, ըստ հաշվարկների, կազմում է 650 000 000 լուսատարի: Կարո՞ղ եք պատկերացնել, թե որքան ժամանակ կպահանջվեր նման տարածությունն ինքնաթիռով անցնելու համար:

Գինեսի համաշխարհային ռեկորդների գիրքը նույնպես տեղեկացնում է, որ ամենահեռավոր մարմինը, որ մարդը երբևէ տեսել է, գտնվում է 13.2 միլիարդ լուսատարի հեռավորության վրա: Մեր սահմանափակ միտքը չի կարող նույնիսկ ընկալել նման ահռելի տարածությունները: Մենք դեռ պետք է կարողանանք տեսնել գալակտիկաների խմբերի ծայրերը. էլ ի՞նչ խոսք տիեզերքի ծայրի մասին: Եվ Աստված կարող է չափել այս ամենն Իր ձեռքի թիզով: Վերջապես ինչպես ասում է սաղմոսերգուն. «Նա [Աստված] համրում է աստղերի թիվը և կանչում նրանց ամենը անուններով: Մեծ է մեր Տերը և շատ զորավոր, Նրա իմաստությանը չափ չկա» (Սաղմ. 147.4,5): Նա ոչ միայն կարող է հաշվել միլիարդ անգամ միլիարդավոր աստղերը, այլ նույնպես գիտի յուրաքանչյուրի անունը: Զարմանալի չէ, որ սաղմոսերգուն ասում է. «…Նրա իմաստությանը չափ չկա»:

Սողոմոնն ասաց. «Բայց իրո՞ք Աստված կբնակվի երկրի վրա. ահա Երկինքը և երկինքների երկինքը չեն կարող Քեզ պարունակել…» (Գ Թագ. 8.27): Իսկ դուք կարողանո՞ւմ եք լավ պատկերացնել Նրա փառքը:

Նրա փառավոր իմաստությունը հայտնվում է արարչագործության մեջ

> «Նա է ստեղծել երկիրն Իր զորությունով, հաստատել աշխարհն Իր իմաստությունով…»:
>
> — ԵՐԵՄԻԱ 10.12

Արարչագործության մեջ տեսանելի են ոչ միայն Աստծո փառքի

մեծությունն ու զորությունը, այլ նաև Նրա անսահման իմաստությունն ու գիտելիքները: Գիտությունը տարիներ և ահռելի ֆինանսական միջոցներ է ծախսել այս աշխարհն ուսումնասիրելու համար: Աստծո կառույցներն ու շինանյութը շարունակում են հիացմունք պատճառել:

Արարված կյանքի բոլոր տեսակները բաղկացած են բջիջներից: Բջիջները մարդկային մարմնի, բույսերի, կենդանիների և կյանքի ցանկացած այլ տեսակի շինանյութն են: Մարդկային մարմինը, որն ինքնին ինժեներական հրաշք է, պարունակում է մոտավորապես 100 000 000 000 000 տարատեսակ բջիջներ (կարո՞ղ եք դա պատկերացնել): Իր իմաստությամբ Նա կանխավ որոշել է, որ այդ բջիջները յուրահատուկ առաջադրանքներ կատարեն: Նրանք աճում են, բազմապատկվում և, ի վերջո, մահանում՝ ըստ նախատեսվածի:

Թեև բջիջներն անտեսանելի են անզեն աչքի համար, այնուամենայնիվ, նրանք մարդկությանը հայտնի ամենափոքր մասնիկները չեն: Բջիջները բաղկացած են կորիզից, բջջահյութից և բջջաթաղանթից: Կան նաև մոլեկուլներ, որոնք բաղկացած են ավելի փոքր մասնիկներից՝ ատոմներից: Դրանք այնքան փոքր են, որ նույնիսկ այս նախադասության վերջակետը պարունակում է միլիարդավոր ատոմներ: Անչափ փոքր ատոմը կազմված է պրոտոններից, նեյտրոններից և էլեկտրոններից: Պրոտոնները և նեյտրոնները միակցված են և շատ խիտ միջուկ են կազմում, որը գտնվում է ատոմի ուղիղ մեջտեղում: Էներգիայի փոքրիկ հանգույցները, որոնք կոչվում են էլեկտրոններ, պտտվում են այս միջուկի շուրջը լույսի արագությամբ: Ահա այն հիմնական շինանյութը, որից բաղկացած է ամեն ինչ:

Իսկ որտեղի՞ց է ատոմը ստանում իր էներգիան: Եվ այդ ինչպիսի՞ ուժ է, որ պահում է էներգետիկ մասնիկները միասնական: Գիտնականներն այն անվանում են ատոմային էներգիա: Սա ընդամենը գիտական տերմին է՝ նկարագրելու համար այն, ինչ իրենք չեն կարո-

ղանում բացատրել: Իսկ Աստված արդեն ասել է, որ Ինքը՝ «Իր զորության Խոսքով ամեն բան կրում է» (Եբր. 1.3): «…ամեն բան Նրանով է հաստատ» (Կողոս. 1.17):

Մի պահ կանգ առեք և մտորեք այս ամենի շուրջ: Ահա մեր փառավոր Արարիչը, Որին նույնիսկ տիեզերքը չի կարող տեղավորել: Տիեզերքը չափվում է Նրա թիզով, և, միևնույն ժամանակ, Նա այնքան մանրամասնորեն է ծրագրել փոքրիկ Երկիր մոլորակը և Իր արարածներին, որ տարիների ընթացքում կատարած ուսումնասիրություններից հետո ժամանակակից գիտությունը հայտնվել է փակուղում:

Այժմ կարող եք ավելի լավ հասկանալ սաղմոսերգուին, երբ նա ասում է. «Գոհանում եմ Քեզնից, որ ահավոր և զարմանալի կերպով ստեղծվեցի…» (Սաղմ. 139.14): Վերևում թվարկված գիտական ամբողջ տեղեկությունների լույսի ներքո կարող եք տեսնել, թե ինչու է Աստծո Խոսքում ասվում. «Անզգամն (կամ՝ հիմարը) ասաց իր սրտում, թե Աստված չկա…» (Սաղմ. 14.1):

Իհարկե, կարելի է շատ գրքեր գրել Նրա արարչագործության հրաշալիքների և իմաստության մասին, բայց ես այլ մտադրություն ունեմ: Իմ նպատակն է՝ զարմանք և հիացմունք արթնացնել Նրա ձեռքի գործերի հանդեպ, քանի որ նրանք հռչակում են Նրա մեծ փառքը:

«Դու ճի՛շտ ես, հայրի՛կ»

Այն բանից հետո, երբ տղաներիս պատմեցի ամբողջ այս գիտական տեղեկատվությունն իրենց համար հասկանալի լեզվով, ես ասացի.

– Իսկ դուք տպավորված եք մի մարզիկով, ով բասկետբոլի խաղադաշտում թռչում է չորսուկես մետրանոց սահմանագծից և օդով լի գնդակը գցում է փոքրիկ շրջանակի մե՞ջ:

Նրանք ասացին.

– Դու ճի՛շտ ես, հայրի՛կ:

– Բասկետբոլիստն ունի՞ մի բան, որն Աստված չի տվել Նրան,– եզրափակեցի ես:

– Ոչի՛նչ,– պատասխանեցին նրանք:

Այդ ժամանակից ի վեր նրանց կարծիքն այդ մարզիկի մասին փոխվեց. նրան երկրպագելը վերածվեց առողջ հարգանքի: Իմ տղաների բասկետբոլային քարտերն այժմ կոչվում են «աղոթքի քարտեր»: Մինչդեռ ուրիշները նրանց հերոսներ են համարում, տղաներս աղոթում են այդ հերոսների փրկության համար:

Այժմ դուք կարող եք ավելի լավ հասկանալ, թե իրականում ինչ էր ասում Աստված, երբ Հոբին հարցնում էր. «Ո՞վ է առաջ Ինձ մի բան տվել, որ Ես նրան վճարեմ. ամբողջ երկնքի տակինն Իմն է» (Հոբ 41.11):

Ի՞նչ է մարդը

> «Երբ որ տեսնում եմ Քո երկինքը, Քո մատների գործը՝ լուսինն ու աստղերը, որ Դու հաստատեցիր, ի՞նչ է մարդը, որ Դու հիշում ես նրան, և մարդու որդին, որ Դու խնամք ես տանում նրա համար»:
>
> — ՍԱՂՄՈՍ 8.3,4

Թեև չեմ կարող ապացուցել, այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ 8-րդ Սաղմոսը Աստծո գահը շրջապատող զորեղ սերովբեներից մեկի արձագանքն է արարչագործության վերաբերյալ: Մի պահ կա՛նգ առեք և մտածե՛ք սրա մասին և փորձե՛ք տեսնել արարչագործությունն այս հրեշտակի աչքերով: Այս զարմանալի, զորավոր Աստված, Ով հենց նոր է արարել Տիեզերքը և տեղադրել աստղերն Իր մատներով, մոտենում է մի փոքրիկ մասնիկի, որը կոչվում է Երկիր մոլորակ, և աննշան թվացող փոշեհատիկներից մարմին է ձևավորում մարդու համար:

Բայց այս հրեշտակին իսկապես զարմացնում է Աստծո կատարյալ ուշադրությունը. այն ամբողջովին կենտրոնացած է մարդ արարածի

վրա: Սաղմոսերգուն ասում է, որ Աստծո բարձրարժեք մտքերը մեր մասին այնքան շատ են, որ նրանք գերազանցում են ամբողջ երկրի ավազահատիկների քանակին (տե՛ս Սաղմ. 139.17,18): Ես հավատում եմ, որ տեսնելով սա՝ հրեշտակն աղաղակեց. «Ի՞նչ է աննշան թվացող փոշեհատիկը, որի հանդեպ Դու այնքան հետաքրքրություն ես ցուցաբերում և այնքան քնքշություն տածում: Ի՞նչ է այս փոքրիկ բանը, որ մշտապես Քո մտքում է, և Քո բոլոր ծրագրերը կենտրոնացած են դրա շուրջ»:

Ժամանակ հատկացրեք և մտածե՛ք լռության մեջ Նրա ձեռքի գործերի մասին: Երբ դուք մտածեք սրա շուրջ, արարչագործությունը կքարոզի ձեզ: Այն կհռչակի Աստծո փառքը:

Մինչև Աստծո փառքի դրսևորումը, նախ՝ պետք է
կարգ ու կանոն հաստատվի:

ՉՈՐՐՈՐԴ

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ, ՓԱՌՔ, ԴԱՏԱՍՏԱՆ

ՄԱՍ 1

«Որովհետև Աստված, որ ասաց, թե խավարից լույս ծագի, Ինքը մեր սրտերի մեջ ծագեցրեց՝ Աստծո փառքի գիտության լուսավորությունը տալու համար Հիսուս Քրիստոսի դեմքում»:

— Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 4.6

Մի քանի հետագա գլուխներում մենք ցույց կտանք կարևոր մի հաջորդականություն, որը հանդիպում է ամբողջ Աստվածաշնչում: Այն կդառնա մեր պատմական հենակետը, ըստ որի, կդիտարկենք այն իրադարձությունները, որոնք տեղի են ունենում մեր ժամանակներում:

Աստծո հաջորդականությունը

Ծրագրված չորս ծառայությունների առաջին երեկոն էր Սաբբաչևանում՝ Կանադայում: Հովիվը ներկայացնում էր ինձ, և մի քանի րոպե անց ես պետք է բեմ բարձրանայի:

Հանկարծ Աստծո Հոգին սկսեց արագորեն տանել ինձ ամբողջ Աստվածաշնչով՝ ցույց տալով մի հաջորդականություն, որն առկա էր Հին և Նոր կտակարաններում: Այդ հաջորդականությունը հետևյալն է.

1. Կարգ ու կանոն
2. Աստծո փառք
3. Դատաստան

Նախքան Աստծո փառքի դրսևորումը պետք է հաստատվի կարգ ու կանոն: Նրա փառքի հայտնվելու հետ միասին մեծ օրհնություն է գալիս: Բայց նաև ցանկացած անհարգալից վերաբերմունքի, անկարգության և անհնազանդության դեպքում անհապաղ դատաստան կգա:

Աստված մոտավորապես երկու րոպեում բացեց աչքերս՝ այս հաջորդականությունը տեսնելու համար, և հայտնեց ինձ, որ պետք է քարոզեմ դա կանադացիների «քաղցած» համայնքին: Այդ երեկո ես անցկացրի իմ ամենազորավոր ծառայություններից մեկը: Ես ցանկանում եմ կիսել ձեզ հետ այն ճշմարտությունը, որ Աստված հայտնեց ինձ այդ ժամանակ:

Սկզբում...

Հիմնավորելու համար՝ եկե՛ք վերադառնանք ամենասկզբին: Երբ Աստված ստեղծեց Երկինքն ու երկիրը.

> «Երկիրն անձև ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա, և Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա»:
>
> — ԾՆՆԴՈՑ 1.2

Հայերեն «անձև» բառը եբրայերեն երկու բառերի (*«հայահ»* և *«թոհուվ»*) համադրությունն է: Այս երկու բառերը միասին օգտագործելով՝ Խոսքն ավելի պատկերավոր է դառնում. «Երկիրն անձև և քաոսային էր»: Չկար կարգ ու կանոն. միայն անկարգություն էր:

Թեև Աստծո Հոգին շրջում էր այդ քաոսի մեջ, այնուամենայնիվ, Նա ոչինչ չարեց, քանի դեռ չէր ազատագրվել Աստծո Խոսքը: Աստծո հռչակած Խոսքով մոլորակի վրա գործի դրվեց աստվածային կարգ ու կանոնը: Աստված վեց օրում արարեց երկիրը, և ապա Իր

փառքով լցրեց: Նա հատուկ հոգատարություն ցուցաբերեց պարտեզին, որը տնկել էր Իր արարչագործության համար: Իսկ հետո Աստված ստեղծեց մարդուն, ով արարչագործության սիրտն է:

Երբ պարտեզը պատրաստ էր, Աստված «հողի փոշուց շինեց մարդուն»: Գիտությունը պարզել է, որ մարդու մարմնում առկա յուրաքանչյուր քիմիական տարր գոյություն ունի երկրի կեղևում: Աստված ծրագրել ու իրականացրել է և՛ ինժեներական, և՛ գիտական հրաշք:

Կարգ ու կանոնը բերում է Աստծո փառքը

Աստված վեց օրում երկրի վրա աստվածային կարգ ու կանոն հաստատեց: Հետո Նա ձևավորեց մարդու մարմինը, որը նույնպես համակարգված էր: Հենց որ հաստատվեց աստվածային կարգ ու կանոնը, Աստված «նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ» (Ծնն. 2.7): Աստված բառացիորեն փչեց Իր Հոգին այդ մարդկային մարմնի մեջ:

Մարդը ստեղծվեց Աստծո պատկերով և նմանությամբ, իսկ հետո կինը վերցվեց մարդու կողոսկրից: Երկուսն էլ ո՛չ հագուստ ունեին, ո՛չ ծածկույթ: «Եվ նրանք երկուսը մերկ էին՝ Ադամը և իր կինը, և չէին ամաչում» (25-րդ խոսք): Մնացած բոլոր արարածներին ծածկույթ էր տրվել: Կենդանիները մորթի ունեին, թռչունները՝ փետուրներ, ձկները՝ թեփուկներ և խեցիներ: Բայց մարդն արտաքին ծածկոցի կարիք չուներ, քանի որ սաղմոսերգուն ասում է, որ Աստված «փառքով և պատվով պսակեց նրան» (Սաղմ. 8.5): «Պսակել» բառը եբրայերեն «ատար»-ն է, որը նշանակում է «շրջափակել կամ շրջապատել»: Ըստ էության՝ տղամարդն ու կինը ծածկված էին Տիրոջ փառքով և հագուստի կարիք չունեին:

Այս առաջին զույգն անհավատալի օրհնություններ վայելեց: Պարտեզը տալիս էր իր պտուղները, ուստի կարիք չկար այն մշակել: Պարտեզում մարդը և կենդանիներն ապրում էին ներդաշնակության մեջ: Չկային հիվանդություններ, տկարություններ կամ աղքա-

տություն: Բայց ամենից լավն այն էր, որ այս զույգն արտոնություն ուներ ապրել Աստծո փառքի մեջ:

Դատաստան

Նախ՝ Աստված Իր Խոսքով և Հոգով կարգ ու կանոն հաստատեց, դրանից հետո դրսևորվեց Նրա փառքը: Չնայած օրհնությունները հոսում էին, բայց, այնուամենայնիվ, չհնազանդվելը անկման պատճառ հանդիսացավ: Աստված պատվիրեց մարդուն՝ չուտել Բարու ու չարի գիտության ծառի պտղից, որովհետև չհնազանդվելու դեպքում անմիջապես կհետևեր հոգևոր մահը:

Սատանան մարտահրավեր նետեց Աստծո Խոսքին՝ աղավաղելով և հերքելով այն. «…Բնավ չեք մեռնի: Այլ Աստված գիտի, թե այն օրը, որ նրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն և Աստծո պես կլինեք՝ բարին և չարը գիտացող» (Ծննդ. 3.4,5): Եվ Ադամը, լիովին գիտակցելով իր քայլերը, ընտրեց չհնազանդվել Աստծուն: Նրա դավաճանությունը Աստծո դեմ ոչնչով չէր զիջում պետական դավաճանությանը: Երբ սա տեղի ունեցավ, եկավ դատաստանը:

Դրանից հետո Ադամի և Եվայի աչքերը բացվեցին և տեսան, որ իրենք մերկ են: Փառքը հեռացավ նրանցից, և մեղքը բաժանեց նրանց Աստծուց, և նրանք հոգևորապես մահացան: Նրանք իրենց ձեռքով տերևներ գործեցին՝ փորձելով ծածկել իրենց մերկությունը: Աստված տեսնելով այդ ամենը՝ դատաստան արեց՝ հագցնելով նրանց կաշվե հանդերձներ, որոնք, հավանաբար, գառան կաշվից էին: Այդ հանդերձներն Աստծո Գառան խորհրդապատկերն էին, Ով կգար և կվերականգներ մարդու փոխհարաբերությունն Աստծո հետ: Այնուհետև անկում ապրած այդ զույգը դուրս արվեց պարտեզից, որտեղ հավիտենական կյանք կար: Դատաստանը խիստ էր. այն Ադամի դավաճանության հետևանքն էր Աստծո փառքի ներկայության մեջ:

Խորանը և Նրա փառքը

Անցան հարյուրավոր տարիներ, և Աստված Աբրամ անունով մի ընկեր գտավ: Նա խոստմունքի ուխտ կնքեց Աբրամի հետ, փոխեց նրա անունը՝ կոչելով նրան Աբրահամ: Այս մարդու հնազանդության պատճառով Աստծո խոստումները ևս մեկ անգամ կկարողանային հասնել գալիք սերունդներին: Աբրահամի ժառանգները՝ որպես ստրուկներ, ավելի քան չորս հարյուր տարի հայտնվեցին Եգիպտոսում: Նրանց նեղությունը տեսնելով՝ Աստված բարձրացրեց Մովսես անունով մարգարեին և փրկչին:

Աբրահամի ժառանգներին գերությունից ազատելուց անմիջապես հետո Աստված նրանց բերեց անապատ: Աստված Իր ժողովրդի հետ բնակվելու ծրագրի մասին հայտնեց անապատում՝ Սինա սարի մոտ: Նա ասաց Մովսեսին. «…Ես եմ նրանց Տեր Աստվածը, որ Եգիպտոսի երկրից հանեցի նրանց, որ նրանց մեջ բնակվեմ…» (Ելից 29.46):

Աստծո միակ փափագն էր՝ կրկին բնակվել նրանց մեջ: Սակայն Նա չէր կարող անել դա, քանի որ մարդն անկում էր ապրել: Այնպես որ, Նա կարգադրեց Մովսեսին. «Ինձ համար մի սրբարան շինեն, որ իրենց մեջ բնակվեմ» (Ելից 25.8): Այդ սրբարանը կոչվեց խորան:

Մինչև Աստծո փառքի դրսևորվելը պետք է հաստատվի աստվածային կարգ ու կանոնը: Այդ իսկ պատճառով Աստված մանրակրկիտ ձևով նկարագրեց Մովսեսին, թե ինչպես պետք է կառուցել խորանը: Նա ճշգրտորեն հաղորդեց, թե ով պետք է կառուցեր այն և ով պետք է ծառայեր այնտեղ: Մանրամասնորեն նշված էին կառուցման համար անհրաժեշտ նյութերի տեսակները, չափերը, կահավորանքը և զոհաբերությունները: Ելից գրքում այդ կարգադրությունների մասին շատ գլուխներում է խոսվում:

Մարդու կողմից կառուցված սրբարանը երկնայինի արտացոլումն էր (տե՛ս Եբր. 9.23,24): Աստված զգուշացրեց Մովսեսին. «…Մտի՛ր տուր… որ ամեն բան անես այն օրինակի պես, որ ցույց տրվեց քեզ սարում» (Եբր. 8.5, տե՛ս նաև Ելից 25.40): Չափազանց կարևոր էր, որ ամեն ինչ արվեր ճիշտ այնպես, ինչպես ցույց էր տրվել: Այդ

դեպքում հաստատված կլիներ աստվածային կարգ ու կանոնը, որն անհրաժեշտ էր, որպեսզի Թագավորի փառքը դրսևորվեր մարդկանց կյանքում:

Իսրայելի ժողովուրդը զոհաբերություն հավաքեց խորանի շինարարության համար՝ ոսկի, արծաթ, պղինձ, կապուտակ, ծիրանագույն և կրկնակի կարմիր թելեր, բարակ քթան, կաշիներ, մորթի, սատիմի փայտ, օծման յուղ, անուշահոտություններ և թանկարժեք քարեր:

Տերն ասաց Մովսեսին. «…Ահա կանչեցի անունով… Բեսելիելին՝ Հուդայի ցեղից: Եվ լցրի նրան Աստծո Հոգով՝ իմաստությունով և հանճարով և գիտությունով և ամեն ճարտարությունով: Եվ Ես ահա նրա հետ տվի Աքիսամայի որդի Ոողիաբին՝ Դանի ցեղից, և ամեն իմաստուն սիրտ ունեցողի սրտի մեջ իմաստություն դրի, որ բոլոր քեզ պատվիրածս անեն» (Ելից 31.1-3,6): Աստծո Հոգին այդ մարդկանց վրա էր՝ աստվածային կարգ ու կանոն հաստատելու համար:

Բոլոր այդ հմուտ մարդիկ սկսեցին աշխատել խորանի վրա: Նրանք պատրաստեցին վարագույրները, ծածկոցները և ձողերը, վկայության տապանակը, առաջավորության հացի սեղանը, ոսկե ճրագակալը, խունկի սեղանը, ողջակեզների սեղանը և պղնձե ավազանը, քահանայական հանդերձներն ու օծման յուղը:

> «Ինչպես որ Տերը Մովսեսին պատվիրել էր, այնպես արին Իսրայելի որդիները ամբողջ գործը: Եվ Մովսեսը նայեց ամբողջ շինվածքին, և ահա արել էին նրան՝ ինչպես որ Տերը պատվիրել էր, այնպես էին արել, և Մովսեսն օրհնեց նրանց: Եվ Տերը խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. «Առաջին ամսվա առաջին օրը կանգնեցրո՛ւ խորանը, այսինքն՝ ժողովքի վրանը»»:
>
> — ԵԼԻՑ 39.42-40.2

Աստծո կարգադրությունն այնքան հստակ էր, որ խորանը պետք է կանգնեցվեր հենց այդ օրը: Եկավ առաջին ամսվա առաջին օրը: Մովսեսը և հմուտ արհեստավորները կանգնեցրին խորանը: Դրանից հետո մենք կարդում ենք հետևյալը.

«…Այսպես Մովսեսը ամբողջ գործը վերջացրեց»:

— ԵԼԻՑ 40.33

Այժմ ամեն ինչ պատրաստ էր: Աստվածային կարգ ու կանոնը հաստատված էր ըստ Աստծո Խոսքի, և ժողովուրդը հնազանդվել էր Սուրբ Հոգու առաջնորդությանը: Այժմ տեսնենք, թե ինչ կատարվեց.

«Եվ մի ամպ ծածկեց ժողովքի վրանը, և Տիրոջ փառքը լցրեց խորանը: Եվ Մովսեսը չէր կարողանում մտնել ժողովքի վրանը, որովհետև ամպը նրա վրա նստել էր, և Տիրոջ փառքը լցրել էր խորանը»:

— ԵԼԻՑ 40.34,35

Երբ հաստատվեց աստվածային կարգ ու կանոնը, Աստված դրսևորեց Իր փառքը: Եկեղեցու մեծամասնությունը չի հասկանում, թե ինչ է Տիրոջ փառքը: Ես այցելել եմ շատ հավաքույթների, որտեղ ծառայողները հռչակել են. «Տիրոջ փառքն այստեղ է»: Մինչև առաջ անցնելը, եկե՛ք քննարկենք, թե ինչ է Տիրոջ փառքը:

Տիրոջ փառքը

Նախ և առաջ՝ Տիրոջ փառքն ամպ չէ: Ոմանք միգուցե հարցնեն. «Այդ դեպքում ինչո՞ւ է ամպը հիշատակվում Սուրբ գրքում գրեթե ամեն անգամ, երբ դրսևորվում է Աստծո փառքը»: Պատճառը հետևյալն է. Աստված թաքնվում է ամպի մեջ: Նա չափազանց փառահեղ է, և մարդը չի կարող նայել Նրան: Եթե Աստված չթաքնվի ամպի մեջ, ապա Նրա շուրջ ամեն բան կմահանա:

«Եվ նա [Մովսեսը] ասաց. «Աղաչո՛ւմ եմ, Քո փառքը ցո՛ւյց տուր ինձ»: Եվ [Աստված] ասաց. «Դու Իմ երեսը չես կարող տեսնել, որովհետև մարդ չի կարող Ինձ տեսնել և ապրել»»:

— ԵԼԻՑ 33.18,20

Մահկանացու մարմինը չի կարող կանգնել Սուրբ Տիրոջ փառքի ներկայության մեջ: Պողոսն ասում է.

«…Երանելին և միայն Հզորը, թագավորների Թագավորը և տերերի Տերը, որ միայն Նա անմահություն ունի՝ անմատույց լույսի մեջ բնակված, որ մարդկանցից ոչ ոք չտեսավ և ոչ էլ կարող է տեսնել: Նրան լինի պատիվ և զորություն հավիտյանս, ամե՛ն»:

— Ա ՏԻՄՈԹԵՈՍ 6.15,16

Եբրայեցիների 12.29-ում գրված է, որ Աստված փչացնող կրակ է: Սրա մասին մտածելով՝ մի՛ պատկերացրեք փայտի կրակը: Փչացնող կրակը չի կարող տեղավորվել ձեր բուխարու մեջ: «…Աստված լույս է, և ոչ մի խավար չկա Նրանում» (Ա Հովհ. 1.5): Այն կրակը, որը վառվում է ձեր բուխարու մեջ, կատարյալ լույս չի արձակում: Այդ կրակի մեջ խավար կա, նրան կարելի է մոտենալ, ինչպես և նայել:

Մտածե՛ք լազերային ճառագայթի մասին: Այս լույսը շատ ուժեղ է և կենտրոնացված, սակայն կատարյալ չէ: Թեև լազերային ճառագայթն ուժեղ լույս ունի, նրանում նույնպես խավար կա:

Այժմ մտածե՛ք արևի մասին: Արևն ահռելի է, պայծառ և ուժեղ, բայց նրա լույսի մեջ, միևնույն է, խավար կա:

Պողոսն ասում է Տիմոթեոսին, որ Նրա փառքն «անմատույց լույս է, որ մարդկանցից ոչ ոք չտեսավ և ոչ էլ կարող է տեսնել»: Պողոսը կարող էր հեշտությամբ գրել սա, որովհետև Դամասկոսի ճանապարհին տեսել էր այդ լույսը: Նա պատմեց այդ մասին Ագրիպաս թագավորին հետևյալ կերպ.

«Կեսօրվա ժամանակին ճանապարհի վրա տեսա, ո՛վ արքա, որ երկնքից արեգակի լույսից ավելի մի լույս ծագեց իմ չորս կողմով…»:

— ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 26.13

Պողոսն ասաց, որ այդ լույսը կեսօրվա արևից էլ պայծառ էր: Փորձե՛ք ուղիղ նայել կեսօրվա արևին: Դժվար է նայել արևին, եթե այն քողարկված չէ ամպով: Աստծո փառքն անհամեմատելի կերպով գերազանցում է այդ փայլը:

Պողոսը չտեսավ Տիրոջ դեմքը: Նա տեսավ միայն լույսը, որը ճառագում էր Նրանից, դրա համար հարցրեց. «Ո՞վ ես Դու, Տե՛ր»: Նա

չէր կարող տեսնել Տիրոջ կերպարանքը կամ դիմագծերը, որովհետև կուրացած էր այն լույսից, որը ճառագում էր Նրա փառքից: Այդ լույսը գերազանցում էր նույնիսկ Մերձավոր Արևելքի արևի պայծառությունը:

Միգուցե սա բացատրում է, թե ինչու և՛ Հովելը, և՛ Եսային հայտարարեցին, որ վերջին օրերում, երբ Տիրոջ փառքը հայտնվի, արևը կխավարի: «Ահա գալիս է Տիրոջ օրը… երկնքի աստղերը և նրա աստեղատներն իրենց լույսը չեն տալու. արեգակը դուրս գալիս՝ խավար է լինելու, և լուսինը չի ցոլացնելու իր լույսը» (Եսայի 13.9,10):

Աստծո փառքը կգերազանցի ցանկացած տեսակի լույս: Նա կատարյալ և ամեն ինչ կլանող լույս է: «Եվ պիտի մտնեն ժայռի այրերի մեջ և երկրի խոռոչները՝ Տիրոջ ահավորության առջևից և Նրա վեհափառության մեծությունից, երբ որ Նա վեր կենա երկիրը սարսեցնելու» (Եսայի 2.19):

Աստծո փառքն այնքան անդիմադրելի է, որ երբ Նա Սինայի մոտ սև ամպով քողարկված երևաց Իսրայելի զավակներին, ժողովուրդը սարսափից աղաղակեց և ետ գնաց: Մովսեսն այսպես է նկարագրում սա.

> — «Տերն այս խոսքերը խոսեց այն սարի վրա, կրակի, ամպի և մառախուղի միջից բարձր ձայնով, ձեր ամբողջ ժողովքի հետ… Եվ եղավ, երբ որ լսեցիք այն ձայնը խավարի միջից, սարը կրակով վառված ժամանակ, Ինձ մոտ եկաք դուք, այսինքն՝ ձեր ցեղերի բոլոր գլխավորները և ձեր ծերերը, և ասացիք. «Ահա մեր Տեր Աստված մեզ ցույց է տալիս Իր փառքը և մեծությունը, և Նրա ձայնը լսում ենք կրակի միջից. այս օրը տեսանք, որ Աստված մարդու հետ խոսեց, և մարդը ողջ մնաց: Եվ հիմա ինչո՞ւ մեռնենք (որովհետև այս մեծ կրակը մեզ սպառելու է), եթե մենք մեր Տեր Աստծո ձայնը կրկին լսելու լինենք, կմեռնենք»»:
>
> — ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 5.22-25

Թեև նրանք տեսան Աստծուն՝ պարուրված ամպի հաստ շերտով, սակայն այն չէր կարող թաքցնել Նրա փառքի փայլը:

Այն ամենը, ինչն Աստծուն Աստված է դարձնում

Ի՞նչ է Տիրոջ փառքը: Որպես պատասխան՝ նայենք, թե սարի վրա Մովսեսն ինչ խնդրեց Աստծուց: Նա ասաց.

> «…Աղաչո՛ւմ եմ, Քո փառքը ցո՛ւյց տուր ինձ»:
>
> — ԵԼԻՑ 33.18

Եբրայերեն «փառք» բառը, որը Մովսեսն օգտագործում է Ելից 33.18-ում, *«կաբոդ»*-ն է: *Սթրոնգի աստվածաշնչյան բառարանը* սահմանում է այն որպես «ինչ-որ բանի քաշ, բայց փոխաբերական և դրական իմաստով»: Այդ խոսքը սահմանվում է նաև որպես վեհություն, առատություն և պատիվ: Մովսեսը խնդրում էր. «Ցո՛ւյց տուր Քեզ Քո ամբողջ վեհությամբ»: Ուշադրություն դարձրեք, թե ինչ պատասխանեց Աստված.

> «Իմ ամբողջ բարությունը քո առջևից պիտի անցկացնեմ, և Տիրոջ անունը քո առջև պիտի կանչեմ…»:
>
> — ԵԼԻՑ 33.19

Մովսեսը խնդրեց Նրա ամբողջ փառքը, իսկ Աստված խոսեց այդ մասին՝ ասելով. «Իմ ամբողջ բարությունը…»: Եբրայերեն «բարություն» բառը «թուբ»-ն է, որը նշանակում է *«բարի՝ ամենալայն իմաստով»*: Այլ խոսքով՝ առանց որևէ բան պահելու:

Այնուհետև Աստված ասաց. «Ես կկանչեմ Տիրոջ անունը քո առջև»: Մինչև երկրային թագավորի գահի սրահ մտնելը, նրա անունը նախապես հայտարարվում է: Դրանից հետո նա իր շուքով մտնում է սրահ: Երևում է թագավորի մեծությունը, և բոլորին պարզ է դառնում, թե ով է նա: Եթե այդ թագավորը հասարակ հագնված և առանց ուղեկցորդների իր երկրի քաղաքներից մեկի փողոցում լիներ, ապա, միգուցե, մարդիկ նրա կողքով անցնելիս՝ չիմանային, թե իրականում ով է նա: Այնպես որ, Աստված, ըստ էության, նույնը կատա-

րեց Մովսեսի համար: Նա ասում է. «Ես կհայտնեմ Իմ անունը և կանցնեմ քո առջևից ամբողջ Իմ շուքով»:

Այսպիսով, մենք կարող ենք տեսնել, որ Աստծո փառքն այն ամենն է, ինչ Աստծուն Աստված է դարձնում: Աստծո բոլոր առանձնահատկությունները, իշխանությունը, զորությունը, իմաստությունը, մեծությունը պարունակվում են Աստծո փառքի մեջ: Չկա ոչ մի պահված բան:

Նրա փառքը հայտնվում է Քրիստոսում

Մենք գիտենք, որ Տիրոջ փառքը հայտնվում է Հիսուս Քրիստոսի դեմքում (տե՛ս Բ Կորնթ. 4.6): Շատերն են պնդել, որ տեսիլքով տեսել են Հիսուսին և նայել Նրա դեմքին: Սա շատ հնարավոր է: Պողոսն ասում է. «Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ՝ դեմ առ դեմ…» (Ա Կորնթ. 13.12): Նրա փառքը քողարկված է մուգ ապակիով, որովհետև ոչ մի մարդ չի կարող նայել Նրա ամբողջական փառքին և կենդանի մնալ:

Գուցե ինչ-որ մեկը հարցնի. «Բայց աշակերտները նայեցին Հիսուսի դեմքին այն բանից հետո, երբ Նա հարություն առավ մեռելներից»: Իհարկե սա ճիշտ է, բայց պատճառն այն է, որ Նա ամբողջությամբ չէր դրսևորել Իր փառքը: Կային մարդիկ, ովքեր տեսել էին Տիրոջը նույնիսկ Հին կտակարանում, բայց Նա չէր հայտնվել Իր փառքով: Տերը հայտնվել էր Աբրահամին Մամբրեի կաղնիների մեջ (տե՛ս Ծննդ. 18.1,2): Հեսուն նայեց Տիրոջ երեսին մինչև Երիքովը զավթելը (տե՛ս Հեսու 5.13,14): Տերն ասաց նրան. «…Ոտքերիցդ կոշիկներդ հանի՛ր, որովհետև քո կանգնած տեղը սուրբ է…» (15-րդ խոսք):

Այդպես էր նաև Հիսուսի հարությունից հետո: Աշակերտները ձուկ կերան Հիսուսի հետ Տիբերիայի ծովի ափին (տե՛ս Հովհ. 21.9,10): Երկու աշակերտ քայլում էին Հիսուսի հետ Էմմաուսի ճանապարհով, «բայց նրանց աչքերը բռնված էին» (Ղուկ. 24.16): Բոլոր այս մարդիկ կարողացան տեսնել Հիսուսի երեսը, քանի որ Նա բացահայտ կերպով չէր ցուցադրում Իր փառքը:

Ի տարբերություն սրա՝ Հովհաննես առաքյալը տեսավ Տիրոջը Հոգու մեջ, և այս հանդիպումը միանգամայն այլ էր ծովի մոտ Նրա հետ ձուկ ուտելուց, որովհետև Հովհաննեսը տեսավ Նրան Իր փառքով:

> «Եվ կիրակի օրը եղա Հոգում, և իմ ետևից մի մեծ ձայն լսեցի, ինչպես փողի ձայն… Եվ ես ետ դարձա այն ձայնը տեսնելու, որ ինձ հետ խոսում էր, և երբ որ դարձա, յոթ ոսկե ճրագակալ տեսա, և այն յոթ ճրագակալների միջև մեկը՝ Մարդու Որդու նման, պճղնավոր պատմուճան հագած և ստինքների մոտ ոսկի գոտի կապած: Եվ Նրա գլուխը և մազերը սպիտակ բրդի և ձյունի պես սպիտակ էին, և Նրա աչքերը՝ կրակի բոցի պես, և Նրա ձայնը՝ շատ ջրերի ձայնի պես… Եվ Իր աջ ձեռքում յոթ աստղեր ուներ, և Նրա բերանից սրած երկբերան սուր էր դուրս գալիս, և Նրա երեսն ինչպես արեգակը, որ ճառագայթում է իր զորությամբ: Եվ երբ որ տեսա Նրան, մեռածի պես ընկա Նրա ոտքերի առջև…»:
>
> — ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 1.10,12-17

Ուշադրություն դարձրեք, որ Նրա դեմքը նման էր արեգակի, որ ճառագայթում է իր զորությամբ: Այդ դեպքում ինչպե՞ս Հովհաննեսը կարող էր նայել Նրան: Պատճառն այն է, որ Նա Հոգու մեջ էր, ինչպես և Եսային էր Հոգու մեջ, երբ տեսավ գահը, սերովբեներին, որ գահի վերևում էին, և Նրան, Ով նստած էր գահի վրա (տե՛ս Եսայի 6.1-4): Մովսեսը չէր կարող նայել Աստծո երեսին, որովհետև նա իր ֆիզիկական մարմնում էր:

Նա մտածված պահում է Իր փառքի հայտնությունը, որպեսզի փորձի մեզ

Տիրոջ փառքն այն ամենն է, ինչ կա Աստծո մեջ: Սա գերազանցում է ընկալելու կամ հասկանալու մեր կարողությունը, որովհետև նույնիսկ զորավոր սերովբեները շարունակում են աղաղակել. «Սո՜ւրբ, սո՜ւրբ, սո՜ւրբ…»՝ ամբողջովին համակված ահով և զարմանքով:

Նրա գահի առջև կանգնած չորս կենդանիներն աղաղակում են. «…Սո՜ւրբ, սո՜ւրբ, սո՜ւրբ, Տե՛ր Աստված Ամենակարող, Որ էր և Որ է և Որ գալու է» (Հայտն. 4.8):

> «Եվ երբ որ այն կենդանիները փառք և պատիվ և գոհություն են տալիս աթոռի վրա Նստողին, Ով կենդանի է հավիտյանս հավիտենից, քսանչորս երեցներն ընկնում են աթոռի վրա Նստողի առջև և երկրպագում Նրան, Ով կենդանի է հավիտյանս հավիտենից, և իրենց պսակները գցում են աթոռի առջև և ասում. «Արժանի ես, Տե՛ր, որ առնես փառքը և պատիվը և զորությունը, որ Դու ստեղծեցիր ամեն բաները և Քո կամենալով կան և ստեղծվեցին»»:
>
> — ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 4.9-11

Նա արժանի է ավելի շատ փառքի, քան որևէ կենդանի արարած կարող է տալ Նրան ամբողջ հավիտենության ընթացքում:

Մենք պետք է հիշենք, որ ծառայում ենք Նրան, Ով ստեղծել է տիեզերքը և երկիրը: Նա հավիտենից է և հավիտյան էլ կլինի: Չկա ոչ ոք Նրա նման: Իր իմաստությամբ Աստված մտածված պահում է Իր փառքի հայտնությունը, որպեսզի տեսնի՝ կծառայե՞նք Նրան սիրով և երկյուղածությամբ, թե՞ մեր ուշադրությունը կդարձնենք այն բաների վրա, որոնք փառավոր են երկրում: Բայց եթե այդ երկրային փառավոր բաները համեմատենք աստվածայինի հետ, ապա դրանք կմարեն:

Մենք չենք կարող ակնկալել, որ կարժանանանք Նրա ներկայությանը՝ անհարգալից վերաբերմունք ունենալով։

ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ, ՓԱՌՔ, ԴԱՏԱՍՏԱՆ

ՄԱՍ 2

«Քահանաները չկարողացան կանգնել ծառայելու ամպի պատճառով, որովհետև Տիրոջ փառքը լցրել էր Աստծո տունը»:

— Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 5.14

Երբ Մովսեսը կանգնեցրեց խորանը, հաստատվեց աստվածային կարգ ու կանոնը: Ամեն ինչ ճիշտ տեղում էր.

«Եվ մի ամպ ծածկեց ժողովքի վրանը, և Տիրոջ փառքը լցրեց խորանը: Եվ Մովսեսը չէր կարողանում մտնել ժողովքի վրանը, որովհետև ամպը նրա վրա նստել էր, և Տիրոջ փառքը լցրել էր խորանը»:

— ԵԼԻՑ 40.34,35

Այն բանից հետո, երբ մենք քննարկեցինք Աստծո փառքը, պարզ է դառնում, թե ինչու նույնիսկ Աստծո ընկերը՝ Մովսեսը, չէր կարող մտնել այդտեղ: Խորանն ասես ընկղմված լիներ Տիրոջ փառքի մեջ:

Աստծո դրսևորված փառքը բնակվեց Իսրայել ժողովրդի մեջ և շատ մեծ օրհնություններ բերեց: Նրա փառավոր ներկայությունը մատակարարում, առաջնորդում, բժշկում և պաշտպանում էր մարդկանց: Ոչ մի թշնամի չէր կարող կանգնել Իսրայելի առջև: Աստծո Խոսքի առատ հայտնություն կար: Բացի այդ, Տիրոջ փառքի ամպը

պահում էր Իսրայելի զավակներին անապատի տապից՝ ցերեկը և ջերմություն ու լույս էր տալիս նրանց գիշերը: Նրանք ոչնչի կարիք չունեին:

Դատաստան

Աստված նախապես կարգադրել էր Մովսեսին. «Եվ դու քեզ մոտեցրու քո եղբայր Ահարոնին և նրա որդիներին նրա հետ Իսրայելի որդիների միջից, որ Ինձ քահանայություն անեն, Ահարոնին և Ահարոնի որդիներ Նադաբին և Աբիուդին, Եղիազարին և Իթամարին» (Ելից 28.1):

Այս մարդիկ առանձնացվել և կրթվել էին Տիրոջը ծառայելու և մարդկանց համար խրամատում կանգնելու համար: Պաշտամունքի համար նրանց պարտականություններն ու գործելակերպը սահմանված էին խիստ որոշակի կարգադրություններով, որոնք փոխանցվել էին Մովսեսին Աստծո կողմից: Նրանց ուսուցումն աստվածային կարգ ուկանոնի մասն էր կազմում: Այդ որոշակի կարգադրություններից և ուսուցումից հետո եկավ այդ մարդկանց ծառայության նշանակելու ժամանակը: Ամեն բան ընթանում էր իր հունով. նրանց ծառայությունը սկսվեց:

Ուշադիր կարդացեք, թե ինչ արեցին այդ քահանաներից երկուսը, երբ Տիրոջ փառքը հայտնվեց խորանում:

> «Եվ Ահարոնի որդիները՝ Նադաբն ու Աբիուդը, ամեն մեկն իր բուրվառն առավ և նրանց մեջ կրակ դրին և վրան խունկ դրին և Տիրոջ առջև օտար (անգլ.՝ անսուրբ) կրակ մատուցեցին, որ Ինքը չէր պատվիրել նրանց»:
>
> — ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 10.1

Ուշադրություն դարձրեք, որ Նադաբը և Աբիուդն *անսուրբ* կրակ մատուցեցին Տիրոջ ներկայության առջև: *Վերբերի* բառարանում *«անսուրբ»* բառի սահմանումներից մեկը հետևյալն է. *«առանց երկյուղի անարգանք կամ արհամարհանք սուրբ բաների հանդեպ»*: Սա նշանակում է սովորականի պես վարվել այն բաների հետ, որոնք

Աստված սուրբ կամ առանձնացված է համարում: Նադաբն ու Աբիուդը վերցրին Տիրոջ պաշտամունքի համար առանձնացված բուրվառները, լցրին դրանք այնպիսի կրակով և խնկով, որոնք իրենք ընտրեցին, և որը սահմանված չէր Աստծո կողմից: Նրանք անհոգ վերաբերմունք ցուցաբերեցին այն ամենի նկատմամբ, որոնք Աստված սուրբ էր անվանել: Անընդունելի զոհ մատուցելով նրանք ցույց տվեցին, որ Աստծո երկյուղ չունեն: Ահա թե ինչ կատարվեց դրա արդյունքում.

> «Եվ Տիրոջ առջևից կրակ ելավ և սպառեց նրանց, և նրանք մեռան Տիրոջ առջև»:
>
> — ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 10.2

Այս երկուսն անմիջապես դատաստան ընդունեցին իրենց անհարգալից վերաբերմունքի համար. նրանք անմիջապես մահացան: Նադաբն ու Աբիուդը աներկյուղ քայլ արեցին Աստծո փառքի դրսևորումից հետո: Թեև նրանք քահանաներ էին, այնուամենայնիվ, նրանց պարտականությունն էր՝ պատվել Աստծուն: Նրանք մեղանչեցին՝ մոտենալով Սուրբ Աստծուն այնպես, ինչպես սովորական մեկին: Նրանք այնքան էին ընտելացել Նրա ներկայությանը, որ այն սովորական էր դարձել նրանց համար: Այժմ լսե՛ք, թե ինչ ասաց Մովսեսն անմիջապես այն բանից հետո, երբ նրանք դատապարտվեցին մահվան:

> «Եվ Մովսեսն ասաց Ահարոնին. «Սա այն է, որ Տերը խոսեց՝ ասելով. «Ինձ մոտեցողներով պիտի սրբվեմ և ամբողջ ժողովրդի առջև պիտի փառավորվեմ»: Եվ Ահարոնը լռեց»:
>
> — ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 10.3

Աստված արդեն պարզ ասել էր, որ անհարգալից վերաբերմունքով անհնար է մնալ Իր ներկայության մեջ: Աստված չի հայհոյվում: Այսօր էլ ոչինչ չի փոխվել. Նա նույն Սուրբ Աստվածն է: Մենք չենք կարող ակնկալել, որ կարժանանանք Նրա ներկայությանը՝ անհարգալից վերաբերմունք ունենալով:

Նադաբը և Աբիուդը Մովսեսի եղբորորդիներն էին: Բայց Մովսեսը լավ գիտեր, որ պետք չէ քննարկել Աստծո դատաստանը. նա գիտեր, որ Աստված արդար է: Փաստորեն՝ Մովսեսը զգուշացրեց Ահարոնին և նրա մյուս երկու որդիներին՝ նույնիսկ չսգալ իրենց եղբայրների համար, որպեսզի իրենք էլ չմահանան: Նրանց սուգը ավելի շատ կանպատվեր Տիրոջը: Այնպես որ, նրանց մարմինները դուրս հանեցին ժողովրդի բանակից և այրեցին:

Եվս մեկ անգամ տեսնում ենք այս հաջորդականությունը՝ աստվածային կարգ ու կանոն, Աստծո դրսևորված փառք, հետո՝ դատաստան՝ աներկյուղ վերաբերմունքի համար:

Նոր սրբարան

Գրեթե հինգ հարյուր տարի անց Դավիթ թագավորի որդի Սողոմոնը սկսեց տաճար կառուցել, որտեղ կլիներ Աստծո ներկայությունը: Սա խոշոր նախաձեռնություն էր: Շինանյութի պաշարի մեծ մասը կուտակվել էր Դավիթ թագավորի գահակալության ժամանակ. այն ահռելի էր: Իր մահվանից առաջ Դավիթը կարգադրեց Սողոմոնին.

> «Ես շատ ջանք եմ թափել Տիրոջ տաճարի շինարարությանը շինանյութեր մատակարարելու համար. մոտավորապես չորս հազար տոննա ոսկի, մոտավորապես քառասուն հազար տոննա արծաթ և այնքան երկաթ ու պղինձ, որ անկարելի է կշռել: Ես նույնպես կուտակել եմ փայտանյութեր և քարեր պատերի համար, թեև դու, միգուցե, դրանց ավելացնելու կարիք ունենաս: Քո տրամադրության տակ կան շատ հմուտ որմնադիրներ, հյուսներ և ամեն տեսակի արհեստավորներ: Նրանք ոսկու և արծաթի մշակման մասնագետներ են և պղինձ ու երկաթ կռողներ: Այժմ սկսի՛ր աշխատանքը, և թո՛ղ Տերը քեզ հետ լինի»
>
> — Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 22.14-16, NLT

Սողոմոնն էլ իր հերթին ավելացրեց այդ շինանյութերը և սկսեց կառուցել տաճարն իր թագավորության չորրորդ տարում: Տաճարի

նախագիծը սքանչելի էր, նրա զարդարանքը և մանրամասներն արտասովոր էին: Նույնիսկ տասնյակ հազարավոր աշխատուժի առկայությամբ շինանյութի կուտակումը և տաճարի կառուցումը տևեց յոթ տարի: Այնուհետև կարդում ենք.

> «Եվ այսպես վերջացավ այն ամեն գործը, որ Սողոմոնն արեց Տիրոջ տան համար…»:
>
> — Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 5.1

Սողոմոնը հավաքեց ամբողջ Իսրայելը Երուսաղեմում, որտեղ գտնվում էր տաճարը: «Եվ քահանաները բերին Տիրոջ ուխտի տապանակն իր տեղը…» (Բ Մնաց. 5.7): Բոլոր քահանաները սրբել էին իրենց: Ոչ մի անարգանք չպետք է լիներ Աստծո ներկայության մեջ: Նրանք հիշում էին իրենց հեռավոր հարազատներ Նադաբի և Աբիուդի ճակատագիրը:

Հետո ղևտացի երաժիշտներն ու երգիչները սպիտակ բեհեզից հագուստներ հագած կանգնեցին զոհասեղանի արևելյան կողմում և նրանց հետ հարյուր քսան քահանաներ, ովքեր փողեր էին փչում:

Եվս մեկ անգամ մեծ հոգատարության, ժամանակի, մեծածավալ աշխատանքի ու պատրաստությունների շնորհիվ հաստատվեց աստվածային կարգ ու կանոնը: Իսկ ի՞նչ կատարվեց դրանից հետո: Եկե՛ք կարդանք.

> «Եվ էր ինչպես մեկ՝ փող հնչեցնողները և երգողները, մեկ ձայն էր լսվում Տիրոջը օրհնելիս և գովելիս: Եվ հենց որ փողերի և ծնծղաների և նվագարանների ձայնը բարձրացրին՝ Տիրոջը օրհնելով, որովհետև բարի է, որովհետև Նրա ողորմությունը հավիտյան է, այն ժամանակ Տիրոջ տունը լցրեց ամպը, և քահանաները չկարողացան կանգնել ծառայելու ամպի պատճառով, որովհետև Տիրոջ փառքը լցրել էր Աստծո տունը»
>
> — Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 5.13,14

Երբ հաստատվեց աստվածային կարգ ու կանոնը, դրսևորվեց Տիրոջ փառքը: Աստծո փառքը զորավոր էր. քահանաները չէին կարողանում ծառայել, քանի որ Տիրոջ փառքը լցրել էր տաճարը:

Դատաստան

Այն բանից հետո, երբ դրսևորվեց Աստծո փառքը, մենք կրկին անարգանք ենք տեսնում Նրա ներկայության և Խոսքի հանդեպ: Թեև իսրայելցիները գիտեին Աստծո կամքը, բայց նրանց սրտում անհոգություն կար այն բաների հանդեպ, որոնք Տերը սուրբ և առանձնացված էր համարում:

> «Քահանաների բոլոր իշխաններն ու ժողովուրդն էլ խիստ շատ անօրենություններ արեցին ուրիշ ազգերի բոլոր գարշությունների պես և պղծեցին Տիրոջ տունը, որ Նա սրբել էր Երուսաղեմում: Եվ նրանց հայրերի Տեր Աստված ուղարկում էր նրանց Իր պատգամավորների ձեռքով առավոտ կանուխ Իր պատգամները, որովհետև խնայում էր Իր ժողովրդին ու Իր բնակարանը: Բայց նրանք անարգում էին Աստծո պատգամավորներին և արհամարհում էին Նրա խոսքերը և ծաղրում էին Նրա մարգարեներին…»:
>
> — Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 36.14-16

Նրանք ծիծաղեցին Աստծո ավետաբերների վրա և ուշադիր չեղան նրանց զգուշացրած խոսքերի հանդեպ: Այդ ժողովուրդը ծաղրեց Նրա մարգարեներին: Տիրոջ երկյուղի բացակայությունը կա նաև այսօր:

Մի անգամ ծառայում էի մի մեծ եկեղեցում և ազդեցիկ ուղերձ էի քարոզում՝ Հիսուսին որպես Տեր ընդունելու և հնազանդվելու մասին: Մեր անձնակազմի աշխատակիցներից մեկի կինը երեխայի հետ դուրս եկավ դահլիճից և գնաց նախասրահ, որտեղ ծառայությունը հեռարձակվում էր հեռուստաէկրանի միջոցով: Նա լսեց, թե ինչպես էին այդ եկեղեցուց երկու կին քննարկում քարոզը. «Նա իրեն ո՞ւմ տեղն է դրել: Անջատե՛ք այն»,– ծաղրանքով ասացին նրանք: *Որտե՞ղ է Տիրոջ երկյուղը:*

Իսրայելը և Հուդան բազմիցս դատաստանի ենթարկվեցին, քանի որ երկյուղ և հարգանք չունեին Աստծո սուրբ ներկայության և Նրա Խոսքի հանդեպ: Նրանց դատաստանը հասավ իր կիզակետին, երբ Աբրահամի ժառանգներին տարան Բաբելոն՝ գերության: Կարդացե՛ք այս մեջբերումը.

> «Բայց նրանք անարգում էին Աստծո պատգամավորներին և արհամարհում էին Նրա խոսքերը և ծաղրում էին Նրա մարգարեներին, մինչև որ բարձրացավ Տիրոջ բարկությունն Իր ժողովրդի վրա, այնպես որ բժշկություն չմնաց: Եվ նրանց վրա բերեց քաղդեացիների թագավորին, որ նա էլ սրով սպանեց նրանց երիտասարդներին իրենց սրբարանի տանը, և չխնայեց երիտասարդին, կույսին, ծերին և ալևորին. բոլորը նրա ձեռքը մատնեց: Եվ Աստծո տան բոլոր անոթները՝ մեծերը և փոքրերը և Տիրոջ տան գանձերը և թագավորի և նրա իշխանների գանձերը. բոլորը տարավ Բաբելոն: Եվ այրեցին Աստծո տունը և քանդեցին Երուսաղեմի պարիսպը և նրա ամեն պալատները կրակով այրեցին և նրա բոլոր ազնիվ բաները փչացրին»:
>
> — Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 36.16-19

Ես ցանկանում եմ, որպեսզի ուշադիր լինեք և մտածեք այն մասին, ինչ պատրաստվում եմ ասել: Մենք խոսեցինք երեք պատմության՝ պարտեզի, խորանի և տաճարի մասին: Յուրաքանչյուրի դեպքում դատաստանը խիստ էր. արդյունքում եղան ավերածություններ և մահ:

Ամենազգաստացնողն այն փաստն է, որ մենք չենք խոսում այնպիսի մարդկանց մասին, ովքեր երբևէ չէին վերապրել Աստծո փառքը կամ Նրա ներկայությունը: Այս դատաստաններն ուղղված էին այն մարդկանց, ովքեր ոչ միայն լսել էին Աստծո Խոսքը, այլ նաև ապրել Նրա ներկայության մեջ և վերապրել Նրա փառքը:

Այժմ Հին կտակարանից անցնենք Նոր կտակարանի ժամանակներին: Նոր կտակարանում նույնպես կհայտնաբերենք որոշ զգաստացնող և հիմնավոր ճշմարտություններ:

Հիսուսը պարզ ասաց, որ Իրեն հետևելու համար նախ՝ պետք է գին վճարենք...
Այդ գինն արժե մեր կյանքը:

ՎԵՑԵՐՈՐԴ

ՆՈՐ ՍՐԲԱՐԱՆ

«...Որովհետև դուք կենդանի Աստծո տաճարն եք, ինչպես Աստված ասաց, թե նրանցում կբնակվեմ և նրանցում ման կգամ...»:

— Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 6.16

Ըստ Հին ուխտի՝ Աստծո փառավոր ներկայությունը բնակվում էր նախ՝ խորանում, ապա՝ Սողոմոնի տաճարում: Աստված պատրաստվում էր տեղափոխվել այն բնակարանը, որը միշտ փափագում էր: Այդ տաճարը պատրաստված չէ քարերից, այն Իր որդիների և դուստրերի սրտում է:

Տիրոջ համար պատրաստել բարեկարգ ժողովուրդ

Եվս մեկ անգամ պետք է հաստատվեր աստվածային կարգ ու կանոն: Այս անգամ շեշտը դրվելու էր ոչ թե արտաքին, այլ ներքին կարգ ու կանոնի վրա: Տիրոջ փառքը հայտնվելու էր սրտի ծածուկ մասում:

Այս կարգավորման և ձևափոխման գործընթացը սկսվեց Հովհաննես Մկրտչի ծառայությամբ: Սխալ կլիներ Հովհաննեսին դիտարկել որպես Հին կտակարանի մարգարե, քանի որ Աստվածաշունչը նկարագրում է նրա ծառայությունը որպես «Հիսուս Քրիստոսի Ավետարանի սկիզբ» (Մարկ. 1.1): Բոլոր չորս Ավետարանների սկզբում գրված է

այն մասին, որ նա քարոզում էր: Հիսուսն ասաց. «Օրենքը և մարգարեները մինչև Հովհաննեսն են…» (Ղուկ. 16.16): Ուշադրություն դարձրեք, որ Նա չասաց. «Օրենքը և մարգարեները մինչև *Իմ* գալն են»:

Հովհաննեսի ծնունդի մասին նրա հայրն իմացավ հրեշտակի միջոցով: Նրա ծառայությունն ընդհանրացվում է այս խոսքերով. «Եվ Իսրայելի որդիներից շատերին կդարձնի դեպի իրենց Տեր Աստվածը …որ Տիրոջ համար բարեկարգ ժողովուրդ պատրաստի» (Ղուկ. 1.16,17):

Ուշադրություն դարձրեք, որ նա պետք է «Տիրոջ համար բարեկարգ ժողովուրդ պատրաստեր»: Ինչպես Մովսեսի օրերում էր Աստված օծել արհեստավորներին խորանը պատրաստելու համար, այնպես էլ Նա օծել էր Հովհաննեսին՝ Իր անձեռակերտ տաճարը պատրաստելու համար: Աստծո Հոգով նա սկսեց նոր տաճարի պատրաստման գործընթացը:

Եսային մարգարեանում էր Հովհաննեսի մասին.

> «Անապատի մեջ կանչողի ձայնը. «Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը… Ամեն ձոր բարձրանա, և ամեն սար ու բլուր ցածրանա, և ծուռն ուղիղ դառնա, և խորդուբորդ տեղերը՝ հարթահատակ: Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը…»»:
>
> — ԵՍԱՅԻ 40.3-5

Այս սարերը և բլուրները մարդկանց ուղիներն են, որոնք հակառակ են Աստծուն: Մարդկային հպարտությունը պետք է ցածրացվեր: Մարդու անարգ սիրտը և հիմարությունը հակառակության էին հանդիպելու. դրանք հարթեցվելու էին, որպեսզի մարդը պատրաստ լիներ Տիրոջ փառքի դրսևորմանը:

Վերը նշված խոսքում «խորդուբորդ» բառը եբրայերենում *«աքոբ»*-ն է: *Սթրոնգի բառարանը* սահմանում է այն որպես «խարդախ, խորամանկ, ապականված կամ խորդուբորդ»: Ավելի հեշտ է հասկանալ, որ խորդուբորդ տեղերը հարթ տարածություններին չեն վերաբերում: «Աքոբ» բառի ավելի ճշգրիտ թարգմանությունը *«խորամանկ»* բառն է:

Հովհաննեսն ուղարկված չէր նրանց մոտ, ովքեր չգիտեին Տիրոջ անունը: Նա ուղարկված էր նրանց մոտ, ովքեր ուխտի մեջ էին Եհովայի հետ: Իսրայելը կրոնական էր դարձել, սակայն հավատում էր, որ ամեն ինչ լավ է: Իրականում Աստված նայում էր իսրայելցիներին՝ որպես կորած ոչխարների: Հազարավոր մարդիկ, ովքեր հավատարմորեն ժողովարան էին հաճախում, անտեղյակ էին մնում իրենց սրտի իրական վիճակին: Նրանք խաբված էին և կարծում էին, որ իրենց երկրպագությունն ու ծառայությունն ընդունելի են Աստծուն:

Հովհաննեսը բացահայտեց նրանց խաբվածությունը և պատռեց նրանց խաբեության վարագույրը: Նա ցնցեց այն անկայուն հիմքը, որին հենվելով՝ արդարացնում էին իրենց՝ որպես Աբրահամի սերունդ: Նա լույս սփռեց նրանց կրոնական առաջնորդների ուսմունքային սխալների վրա և ցույց տվեց, որ նրանց բանաձևային աղոթքների մեջ չկար փափագ և զորություն: Նա ցույց տվեց, որ տասանորդ տալն անօգուտ է, երբ նրանք անարգում և նույնիսկ թալանում են աղքատներին: Նա ցույց տվեց նրանց կրոնական ավանդույթների դատարկությունը, որոնց մեջ չկար կյանք: Նա պարզ ասաց, որ նրանց խստացած սրտերը հեռու են Աստծուց:

Հովհաննեսը եկավ՝ ապաշխարության մկրտություն քարոզելով (տե՛ս Մարկ. 1.4): «Մկրտել» բառը հունարեն *«բապտիզմա»*-ն է, որը սահմանվում է որպես «ընկղմել»: Ըստ Վեբսթերի բառարանի՝ «ընկղմել» նշանակում է «սուզել»: Այնպես որ, Հովհաննեսի ուղերձը մասնակի ապաշխարության մասին չէր, այլ՝ սրտի լիարժեք փոփոխության:

Հովհաննեսի համարձակորեն հակառակվելը կործանեց իսրայելցիների կեղծ ապահովությունը, որն առաջացել էր իրենց մեջ արմատացած խաբվածություններից: Նա կոչ էր անում մարդկանց՝ ի սրտե վերադառնալ Աստծուն: Հովհաննեսի աստվածային առաջադրանքը հարթեցրեց նրանց սրտի հողը, ովքեր ընդունեցին իրեն: Հպարտության բարձր սարերը և կրոնի ամբարտավան բլուրները հարթեցվեցին՝ պատրաստելով մարդկանց՝ Հիսուսի ծառայությունն ընդունելու համար:

Ճարտարապետը

Երբ ավարտվեց Հովհաննեսի աշխատանքը, Հիսուսը եկավ, որպեսզի պատրաստեր տաճարը խոնարհության հիմքի վրա, մինչև շինարարական գործընթացի ավարտը: Հիսուսը դրեց հիմքը և կառուցեց, «որովհետև ոչ ոք ուրիշ հիմք չի կարող դնել, քան թե որ դրված է, որ է Հիսուս Քրիստոսը» (Ա Կորնթ. 3.11):

Եվս մեկ անգամ Աստծո Խոսքը հաստատում է աստվածային կարգ ու կանոնը: Բայց այս անգամ Նրա Խոսքը հայտնվեց մարմնով: Հիսուսը մեր Ճարտարապետն է (տե՛ս Եբր. 3.1-4) ոչ միայն Իր ուսմունքներով, այլ նաև Իր ապրած կյանքով: Հովհաննեսն ամեն առումով ցույց տվեց մարդկանց Տիրոջ ընդունելի ճանապարհը:

Նրանք, ովքեր ընդունեցին Հովհաննեսի ծառայությունը, պատրաստ էին ընդունել իրենց Ճարտարապետի աշխատանքը: Եվ ընդհակառակը՝ նրանք, ովքեր մերժեցին Հովհաննեսին, պատրաստ չէին ընդունել Հիսուսի խոսքերը, որովհետև նրանց սիրտն անկայուն էր, քանի որ այնտեղ որևէ հիմք չէր դրվել: Նրանք անպատրաստ շինարարական տարածքներ էին, որոնք սրբարանի համար չէին կարող հենարան լինել:

Հիսուսը դիմեց կրոնական, հպարտ մարդկանց, ովքեր հակառակվում էին Իրեն. «Որովհետև Հովհաննեսը եկավ ձեզ մոտ արդարության ճանապարհով, և չհավատացիք նրան, բայց մաքսավորները և պոռնիկները հավատացին նրան, և դուք տեսնելով՝ չզղջացիք հետո, որ հավատաք նրան» (Մատթ. 21.32): Հովհաննեսի ուղերձն ընդունվեց այն մեղավորների կողմից, ովքեր բացել էին իրենց սիրտը Հիսուսի համար: «Եվ բոլոր մաքսավորները և մեղավորները մոտենում էին Նրան [Հիսուսին], որ լսեն Նրանից» (Ղուկ. 15.1): Նրանք չունեին մխիթարություն իրենց կրոնի մեջ և գիտեին, որ Փրկչի կարիք ունեն:

Պատրաստության վերջին քայլը

Երբ Հիսուսն իրականացրեց Հոր կամքը՝ կատարելով Իր երկրային ծառայությունը, Կայիափա քահանայապետի կողմից դատապարտվեց խաչելության՝ որպես զոհաբերվող Գառ: Սա վերջնական և ամենավճռական քայլն էր՝ Աստծո տաճարը մարդու սրտում կառուցելու համար: Հիսուսի զոհը ոչնչացրեց մեղավոր մարդու բնությունը, որը Ադամի անկումից ի վեր բաժանում էր նրան Աստծո ներկայությունից:

Մենք տեսանք Գառան զոհաբերման նախատիպը խորանի կանգնեցման և տաճարի նվիրման ժամանակ: Երբ խորանը կանգնեցվեց, քահանայապետ Ահարոնը զոհաբերություններ մատուցեց Տիրոջը: Զոհերից մեկն անարատ գառն էր: Զոհը մատուցելուց հետո «Մովսեսն ու Ահարոնը ժողովքի խորանը մտան, և դուրս գալիս՝ օրհնեցին ժողովրդին, և Տիրոջ փառքն ամբողջ ժողովրդին երևաց» (Ղևտ. 9.23): Այս դեպքից քիչ անց Նադաբը և Աբիուդը դատաստանի ենթարկվեցին և մահացան:

Աստծո Գառան զոհաբերման հաջորդ նախատիպը Սողոմոնի տաճարի նվիրումն է:

> «Եվ թագավորը և ամբողջ ժողովուրդը զոհեր էին մատուցում Տիրոջ առջև: Եվ Սողոմոն թագավորը քսաներկու հազար արջառ և հարյուր քսան հազար ոչխար զոհ արեց, այսպես թագավորն ու ամբողջ ժողովուրդն Աստծո տան նավակատիքն արին»:
>
> — Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 7.4,5

Տիրոջ փառքը դրսևորվեց տաճարում հենց նույն օրը:

Եբրայեցիներին գրված ուղերձի հեղինակը Քրիստոսի զոհը համեմատում է խորանում և տաճարում կատարված զոհաբերությունների հետ՝ ասելով.

> «Եվ ոչ թե նոխազների և զվարակների արյունով, այլ բուն Իր արյունով մեկ անգամ մտավ այն սրբատեղին և հավիտենական փրկություն գտավ»:
>
> — ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 9.12

Հիսուսը՝ Աստծո Գառը, խաչվեց՝ թափելով Իր անմեղ, արքայական արյան յուրաքանչյուր կաթիլը մեզ համար: Անմիջապես հետո տաճարի վարագույրը երկու մասի պատռվեց՝ վերևից ներքև (տե՛ս Ղուկ. 23.45): Եվ Աստված դուրս եկավ… Աստծո փառքն այլևս չէր հայտնվի ձեռակերտ տաճարում: Շուտով Նրա փառքը դրսևորվելու էր այն տաճարում, որտեղ Նա միշտ փափագում էր բնակվել:

Մեկ սիրտ և մեկ նպատակ

Այժմ կարդացե՛ք, թե ինչ կատարվեց Հիսուսի հարությունից կարճ ժամանակ անց.

> «Եվ երբ որ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միաբան մեկտեղ էին: Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին: Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ, ինչպես կրակից, և նստեց նրանց ամեն մեկի վրա»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ 2.1-3

Տիրոջ փառքը դրսևորվեց ևս մեկ անգամ: Ուշադրություն դարձրեք՝ «բոլորը միաբան մեկտեղ էին»: Սա *աստվածային կարգ ու կանոն* է: Ինչպե՞ս է հնարավոր մեկտեղել հարյուր քսան մարդու: Պատասխանը պարզ է. նրանք մահացած էին իրենց անձերի համար: Նրանք չունեին որևէ ծրագիր: Միակ կարևոր բանը նրանց համար Հիսուսի խոսքերին հնազանդվելն էր:

Մենք գիտենք, որ Հիսուսն Իր երեքուկես տարի տևող ծառայության ընթացքում ծառայել էր տասնյակ հազարավոր մարդկանց: Խաչելությունից և հարությունից հետո Նա հայտնվեց ավելի քան հինգ հարյուր հետևորդների (տե՛ս Ա Կորնթ. 15.6): Սակայն Պենտեկոստեի օրը, երբ Սուրբ Հոգին թափվեց, վերնատանն ընդամենը հարյուր քսան հոգի էին (տե՛ս Գործք 1.15):

Հետաքրքիր է նշել, որ մարդկանց թվաքանակը շարունակ նվազում էր և ոչ թե աճում: Որտե՞ղ էին այն հազարավորները խաչելութ-

յունից հետո: Ինչո՞ւ Նա հայտնվեց միայն հինգ հարյուր մարդու: Իսկ որտե՞ղ էին այդ հինգ հարյուրը Պենտեկոստեի օրը: Աստծո փառքը հայտնվեց միայն հարյուր քսան հոգու:

Իր հարությունից հետո Հիսուսը պատվիրեց նրանց՝ չհեռանալ Երուսաղեմից, այլ սպասել Հոր խոստմանը (տե՛ս Գործք 1.4): Ես հավատում եմ, որ սկզբում հինգ հարյուրն էլ սպասում էին խոստմանը: Բայց ամեն օր այդ խմբի քանակը նվազում էր: Միգուցե ոմանք իրենց անհամբերության պատճառով որոշում կայացրին. «Մենք պետք է մեր սեփական կյանքով զբաղվենք. Նրա գալն ուշանում է»: Մյուսները, հավանաբար, լքեցին վերնատունը, որպեսզի ավանդական կերպով երկրպագեն Աստծուն իրենց ժողովարաններում: Ոմանք էլ կարող էին հիշել Հիսուսի խոսքերը. «Մենք պետք է գնանք ամբողջ աշխարհով և քարոզենք Ավետարանը: Ավելի լավ է՝ հենց հիմա դա անենք»:

Ես հավատում եմ, որ Տերը սպասեց այնքան, մինչև մնացածները որոշում կայացրին. *«Քանի որ Տերը պատվիրեց մեզ՝ սպասել, մենք չենք շարժվի տեղից, նույնիսկ եթե փտենք»:* Միայն նրանք, ովքեր լիովին հնազանդվեցին Տիրոջը, այդպես կարողացան նվիրվել Նրան: Ո՛չ մի մարդ և ո՛չ մի բան այնքան կարևոր չէր նրանց համար, որքան Տիրոջ Խոսքը (տե՛ս Եսայի 66.2): Նրանք ունեին Աստծո երկյուղը:

Նրանք, ովքեր մնացին, ուշադիր լսում էին, թե ինչ է խոսում Հիսուսը ամբոխի հետ.

> «Եվ ով որ իր խաչը չվերցնի և Իմ ետևից գա, նա չի կարող Իմ աշակերտը լինել: Որովհետև ձեզնից ո՞վ է, որ կամենա աշտարակ շինել, և առաջ չնստի և ծախսը հաշվի, թե ավարտելու համար բավական բան ունի՞, որ միգուցե, երբ որ հիմքը դնի և չկարողանա ավարտել, ամեն տեսնողները սկսեն ծաղրել նրան և ասել, թե այս մարդը սկսեց շինել և չկարողացավ ավարտել: Արդ՝ այսպես էլ ձեզնից ամեն մեկը, որ իր ամբողջ ինչքից չհրաժարվի, չի կարող Ինձ աշակերտ լինել»:
>
> — ՂՈՒԿԱՍ 14.27-30,33

Հիսուսը պարզ ասաց, որ Իրեն հետևելու համար նախ պետք է գին վճարենք: Կա գին Հիսուսին հետևելու համար: Նա հստակեցնում է Իր ասածը. այդ գինն արժե մեր կյանքը:

Միգուցե հարցնեք. «Ես կարծում էի, որ փրկությունը ձրի պարգև է, որն անկարելի է վաստակել»: Այո՛, փրկությունը պարգև է, որը չի կարելի գնել կամ վաստակել: Սակայն դուք չեք կարող պահպանել այն, եթե դրա փոխարեն ձեր կյանքն ամբողջությամբ չտաք Աստծուն: Նույնիսկ պարգևը պետք է պահպանել, որպեսզի այն չկորչի կամ չգողացվի:

Հիսուսն ասում է. «…բայց ով որ համբերի մինչև վերջ, կապրի» (Մատթ. 10.22): Համբերելու զորությունը սեփական կյանքը հոժարությամբ տալու մեջ է:

Ճշմարիտ հավատացյալը Հիսուսի աշակերտն է, ով իր կյանքն ամբողջովին նվիրում է իր Տիրոջը: Աշակերտը հավատարիմ է մնում իր Տիրոջը մինչև վերջ: Դարձի եկած մարդիկ կամ այցելուները ցանկանում են օրհնվել կամ որևէ շահ ստանալ, բայց չունեն հաստատակամություն՝ մինչև վերջ գնալու համար: Ի վերջո, նրանք կնահանջեն: Հիսուսը տվեց Իր մեծ հանձնարարականը. «Ուրեմն գնացե՛ք բոլոր ազգերը և աշակերտե՛ք…» (Մատթ. 28.19): Նա հանձնարարեց մեզ՝ աշակերտներ պատրաստել, այլ ոչ թե պարզապես դարձի բերել մարդկանց:

Այն մարդիկ, ովքեր մնացին Պենտեկոստեի օրը, մի կողմ դրին իրենց երազանքները, ձգտումները, նպատակներն ու ծրագրերը: Ստեղծվեց այնպիսի մթնոլորտ, որտեղ նրանք կարող էին մեկ սիրտ և մեկ նպատակ ունենալ:

Այսօր Աստված ցանկանում է մեզ տեսնել նույն միաբանության մեջ: Որոշ առաջնորդներ և եկեղեցիներ մեր երկրում տարբեր շարժումներ են սկսել միաբանություն հաստատելու համար: Մենք հավաքվում ենք մեկտեղ և միասնություն փնտրում:

Բայց պետք է հիշենք, որ միայն Աստված կարող է ճշմարտապես միաբան դարձնել մեզ: Քանի դեռ ամեն ինչ մի կողմ չենք դրել, մեր թաքնված ծրագրերն ի վերջո ջրի երես դուրս կգան: Երբ կան

թաքնված դրդապատճառներ, փոխհարաբերությունները կզարգանան մակերեսորեն և կմնան անհաստատ ու անարդյունավետ: Մյուս կողմից՝ կարող ենք միասնական նպատակ ունենալ՝ առանց Տիրոջը հնազանդվելու: Այս դեպքում մեր արդյունավետությունը զուր է, քանի որ «եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում նրա շինողները» (Սաղմ. 127.1): Աստված դեռ փնտրում է այնպիսի մարդկանց, ովքեր դողում են Իր Խոսքից: Ահա թե ինչպիսի մթնոլորտում է առաջանում ճշմարիտ միաբանությունը:

Տիրոջ դրսևորած փառքը

Այն մարդիկ, ովքեր միասին էին Պենտեկոստեի օրը, իրական միաբանություն ունեին: Նրանք միաբանվել էին հանուն իրենց Տիրոջ նպատակի: Նրանք սրտով կարգ ու կանոնի մեջ էին: Հիսուսի ծառայությունը միացել էր Հովհաննեսի ծառայությանը, և մարդկանց սրտում հաստատվել էր աստվածային կարգ ու կանոն: Ըստ Աստծո՝ աստվածային կարգ ու կանոնին հաջորդում է Աստծո դրսևորած փառքը: Կրկի՛ն կարդացեք, թե ինչ կատարվեց այդ օրը.

> «Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին: Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ, ինչպես կրակից, և նստեց նրանց ամեն մեկի վրա»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 2.2,3

Աստծո փառքի որոշակի մասը դրսևորվեց այդ հարյուր քսան հոգու վրա: Ուշադրություն դարձրեք, որ կրակի լեզուները նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Մոռացե՛ք այն պատկերները, որ տեսել եք կիրակնօրյա դպրոցի գրքերում, որտեղ կրակի փոքրիկ լեզուները աշակերտների գլխավերևում էին: Ներկաներից յուրաքանչյուրը մկրտվեց կամ սուզվեց Նրա փառավոր ներկայության կրակի մեջ (տե՛ս Մատթ. 3.11):

Իհարկե, դա Աստծո ամբողջական, բացահայտ փառքը չէր, քանի որ ոչ մեկ չի տեսել և ոչ էլ կարող է տանել Աստծո ամբողջական

փառքը (տե՛ս Ա Տիմոթ. 6.16): Սակայն այդ դրսևորումը Երուսաղեմում բավականաչափ ուժեղ էր, որպեսզի գրավեր ամեն ազգերից եկած աստվածապաշտ և աստվածավախ բազմության ուշադրությունը (տե՛ս Գործք 2.6,7):

Բացատրելով նրանց տեղի ունեցածը՝ Պետրոսը քարոզեց Ավետարանը: Այդ օրը երեք հազար մարդ փրկվեց և միացավ եկեղեցուն: Այդ ծառայությունը ո՛չ ծրագրված էր, ո՛չ էլ՝ գովազդված: Արդյունքը հետևյալն էր.

> «Եվ ամեն անձի վրա վախ եկավ. շատ հրաշքներ և նշաններ էլ էին գործվում առաքյալների ձեռքով»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 2.43

Աստված դրսևորեց Իր փառքի որոշ մասը, և այդ պատճառով մարդիկ երկյուղած էին Նրա ներկայությունից ու զորությունից: Նա շարունակեց գործել զորավոր կերպով: Ամեն օր նրանք վկայում էին անհավատալի հրաշքների և ազատագրումների մասին:

Ոչ ոք չէր մերժում Աստծո զորավոր ձեռքի գործը: Բազմաթիվ մարդիկ ընդունում էին Երկնքի արքայությունը: Այն մարդիկ, ովքեր իրենց կյանքը տվել էին Հիսուսին, թարմություն ստացան Նրա Հոգու ներկայությունից:

Բայց ինչպես արդեն տեսանք, երբ Աստված դրսևորում է Իր փառքը, իսկ մարդիկ հեռանում են Նրա երկյուղից, ապա դատաստանն անխուսափելի է: Փաստորեն, որքան մեծ է փառքը, այնքան մեծ և վաղահաս է դատաստանը: Հաջորդ գլխում մենք մանրամասնորեն կքննարկենք այն ողբերգական դեպքը, որը տեղի ունեցավ Աստծո փառքի դրսևորումից կարճ ժամանակ անց:

Եթե դուք ցանկանում եք փառք ստանալ մարդուց, ապա դուք կվախենաք նրանից, իսկ եթե վախենաք մարդուց, ապա կծառայեք նրան, որովհետև դուք ծառայում եք նրան, ումից վախենում եք:

ՅՈԹԵՐՈՐԴ

ԱՆՀԱՐԳԱԼԻՑ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

«Այլ՝ ֆեզ կանչող Սուրբի պես դուք էլ սո՛ւրբ եղեք ֆեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ»»:

— Ա ՊԵՏՐՈՍ 1.15,16

Պենտեկոստեի օրվանից անցավ որոշ ժամանակ: Եկեղեցին Աստծո ներկայությունից և Նրա զորությունից մեծ բաների հասավ: Բազմաթիվ մարդիկ փրկվում էին, բժշկվում և ազատագրվում: Ոչ ոք ոչնչի կարիք չուներ, որովհետև բոլորը կիսում էին իրենց ունեցվածքը: Մարդիկ վաճառում էին իրենց ունեցվածքը և գումարը տալիս առաքյալներին՝ կարիքավորներին բաժանելու համար:

Զոհաբերություն օտարականից

«Եվ Հովսեսը, որ առաքյալներից Բառնաբաս կոչվեց, որ Մխիթարության որդի կթարգմանվի, ղևտացի, ծնունդով կիպրացի, նա մի ագարակ ուներ, ծախեց և գինը բերեց առաքյալների ոտքերի մոտ դրեց»:

— ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 4.36,37

Կիպրոսը բարեբեր կղզի է՝ հայտնի իր ծաղիկներով և մրգերով: Այնտեղ առատությամբ գինի և ձիթապտղի յուղ էր արտադրվում: Կիպրոսում կարելի էր գտնել բազմապիսի թանկարժեք քարեր, բայց կղզու հարստության հիմնական աղբյուրը հանքերն ու անտառներն

էին: Այնտեղ կային արծաթի, պղնձի և երկաթի խոշոր հանքեր: Այդ երկիրն առատ հարստություն ուներ: Եթե դուք Կիպրոսում հող ունենայիք, ապա, հավանաբար, հարուստ կլինեիք:

Պատկերացրե՛ք հետևյալը. Բառնաբաս անունով հարուստ մի ղևտացի, ով օտարերկրացի էր, բերեց իր հողի վաճառքից ստացված ամբողջ գումարը, որը, հավանաբար, շատ մեծ էր, տվեց առաքյալներին: Այժմ ուշադի՛ր կարդացեք հաջորդ խոսքը.

> «Եվ (անգլ.՝ Բայց…) մի մարդ՝ անունն Անանիա, իր Սափիրա կնոջ հետ մի կալվածք ծախեց»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 5.1

Ուշադրություն դարձրեք այս նախադասության առաջին բառին՝ *«Բայց…»*: Աստվածաշնչում ոչ մի նոր միտք չի սկսվում *«բայց»* բառով: Հիշե՛ք, որ Աստվածաշունչը թարգմանիչների կողմից բաժանվել է գլուխների և խոսքերի: Գործք առաքելոց գիրքը սկզբում գրված է եղել պարզապես մեծ նամակի տեսքով՝ բժիշկ Ղուկասի կողմից:

«Բայց» բառը ցույց է տալիս, որ Գործքի չորրորդ գլխի վերջում տեղի ունեցածը ակնհայտորեն կապված է հինգերորդ գլխում Անանիայի և Սափիրայի հետ կատարված դեպքի նկարագրության հետ: Ես համարձակություն ունեմ ասելու, որ անկարելի է լիովին հասկանալ այն, ինչ տեղի ունեցավ սրանից հետո՝ առանց հաշվի առնելու նախկինում կատարվածը: Այն կբացատրի, թե ինչու է այս նախադասությունը սկսվում *«բայց»*-ով:

Մի փոքր խորհենք այս մասին: Մեծահարուստ մի նորահավատ միանում է եկեղեցուն և զոհաբերում իր վաճառված հողատարածքի եկամուտը, որը շատ մեծ գումար էր կազմում: Այս մարդու զոհաբերությունը դրդում է Անանիային և Սափիրային՝ վաճառել իրենց սեփական կալվածքը: Ուշադրությամբ քննե՛ք հաջորդ խոսքերը.

> «Եվ նրա գնից թաքցրեց, որ կինն էլ գիտեր, և մի բաժինը բերեց առաքյալների ոտքերի մոտ դրեց: Եվ Պետրոսն ասաց. «Անա՛նիա, ինչո՞ւ համար սատանան քո սիրտը լցրեց, որ դու սուտ խոսես Սուրբ Հոգուն

և ագարակի գնից թաքցնես: Չէ՞ որ նա, որ կենում էր, քոնն էր և ծախվածն էլ քո իշխանության տակ էր: Ի՞նչ է, որ այս բանը դրիր քո սրտի մեջ. ոչ թե մարդկանց սուտ խոսեցիր, այլ՝ Աստծուն»»:

— ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ 5.2-4

Մինչև այս դեպքը, հավանաբար, Անանիան և իր կինը եկեղեցում ամենաշատ զոհաբերողների համբավ ունեին: Նրանք, հավանաբար, մարդկանց կողմից մեծ ուշադրության էին արժանանում իրենց առատաձեռնության համար: Տեսնելով մարդկանց արձագանքը՝ ես համոզված եմ, որ նրանց անչափ հաճելի էր հարգանքի և ճանաչման արժանանալը:

Իսկ հիմա ինչ-որ մեկը գերազանցել է նրանց այդ հարցում: Մարդկանց ուշադրությունն ուղղվել էր այդ նորահավատ կիպրոսցուն: Բոլորը գովաբանում էին այդ առատաձեռն ղևտացուն: Մարդիկ շարունակ խոսում էին այն մասին, թե այդ մեծ ընծան որքանով կօգնի բազմաթիվ կարիքավորների խնդիրների լուծմանը: Այդ նվիրատվությունը եկեղեցու քննարկման թեման էր դարձել: Մարդկանց ուշադրությունը շեղվել էր Անանիայից ու Սափիրայից, և դրա հետ նրանք չէին կարող հաշտվել:

Ուստի նրանք անմիջապես վաճառեցին իրենց կալվածքների մի մասը: Այն նույնպես թանկ արժեր, և դրա դիմաց նրանք մեծ գումար ստացան: Հավանաբար, դա նրանց ամենաշահութաբեր հողակտորն էր: Միգուցե նրանք միասին եզրակացրին. «Այս գումարը շատ մեծ է, ուստի չենք կարող տալ ամբողջը: Բայց ցանկանում ենք՝ մարդիկ *իմանան*, որ այն ամբողջությամբ տվել ենք: Ուրեմն ե՛կ տանք միայն մի մասը և ասենք, որ այն կալվածքի ամբողջ ստացվածքն է»:

Անանիան և Սափիրան համաձայնեցին պահել եկամտի մի մասը: Բայց, միևնույն է, նրանք ցանկանում էին ամբողջ գումարը տալու տպավորություն թողնել: Նրանց մեղքը խաբեությունն էր: Սխալ չէր պահել վաճառքի եկամտի մի մասը. գումարը նրանցն էր, և նրանք կարող էին վարվել այնպես, ինչպես կցանկանային: Սակայն նրանք սխալ վարվեցին՝ ասելով, իբրև դա ստացվածքի ամբողջ գումարն է,

բայց դա սուտ էր: Նրանք մարդկային փառքին ավելի էին ձգտում, քան ճշմարտությանն ու անկեղծությանը: Նրանց համբավը կարևոր էր իրենց համար: Նրանք, հավանաբար, մխիթարում էին իրենց՝ ասելով. «Մենք ոչ ոքի վատություն չենք անում, տալիս ենք գումարը՝ հոգ տանելով կարիքավոր մարդկանց մասին. կարևորը սա է»:

Եթե դուք ցանկանում եք փառք ստանալ մարդուց, դուք կվախենաք նրանից, իսկ եթե վախենաք մարդուց, դուք կծառայեք նրան, որովհետև դուք ծառայում եք նրան, ումից վախենում եք: Անանիան և Սափիրան ավելի շատ երկյուղ ունեին մարդկանցից, քան Աստծուց: Սա դրդեց նրանց՝ արդարացնել իրենց քայլերը և կանգնել Աստծո ներկայության մեջ՝ առանց սուրբ երկյուղի: Եթե նրանք վախենային Աստծուց, երբեք չէին ստի Նրա ներկայության մեջ:

> «Եվ Անանիան հենց որ այս խոսքը լսեց, վայր ընկավ և հոգին հանեց, և մեծ վախ եղավ ամենքի վրա, որ այդ լսեցին»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ 5.5,6

Անանիան զոհաբերություն տվեց կարիքավորներին և մահացած վայր ընկավ: Անմիջապես վրա հասավ դատաստանը: Ականատեսները և նրանք, ովքեր լսեցին այդ մասին, վախով լցվեցին: Շարունակե՛ք կարդալ.

> «Եվ եղավ, երբ որ երեք ժամի չափ անցավ, նրա կինը, որ չգիտեր եղածը, ներս մտավ: Պետրոսը պատասխանեց նրան և ասաց. «Ասա՛ ինձ, թե այնչա՞փ ծախեցիք ագարակը»: Նա էլ ասաց. «Այո՛, այնչափ»: Պետրոսն էլ ասաց նրան. «Ի՞նչ է, որ միաբանվեցիք դուք, որ Տիրոջ Հոգո՞ւն փորձեք: Ահա քո մարդուն թաղողների ոտքերը դռան մոտ են, քեզ էլ կհանեն»: Եվ նա իսկույն վայր ընկավ նրա ոտքերի առջև և հոգին հանեց: Երիտասարդներն էլ ներս մտան, նրան մեռած գտան և հանեցին, իր մարդու մոտ թաղեցին: Եվ մեծ ահ եղավ ամբողջ եկեղեցու վրա և ամենքի վրա, որ այս լսեցին»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ 5.7-11

Հնարավոր է, որ Անանիան և իր կինը առաջին մարդկանցից էին,

ովքեր շնորհքով էին փրկվել: Հավանաբար, նրանք եկեղեցում ամենաշատ զոհաբերողներն էին: Միգուցե նրանք Աստծուն ծառայելու համար զոհաբերել էին իրենց հասարակական դիրքն ու ֆինանսական ապահովությունը: Բայց զոհաբերությունն անօգուտ է, երբ զոհաբերողի սրտում չկա սեր և երկյուղ Աստծո հանդեպ:

Ուշադրություն դարձրեք այս հատվածի վերջին խոսքին. «Եվ մեծ ահ եղավ ամբողջ եկեղեցու վրա»: Հիշե՛ք, երբ Ահարոնի երկու որդիներն առանց երկյուղի զոհ մատուցեցին Աստծո ներկայության մեջ, մահացան:

> «…Ինձ մոտեցողներով պիտի սրբվեմ և ամբողջ ժողովրդի առջև պիտի փառավորվեմ…»:
>
> — ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 10.3

Դարերի ընթացքում Աստված չէր փոխվել: Նրա Խոսքը և սրբության չափանիշը նույնն էին: Այս երկու հազար տարվա ընթացքում Նրա Խոսքը չէր թուլացել: Ե՛վ անցյալում, և՛ ներկայում, և՛ ապագայում Աստված զորավոր Թագավոր է, և մենք պետք է համապատասխան երկյուղածություն ցուցաբերենք Նրա հանդեպ: Մենք չենք կարող իմիջիայլոց վարվել այն բաների հետ, որ Նա սուրբ է անվանում:

Աստվածաշնչում գրված չէ՝ մեծ ահ եղավ ամբողջ քաղաքի վրա, այլ, որ մեծ ահ եղավ ամբողջ *եկեղեցու* վրա: Եկեղեցին վայելում էր Տիրոջ ներկայությունը և Նրա օրհնությունները: Երբ մարդիկ լցվում էին Սուրբ Հոգով, կարծես արբած լինեին: Ես համոզված եմ, երբ նրանք խոսում էին լեզուներով, լցվում էին Աստծո ներկայությամբ և ծիծաղում ուրախությունից: Հակառակ դեպքում, ինչո՞ւ պետք է մարդիկ կարծեին, որ նրանք արբած են առավոտվա ժամը իններին (տե՛ս Գործք 2.15):

Միգուցե ժամանակի ընթացքում այս մարդիկ ընտելացան Աստծո ներկայությանը: Այն սովորական էր դարձել ոմանց համար: Միգուցե նրանք հիշում էին, թե որքան հասանելի էր Հիսուսը, և կարծեցին, որ Սուրբ Հոգու հետ էլ իրենց շփումը պետք է այդպես լինի: Թեև Հիսուսն Աստծո Որդին է և Աստծո մարմնավորված պատկերը, այնուամենայ-

նիվ, չենք կարող մոռանալ, որ Նա եկավ որպես մարդու Որդի և Միջնորդ, որովհետև մարդը *չէր կարող* մոտենալ Աստծո սրբությանը:

Թեև Նրանք մեկ են, սակայն կա տարբերություն Հայր Աստծո, Որդի Աստծո և Սուրբ Հոգի Աստծո միջև: Նույնիսկ Հիսուսն ասաց, որ մարդիկ կարող են դեմ խոսել Իրեն, և դա կներվի, իսկ Սուրբ Հոգու դեմ որ խոսեն, չի ներվի: Հիսուսը նախապես հայտնում էր նրանց, որ պետք է վերականգնվեր սուրբ, աստվածային կարգ ու կանոնը: Մինչև Որդու գալուստը, մարդիկ վախենում և սարսափում էին Աստծուց՝ առանց ճշմարիտ երկյուղի: Այժմ Աստված վերականգնել էր մարդուն, և պետք է վերահաստատվեր աստվածային կարգ ու կանոնը:

Եկեղեցին մոռացել էր Աստծո սրբության մասին, և երբ Անանիան և Սափիրան մեռած ընկան Պետրոսի ոտքերի մոտ, մարդիկ սթափվեցին: Ոմանք մտածեցին, որ *պետք է վերանայել որոշ բաներ:* Մյուսները, հավանաբար, մտածեցին, *որ հեշտությամբ կարող էին լինել նրանց տեղում*: Իսկ ոմանց պատկերացումն Աստծո մասին փոխվեց այսպես. *«Հավանաբար չեմ ճանաչում Նրան այնպես, ինչպես կարծում էի: Պատկերացում անգամ չունեի, որ Նա այսքան արագ և դաժան դատաստան կկայացներ»*: Բայց, միևնույն է, բոլորը զարմացած բացականչեցին. *«Նա Սուրբ և Ամենազեր է»*: Մեծ ահ եղավ եկեղեցու վրա, և մարդիկ սկսեցին քննել իրենց սրտերը՝ ցնցված ահավոր և զարմանալի Աստծուց, միևնույն ժամանակ այնքան սիրող և այնքան սուրբ: Այս ապշեցուցիչ դեպքը չշրջանցեց ոչ ոքի:

Վարվե՛ք Տիրոջ երկյուղով

Պետրոսը, ով քայլել էր Հիսուսի հետ և ականատես եղել այդ դատաստանին, ավելի ուշ գրեց այս սրտառուչ հորդորանքը.

> «Այլ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սո՛ւրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ»: Եվ եթե Հայր եք կանչում Նրան, որ առանց աչառության դատաստան է անում ամեն

մեկի գործի պես, ապա ձեր պանդխտության ժամանակը վախո՛վ վարվեք»:

— Ա ՊԵՏՐՈՍ 1.15-17

Ուշադրություն դարձրեք, որ նա չի ասում. «Սիրո՛վ վարվեք»: Այո՛, մենք պետք է ապրենք սիրո մեջ, որովհետև առանց սիրո մենք ոչինչ չենք կարող ունենալ: Նրա սիրուց զատ, մենք նույնիսկ չենք կարող ճանաչել Հոր սիրտը: Մենք արդեն անդրադարձանք այս նույն ուղերձին, որտեղ Պետրոսը խոսում է Տիրոջ հանդեպ սիրո մասին, որը պետք է վառվի մեր սրտում. «Որին չտեսած սիրում եք…» (8-րդ խոսք): Մենք կանչված ենք մեր Հոր հետ անձնական սիրո փոխհարաբերություն ունենալու, բայց Պետրոսը հավասարակշիռ վիճակի է բերում մեզ Աստծո երկյուղով: Մեր սերն Աստծո հանդեպ սահմանափակ է սուրբ երկյուղի բացակայության պատճառով: Մեր սրտերը պետք է կրեն այս երկու կրակների լույսն ու ջերմությունը:

Միգուցե դուք չհասկանաք, թե ինչպես կարող է սերն Աստծո հանդեպ սահմանափակ լինել: Դուք կարող եք ինչ-որ մեկին սիրել այնքան, որքան ճանաչում եք նրան: Եթե Աստծո մասին ձեր պատկերացումը չի համապատասխանում Նրա իրական էությանը, ապա դուք մակերեսորեն եք ճանաչում Նրան: Ճշմարիտ սերը հնարավոր է այն ժամանակ, երբ ճանաչում եք Աստծո իրական էությունը: Մի՞թե կարծում եք, որ Նա հայտնում է Իր սիրտը նրանց, ովքեր լուրջ չեն ընդունում Իրեն: *Իսկ դուք կբացեի՞ք ձեր սիրտը նման մարդկանց առջև:* Իրականում Աստված որոշել է ծածկված մնալ (տե՛ս Եսայի 45.15): Սաղմոսերգուն խոսում է Նրա թաքստոցի մասին՝ անվանելով այն «ծածկոց» (տե՛ս Սաղմ. 91.1):

Հենց այդտեղ՝ ծածկոցի տակ, ծածուկ վայրում ենք հայտնաբերում Նրա սրբությունն ու Նրա մեծությունը: Բայց այս գաղտնի ապաստարանը կգտնեն միայն նրանք, ովքեր երկյուղ ունեն Նրանից:

«Տիրոջ մտերմությունը նրանց հետ է, որ վախենում են Նրանից, և Իր ուխտը սովորեցնում է նրանց»

— ՍԱՂՄՈՍ 25.14

Այժմ կարող եք լիարժեք հասկանալ Պետրոսի խոսքերը: Նույնպես Պողոսը, ով հանդիպել էր Նրան Դամասկոսի ճանապարհին, հաստատեց այս հորդորանքը՝ ավելացնելով «դողալով» բառը: Նա ասում է հավատացյալներին. «…ահո՛վ և դողալո՛վ գործեք ձեր անձերի փրկությունը» (Փիլիպ. 2.12): Փաստորեն, այս արտահայտությունը Նոր կտակարանում օգտագործվում է երեք անգամ, որպեսզի նկարագրի հավատացյալի և Քրիստոսի միջև ճիշտ փոխհարաբերությունները:

Պողոսը ճանաչեց Հիսուսին Սուրբ Հոգու հայտնության միջոցով: Մենք էլ պետք է այդ կերպ ճանաչենք Նրան: «…Թեև Քրիստոսին էլ գիտեինք մարմնի կողմից, այլ հիմա այլևս չգիտենք» (Բ Կորնթ. 5.16): Եթե մենք ձգտում ենք ճանաչել Աստծուն և քայլել Նրա հետ այնպես, ինչպես քայլում ենք մարդկանց հետ, ապա Նրա ներկայությունն, ի վերջո, սովորական կդառնա մեզ համար, ինչպես կատարվեց ոմանց հետ առաջին եկեղեցում:

Ես համոզված եմ, որ Անանիան և Սափիրան Գործքում նկարագրված առաջին եկեղեցու այն մարդկանցից էին, ովքեր ցնցված և խանդավառված էին: Բոլորն էին ապշած նշանների և հրաշքների առատությունից: Սակայն, նույնիսկ, նշաններն ու հրաշքները սովորական կդառնան, եթե ձեր սրտում չկա Աստծո երկյուղը: Եթե լիներ Աստծո երկյուղը, այն կսանձեր այդ տարաբախտ զույգի հիմարությունը (տե՛ս Սաղմ. 34.11-13): Երկյուղը կբացահայտեր նրանց սրտերում եղած Աստծո սրբությունը:

Մենք պետք է հիշենք այս երկու անփոփոխ հատկանիշները՝ «…Աստված սեր է» և «…Աստված փչացնող կրակ է» (Ա Հովհ. 4.8, Եբր. 12.29): Պողոսը խոսում է այն մասին, որ հավատացյալներն անցնելու են կրակով, երբ դատաստանի ժամանակ կանգնեն Սուրբ Աստծո գահի առջև: Այդտեղ մենք հաշիվ կտանք այն գործերի համար, որ կատարել ենք Քրիստոսի մարմնում՝ թե՛ լավ, թե՛ վատ (տե՛ս Բ Կորնթ. 5.10): Դրանից հետո Պողոսը զգուշացնում է. «Արդ, Տիրոջ ահավորությունը գիտենալով՝ մարդկանց համոզում ենք…» (Բ Կորթ. 5.11):

Աստծո սիրո շնորհիվ մենք կարող ենք վստահություն ունենալ,

երբ մոտենում ենք Նրան: Աստվածաշնչում գրված է, որ պետք է ծառայենք Աստծուն և մոտենանք Նրան ահով և երկյուղածությամբ (տե՛ս Եբր. 12.28):

Վերստին ծնված մարդիկ ճանաչում են Աստծուն՝ որպես «Աբբա, Հայր»: Բայց այս փաստը չի ժխտում Նրա դիրքը՝ որպես ամեն մարմնի Դատավոր (տե՛ս Գաղատ. 4.6,7, Եբր. 12.23): Աստված պարզ ասում է. «…Տերը կդատի Իր ժողովրդին» (Եբր. 10.30):

Պատկերացրեք մի թագավորի, ով որդիներ և դուստրեր ունի: Իր ապարանքում նա ամուսին և հայր է, բայց գահի սրահում՝ թագավոր: Բոլորը պետք է երկյուղեն նրանից, նույնիսկ՝ նրա կինն ու երեխաները: Եղել են ժամանակներ, երբ զգացել եմ, թե ինչպես է Հայրը Իր թաքուն բնակարանից կանչում ինձ. «Ե՛կ, թռի՛ր ծնկներիս, նստի՛ր գիրկս և ե՛կ զրուցենք»: Ես սիրում եմ այդ պահերը: Դրանք այնքան յուրահատուկ են: Բայց եղել են ժամանակներ, երբ աղոթել կամ ծառայության եմ մասնակցել, Նրա սուրբ ներկայությունից ահ ու դող եմ վերապրել:

1995թ.-ի օգոստոսին Կուալա Լումպուրում՝ Մալայզիայում, մեկ շաբաթ տևող հավաքույթների վերջին օրը մասնակցել եմ ծառայությանը: Շատ ծանր մթնոլորտ էր, և այդ օրը վերջապես ճեղքում զգացի: Տիրոջ ներկայությունը լցրեց դահլիճը: Այնտեղ դրսևորվեց Նրա ուրախությունը, և մի քանիսը սկսեցին ծիծաղել: Սա շարունակվեց տասից տասնհինգ րոպե, որից կարճ ժամանակ հետո Աստծո ներկայության ևս մեկ ալիք եկավ: Այն դիպավ ավելի շատ մարդկանց: Մթնոլորտը կրկին հանդարտվեց. Աստծո ներկայության ևս մեկ ալիք եկավ այնպիսի ուրախությամբ, որ գրեթե բոլորը լիաթոք ծիծաղեցին և թարմություն վերապրեցին: Սրան հաջորդեց ևս մեկ դադար:

Հենց այդ ժամանակ լսեցի, թե ինչպես Տերն ասաց. «Ես գալիս եմ վերջին ալիքով, բայց այն կտարբերվի մյուսներից»: Ես լուռ սպասեցի: Մի քանի րոպեների ընթացքում Աստծո ներկայությունը բոլորովին այլ կերպ դրսևորվեց դահլիճում: Այնտեղ մեծ երկյուղածություն էր տիրում: Դա հրաշալի էր և միաժամանակ՝ վախեցնող: Սակայն ես ավելիին էի ձգտում: Մթնոլորտը շիկացավ: Այն մարդիկ, ովքեր ծիծաղում էին մի քանի րոպե առաջ, սկսեցին լաց լինել, ողբալ և աղա-

ղակել: Ոմանք նույնիսկ այնպես էին գոչում, ասես կրակի մեջ լինեին: Սակայն այդ աղաղակները դևերից տանջվող մարդկանց աղաղակներ չէին:

Բեմից իջնելիս այսպիսի միտք ծագեց. *«Ջո՛ւն, ոչ մի սիսալ շարժում չանես և ոչ մի սիսալ խոսք չասես... եթե անես, կմահանաս»:* Ես չեմ կարող հստակ ասել, թե ինչ կկատարվեր, բայց այդ միտքը փոխանցում էր այն լարվածությունը, որ զգում էի: Ես գիտեի, որ անհարգալից վերաբերմունքը տեղ չուներ այդ ահավոր ներկայության մեջ: Ես այդ օրը ականատես եղա երկու արձագանքի՝ ոմանք վախեցան և հեռացան Նրա ներկայությունից, ոմանք էլ վերապրեցին Աստծո երկյուղը և մոտեցան Նրա ահավոր ներկայությանը: Սա ակնհայտորեն այն դեպքը չէր, երբ Աստված շշնջում է. «Եկ, թռի՛ր ծնկներիս»:

Ահով լցված՝ մենք հեռացանք ծառայությունից: Շատերը զգացին, որ լիովին փոխվել են Աստծո ահավոր ներկայությունից: Մի մարդ, ում Աստծո ներկայությունն ուժեղ դիպչել էր, ծառայությունից հետո ասաց ինձ. «Ես զգում եմ, որ իմ ներսն այնքա՜ն մաքուր է»: Ես համաձայնեցի, քանի որ ինքս էլ էի մաքրված զգում ինձ: Հետագայում գտա այս խոսքը. «Տիրոջ վախը սուրբ է, մնում է հավիտյան...» (Սաղմ. 19.9):

Տիրոջ երկյուղը հարատև է

Տիրոջ երկյուղն *իսկապես* որ մնում է հավիտյան: Եթե Լյուցիֆերը երկյուղ ունենար, երբեք չէր ընկնի Երկնքից կայծակի պես (տե՛ս Եսայի 14.12-15, Ղուկ. 10.18): Նա օծված քերովբե էր, բնակվում էր Աստծո սուրբ սարի վրա և քայլում Տիրոջ ներկայության մեջ (տե՛ս Եզեկ. 28.14-17): Սակայն Լյուցիֆերն առաջինն էր, ով հեռացավ Տիրոջ երկյուղից:

Լսե՛ք ինձ, Աստծո՛ ժողովուրդ, ձեզ վրա կարող է լինել օծության սուրբ յուղը, ինչպես Նադաբի և Աբիուդի վրա: Դուք կարող եք նշաններ անել և հրաշքներ գործել, քշել դևերին և բժշկել հիվանդներին Նրա զորավոր անունով, սակայն չունենալ Տիրոջ երկյուղը: Առանց

դրա ձեր վերջը կլինի Նադաբի ու Աբիուդի, Անանիայի ու Սափիրայի նման: Քանի որ Տիրոջ երկյուղն է, որ օգնում է ձեզ՝ հավիտյան կանգնել Տիրոջ ներկայության մեջ:

Ադամն ու Եվան ապրում էին Տիրոջ ներկայության մեջ: Նրանք սիրում էին Նրա բարությունը և վայելում դրա օգուտները: Նրանք երբեք վիրավորանք չէին կրել որևէ իշխանության կողմից: Նրանք ապրում էին կատարյալ միջավայրում: Սակայն անհնազանդ գտնվեցին և ընկան իրենց դիրքից՝ արժանանալով մեծ դատաստանի: Նրանք երբեք չէին ընկնի իենց դիրքից, եթե ունենային Տիրոջ երկյուղը:

Տիրոջ երկյուղն *իսկապես* որ մնում է հավիտյան: Եթե Անանիան և Սափիրան վախենային Տիրոջից, այդքան հիմարաբար չէին վարվի, քանի որ «Տիրոջ վախով մարդ կհեռանա չարից» (Առակ. 16.6):

Ոմանք կարող են հարցնել. «Մի՞թե իմ սերն Աստծո հանդեպ չի պահում ինձ մեղքից»: Այո՛, բայց որքա՞ն մեծ կարող է լինել ձեր սերը, եթե դուք չունեք Նրա երկյուղը: Երբ ես բանտում այցելեցի Ջիմ Բեքերին, նա պատմեց ինձ, թե ինչպես բանտի դժվարություններն ամբողջովին փոխեցին նրա սիրտը: Կյանքում առաջին անգամ Նա վերապրեց Հիսուսին որպես Տեր: Նա պատմեց, թե ինչպես կորցրեց ընտանիքը, ծառայությունը, և այն ամենը, ինչ ուներ, իսկ հետո գտավ Հիսուսին:

Ես պարզ հիշում եմ նրա խոսքերը. «Ջո՛ն, այս բանտն Աստծո դատաստանը չէ իմ կյանքի համար, այլ՝ Նրա ողորմությունը: Ես համոզված եմ, որ եթե շարունակեի այն ճանապարհը, որով գնում էի, ապա կհայտնվեի դժոխքում»:

Հետո Ջիմ Բեքերը կիսվեց մի նախազգուշացմամբ, որը վերաբերում է բոլորիս. «Ջո՛ն, ես միշտ սիրել եմ Հիսուսին, սակայն Նա իմ Տերը չէր: Կան միլիոնավոր ամերիկացիներ, ովքեր ինձ նման են»: Ջիմը սիրում էր Հիսուսի մասին իր պատկերացումը: Նրա սերը հասուն չէր, քանի որ այն զուրկ էր Տիրոջ երկյուղից: Այսօր Ջիմ Բեքերն աստ-

վածավախ մարդ է: Երբ հարցրի նրան, թե ինչ կանի, երբ դուրս գա բանտից, նա անմիջապես պատասխանեց. «Եթե վերադառնամ իմ նախկին ճանապարհին, ապա, ի վերջո, կկանգնեմ դատաստանի առջև»:

Ոչ ոք չէր համարձակվում միանալ նրանց

Այն, ինչ կատարվեց Անանիայի և Սափիրայի հետ, ցնցեց ամբողջ եկեղեցին: Այն բացահայտեց մարդկանց սրտի դրդապատճառները և ստիպեց նրանց՝ քննել իրենց սրտերը: Նրանք, ովքեր իրենց մեջ տեսան այն նույն անարգանքը, որը կար Անանիայի և Սափիրայի կյանքում, դրդեց նրանց ապաշխարության: Մյուսներն ավելի լուրջ էին գիտակցում, թե ինչ գին էր պետք վճարել այդ հավատացյալներին միանալու համար: Ոմանք հեռացան՝ միգուցե վախենալով Աստծո դատաստանից:

Եկեղեցու վրա ահ եղավ, բայց այն տարածվեց նաև բոլոր նրանց վրա, ովքեր լսեցին տեղի ունեցածի մասին: Ես համոզված եմ, որ մի որոշ ժամանակ այդ միջադեպը քաղաքի գլխավոր նորությունն էր: Մարդիկ հարցնում էին իրար. «Լսեցի՞ք, թե ինչ կատարվեց Հիսուսի հետևորդների հետ: Ամուսնական մի զույգ զոհաբերություն կատարեց կարիքավորների համար և մահացավ»: Աստվածաշնչում գրված է.

> «Եվ ուրիշներից ոչ ոք չէր համարձակվում հարել նրանց, բայց ժողովուրդը մեծարում էր նրանց: Եվ առավել ևս շատանում էին Տիրոջ հավատացյալները, և եղավ մի բազմություն՝ մարդկանց և կանանց»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 5.13,14

Այստեղ կարծես հակասություն կա. ոչ ոք չէր համարձակվում միանալ նրանց, սակայն հաջորդ խոսքն ասում է, որ հավատացյալներն արագությամբ շատանում էին: Ինչպե՞ս հավատացյալները կարող էին շատանալ, եթե ոչ ոք չէր միանում նրանց: Իրականում ի՞նչ նկատի ունի այս հատվածը: Ես հավատում եմ, որ ոչ ոք չէր համարձակվում միանալ Հիսուսին՝ առանց հաշվի առնելու, թե ինչ գին կպա-

հանջվեր դրա համար: Այլևս ոչ ոք չէր «միանում» եկեղեցուն եսասիրական նկատառումներով: Նրանք գալիս էին Տիրոջը, ոչ թե այն բանի համար, թե ինչ կաներ Նա իրենց համար, այլ որ ճանաչեին, թե ով է Աստված:

Անհարգալից վերաբերմունքն արագորեն և հեշտությամբ ձևավորվում է, երբ գալիս ենք Տիրոջ մոտ այն բանի համար, թե ինչ կարող է անել Նա մեզ համար կամ տալ մեզ: Նման փոխհարաբերությունը հիմնված է օրհնությունների և վերապրումների վրա: Երբ որևէ բան հաճելի չէ մեզ, իսկ նման բաներ անպայման տեղի կունենան, մենք հիասթափվում ենք և երես առած երեխաների նման դադարում հարգել Աստծուն: Երբ անհարգալից վերաբերմունքը դատապարտվում է, բոլորը վերանայում են իրենց կյանքը, և սխալ դրդապատճառները մաքրվում են դատաստանի լույսի ներքո: Այդ դեպքում ճշմարտապես ապաշխարող սրտերը լցվում են Աստծո երկյուղով:

Ինչո՞ւ նրանք

Ինչո՞ւ Անանիան և Սափիրան մահացան: Ես ճանաչում եմ մարդկանց, ովքեր ստել են քարոզիչներին, սակայն նման խիստ դատաստանի չեն արժանացել: Իրականում եկեղեցու պատմության մեջ և նույնիսկ ժամանակակից եկեղեցում մարդիկ շատ ավելի անհարգալից քայլերի են դիմել, քան Անանիան և Սափիրան: Սակայն այլևս ոչ ոք մեռած չի ընկնում ծառայությունների ժամանակ: Այսօր դա կարծես անհնար է:

Պատասխանը թաքնված է այս պատմությանը անմիջապես հետևող խոսքերում.

> «…Հիվանդներին հանում էին հրապարակները (անգլ.՝ փողոցները) և իրենց պատգարակներով և մահիճներով այնտեղ էին դնում, որ Պետրոսն անցնելիս՝ գոնե նրա շուքը նրանցից մեկի վրա ընկնի»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 5.15

Ուշադրություն դարձրեք, որ նրանք հիվանդներին պառկեցնում էին *փողոցներում*: Ոչ թե մեկ փողոցի, այլ փողոցների՝ պարզապես սպասելով անցնող Պետրոսի շողքին, որպեսզի հիվանդները կարողանային բժշկվել: Ես հասկանում եմ, որ իմ հաջորդ արտահայտությունը վիճարկելի է, բայց հավատում եմ, որ այս խոսքի մեկնությունը չի սահմանափակվում միայն Պետրոսի շողքով: Շողքը հիվանդներին բժշկելու զորություն չունի: Ես հավատում եմ, որ դա Աստծո ամպն էր: Տիրոջ ներկայությունն այնքան ուժեղ էր Պետրոսի վրա, որ այդ ներկայության շողքը ստվեր էր գցում՝ ծածկելով Պետրոսի շողքը: Նույնը Մովսեսի դեպքում էր, երբ նա իջավ Աստծո սարից: Նրա դեմքը շողում էր Աստծո փառքից, որը քողարկել էր Մովսեսի պատկերը: Հնարավո՞ր է արդյոք, որ Աստված Իր փառքը թաքցնելու համար քողարկեր Պետրոսին շուքի ամպով: Գործք առաքելոց 5.15-ում Պետրոսն ընդամենը անցնում էր հիվանդների կողքով, և փողոցում եղած բազմությունը բժշկվում էր:

Մենք գիտենք, որ Աստծո փառքի շատ մեծ ներկայություն կար Պետրոսի վրա, ուստի երբ Անանիան և Սափիրան ստեցին Պետրոսին՝ մահացան: Ըստ երևույթին, Անանիան և Սափիրան մահացան, որովհետև անհարգալից վերաբերմունք ցուցաբերեցին Տիրոջ հանդեպ, Ում փառքն արդեն դրսևորված էր: Ինչպես Ադամի, այնպես էլ Նադաբի ու Աբիուդի և Իսրայելի զավակների դեպքում, ևս մեկ անգամ տեսնում ենք կարգ ու կանոնի, փառքի և դատաստանի հաջորդականությունը:

Հաջորդ գլուխներում մենք կկիրառենք այս հաջորդականությունը մեր ժամանակակից եկեղեցու համար: Ավելի ուշ մենք կպարզենք, թե ինչու *Աստծո սերը* պետք է ուղեկցվի *Աստծո երկյուղով*:

Որքան մեծ է Աստծո դրսևորված փառքը,
այնքան մեծ և հանկարծակի է դատաստանն
անհարգալից վերաբերմունքի համար:

ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԵՏԱՁԳՎԱԾ ԴԱՏԱՍՏԱՆ

«Որովհետև մենք ամենքս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով, ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար»:

— Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.10

Գրելով այս գիրքը՝ ուզում եմ նշել, որ մենք Տեր Հիսուսի հարության երկրորդ հազարամյակի ավարտին ենք մոտենում: Մենք Նրա վերադարձի վերջին շաբաթների, օրերի և վայրկյանների շեմին ենք: Հիսուսն ասաց, որ մենք կիմանանք ժամանակը, բայց ոչ օրը կամ ժամը (տե՛ս Մատթ. 24.32-36):

Մենք ապրում ենք Նրա վերադարձի ժամանակներում:

Առաջին և վերջին անձրևը

Մարգարեական Սուրբ գրքերը նախապես ասել են, որ Աստված զորավոր կերպով դրսևորելու է Իր փառքը եկեղեցու դարաշրջանի սկզբում և եկեղեցու դարաշրջանի վերջում՝ անմիջապես Իր երկրորդ գալուստից առաջ: Հակոբոսը նկարագրում է սա.

> «Արդ, եղբայրնե՛ր, երկայնամիտ եղեք մինչև Տիրոջ գալուստը. ահա մշակը երկայնամիտ եղած սպասում է երկրի պատվական պտղին, մինչև որ առաջին և վերջին անձրևն առնի»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 5.7

Ուշադրություն դարձրեք, որ Հակոբոսը խոսում է և՛ առաջին, և՛ վերջին անձրևի մասին: Իսրայելում առաջին անձրևը խոնավեցնում էր չոր հողը ցանքի ժամանակ: Անձրևաջրից փափկած հողը պիտանի էր դառնում հացահատիկը ցանելու համար, որը կարող էր ամուր արմատ գցել: Վերջին անձրևը գալիս էր անմիջապես հունձքից առաջ և ավելի կարևոր էր, որովհետև այն հասուն և առատ էր դարձնում բերքը:

Հակոբոսն օգտագործեց անձրևը՝ որպես համեմատություն Աստծո փառքի դրսևորումը բացատրելու համար: Առաջին անձրևը թափվեց Պենտեկոստեի օրը, և Պետրոսը հաստատեց դա.

> «Սա Հովել մարգարեի ձեռքով ասվածն է: Եվ կլինի հետին օրերում,– ասում է Աստված,– որ Իմ Հոգուց կթափեմ ամեն մարմնի վրա, և ձեր որդիները և ձեր աղջիկները կմարգարեանան, և ձեր երիտասարդները տեսիլքներ կտեսնեն, և ձեր ծերերը երազներ կտեսնեն: Եվ Իմ ծառաների վրա և Իմ աղախինների վրա էլ այն օրերում Իմ Հոգուց կթափեմ, և կմարգարեանան: Եվ նշաններ կտամ վերևը՝ երկնքում, և նշաններ ներքևը՝ երկրում, արյուն և կրակ և ծխի մառախուղ: Արեգակը խավար կդառնա և լուսինն՝ արյուն՝ Տիրոջ մեծ և երևելի օրը դեռ չեկած»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 2.16-20

Պետրոսն օգտագործեց «թափել» բառը: Խոսելով ուժեղ անձրևի մասին՝ ասում ենք, որ այն հորդում է, ինչը նման է թափվելուն: Պետրոսը կարող էր ասել՝ «կկաթեցնեմ», բայց նա օգտագործեց այնպիսի բառ, որը նկարագրում է անձրևի ուժգնությունը: Պետրոսից ավելի լավ ո՞վ կարող էր նկարագրել Աստծո փառքի թափվելը, որը վերապրեցին աշակերտները Պենտեկոստեի օրը: Բայց այս նկարագրումը չի սահմանափակվում նրանով, ինչը մենք արդեն վերապրել ենք, քանի որ չավարտելով խոսքը՝ Պետրոսը նկարագրում է Աստծո փառքի թափվելը մինչև Տիրոջ մեծ և երևելի օրը: Տիրոջ մեծ և երևելի օրը վերաբերում էր ոչ թե այն ժամանակաշրջանին, որում ապրում էր Պետրոսը, այլ՝ Քրիստոսի երկրորդ գալուստին:

Աստծո Հոգին Պետրոսի միջոցով արեց այն, ինչ անցյալում բազ-

միցս արել է: Նա միևնույն մարգարեական ուղերձով կամ աստվածաշնչյան խոսքով կապակցեց երկու առանձին ժամանակահատվածները: Այո՛, Աստծո Հոգին թափվեց Պենտեկոստեի օրը: Հակոբոսն այն անվանեց առաջին անձրև: Աստծո փառքը դրսևորվեց և տարածվեց ամենուր, որտեղ Տերն ուղարկում էր Իր աշակերտներին ավետարանելու: Այն տարածվեց աշխարհով մեկ:

Սակայն այս Հոգու թափվելը ժամանակի ընթացքում չավելացավ, այլ՝ աստիճանաբար մարեց, քանի որ մարդիկ կորցրին իրենց փափագն Աստծո փառքի հանդեպ: Որոշ ժամանակով սիրո և երկյուղի փոխարեն դրվեց եսասիրական ցանկությունների կուռքը: Հեռանալով Աստծո փառքից՝ մարդիկ սկսեցին զբաղվել կրոնական գործերով և ուսմունքներով, իսկ դրանք ավելի մթագնեցրին այն նպատակը, որի համար Աստված ստեղծել է մեզ: Նա ստեղծել է մեզ Իր հետ շփվելու համար:

Եսասիրության ժամանակահատված՝ նույնիսկ առաջնորդների կյանքում

Մովսեսից մինչև Դավիթ թագավորի ժամանակահատվածը կարելի է համեմատել Աստծո ներկայության և փառքի մարման ժամանակի հետ: Մովսեսի օրերում Իսրայելի զավակներն Աստծո դրսևորված փառքի ներքո տարիներով դեգերում էին անապատում: Աստծո փառքն անարգող մարդիկ դատապարտվում և մահանում էին անապատում:

Բայց երիտասարդ սերունդը երկյուղ ուներ Տիրոջից և հետևում էր Նրան ամբողջ սրտով: Նրանք Հեսուի առաջնորդությամբ գնացին և ժառանգեցին Խոստմունքի երկիրը, սակայն. «Եվ այն դարի մարդիկ իրենց հայրերի մոտ ժողովվեցին, և նրանցից հետո մեկ ուրիշ ազգ վեր կացավ, որ չէր ճանաչում ո՛չ Տիրոջը, և ո՛չ այն գործերը, որ Նա արել էր Իսրայելի համար» (Դատ. 2.10):

Սակայն այս նոր սերունդը անհնազանդության պատճառով գերության և զրկանքների մեջ ընկավ: Աստված պարբերաբար բարձրացնում էր տղամարդ կամ կին դատավորներ՝ այդ սերնդին առաջ-

նորդելու համար: Այդ առաջնորդների միջոցով արքունության և վերականգնման նոր փուլ սկսվեց Նրա ժողովրդի կյանքում: Նույնիսկ այն ժամանակ, երբ Աստված ուժեղ առաջնորդներ էր բարձրացնում, Իսրայելի ընդհանուր վիճակն ավելի էր վատանում: Իսրայելն արձագանքում էր իրենց դատավորներին, այլ ոչ թե Աստծուն, քանի որ գրված է. «Եվ երբ որ այն դատավորը մեռնում էր, նրանք դարձյալ իրենց հայրերից ավելի էին անօրինանում…» (19-րդ խոսք):

Յուրաքանչյուր սերնդի հետ Աստծո ընտրյալ ժողովրդի սրտերը գնալով սառչում էին, մինչև որ նրանք հասան ամենացածր մակարդակին: Ահա թե ինչ վիճակում էին նրանք, երբ Հեղին քահանա և դատավոր էր: Իսրայելին քառասուն տարի առաջնորդելուց հետո նրա սիրտը ծանրացել էր, իսկ տեսողություն՝ գրեթե չուներ:

Հեղիի երկու որդիները՝ Ոփնին և Փենեհեսը, քահանայի և առաջնորդի պաշտոն էին կատարում իրենց հոր հսկողությամբ: Նրանց այլասերվածությունը գերազանցեց իրենց հոր անօրենությունը: Այս ընտանիքն այնքան տհաճ էր Աստծուն, որ Նա ասաց. «…Հեղիի տան անօրինությանը զոհերով և ընծաներով հավիտյան քավություն չի լինի» (Ա Թագ. 3.14):

Նման առաջնորդների պատճառով ազգը հայտնվել էր շատ ցածր իրավիճակում: Անցյալում, երբ ազգը խոտորվում էր, առաջնորդները վերադարձնում էին նրանց Աստծո մոտ, բայց այս առաջնորդները հեռացնում էին ժողովրդին Աստծուց՝ շարունակ չարաշահելով իրենց դիրքն ու իշխանությունը:

Հեղիի որդիները սեռական կապի մեջ էին մտնում խորանի դռան մոտ հավաքված կանանց հետ: Նրանք ոչ միայն սեռական անբարոյականության մեջ էին, այլև օգտագործում էին իրենց դիրքը՝ անբարոյականության դրդելու այն կանանց, ովքեր գալիս էին Տիրոջը փնտրելու (տե՛ս Ա Թագ. 2.22): Նրանք չարաշահում էին այն դիրքը, որն Աստված տվել էր իրենց՝ ժողովրդին ծառայելու համար, և օգտագործում էին այն՝ որպես միջոց՝ կատարելու իրենց իսկ ցանկությունները: Նրանց վարմունքը շատ բարկացրեց Տիրոջը: Հեղին գիտեր իր որդիների անբարոյականության և ագահության մասին,

սակայն չստիպեց նրանց՝ դադարեցնել մեղք գործելը և ոչ էլ զրկեց իրենց դիրքից:

Նրանց երկրորդ օրինազանցությունը վերաբերում էր զոհաբերություններին: Այս դեպքում նրանք նույնպես օգտագործում էին Աստծուց տրված իշխանությունը. նրանք պարարտանում էին ժողովրդի զոհաբերությունների շնորհիվ, որ խորամանկությամբ կամ սպառնալով խլում էին նրանցից:

Հետաձգված դատաստան

Համեմատե՛ք Հեղիի որդիների մեղքն Ահարոնի որդիների՝ Նադաբի ու Աբիուդի մեղքի հետ (այդ մարդիկ մահացան, երբ անսուրբ կրակ մատուցեցին Տիրոջը): Դժվար է չհարցնել, թե ինչու Հեղիի որդիները նույնպես հանկարծակի մահվան դատաստան չկրեցին: Նրանց մեղքն ակնհայտ էր՝ կատարյալ անարգանք Աստծո, Նրա ժողովրդի և Նրա զոհաբերությունների հանդեպ: Ինչո՞ւ, այդ դեպքում, նրանք չարժանացան միևնույն դատաստանին՝ խորանի առջև անմիջապես մահանալով: Պատասխանը հետևյալ խոսքում է.

> «…Եվ այն օրերը Տիրոջ Խոսքը հազվագյուտ էր. հայտնի տեսիլք չկար: Եվ այն ժամանակ եկավ, որ Հեղին իր տեղը պառկած էր (և նրա աչքերը սկսել էին ծանրանալ՝ չէր կարողանում տեսնել): Եվ Աստծո կանթեղը տակավին չէր հանգչել… ուր որ Աստծո տապանակն էր»:
>
> — Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 3.1-3

Ուշադրություն դարձրեք սրան.

➢ *Տիրոջ խոսքը հազվագյուտ էր*: Աստված չէր խոսում այնպես, ինչպես Մովսեսի հետ էր խոսում: Ինչպես Նրա Խոսքն էր հազվագյուտ, այնպես էլ Նրա ներկայությունը:

➢ *Հայտնի տեսիլք չկար:* Տեսիլք կամ հայտնություն լինում է այն ժամանակ, երբ կա Աստծո ներկայություն (տե՛ս Մատթ. 16.17): Նրա ներկայության բացակայության պատճառով մարդիկ գրեթե ոչինչ չգիտեին Նրա ճանապարհների մասին:

➢ *Առաջնորդների աչքերն այնքան էին խավարել, որ նրանք չէին կարողանում տեսնել:* Երկրորդ օրինաց 34.7-ում գրված է. «Եվ Մովսեսը հարյուր քսան տարեկան էր մեռնելիս. նրա աչքը չտկարացավ, և նրա ուժը չգնաց»: Մովսեսը չկորցրեց իր տեսողությունը, որովհետև քայլում էր Աստծո փառքի մեջ: Իր տարիքի համեմատ նա շատ լավ էր պահպանվել:

➢ *Աստծո կանթեղը հանգչում էր:* Աստծո փառքն այնքան հեռու էր, որ Նրա ներկայությունն ընդամենը առկայծող պատրույգի էր նման:

Ահարոնի որդիների դեպքում Աստծո փառքը նոր էր դրսևորվել և շատ ուժեղ էր: Ուստի կրակ դուրս եկավ Տիրոջից ու սպառեց նրանց, և նրանք մահացան Տիրոջ առջև: Աստծո ներկայությունն ու փառքը շատ զորավոր էր: Բայց Հեղիի որդիները, կուրորեն առաջնորդվելով, կարծես մարում էին հանգչող պատրույգի պես: Աստծո ներկայությունից մնացել էին միայն հուշեր: Նրա փառքն արդեն հեռացել էր: Դատաստանն արագ գալիս է միայն Նրա փառքի ներկայության մեջ: Այդ իսկ պատճառով նրանց դատաստանն անմիջապես չեկավ, այլ հետաձգվեց:

Որքան մեծ է փառքը, այնքան արագ է գալիս դատաստանը

Այս ճշմարտությունը պետք է հաստատվի մեր սրտում: Թեև ես նախապես խոսել էի դրա մասին, բայց այժմ այն շատ ավելի ակնհայտ է: Որքան մեծ է Աստծո դրսևորած փառքը, այնքան մեծ և արագ է հասնում դատաստանն անհարգալից վերաբերմունքի համար: Երբ Աստծո փառքի ներկայության մեջ մեղք կա, հակազդումն ակնթարթային է լինում: Մեղքը և նրանք, ովքեր կամովի մնում են մեղքի մեջ, ոչնչացված կլինեն: Որքան ուժեղ է լույսը, այնքան քիչ է խավարի հնարավորությունը:

Պատկերացրե՛ք մեծ սրահ՝ առանց պատուհանների կամ բնական լույսի: Այն լցված կլինի խավարով: Դուք չեք կարող տեսնել ձեր

բարձրացրած ձեռքն անգամ: Երբ լուցկի վառեք, այն լույս կտա, բայց աննշան կլինի: Խավարի հիմնական մասը կմնա: Միացրե՛ք վաթսուն վատտանոց լամպ: Լույսը կուժեղանա, բայց սրահի մեծ մասը դեռևս ծածկված կմնա խավարով և շողքով: Այժմ պատկերացրե՛ք, եթե արևի նման զորավոր լույսի աղբյուր լինի այդ սրահում: Կռահե՛ք, թե ինչ կլինի. լույսը կթափանցի այդ սրահում առկա բոլոր ճեղքերի և բացվածքների մեջ, որտեղ առաջ խավար և շողքեր են եղել, և խավարի յուրաքանչյուր բիծ կանհետանա:

Նույնն Աստծո ներկայության դեպքում է, երբ այն սահմանափակ կամ հազվագյուտ է լինում: Այդ դեպքում խավարը մշտապես ներկա է: Երբ չկա Աստծո ներկայություն, լինում է խավար, և դատաստանը հետաձգվում է: Դատաստանը գալիս է այն ժամանակ, երբ ավելանում է Աստծո փառքի լույսը: Պողոսը բացատրեց սա՝ գրելով.

> «Կան մարդիկ, որոնց մեղքերը հայտնի են և սկզբից դատաստանի հասած, իսկ ոմանցն էլ ետևից են գալիս»:
>
> — Ա ՏԻՄՈԹԵՈՍ 5.24

Անանիայի և Սափիրայի մեղքը բացահայտվեց Աստծո փառքի ուժեղ լույսի ներքո, և այդ պատճառով անմիջապես դատաստան կրեցին: Սա բացատրում է, թե ինչու այսօր շատերը, որոնց մեղքն ավելին է, քան այս զույգինը, խուսափել են անհապաղ դատաստանից մինչև հետաձգված դատաստանը: Այս մարդիկ շատ չեն տարբերվում Հեղիի որդիներից: Նրանք շարունակում են մեղանչել, քանի որ չեն գիտակցում, որ միևնույն է, դատվելու են: Նրանք մտածում էին. *«Ոչինչ չկատարվեց: Երևի ազատվեցի Աստծո դատաստանից: Հավանաբար Նա անտեսում է այն, ինչ անում եմ»:* Այս մարդիկ մխիթարվում են կեղծ շնորհքով՝ կարծելով, թե Աստծո դատաստանի հետաձգումը նշանակում է, որ այն ընդհանրապես չի լինելու:

Այն մարդիկ, ովքեր ապրում են քսանմեկերորդ դարի սկզբում, ականատես են եղել, որ եկեղեցում մեղանչում են ոչ միայն անդամները, այլ նաև առաջնորդները: Այս տարիների ընթացքում, ինչ ճանապարհորդում եմ, չի եղել մի ամիս, որ չլսեմ որևէ հովվի, ծառայողի,

երեցի կամ որևէ առաջնորդի մասին, որ սեռական մեղք գործած չլինի. սովորաբար՝ իրենց եկեղեցի հաճախող կանանցից մեկի հետ:

Սրտումս ցավ եմ զգացել այն խորամանկությունների և խաբեության պատճառով, որ երբեմն տեսել եմ զոհաբերություններ տալու և ընդունելու հետ կապված: Ոչ միայն զոհաբերությունների հարցում են խաբեություններ եղել, ինչպես Անանիայի և Սափիրայի դեպքում, այլ մի քանի անգամ լսել եմ նաև, թե ինչպես են եկեղեցու առաջնորդները կամ ադմինիստրատորները գողանում կամ յուրացնում եկեղեցու ֆոնդերը: Ես ու կինս լսել ենք նաև երկու հաշվապահի, ովքեր աշխատում էին երկու տարբեր նահանգներում բազմաթիվ ծառայությունների հետ: Նրանք խոսեցին մեզ հետ այն ագահության և խաբեության մասին, որ տեսել էին ծառայողների մեջ: Նրանցից մեկն ասաց. «Եթե ևս մի ծառայող գա իմ գրասենյակ և փորձի ավելի շատ գումար կորզել և շրջանցել հարկային օրենքները, ես կփակեմ գրասենյակս»:

Երբեմն մարդիկ ագահությունից և ցանկություններից դրդված են զոհաբերություն կատարում, այլ ոչ թե մարդկանց համար: Պողոսն ասաց. «Իբր ոչ թե տուրք եմ ուզում, այլ պտուղ եմ ուզում, որ ավելանա ձեր հաշվին» (Փիլիպ. 4.17): Ի տարբերություն սրա՝ ես լսել եմ, թե ինչպես են առաջնորդները վարվում Աստծո ժողովրդի հետ՝ նրանցից հնարավորինս շատ զոհաբերություն կորզելու համար: Ես տեսել եմ, թե ինչպես են նրանք օգտագործել խորհրդատվական ընկերությունների վարպետորեն գրված նամակները: Դրանցում ներկայացված են եղել աղավաղված ճշմարտություններ՝ ֆինանսական միջոցներ ձեռք բերելու համար: Այդ խորհրդատուներից ոմանք նույնիսկ պարծենում են, որ այս ամենը վերածել են գիտական մեթոդների և նույնիսկ կարող են կանխատեսել, թե ինչպիսին կլինի մարդկանց արձագանքը: Պետրոսը զգուշացնում էր, որ վերջին օրերում կբարձրանան այնպիսի առաջնորդներ, ովքեր «իրենց ագահությամբ խելացի ստեր կհնարեն՝ ձեր փողին տիրանալու համար և նրանց կործանումն իրենց ճանապարհին է» (Բ Պետր. 2.3, NLT):

Եթե նման վարվելաձև տեղի ունենար Գործք առաքելոցի ժամանակ, դատաստանն անհապաղ կլիներ: Այնուամենայնիվ, այսօր

դատաստանը հետաձգված է, քանի որ Աստծո կանթեղը մարում է: Աստծո փառքի վերջին թափումը դեռ պետք է լինի:

Սողոմոնը ողբում էր. «Ես տեսա, թե ինչպես էին անզգամները թաղվում պատվով: Որքա՜ն տարօրինակ է, քանի որ նրանք այն մարդիկ էին, ովքեր հաճախ էին գնում տաճար և գովասանք ստանում մարդկանցից այն քաղաքում, որտեղ գործում էին իրենց հանցանքները» (Ժողով. 8.10, NLT): Նա ասում էր, որ այդ ապականված մարդիկ հաճախ էին տաճար (եկեղեցի) գնում և բարի համբավ ունեին: Թվում էր, թե նրանք ծաղրում են Աստծուն իրենց գործերով և խուսափում դատաստանից: Պատճառն այն էր, որ դատաստանը հետաձգվում էր:

Սողոմոնը շարունակում է. «Երբ հանցագործությունը չի պատժվում, մարդկանց թվում է, թե իրենք կարող են սխալներ գործել՝ առանց վնաս կրելու: Բայց թեև մարդը հարյուր անգամ մեղանչի և երկար կյանք ունենա, ես գիտեմ, որ նրանք, ովքեր երկյուղ ունեն Աստծուց, ավելի լավ վիճակում կլինեն» (11,12-րդ խոսքեր, NLT): Ինչո՞ւ: Որովհետև հետաձգված դատաստան չի նշանակում, որ այն չեղյալ է համարվել:

Հետևյալ խոսքերը նախազգուշացնում են մեզ.

> «…Ահա Դատավորը դռան առջև կանգնած է»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 5.9

> «Որովհետև մենք ամենքս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով, ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար»:
>
> — Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.10

> «…Տերը կդատի Իր ժողովրդին: Սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը»:
>
> — ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.30,31

Այս հորդորանքները գրվել էին ոչ թե անհավատների, այլ՝ հավատացյալների համար:

Հեղիի որդիները մեղքի մեջ իրենց ապահով էին զգում: Միգուցե նրանք տարված էին իրենց դիրքով կամ եկեղեցու աշխատանքով: Միգուցե նրանք դատում էին իրենց շրջապատի մարդկանց չափանիշներով: Ինչևէ, Հեղիի որդիները խաբված էին, քանի որ հավատում էին, որ Աստծո դատաստանի *հետաձգումը* հավասարազոր է դրա *չլինելուն*: Իսրայելի առաջնորդների անօրինությունն ավելի քայքայեց երկրի՝ առանց այդ էլ վատթարացող հոգևոր վիճակը:

Աղավաղված շնորհք

Պողոսը նախապես գրել էր մեր ժամանակների մարդկանց ներքին վիճակի մասին. «Վերջին օրերում շատ դժվար ժամանակներ կլինեն: Որովհետև մարդիկ կսիրեն միայն իրենց և իրենց փողը: Նրանք պարծենկոտ և հպարտ կլինեն, Աստծուն ծաղրող, անհնազանդ իրենց ծնողներին և անշնորհակալ: Նրանց համար ոչինչ սուրբ չի լինի: Նրանք չսիրող և չներող կլինեն, կչարախոսեն մարդկանց և անզուսպ կլինեն, նրանք դաժան կլինեն և չեն սիրի բարի բաները: Նրանք կմատնեն իրենց ընկերներին, կլինեն անհոգ, գոռոզ և կսիրեն հաճույքն ավելի, քան Աստծուն» (Բ Տիմոթ. 3.1-4, NLT):

Ամենատխուր ճշմարտությունն այն է, որ Պողոսն այստեղ չի նկարագրում հասարակությունը, այլ՝ եկեղեցին, որովհետև նա շարունակում է. «Նրանք այնպես կվարվեն, ասես աստվածապաշտ են, բայց կմերժեն այն զորությունը, որ կարող էր դարձնել նրանց հաճելի Աստծուն» (5-րդ խոսք, NLT): Նրանք հաճախ եկեղեցի կայցելեն, կլսեն և կխոսեն Աստծո Խոսքը, կպարծենան Տիրոջ փրկարար շնորհքով, բայց կմերժեն այն զորությունը, որը կարող է իրենց հաճելի դարձնել Աստծուն:

Ո՞րն է այն զորությունը, որ կարող է աստվածապաշտ դարձնել մարդկանց: Պատասխանը պարզ է. Աստծո շնորհքը, որով նրանք պարծենում են: Վերջին քսան կամ երեսուն տարիների ընթացքում այն շնորհքը, որին հավատում է մեր եկեղեցիների մեծ մասը, իրական շնորհք չէ, այլ՝ շնորհքի աղավաղում: Մարդիկ չափազանց մեծ

շեշտադրում են արել Աստծո *բարության* վրա՝ անուշադրության մատնելով Նրա *երկյուղը*:

Երբ Աստծո սիրո մասին ուսմունքը հավասարազոր չէ Աստծո երկյուղի հետ, առաջանում են շեղումներ: Նույնը կատարվում է, երբ Աստծո երկյուղը հավասարազոր չէ Աստծո սիրո հետ: Ահա թե ինչու է Աստծո Խոսքը հորդորում մեզ. «Արդ, տե՛ս Աստծո քաղցրությունը և սաստկությունը…» (Հռոմ. 11.22): Մեզ երկուսն էլ անհրաժեշտ են, առանց այս երկուսի չենք կարող հավասարակշռված լինել մեր քրիստոնեական կյանքում:

Ես լսել եմ, թե ինչպես են հավատացյալներն ու առաջնորդներն արդարացնում իրենց անհնազանդությունը՝ ասելով, որ ամեն ինչ ծածկված է Աստծո շնորհքով կամ սիրով: Շնորհքն իրոք անսահման է, և, *այո՛*, այն ծածկում է, բայց ոչ այնպես, ինչպես մեզ սովորեցրել են: Այն տրված է մեզ ոչ թե *արդարացումներ որոնելու*, այլ *զորանալու* համար:

Հավասարակշռության պակասը բերում է նրան, որ մենք հանգիստ կարողանում ենք չհնազանդվել Աստծուն ամեն անգամ, երբ հնազանդվելը մեր օգտին չէ: Նույնիսկ այն ժամանակ, երբ մեղք ենք գործում, հավատացնում ենք մեզ և հանգստացնում մեր խիղճը, թոթվելով մեր ուսերը՝ մտածում. *«Աստծո շնորհքը կծածկի սա, որովհետև Նա սիրում է ինձ և հասկանում, թե որքան բարդ է կյանքը: Նա ցանկանում է, որ ինչ գնով էլ լինի, ես երջանիկ լինեմ, այնպես չէ՞»*:

Ճիշտ է, սովորաբար մենք բարձրաձայն չենք արտահայտում այս մտքերը, բայց, միևնույն է, դրանք կան մեր սրտում: Սրա վկայությունն այն պտուղն է, որը Պողոսն այդքան մանրամասնորեն ասաց:

Թեև շնորհքը ծածկում է, այնուամենայնիվ, միայն ծածկոց չէ, այլ շատ ավելին: Շնորհքը կարողություն և զորություն է տալիս մեզ ապրել սուրբ կյանքով և հնազանդվել Աստծո իշխանությանը: Եբրայեցիների թղթի հեղինակը հորդորում է. «…պի՛նդ պահենք այն շնորհքը, որով պաշտում ենք հաճությամբ Աստծուն՝ ահով և երկյուղածությամբ» (Եբր. 12.28): Ըստ այս նկարագրության, շնորհքը նման չէ ծածկոցի կամ թավշե գորգի, որի տակ կարելի է թաքցնել ամեն ինչ:

Այն զորություն է, որը մեզ կարողություն է տալիս ծառայել Աստծուն պատշաճ երկյուղածությամբ և աստվածավախությամբ: Շնորհքը հնազանդ կյանքի ետևում թաքնված զորության աղբյուրն է: Այն մեր փրկության վավերականացումն ու ապացույցն է:

Ոմանք կարող են հակառակվել սրան և վիճել. «Բայց Աստվածաշունչն ասում է. «Որովհետև շնորհքով եք փրկված, հավատքի ձեռքով, և սա ոչ թե ձեզնից է, այլ՝ Աստծո պարգևն է» (Եփես. 2.8)»: Այո՛, սա ճիշտ է. մեր ուժերով անհնար է ապրել այնպիսի կյանքով, որ արժանի լինենք ժառանգել Աստծո արքայությունը, որովհետև բոլորս մեղանչեցինք և պակասեցինք Աստծո փառքից: Մեզնից ոչ ոք երբեք չի կարողանա կանգնել Աստծո առջև և հայտարարել, որ մեր գործերը, բարեգործությունները կամ բարեպաշտ կյանքը իրավունք են ընձեռում մեզ՝ ապրել Նրա արքայության մեջ: Մեզնից յուրաքանչյուրն անօրենություն է գործել և արժանի է հավիտյան այրվել կրակի լճում:

Սակայն Աստծո պատասխանը Իր շնորհքի պարգևի միջոցով մեզ մեղքերից փրկելն էր, որն անկարելի է վաստակել (տե՛ս Հռոմ. 4.4): Շատերը եկեղեցում հասկանում են սա: Բայց մենք չենք շեշտում, որ Աստծուց տրված շնորհքի զորությունը ոչ միայն փրկում է մեզ, այլ նաև կարողություն է տալիս այլ կերպ ապրելու համար: Աստծո Խոսքն ասում է.

> «Հավատքն ինքնին, եթե չունի գործեր, մեռած է: Բայց ինչ-որ մեկը կասի. «Դու հավատք ունես, իսկ ես գործեր ունեմ»: Ցո՛ւյց տուր ինձ քո հավատքն առանց քո գործերի, իսկ ես ցույց կտամ իմ հավատքն իմ գործերով»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 2.17,18, NKJV

Հակոբոսը չի հակասում Պողոսին: Նա ուղղակի պարզեցնում է Պողոսի ուղերձը՝ հաստատելով, որ Տիրոջ համար հնազանդ կյանքով ապրելը վկայություն է այն մասին, որ մարդը ստացել է Աստծո շնորհքը: Այս շնորհքը տալիս է ոչ միայն երկյուղածությամբ հնազանդվելու *ցանկություն*, այլև *կարողություն*: Երբ մարդը շարունակ չի հնազանդվում Աստծո Խոսքին, նշանակում է նրա հավատքը

մարել է կամ երբեք էլ գոյություն չի ունեցել: Հակոբոսը շարունակում է.

> «Արդ, տեսնո՞ւմ եք, որ մարդ գործերով է արդարանում, և ոչ միայն հավատքով»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 2.24

Նախքան այս արտահայտությունը Հակոբոսը Աբրահամին՝ հավատքի հորը, օրինակ բերեց. «Մեր հայր Աբրահամը չէ՞ որ գործերով արդարացավ՝ իր որդի Իսահակին պատարագ անելով սեղանի վրա» (21-րդ խոսք): Աբրահամի գործերը վկայեցին նրա հավատքի մասին: Նրա գործերը հաստատեցին նրա հավատքը: «Եվ կատարվեց Գրքի խոսքը, որ ասում է. «Եվ Աբրահամը հավատաց Աստծուն և արդարություն համարվեց նրա համար…»» (23-րդ խոսք):

Մեր օրերում «հավատալ» բառի իմաստն աղավաղվել է. այն վերածվել է ինչ-որ բանի գոյության իմացությանը: Բազմաթիվ մարդիկ աղոթել են ապաշխարության աղոթքը՝ զգացմունքների ազդեցության տակ գտնվելով, իսկ դրանից հետո վերադարձել են իրենց նախկին անհնազանդ կյանքին: Նրանք ապրում են՝ ամբողջ կյանքում հավատալով զգացմունքային փրկությանը, որը փոխելու զորություն չունի: Այո՛, նրանք հավատում են Աստծուն, բայց Աստվածաշունչն այսպես է ասում. «Դու հավատո՞ւմ ես, թե մեկ է Աստված: Լա՛վ ես անում. դևերն էլ են հավատում և սարսափում են» (Հակոբ. 2.19):

Ի՞նչ օգուտ Հիսուս Քրիստոսին մտքում ընդունելուց, եթե չկա ոչ մի փոփոխություն սրտում, և, հետևաբար, նաև գործերում:

Սուրբ գրքում *«հավատալ»* բառի սահմանումը շատ է տարբերվում սրանից: Այն ավելին է, քան Հիսուսի գոյությունը ճանաչելը. պետք է նաև հնազանդվել Նրա Խոսքին և կամքին: Սա բացատրում է Եբրայեցիների 5.9-ը. «Եվ երբ որ կատարվեց, բոլոր Իրեն հնազանդվողների համար հավիտենական փրկության պատճառ եղավ»: «Հավատալ» նշանակում է «հնազանդվել», իսկ «հնազանդվել» նշանակում է «հավատալ»: Աբրահամի հավատքի ապացույցը համապատասխան

հնազանդությունն էր: Նա զոհաբերեց իր թանկագին որդուն Աստծո համար: Ոչ մի բան, նույնիսկ իր որդին, ավելի թանկ չէր Աբրահամի համար, քան Աստծուն հնազանդվելը: Սա է ճշմարիտ հավատքը: Ահա թե ինչու Աբրահամը պատիվ ստացավ՝ կոչվելով «հավատքի հայր» (տե՛ս Հռոմ. 4.16): Արդյո՞ք այսօրվա եկեղեցիներում առկա են նույն հավատքն ու շնորհքը: Ինչպե՞ս ենք մենք այսքան խաբվել:

«Աստված մեզ նման է»

Ճիշտ է, Հեղին և նրա որդիները խաբում էին Իսրայելի ժողովրդին, սակայն նրանք նույնպես խաբված էին: Նրանք հավատում էին, որ Աստված անտեսում էր նրանց անհնազանդությունը: Հեղիի և նրա որդիների սիրտը կարծրացել էր, և նրանք կարծում էին, որ Աստված այնպիսին է, ինչպիսին իրենք են: Նրանք մտածում էին Աստծո մասին ըստ իրենց իմացածի և տեսածի:

Պողոսը շարունակում է նկարագրել մեր օրերի հավատացյալներին, ովքեր աստվածահաճո լինելու ցանկությունը չունեն. «Նրանք կշարունակեն խաբել մարդկանց, և իրենք էլ խաբված կլինեն» (Բ Տիմոթ. 3.13, NLT):

Նրա մարգարեական խոսքը հաստատվում է մեր օրերում: Աստված եկեղեցու անբարո առաջնորդներին և կեղծ հավատացյալներին ասում է.

> «Այլևս մի՛ պատմեք Իմ օրենքները և մի՛ ձևացեք, թե հնազանդվում եք Ինձ: Որովհետև դուք մերժում եք Իմ խրատը և աղբի նման վերաբերվում Իմ օրենքներին: Երբ դուք գող եք տեսնում, օգնում եք նրան և ծախսում եք ձեր ժամանակը շնացողների հետ: Ձեր բերանները լցված են անարգ բաներով, և ձեր լեզուները լի են ստերով: Դուք անգործությամբ եք տարված և բամբասում եք եղբայրների դեմ»:
>
> — ՍԱՂՄՈՍ 50.16-20, NLT

Աստված հարցնում է. «Ինչո՞ւ եք դուք քարոզում Իմ Խոսքը, երբ չեք վախենում Ինձնից և չեք հնազանդվում Ինձ: Ինչո՞ւ եք խաբում և՛ ձեզ, և՛ ուրիշներին»: Նա ասում է նրանց.

> «Դուք արեցիք այս բաները, և Ես լռեցի. դուք կարծեցիք, որ Ես այնպիսին եմ, ինչպիսին դուք, բայց Ես կհանդիմանեմ ձեզ և կարգավ կդնեմ ձեր մեղքերը ձեր աչքերի առջև»:
>
> — ՍԱՂՄՈՍ 50.21, NLT

Աստված ասում է. «Ես լռեցի»: Դատաստանը հետաձգվեց և ոչ թե չեղյալ հայտարարվեց, որովհետև Նա ասաց. «…Ես կհանդիմանեմ ձեզ, և կարգավ կդնեմ…»: Հիշե՛ք՝ *աստվածային կարգ ու կանոնը* նախորդում է *դրսևորված փառքին*: Փառքը դրսևորվելուն պես անկարգությունն անմիջապես դատաստանի է ենթարկվում, որպեսզի պահպանվի աստվածային կարգ ու կանոնը: Աստված նրանց, ում դատաստանը դեռ չի եկել, խոստացավ. «Հաստա՛տ իմացեք, որ պետք է լինի կարգ ու կանոն, որովհետև Ես եմ այն հաստատելու»:

Ուշադրություն դարձրեք, որ անհնազանդ մարդիկ արդարացնում են իրենց աներկյուղ վարքն իրենց խղճով: Նրանք հավատում են, որ Աստված իրենց նման է: Այդ մարդիկ Աստծո փառքն իջեցնում են եղծանված մարդու մակարդակին:

Աստծո մարդի՛կ, լսե՛ք Նրա ողորմության խոսքերը: Միգուցե դուք ասեք. «Ողորմության խոսքե՞ր: Ես մտածում էի, որ խոսում եք դատաստանի մասին»: Ո՛չ, մարգարեական ուղերձներ գրելու կամ քարոզելու միջոցով Աստված ցանկանում է զգուշացնել մեզ, որպեսզի ետ պահի Իր դատաստանից: Այդ իսկ պատճառով սա ողորմության ուղերձ է:

Աստված մնացորդ ունի

Պողոսը հոգով տեսավ, թե ինչպես է մարելու Աստծո դրսևորված փառքը, մինչև այն կրկին չհասնի ամենացածր մակարդակի: Փառքի վերջին թափվելուն նախորդող օրերին կլինի հենց այսպիսի հոգևոր մթնոլորտ: Ե՛վ քահանաները, և՛ ժողովուրդն անօրենության մեջ կլինեն: Պողոսը գրում է.

> «Որովհետև կգա ժամանակ, երբ մարդիկ այլևս չեն լսի ճշմարիտ ուսմունքը: Նրանք կհետևեն իրենց սեփական ցանկություններին և

կփնտրեն ուսուցիչների, ովքեր կասեն իրենց այն, ինչ իրենք ցանկանում են լսել»:

— Բ ՏԻՄՈԹԵՈՍ 4.3, NLT

Ցավալի է, բայց մենք ապրում ենք այդ ժամանակներում: Չափազանց շատ հովիվներ և ծառայողներ ասես ցանկանում են բազմաթիվ մարդկանց հրապուրել՝ խոսելով կոծկող արդարության մասին: Նրանք վախենում են խիզախորեն քարոզել ճշմարտությունը՝ անհանգստանալով, որ կվտանգեն այն ամենը, ինչ այդքան դժվարությամբ կառուցել են: Այնպես որ, նրանք, խուսափելով հակառակությունից, մարդկանց ասում են այն, ինչ նրանք են ցանկանում լսել:

Նման վարքը քայքայիչ արդյունքներ ունի: Մեղավորները հավաքույթների ժամանակ նստած լսում են ու չեն հանդիմանվում մեղքի համար և տեղյակ էլ չեն, թե ինչ է իրականում նշանակում արդարությունը: Այս շփոթված մարդկանցից շատերը ենթադրում են, որ փրկված են, սակայն սխալվում են: Միևնույն ժամանակ որոշ ծառայողներ ձգտում են արժանանալ մարդկանց բարեհաճությանն ու պարգևներին՝ առանց հաշվի առնելու Աստծո բարեհաճությունը, իսկ աստվածապաշտ հավատացյալներն աղաղակում են. «Ո՞ւր է Աստված»: Ամենավատն այն է, որ մեր հասարակությունը, որը շարունակում է խավարի գերին մնալ, արհամարհանքով է վերաբերվում եկեղեցուն: Երբ եկեղեցին վարակված և հիվանդ է Տիրոջ երկյուղի բացակայության պատճառով, այն անկարող է օգնել հասարակությանը:

Աստծո պատասխանն այս իրավիճակի համար մնացորդն է: Ինչպես որ Աստված առաջին անձրևի ժամանակ գտավ մնացորդ, ովքեր դողում էին Իր Խոսքից, և փառքով լցրեց նրանց, այնպես էլ վերջին անձրևի օրերում կգտնի հավատացյալների մնացորդ, որոնց միջոցով Նա կրկին կհայտնի Իր փառքը: Այս հավատացյալների քանակը կարևոր չէ: Նրանք կսիրեն և կհնազանդվեն Աստծուն ամեն գնով: Այսօր երկրի վրա կան շատ ավագներ, ծառայողներ և հավատացյալներ, ովքեր աղաղակում են Աստծո այսպիսի փառքի համար, որը պետք է թափվի:

Մենք չենք գնում այնտեղ, որտեղ եղել ենք կամ՝ որտեղ հիմա ենք գտնվում: Մենք պետք է բարձրացնենք մեր աչքերը դեպի հորիզոնը և փնտրենք Նրա գալիք փառքը:

ԻՆՆԵՐՈՐԴ

ԳԱԼԻՔ ՓԱՌՔԸ

«Այս վերջին տան փառքը մեծ պիտի լինի առաջվանից,– ասում է Զորաց Տերը...»:

—ԱՆԳԵ 2.9

Ես լսել եմ, թե ինչպես են ծառայողները և հավատացյալները պարծենում, որ մենք ապրում ենք վերջին անձրևի ժամանակներում: Նրանք այնպես են խոսում, ասես եկեղեցին արդեն վերապրում է մարգարեների կողմից նախապես ասված Աստծո Հոգու թափումը, և ասես Հիսուսն ամեն օր կարող է գալ և հափշտակել մեզ Երկինք: Այսպես խոսող մարդկանց ես պատասխանում եմ. «Ձեր տեսիլքը չափազանց փոքր է: Վերջին անձրևի ժամանակ Աստված անելու է շատ ավելին, քան դուք պատկերացնում եք»:

Հաճախ մարդիկ նման բաներ են ասում անիրազեկության պատճառով: Մարդիկ շատ անգամ նման հայտարարություններ անում են այն ժամանակ, երբ Աստված իսկապես գործում է ինչ-որ տեղ: Ինչքան էլ փառավոր լինի Աստծո Հոգու շարժն այդ ծառայությունների ժամանակ, դա դեռ չի նշանակում, որ վերապրում ենք վերջին անձրևի փառքը: Շատ անգամ Աստծո Հոգու թարմ շարժը, որն ուղեկցվում է զորությամբ, օծությամբ և պարգևներով, շփոթում ենք Աստծո գալիք փառքի հետ: Մենք չենք տեսնում Աստծո գալիք փառքը մեր հոգու աչքերով:

Նման հայտարարություններ անում են հոգևոր ծույլ մարդիկ: Նրանք պարզապես հոգնել են Աստծո վերին կոչմանը ձգտելուց և

հանգրվանել Աստծո սարի ստորոտում: Ոմանք նույնիսկ ոչ մի տեղ կանգ չեն առել, այլ՝ աննպատակ թափառել են մեկը մյուսին հաջորդող հանդարտ ուղիներով: Այս ուղիները կոչվում են փոխզիջում, ապաշխարություն, կրոն և կեղծ միաբանություն: Ցանկացած դեպքում այս ուղիներով գնացող մարդիկ բավարարվել են մարդու փառքով, և եթե նրանք շարունակեն մնալ քնած վիճակում, ապա, ի վերջո, կհակառակվեն Աստծո փառքին, երբ այն վերջապես դրսևորվի:

Մի խումբ մարդիկ էլ հռչակում են Աստծո փառքի դրսևորումը՝ չափազանցնելով տեղի ունեցածը, որպեսզի գովազդեն իրենց ծառայությունները: Սա ամենավտանգավոր նկատառումն է, որովհետև այն շատ անհարգալից վերաբերմունք է Աստծո նկատմամբ: Աստված խոսեց ինձ հետ՝ ասելով. «Նրանք, ովքեր բավարարվում են *արհեստականով,* երբեք չեն տեսնի *իրականը*»: Եթե այս մարդիկ շարունակեն գործել առանց Աստծո երկյուղի, ապա դատաստան կկրեն, երբ դրսևորվի Աստծո փառքը, որը նախատեսված է մեծ թարմություն և ուրախություն բերելու համար:

Ոմանք կարող են չհամաձայնել. «Բայց այսօր Աստծո զորությունը, բժշկությունը և հրաշքներն *ավելանում* են»: Միգուցե դա ճիշտ է, բայց այս փաստը չի նշանակում, որ հիմա է վերջին անձրևի ժամանակը: Մենք պետք է հիշենք, որ Հոգու պարգևները կարող են գործել նույնիսկ այնպիսի մարդկանց կյանքում, ովքեր հաճելի չեն Աստծուն: Աստծո օծության յուրաքանչյուր դրսևորումը պարտադիր չէ, որ խոսի Նրա հաճության մասին: Հիսուսը զգուշացրեց, որ շատերը դատաստանի օրը կգան Իր մոտ և կասեն, որ դևեր են քշել, մարգարեացել են և մեծ նշաններ արել Նրա անունով, սակայն Նա ասելու է նրանց. «Հեռացե՛ք Ինձնից, ո՛վ անօրենություն գործողներ»:

Մենք պետք է հիշենք, թե ինչու Աստված արարեց աշխարհը: Նա Ադամին պարտեզում չդրեց աշխարհով մեկ քարոզելու, բժշկության կամ ազատագրման ծառայություններ անելու համար: Ո՛չ, Ադամը պարտեզում դրվեց, որպեսզի Աստված կարողանար շփվել նրա հետ: Այո՛, Աստված ցանկանում էր շփվել Ադամի հետ, բայց այն խաթարվեց Ադամի անհնազանդության պատճառով:

Մենք ստեղծվել ենք Աստծո համար, որպեսզի ապրենք Նրա հետ փառքի մեջ: Բայց չենք կարող անհնազանդ լինել, եթե ցանկանում ենք հաճեցնել Աստծուն: Մենք կարող ենք ճշգրտորեն իմանալ, թե ինչ հոգևոր վիճակում ենք գտնվում՝ հետևելով, թե որքանով ենք հնազանդվում Նրա կամքին: Մեր կյանքում կարող է լինել Աստծո օծությունը, սակայն, միևնույն է, կարող ենք հեռու գտնվել Նրա սրտից: Մտածե՛ք Հուդայի, Բաղաամի և Սավուղ թագավորի մասին. բոլորն էլ գործում էին իրենց տրված օծությունով, բայց քանի որ ունեին եսասիրական դրդապատճառներ, ընկան Աստծո հետ ընթացքից:

Աստված չի մեծացնում Իր երեխաներին հրաշքներ գործելու համար: Աստված Հին կտակարանում խոսեց Բաղաամի էշի միջոցով, բայց նա այդ բեռնակիր անասունին չընտրեց, որպեսզի Իր փառքը բնակվեր այնտեղ: Վերջին վեց հազարամյակների ընթացքում Աստված համբերատար կառուցում է Իր համար նախատեսված տաճարը: Այն բաղկացած է Իր հնազանդ զավակներից, ովքեր սիրում են Իրեն և վախենում Իրենից: Պետրոսը գրեց. «Դուք էլ կենդանի քարերի պես շինվեք հոգևոր տաճար…» (Ա Պետր. 2.5): Իսկ Պողոսը հաստատեց. «Որ Նրանում դուք էլ Նրա հետ շինվում եք Աստծո բնակարան Հոգով» (Եփես. 2.22):

Եթե ազնիվ գտնվենք, ապա կխոստովանենք, որ մենք՝ որպես տաճար, դեռևս պատրաստ չենք Նրա փառքի համար: Տաճարը դեռ կառուցման փուլում է: Աստվածային կարգ ու կանոնը դեռևս հաստատվում է մարդու սրտում:

Մեր ներկա վիճակը

Իսրայելի պատմության մեջ կա մի ժամանակաշրջան, որը նման է եկեղեցու ներկա վիճակին: Հիշե՛ք՝ Իսրայելում կատարված իրադարձությունները և այն դասերը, որ պետք է քաղել դրանցից, եկեղեցու գալիք բաների ստվերներն են: Բաբելոնյան գերությունից յոթանասուն տարի անց հրեաների մի խումբ վերադարձավ իրենց սիրելի Խոստման երկիրը: Դատաստանն անցել էր. սկսվել էր վերա-

կանգնման ժամանակը: Ժամանակն էր, որ կառուցվեին քաղաքի պարիսպներն ու տաճարը: Սկզբում շինարարությունն ընթանում էր խանդավառությամբ, նվիրվածությամբ և ծանր աշխատանքով: Սակայն, երբ սկզբնական ոգևորությունը պակասեց, մարդիկ կորցրին իրենց նպատակը, և տասնվեց տարի անց նրանք դեռ չէին կարողանում ավարտել տաճարի կառուցումը: Նրանց անձնական գործերն ավելի կարևոր էին դարձել, քան Աստծո տան վերականգնումը: Նրանց երկյուղածությունը մարել էր անձնական գործերով տարվելու պատճառով: Այն, ինչ Աստված կարևոր և սուրբ էր համարել, ետին պլան էր մղվել:

Ժողովրդին արթնացնելու համար Աստված բարձրացրեց Անգե մարգարեին: Նա ընդդիմացավ մարդկանց՝ ասելով. «Ձեզ համար ժամանա՞կն է արդյոք, որ ձեր ձեղունազարդ տներում բնակվեք, իսկ այս տունն ավերակ մնա» (Անգե 1.4): Իսրայելցիները կորցրել էին իրենց նպատակը, քանի որ նրանց ուշադրությունը Աստծուց տեղափոխվել էր իրենց վրա: Երբ այսպիսի բան է տեղի ունենում, Աստծո հանդեպ ունեցած ձգտումն ու փափագը սկսում են մարել:

Այս մարգարեի միջոցով Աստված բացատրեց նման անբավարարվածության պատճառը. «Նայեցիք շատին, և ահա քիչ եղավ, և բերիք տուն, բայց Ես փչեցի միջին: Ինչո՞ւ համար,– ասում է Զորաց Տերը,– Իմ տան համար, որ ավերակ է, իսկ ձեզնից յուրաքանչյուրը վազ է տալիս իր տան մոտ: Սրա համար ձեզ վրա երկինքը պիտի արգելի ցողը և երկիրը պիտի արգելի իր պտուղը» (9,10-րդ խոսքեր): Աստված պահել էր նրանց հունձքի անձրևը: Երբ մենք Տիրոջը ձգտելու փոխարեն ձգտում ենք օրհնությունների, ապա Նա կհեռացնի կամ կպահի որոշ բաներ, որպեսզի մենք կրկին աղաղակենք Իրեն:

Արդյո՞ք մեր երկընտրանքն այսօր տարբերվում է սրանից: Մենք նույնպես ապրում ենք վերականգնման ժամանակաշրջանում, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ Հիսուսը չի վերադառնա մինչև «ամեն բաների հաստատվելու ժամանակները» (Գործք 3.21): Սուրբ գիրքն ասում է, որ այն ամենը, ինչ կորած էր, կվերականգնվի մինչև Նրա վերադարձը: Աստված վերականգնեց Իսրայելի քարե տաճա-

ը, սակայն մեր տաճարը հոգևոր է: Այն խորան է, որը պատրաստված է մեր սրտերից: Այս սուրբ տաճարում ևս մեկ անգամ կվերանորոգվի և կվերականգնվի աստվածային կարգ ու կանոնը, որպեսզի դրսևորվի Նրա փառքը:

Սակայն մեր վերականգնման ընթացքում մենք վարվեցինք այնպես, ինչպես Իսրայելը: Մենք սկսեցինք ձգտել օրհնություններին և հարմարավետ ու հանգիստ կյանքով ապրելուն: Մեզնից շատերը տվել են լավագույնը՝ մեր սեփական «ձեղունազարդ տները» շինելու համար: Մենք տվել ենք մեր ժամանակի մեծ մասը, որ հասնենք անձնական հաջողության՝ հարմարավետ և ապահով կյանք ունենալու համար:

Ո՞ւր է Իմ պատիվը

Ավելի ուշ Աստված կրկին հարց տվեց Իսրայելին Հին կտակարանի վերջին մարգարե Մաղաքիայի միջոցով: Նա ապրում էր Անգեի ժամանակներում, որ նույն վերականգնման ժամանակներն էին: Մաղաքիան աղաղակեց.

> «Տղան իր հորը կմեծարի, և ծառան՝ իր Տիրոջը: Եթե Ես էլ Հայր եմ, ո՞ւր է Իմ մեծարանքը (անգլ.՝ պատիվը), և եթե Տեր եմ Ես, ո՞ւր է Իմ երկյուղը,– ասում է ձեզ Զորաց Տերը,– ո՛վ Իմ անունը անարգող քահանաներ, որ ասում եք, թե ինչո՞վ ենք անարգում Քո անունը: Իմ սեղանի վրա պիղծ հաց մատուցելով, բայց դուք ասում եք. «Մենք ինչո՞վ ենք Քեզ պղծում»: Ձեր ասելով, թե Տիրոջ սեղանն անարգված է: Ապա երբ որ կույրը մատուցում եք զոհելու, վատ չէ՞, կամ երբ որ մատուցում եք կաղը կամ հիվանդը, վատ չէ՞: Նրան մեկ քո իշխանին մատուցիր, արդյոք քեզ կհավանի՞ կամ քեզ կընդունի՞,– ասում է Զորաց Տերը»:
>
> —ՄԱՂԱՔԻԱ 1.6-8

Աստված հարցրեց Իր ժողովրդին. «Դուք Տեր եք անվանում Ինձ, սակայն որտե՞ղ է Իմ պատիվը և երկյուղածությունը»: Ինչո՞վ էին մարդիկ անարգում Աստծուն: Նրան տրվում էր երկրորդ տեղը, իսկ լավագույն տեղը մարդիկ պահում էին իրենց համար:

Ժողովրդի վերաբերմունքն Աստծո հանդեպ անհարգալից էր:

Իսրայելցիներին իրենց սխալը ցույց տալու համար Աստված ասաց. «… նրան մեկ քո իշխանին մատուցիր» (այսինքն՝ քո տնօրենին կամ առաջնորդին, ով շատ ավելի ցածր է, քան տիեզերքի Թագավորը): Եթե մենք աշխատեինք մեր գործատուների համար այնպես, ինչպես ծառայում ենք Աստծուն, ապա մեզ, մինչև շաբաթվա վերջ, կհեռացնեին աշխատանքից:

Եկե՛ք նայենք այն պատվին, որ հաճախ տալիս ենք Աստծուն: Մենք եկեղեցի ենք գալիս տասը րոպե ուշացումով: Մատը մատին չենք տալիս ծառայելու համար, այլ շարունակ քննադատում ենք այն առաջնորդներին, ովքեր, ի տարբերություն մեզ, ծառայում են: Շարունակ կասկածամտորեն հետևում ենք, թե ինչպես են ծախսվում եկեղեցու գումարները, թեև հազվադեպ ենք տալիս մեր տասանորդը: Շտապելով ճաշելու՝ մենք հեռանում ենք մինչև ծառայության ավարտը: Հաճախում ենք միայն կանոնավոր ծառայություններին և սրտնեղում, երբ հատուկ հավաքույթներ են նշանակվում: Եթե եղանակը վատ է, մենք տանն ենք մնում՝ խուսափելով անհարմարավետությունից: Եթե մենք լավ ենք զգում մեզ, կրկին մնում ենք տանը և վայելում մեր հանգիստը: Եթե հեռուստատեսությամբ մեր սիրելի հաղորդումն են ցույց տալիս, չենք գնում ծառայության՝ այն դիտելու համար:

Ո՞վ այսքան կդիմանար իր աշխատավայրում, եթե ինչ որ մեկն այսպես կատարեր իր պարտականությունները:

Եկեղեցիներում կամ բազմաթիվ ծառայություններում ծառայող մարդկանցից շատերը գերծանրաբեռնված են, քանի որ չկան բավականաչափ մարդիկ, ովքեր կցանկանան նվիրել իրենց ժամանակը ծառայության աշխատանքի մեծ բեռը կրելու համար: Շատ եկեղեցիներում մարդկանց մեծամասնությունը գալիս է միայն վերցնելու կամ դիտորդի դերում լինելու համար. նրանք չեն պատրաստվում ծառայել կամ ինչ որ բան տալ: Նրանք ուշադիր նայում են ժամացույցին՝ համոզվելու համար, որ կիրակնօրյա ծառայությունն ավարտվում է նշված ժամին: Նրանք ժամանակ չունեն նաև շաբաթվա ընթացքում անցկացվող աղոթքի հավաքույթի համար: Սակայն նույն այս մար-

դիկ երկար և ծանր աշխատում են, որպեսզի բարելավեն իրենց կենսամակարդակը և հաջողության հասնեն:

Քանի որ քչերն են ծառայում, համայնքի աղքատ և կարիքավոր մարդիկ անտեսվում են: Բայց, ի վերջո, նույն այս մարդիկ քննադատում են հովվին և նրա գերծանրաբեռնված աշխատակազմին այն բանի համար, որ աղքատների կարիքները բավարարված չեն:

Այս դժկամ մարդկանցից ոմանք նույնիսկ ժամանակ չեն հատկացնում իրենց ընտանիքներին, որոնց մասին հոգալու համար այդքան աշխատում են: Նրանք աչքաթող են անում իրենց ընտանիքները՝ արդարանալով. «Իհարկե, ես ձեզ սիրում եմ: Չէ՞ք տեսնում, որ զբաղված եմ ձեզ համար աշխատելով: Հանգի՛ստ թողեք ինձ, հենց հիմա ես հոգնած եմ և ժամանակ չունեմ ձեզ համար»:

Աստված բացատրում է այս անկարգության պատճառը. «Դուք շատ բանի եք ձգտում, բայց իրականում քիչ ունեք, որովհետև, երբ դուք տուն եք բերում ձեր ունեցածը, Ես ցրում եմ այն: Ինչո՞ւ,– ասում է Զորաց Տերը,– Իմ տան պատճառով, որն ավերակների մեջ է, երբ ձեզնից յուրաքանչյուրը վազում է իր տան մոտ: Այդ իսկ պատճառով վերջին անձրևը պահված է ձեզնից, և հունձքի պտուղը չի եկել» (Անգե 1.9,10, հեղինակի վերարտադրությամբ):

Որտե՞ղ են ճշմարիտ քարոզիչները

Մաղաքիան և Անգեն ճշմարիտ քարոզիչներ էին: Նրանց ուժեղ մարգարեական խոսքերը փոփոխություն բերեցին Իսրայել ժողովրդի սրտում: Իսրայելը լսեց այս խոսքերը և «…լսեց… իրենց Տեր Աստծո ձայնին և Անգե մարգարեի խոսքերին, ինչպես որ իրենց Տեր Աստվածը նրան ուղարկել էր, և ժողովուրդը վախեցավ Տիրոջ երեսից» (Անգե 1.12):

Երկյուղածությունը վերականգնվեց: Մարդիկ կրկին կենտրոնացան տաճարի վրա. նրանց անձնական շահերը դարձան երկրորդական: Երբ երկյուղ ունենք Աստծուց, մենք Նրա շահերն ու ցանկությունները միշտ ավելի բարձր կգնահատենք, քան մերը:

Այսօր մեզ անհրաժեշտ են Անգեի և Մաղաքիայի նման քարոզիչ-

ներ, ովքեր կխուսափեն մարդկային ճանաչումից և կձգտեն հաճեցնել Աստծուն: Մեզ հարկավոր են քարոզիչներ, ովքեր կխոսեն ոչ թե այնպիսի խոսքեր, որոնք մարդիկ են *ցանկանում* լսել, այլ այնպիսի, որոնք նրանք *պետք* է լսեն: Եթե որևէ մեկն այսօր գիրք գրի այն մասին, թե ինչպես բարելավել կյանքը կամ հաջողության հասնել, այն լավ կվաճառվի: Մենք գրում և քարոզում ենք այնպիսի թեմաներով, որոնք հաճելի են մարդկանց: Բայց որտե՞ղ են նրանք, ովքեր հաշվի են առնում ոչ թե ինչպես է իրենց ուղերձն ընդունվում երկրի վրա, այլ՝ թե ինչպես է այն ընդունվում Երկնքում:

Ես լինում եմ բազմաթիվ եկեղեցիներում, և հաճախ ինձ քարոզելու համար տրամադրում են մեկ կամ մեկուկես ժամ: Սովորաբար կա երկու պատճառ. առաջինը՝ որ մարդիկ վախենում են, թե ծառայությունները շատ երկար կտևեն, և հյուրընկալող եկեղեցու երեկոյան ծառայությանն ավելի քիչ մարդ կհաճախի և այն նույնիսկ կկորցնի իր անդամներին: Հետաքրքիր է, որ շատերը կարող են երկու ժամ կամ ավելի նստել և ֆիլմեր կամ սպորտային միջոցառումներ դիտել, բայց սրտնեղում են, երբ քարոզը քառասունհինգ րոպեից երկար է տևում:

Երկրորդը՝ որ նման ծառայությունները լարվածություն են առաջացնում մանկական ծառայողների մոտ: Ես հավատում եմ, որ մանկական ծառայողները կվերապրեին Աստծո իրական շարժը, եթե երեխաներին զվարճացնելու փոխարեն ծառայեին նրանց: Մի քանի անգամ ես ծառայել եմ երեք ժամ կամ ավելի, բայց երեխաները ժամանակի առումով չէին անհանգստանում, քանի որ նրանց ծառայում էին: Սա չի նշանակում, որ արդյունավետության համար ծառայությունը պետք է երկար տևի: Նման վերաբերմունքը պարզապես ցույց է տալիս, թե, ըստ մեզ, ինչն է արժանի մեր ուշադրությանը:

Ես սա շատ հաճախ նկատում եմ մեծ եկեղեցիներում: Երբեմն եկեղեցին մեծ է այն պատճառով, որ այն հարմարվել է գոլ հավատացյալների պահանջներին, ովքեր արագորեն ներս ու դուրս են անում, որպեսզի հանկարծ իրենց անհարմար չզգան:

Այո՛, եթե Սուրբ Հոգին ներկա չէ ծառայությանը, կարիք չկա ծա-

ռայությունը մեկուկես ժամից ավել անցկացնել: Փաստորեն, նույնիսկ մեկուկես ժամը շատ երկար կլինի առանց Սուրբ Հոգու ներկայության: Ես համամիտ եմ սրան: Սուրբ Հոգին ներկա է այն ծառայություններին, որտեղ առաջնորդները թույլ են տալիս Նրան՝ անել և ասել այն, ինչ ցանկանում է:

Վերջերս մի մեծ եկեղեցու հովվի հետ էի, ով խնդրեց ինձ՝ ծառայությունն անցկացնել մեկուկես ժամից ոչ երկար: Ես նայեցի նրան և ասացի. «Դուք իսկապե՞ս այդպես եք ցանկանում: Դուք ուզում եք սահմանափակե՞լ Սուրբ Հոգու ժամանակը: Այդ դեպքում, դուք թեև քանակապես աճեք, մոռացե՛ք ձեր եկեղեցում Աստծո իրական շարժի մասին»:

Նա ասաց. «Լա՛վ, բայց խնդրում եմ՝ երկու ժամվա ընթացքում ավարտեք»:

Մեր վերջին ծառայությունը երկուշաբթի առավոտյան էր, որի ժամանակ ես շատ ուժեղ ուղերձ էի քարոզում: Երբ ապաշխարության կոչ արեցի, մարդկանց մոտ 80 տոկոսն առաջ եկավ: Ես նկատեցի, որ իմ ժամանակը լրացել է, և ավարտեցի ծառայությունը: Ես գիտեմ, որ Աստծուն հաճելի է, երբ հարգանքով ես վերաբերվում այն իշխանությանը, որը Նա հաստատել և տվել է որոշ հավատացյալների:

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, ես ինքնաթիռով տուն վերադարձա: Դրանից մեկ օր անց այդ հովիվը զանգահարեց ինձ. «Ջո՛ն, ես զգում էի, որ դուք պետք է աղոթեիք իմ աշխատակազմի համար»:

Ես համաձայնեցի նրա հետ և ասացի. «Ես՝ նույնպես, բայց իմ ժամանակն ավարտվել էր»:

Նա շարունակեց. «Ջո՛ն, երբ տուն եկա, կինս պառկած էր հյուրասենյակի մեջտեղը՝ հատակին, և լաց էր լինում: Նա նայեց ինձ և ասաց. «Մենք բաց թողեցինք Աստծուն: Ծառայությունները պետք է շարունակվեին»: Ողջ օրվա ընթացքում մեզ զանգահարում էին և վկայում փոխված կյանքերի մասին: Այդ տարածքում ապրող հավատացյալները զանգահարում էին և հարցնում. «Մենք լսել ենք, որ Աստված ինչ-որ բան է անում ձեր եկեղեցում: Այսօր երեկոյան ծառայություն լինելո՞ւ է»: Չեմ կարողանում հավատալ, որ սահմանա-

փակեցի ձեր ժամանակը: Դա ինձ Աստված ցույց տվեց»:

Ես պատասխանեցի. «Հովի՛վ, ես շատ ուրախ եմ. տեսնում եմ, որ բաց սիրտ ունեք»:

Այդ ժամանակ նա խնդրեց ինձ որքան հնարավոր է շուտ վերադառնալ և մեկ շաբաթ հավաքույթներ անցկացնել: Երանի՜ թե կարողանայի ասել, որ բոլոր ինձ հանդիպած հովիվները, ովքեր իրենց եկեղեցիներում սահմանափակել են Աստծո Հոգուն, այսպիսի բաց սիրտ ունեն:

Աստված ողբում էր այս անհարգալից վերաբերմունքի համար.

> «Սոսկալի և քստմնելի բան է լինում երկրի վրա. մարգարեները սուտ են մարգարեանում, և քահանաները իշխում են նրանց ձեռքով (անգլ.՝ երկաթե ձեռքով), և Իմ ժողովուրդն էլ այսպես է սիրում, բայց վերջը ի՞նչ պիտի անեք»:
>
> — ԵՐԵՄԻԱ 5.30,31

Սարսափելի է, բայց այս հատվածը հիմնականում նկարագրում է այն, ինչ տեսնում ենք այսօր: Հաճախ, այսպես կոչված, «մարգարեները» եկեղեցիներում ոչ մի իրական զորություն չեն փոխանցում Աստծո ժողովրդի սրտին: Նրանք ժամանակավոր թեթևություն են բերում նրանց սրտին և օրհնություններ խոստանում: Բայց հետո մարդիկ հիասթափվում են Աստծուց, որովհետև այդ մարգարեների ասած խոսքը չի իրականանում: Անգեի և Մաղաքիայի ուղերձները ցույց էին տալիս մարդկանց վերադարձի ճանապարհը դեպի Աստված: Նրանց մարգարեական ուղերձները ժողովրդին վերադարձրին դեպի Տիրոջ երկյուղը, որի շնորհիվ նրանք սկսեցին հնազանդվել Աստծուն:

Դժբախտաբար, շատ քարոզներ և անձնական մարգարեական խոսքեր մարդկանց փոխանցում են սխալ դրդապատճառներ և հասկացողություն, որոնք թափանցել են նրանց սրտի մեջ: *«Ապրված ցանկանում է, որ դու երջանիկ լինես: Նա ցանկանում է, որ դու օրհնված լինես: Քեզ հաջողակ կյանք է սպասվում»*: Ուսումնասիրե՛ք Նոր կտակարանի մարգարեությունները: Այնտեղ դուք կգտնեք

ընդամենը մի քանիսը. դրանց մեծամասնությունը խոսում է կապանքների, փորձությունների և մահվան մասին, որոնք սպասվում էին նրանց, ովքեր փառք էին բերելու Աստծուն (տե՛ս Հովհ. 21.18,19, Գործք 20.22,23, Գործք 21.10,11): Դրանք խիստ տարբերվում են այսօրվա մեծաքանակ անձնական մարգարեություններից:

Տերը քահանային անվանում է երկաթե ձեռքով իշխող: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հովիվներն իշխում են վերահսկողության միջոցով և ոչ թե Սուրբ Հոգու առաջնորդությանը հնազանդվելով: Սուրբ Հոգու համար վիրավորական է, երբ Իրեն ասում են, որ Նա ընդամենը մեկուկես ժամ ունի՝ Իր աշխատանքը կատարելու համար: Նրան տհաճություն է պատճառում, երբ առաջնորդները հետևում են այդպիսի բաների և Աստծո կամքից դուրս որոշումներ կայացնում: Բայց, ըստ Աստծո, ամենատագնապալին այն փաստն է, որ Իր ժողովրդին դա դուր է գալիս: Շատ մարդկանց կարծիքով նման սահմանափակումները պաշտպանում են իրենց եսակենտրոն, աներկյուղ կենսաոճը:

Վաղ անձրևը բերեց ոչ միայն մեծ օրհնություններ, այլ նաև դատաստան: Աստված հարցնում է. «…բայց վերջը ի՞նչ պիտի անեք»: Ես հավատում եմ, որ Նա զգուշացնում է. «Եթե չփոխվեք, ապա այն օրը, երբ կդրսևորվի Իմ փառքը, դուք ոչ թե կօրհնվեք, այլ կդատվեք»:

Հիշե՛ք առաջվա տաճարը

Եկե՛ք վերադառնանք Անգեին: Տիրոջ երկյուղը վերականգնվեց Իսրայելի ժողովրդի սրտում, և Աստված կրկին դարձավ նրանց ուշադրության կենտրոնը: Այդ ժամանակ Անգեն խոսեց տաճարի ներկա վիճակի մասին.

> «Ո՞վ է ձեզանում մնացորդ, որ տեսել է այս տունն իր առաջին փառավորությունով, և դուք ինչպե՞ս եք տեսնում նրան հիմա. չէ՞ որ սա ոչնչի պես է Նրա մոտ ձեր աչքերի առջև»:
>
> — ԱՆԳԵ 2.3

Ես հավատում եմ, որ Աստված նույն հարցն այսօր տալիս է մեզ.

«Ձեզնից քանի՞սն են հիշում եկեղեցին իր նախկին փառքով: Ինչպե՞ս է այն համեմատվում այսօրվա հետ: Որպես Աստծո տաճար՝ ինչպիսի՞ն ենք մենք անցյալի համեմատ»:

Որպես պատասխան՝ եկե՛ք քննենք առաջին եկեղեցու փառքը, որի մասին գրված է Գործք առաքելոցում: Պենտեկոստեն առաջին անձրևի առաջին օրը եկավ այնպիսի զորությամբ, որ գրավեց Երուսաղեմում հավաքված բազմության ուշադրությունը: Չկար ո՛չ ռադիո, ո՛չ հեռուստատեսություն, ո՛չ էլ թերթերում հայտարարություններ: Ոչ ոք թռուցիկներ չէր բաժանում: Փաստորեն, նրանք նույնիսկ չէին որոշել ծառայություն անցկացնել: Սակայն Աստված դրսևորեց Իրեն այնպիսի զորությամբ, որ երբ բազմությունը լսեց Պետրոսի օծված խոսքերը, հազարավորները փրկվեցին: Այս հավաքույթն անցկացվեց ոչ թե եկեղեցում, լսարանում կամ մարզադաշտում, այլ փողոցում:

Կարճ ժամանակ անց Պետրոսն ու Հովհաննեսը տաճար գնալիս տեսան մի խեղված մարդու, ով ծննդյան օրվանից կաղ էր: Ամեն օր նրան մուրալու համար նստեցնում էին փողոցում: Պետրոսը կանգնեցրեց այդ խեղված մարդուն և Հիսուսի անունով բժշկեց: Մի քանի րոպեների ընթացքում կրկին հազարավոր մարդկանց բազմություն հավաքվեց: Պետրոսը սկսեց քարոզել, և հինգ հազար մարդ փրկվեց: Սակայն նույնիսկ ապաշխարության աղոթքի ժամանակ չեղավ, քանի որ, մինչև քարոզը կավարտվեր, Պետրոսին և Հովհաննեսին ձերբակալեցին: Շատ կարճ ժամանակվա ընթացքում հարյուր քսան հոգուց բաղկացած եկեղեցին աճեց և հասավ ավելի քան ութ հազարի:

Երբ Պետրոսին և Հովհաննեսին ազատեցին բանտից, նրանք վերադարձան հավատացյալների մոտ: Նրանք միասին այնպիսի միաբանությամբ աղոթեցին, որ աղոթքի շենքը դղրդաց: Ա՜յ քեզ զորություն: Ես գիտեմ որոշ քարոզիչների, ովքեր չափազանցնում են, բայց Աստվածաշունչը երբեք չի չափազանցնում: Եթե Խոսքն ասում է, որ շենքը դղրդաց, ուրեմն այն *դղրդաց*:

Իսկ քիչ անց մի տղամարդ և կին զոհաբերություն մատուցեցին և մահացան անհարգալից վերաբերմունքի պատճառով: Այդ դեպքից անմիջապես հետո գրված է.

«…Հիվանդներին հանում էին հրապարակները (անգլ.՝ փողոցները), և իրենց պատգարակներով և մահիճներով այնտեղ էին դնում, որ Պետրոսն անցնելիս՝ գոնե նրա շուքը նրանցից մեկի վրա ընկնի»:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 5.15

Ուշադրություն դարձրեք՝ գրված է «փողոցներ» և ոչ թե «փողոց»: Երուսաղեմը փոքրիկ քաղաք չէր: Աստծո փառքն այնքան ուժեղ էր, որ Պետրոսն ընդամենը քայլում էր այդ մարդկանց կողքով, և նրանք բժշկվում էին:

Հետո այնպիսի ուժեղ հալածանք սկսվեց, որ հավատացյալները ցրվեցին Հուդայի և Սամարիայի շրջաններով մեկ: Նրանցից մեկը՝ Փիլիպոսը, գնաց Սամարիա՝ քարոզելու: Բազմաթիվ մարդիկ միաբան լսում էին նրան՝ տեսնելով այն հրաշքները, որ նա անում էր: Քաղաքում Աստծո Հոգու դրսևորումն այնքան մեծ էր, որ գրված է. «Եվ մեծ ուրախություն եղավ այն քաղաքում…» (Գործք 8.9):

Տիրոջ հրեշտակը Փիլիպոսին ասաց, որ նա անապատ գնա, որտեղ կհանդիպի մի եթովպացի իշխանավորի: Նրա օգնությամբ այդ մարդն ընդունեց Հիսուսին և մկրտվեց: Հետո Աստծո Հոգին հափշտակեց Փիլիպոսին. նա այդ մարդու աչքի առջևից անմիջապես անհետացավ: Նա անապատից տեղափոխվեց Ազովտոս քաղաք:

Իսկ Պետրոսը գնաց Լիդիա անունով մի քաղաք, որտեղ գտավ Ենեա անունով մի մարդու, ով ութ տարեկանից անդամալույծ էր: Պետրոսն ասաց, որ Հիսուս Քրիստոսը բժշկում է իրեն, և այդ խեղված մարդն անմիջապես բժշկվեց:

Աստվածաշնչում գրված է. «Եվ տեսան նրան բոլորը, որ բնակված էին Լիդիայի և Սարոնի մեջ, որոնք դարձան դեպի Տերը» (Գործք 9.35): Երկու քաղաք միանգամից փրկվեց:

Ավելի ուշ մենք տեսնում ենք, թե ինչպես է Աստված զորավոր կերպով գործում հեթանոսների մեջ: Ամենուր, որտեղ էլ հավատացյալները գնային, ազդեցություն էին թողնում: Նրանց մասին այսպես էին ասում. «…այս աշխարհը շփոթեցնողներն այստեղ էլ հասան» (Գործք 17.6):

Նրա փառքն այնքան զորավոր էր, որ Աստվածաշունչն ասում է. «Եվ այս եղավ մի երկու տարի, մինչև որ Ասիայի բոլոր բնակիչները՝

հրեաները և հույները, Տիրոջ Խոսքը լսեցին» (Գործք 19.10): Ա՜յ քեզ բան: Խոսքը չի ասում, որ «ողջ Ասիան լսեց Խոսքը»: Մենք ավելի հեշտությամբ կհասկանանք, որ նրանք ընդամենը ազդեցություն ունեցան յուրաքանչյուր քաղաքում, քան թե յուրաքանչյուր մարդու կյանքի վրա:

Բայց Խոսքն ասում է. «…Ասիայի բոլոր բնակիչները… Տիրոջ Խոսքը լսեցին»: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր մարդ, ով բնակվում էր Ասիայում, երկու տարվա ընթացքում լսեց Աստծո Խոսքը: Ասիան քաղաք չէր և ո՛չ էլ երկիր: Այն մեծ վարչական մարմին էր:

Նրանք այս ամենն արեցին առանց արբանյակների, ինտերնետի, հեռուստատեսության, ռադիոյի, ավտոմեքենաների, հեծանիվների, գրքերի, լսաժապավենների կամ տեսաերիզների: Այնուամենայնիվ, Աստվածաշունչն ասում է, որ *յուրաքանչյուրը* լսեց առաջին քրիստոնյաների կողմից հռչակված Ավետարանը:

Յոթ անգամ ավելի

Դուք պատկերացրի՞ք, թե Աստծո Հոգու առաջին անձրևի ժամանակ որքան փառավոր էր Գործք առաքելոցի եկեղեցին: Այժմ կրկին անդրադառնանք Աստծո հարցին. «Ինչպե՞ս կարելի է այսօրվա եկեղեցին համեմատել Գործք առաքելոցի եկեղեցու հետ»: Անկասկած, մենք ոչ մի բան ենք նրանց համեմատ: Եթե անկեղծ լինենք, ապա կհամաձայնենք: Մենք ոչ մի կերպ չենք կարող համեմատել այսօրվա եկեղեցին Գործք առաքելոցի փառավոր եկեղեցու հետ: Միգուցե ավելի շատ *միջոցներ* ունենք, բայց ավելի քիչ *Նրան* ունենք, Ով այդ միջոցների Աղբյուրն է: Ես դեմ չեմ գրքերին, լսաժապավեններին, հեռուստատեսությանը, համակարգիչներին և արբանյակային կապին: Այս ամենը միջոցներ են, բայց եթե դրանք ոգեշնչված չլինեն Աղբյուրից, ապա անօգուտ կդառնան: *Ապրված է մեր բոլոր միջոցների Աղբյուրը*:

Մի՞թե Աստված մեզ այս հարցը տալիս է դատապարտելու համար: Իհարկե՝ ո՛չ: Նա պարզապես քաջալերում է մեզ, որպեսզի մեծացնենք մեր տեսիլքը: Եթե մենք մտածենք, որ արդեն հասել ենք,

այլևս առաջ գնալու ցանկություն չենք ունենա: Մենք կկորցնենք մեր ձգտումն ու արկածախնդրությունը: Առակաց 29.18-ում գրված է. «Առանց մարգարեության ժողովուրդը կվայրենանա…»:

Երբ Աստված հայտնում է այն, ինչի կարիքը մենք ունենք, այդպիսով ճանապարհ է բացում Իր մարգարեական տեսիլքի համար.

> ««Այս վերջին տան փառքը մեծ պիտի լինի առաջվանից,– ասում է Զորաց Տերը…»:
>
> — ԱՆԳԵ 2.9

Ա՜յ քեզ բան: Աստված ասում է, որ այն փառքը, որ Նա դրսևորելու է վերջին անձրևի ժամանակ, *կգերազանցի* Գործք առաքելոց գրքում դրսևորած փառքին: Տեսնո՞ւմ եք, թե որքան հեռու ենք Աստծո տեսիլքից:

Իրականում Տերը ցնցեց ինձ, երբ մի քանի տարի առաջ խոսեց ինձ հետ աղոթքի ժամանակ. «Զո՛ն, վերջին օրերում Իմ դրսևորած փառքի մեծությունը յոթ անգամ ավելի կլինի, քան Գործք առաքելոցի ժամանակ»:

Ես անմիջապես աղաղակեցի. «Տե՛ր, ես չգիտեմ, թե ինչպես կարող եմ հավատալ կամ հասկանալ սա: Ես պետք է տեսնեմ այն, ինչ արդեն ասել ես Քո Խոսքում, որպեսզի հաստատություն ստանամ, որ Դու ես խոսում ինձ հետ»:

Ես հաճախ եմ այսպես վարվել, և Տերը երբեք չի պատժել ինձ դրա համար: Սուրբ գիրքն ասում է. «…երկու և երեք վկաների բերանից ամեն բան կհաստատվի» (Բ Կորնթ. 13.1): Աստծո Հոգին չի հակասում Իր գրած, հաստատած Խոսքին:

Տերն անմիջապես պատասխանեց՝ արագորեն խոսքեր դնելով իմ սրտում՝ ոչ թե երկու կամ երեք, այլ մի քանիսը:

Նախ՝ Նա հարցրեց. «Զո՛ն, արդյո՞ք Իմ Խոսքում չեմ ասել, որ երբ գողը բռնվում է, պետք է յոթնապատիկը հատուցի (տե՛ս Առակ. 6.31): Եթե անգամ գողը գողացել է եկեղեցուց, միևնույն է՝ Իմ Խոսքն ասում է, որ Հիսուսը սպասում է, մինչև գա *ամեն ինչի* հատուցման ժամանակը: Այդ հատուցումը յոթնապատիկ է լինելու»:

Նա շարունակեց. «Զո՛ն, արդյո՞ք Իմ Խոսքում չեմ ասել, որ Ես պարտության կմատնեմ թշնամիներին, որոնք կկանգնեն իմ ժողովրդի դեմ. «…նրանք քեզ դեմ մեկ ճանապարհով դուրս կգան, բայց քո առջևից յոթ ճանապարհով կփախչեն» (Երկր. Օր. 28.7):

Այնուհետև, Ժողովողից մի խոսք մեջբերելով, Նա ասաց. «Զո՛ն, արդյո՞ք Իմ Խոսքում չեմ ասել. «Մի բանի վախճանը լավ է նրա սկզբից…» (Ժողով. 7.8): Եկեղեցու ժամանակաշրջանի ավարտն ավելի լավ կլինի, քան նրա սկիզբը»:

Նա շարունակեց. «Զո՛ն, մի՞թե Կանայի հարսանիքի ժամանակ Ես լավագույն գինին վերջում չպահեցի»: Աստվածաշնչում գինին Նրա ներկայության խորհրդապատկերն է:

Դրանից հետո Նա ևս մի խոսք ցույց տվեց ինձ, որը վերջնականապես Իր ասածն ամրագրեց իմ սրտում: Եսայի մարգարեության 30-րդ գլուխը պատմում է, թե ինչպես էր Աստծո ժողովուրդը ձգտում զորություն առնել Եգիպտոսից (աշխարհի համակարգից): Նրանք զորություն կառնեն այն կուռքերից, որոնց ձգտում է աշխարհը: Այդ ժամանակ Աստված Իր ժողովրդին մաքրելու համար հարկադրված կլինի նրանց անցկացնել փորձանքների և դժբախտությունների միջով: Այդ ժամանակ նրանք մի կողմ կնետեն կուռքերը և իրենց սրտերն ամբողջությամբ կտան Աստծուն: Աստված ասաց, որ հենց սա տեղի կունենա.

> «Նա անձրև կտա արտում սերմած սերմիդ…»:
>
> — ԵՍԱՅԻ 30.23

Եսային չի խոսում ֆիզիկական անձրևի մասին, այլ՝ Աստծո Հոգու անձրևի, ինչպես դրա մասին նկարագրում են Հովելը, Պետրոսը և Հակոբոսը: Տեսե՛ք, թե ինչ է ասում Եսային դրանից հետո.

> «Եվ արեգակի լույսը յոթնապատիկ կլինի՝ յոթ օրվա լույսի չափ, այն օրը, որ Տերը կկապի Իր ժողովրդի կոտրածը և նրա հարվածի խոցը կբժշկի»:
>
> — ԵՍԱՅԻ 30.26

Բնական արևը անձրևի ժամանակ չի շողում յոթ անգամ ավելի պայծառ: Ո՛չ, Աստված նկարագրում է Իր Որդու փառքը, Ում Սուրբ գիրքն անվանում է «Արդարության Արեգակ» (տե՛ս Մաղաքիա 4.2): Նրա փառքը երկրորդ գալուստից առաջ յոթ անգամ ավելի կլինի:

Աստծո փառքի վերջին անձրևը թարմություն կբերի ոչ միայն Աստծո ժողովրդին, այլ նաև նրանց շրջապատող մարդկանց: Ես ներկա եմ եղել հզոր ծառայությունների, որտեղ Աստված շարժվում էր զորավոր կերպով, և ամեն երեկո հազարավոր մարդիկ էին ներկա լինում: Թեև այդ ծառայություններին հաճախում էին շատ սուրբեր, նահանջածներ և մեղավորներ, այնուամենայնիվ, դրանք հաճախ ոչ մի ազդեցություն չէին թողնում քաղաքի վրա: Գալով այդ ծառայություններին՝ ես հարցնում էի ինձ. «Ե՞րբ պետք է ողջ քաղաքը այդ ազդեցության տակ լինի»: Որքան էլ մեր ծառայությունները հրաշալի լինեն, միևնույն է, ես սպասում եմ վերջին անձրևին:

Վերջին անձրևը տարբերվում է նախկին արթնություններից: Այդ արթնություններն ազդեցություն թողեցին տարբեր քաղաքներում, որոնցից են՝ Ազուզան և Ուելսը: Այդ քաղաքները նույնպես ազդեցություն ունեցան ազգերի վրա, սակայն պետք էր գնալ այդտեղ՝ դրանց մասնիկը դառնալու համար: Բայց Գործք առաքելոցում Աստծո փառքը դրսևորվեց ամենուր, ուր գնում էին Նրա աշակերտները: Ճիշտ է, Աստծո փառքը թափվեց ողջ աշխարհում մեծ չափով, բայց վերջին անձրևը կթափվի շատ ավելի մեծ չափով:

Ես խանդավառությամբ լցված՝ հայտարարում եմ. *«Մենք չենք գնում այնտեղ*, որտեղ եղել ենք կամ՝ որտեղ հիմա ենք գտնվում. մենք պետք է բարձրացնենք մեր աչքերը դեպի հորիզոնը և փնտրենք Նրա գալիք փառքը»:

teach reach rescue

Messenger International®

Զոն և Լիլլա Բիլերիների ծառայություն

ՄԵՐ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ, ՓԱՓԱԳԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆ ԱՎԵՏԱՐԱՆՆ Է

ՍՈՒՄԵՆԵՎ

ՀՐԱՀԱՆԳԵԼ, ԽՐԱՏԵԼ, ՄԱՐԶԵԼ, ՓՈԽԱՆՑԵԼ ԿԱՄ ՑՈՒՑԱԴՐԵԼ

Sisters
ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ
ՄԵՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆ Է
ՓՈԽԱՆՑԵԼ ԿՅԱՆՔ ՓՈԽՈՂ
ՀՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻՋՈՑՆԵՐ,

ՈՐՈՆՔ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ ՏՐՎԱԾ ԵՆ ՀՈՎԻՎՆԵՐԻՆ ԵՎ ԱՎԱԳՆԵՐԻՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

RELENTLESS
JOHN BEVERE
INEBRANLABLE
JOHN BEVERE

ՉՈՐԱՅՆԵԼ

ՆԵՐԴՆԵԼ, ՍՊԱՌԱԶԻՆԵԼ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼ, ՓՈՒՆԵԼ ԿՅԱՆՔԵՐԸ՝
ԱԶԳԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԼԱՎՈՒՆ

ԻՆՉ ԼԱՑՈՒՄՈՎ ՇՐՋԱԿԱՅ ՄԵԿ ԼԱՎՈՒՆՈՒՄ ԵՎ ԼԱՎՈՒՆՈՒՄ ՄԵԿ ԼԵՌԻՆ

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՅՈԳԻ

ՄԵՐ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ

«ՈՒՐԵՄՆ, ԳՆԱՑԵՔ, ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐՆ ԱՇԱԿԵՐՏԵՔ՝
ՆՐԱՆՑ ՄԿՐՏԵԼՈՎ ՀՈՐ ԵՎ ՈՐԴՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՆՈՒՆՈՎ:
ՆՐԱՆՑ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՎ, ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ՈՐ ՁԵԶ ՊԱՏՎԻՐԵՑԻ՝ ՊԱՀԵՆ»:
ՄԱՏԹԵՈՍ 28.19,20

ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ

WWW.CLOUDLIBRARY.ORG

Պարարտե՛ք Տիրոջ ճանապարհը՝
պարարտելով Նրա ժողովրդին
Նրա փառքի համար։

ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՆՐԱ ՓԱՌՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

«Բայց կենդանի եմ Ես, որ ամբողջ երկիրը Տիրոջ փառքով պիտի լցվի»:

ԹՎՈՑ 14.21

Մենք մեծ արագությամբ մոտենում ենք Աստծո փառքի վերջին անձրևին: Ժամանակակից եկեղեցիների և Պենտեկոստեի ժամանակվա եկեղեցիների միջև մեծ տարբերություն է լինելու: Գործք առաքելոց գրքում Աստված հանկարծակի թափեց Իր Հոգին, որը շրջադարձային եղավ, բայց տարիներ անց այն աստիճանաբար մարեց: Սուրբ գիրքը մեզ հայտնում է, որ վերջին անձրևը ոչ թե հանկարծակի կթափվի, այլ կգա արագ վերականգնման միջոցով. ես հավատում եմ սրան: Առաջինը հանկարծակի էր, իսկ վերջինը՝ արագ վերականգնման միջոցով:

Վերադառնանք Մովսեսի և Դավթի միջև ընկած ժամանակահատվածին, որպեսզի բացատրենք սա: Մովսեսը կառուցեց խորանը, որն աստվածային կարգ ու կանոնի խորհրդապատկերն էր: Դրանից հետո զորավոր ձևով դրսևորվեց Աստծո փառքը, որը շրջադարձային եղավ: Հոգու այդ դրսևորումը հանկարծակի էր և զարմանալի: Այն բանից հետո, երբ Մովսեսն ավարտեց աշխատանքը, խորանը ծածկվեց Աստծո փառքի ամպով:

Սակայն այդ փառքն, ի վերջո, մարեց մեղքի և Տիրոջ հանդեպ անտարբերության պատճառով: Աստծո փառքի աճը և նվազումը շարու-

նակվեց այնքան, մինչև որ Իսրայելը հասավ իր ամենացածր մակարդակին. դա տեղի ունեցավ Հեղիի առաջնորդության ժամանակ: Աստծո ճրագակալը գրեթե հանգչում էր, իսկ Նրա փառքը թողել էր խորանը:

Այն օրը, երբ մահացան Հեղին և նրա որդիները, փղշտացիները վերցրին Աստծո տապանակը: Նրանք դա բերեցին Ազովտոս քաղաք, որտեղ դրված էր իրենց Դագոն աստծո կուռքը: Բայց Տերը դեմ էր Դագոնին: Փղշտացիները տապանակը տեղափոխեցին հինգ տարբեր քաղաքներ: Որտեղ էլ որ փղշտացիները տարան այն, նրանք զարկվեցին ուռուցքներով և մահով: Ավերածություններն այնքան մեծ էին, որ հինգերորդ քաղաքի հոգեվարքի աղաղակները երկինք բարձրացան (տե՛ս Ա Թագ. 5):

Յոթ ամիս անց փղշտացիների իշխանները հավաքվեցին իրենց քրմերի և գուշակների հետ, որպեսզի որոշեն, թե ինչպես տապանակը վերադարձնեն Իսրայել: Նրանք ցանկանում էին պատվել Իսրայելի Աստծուն մեղքի պատարագով՝ հինգ ոսկե առնետով և ուռուցքներով, որոնք խորհրդանշում էին փղշտացիների հինգ քաղաքները և նրանց իշխաններին: Նրանք աղոթեցին, որպեսզի Աստված վերցներ Իր պատժող ձեռքը նրանց վրայից: Նրանք Աստծո տապանակը դրին նոր սայլի մեջ, իսկ արկղով ոսկե իրերը՝ տապանակի կողքին: Սայլը լծել էին երկու կովերով, որոնք նորածին հորթեր ունեին: Այդ կովերի հորթերին նրանք փակեցին գոմում: Փղշտացիները մտածեցին. *«Եթե կովերը հեռանան իրենց հորթերի բառաչյունից՝ տանելով սայլը, մենք կիմանանք, որ Աստված է զարկել մեզ»:* Կովերը տապանակը տարան ուղիղ Իսրայելի տարածք, որտեղ այն քսան տարի մնաց Աբինադաբի տանը՝ Կարիաթարիմ քաղաքում: Հետաքրքիր է նշել, որ Իսրայելի առաջին թագավորը՝ Սավուղը, չէր ձգտում Աստծո տապանակը վերադարձնել Իսրայելին:

Աստծո փառքի վերականգնումը Իսրայելում

Սավուղից հետո գահ բարձրացավ Դավիթ թագավորը: Նա

սրտանց ձգտում էր Տիրոջը և փափագում, որ Նրա փառքը վերականգնվեր Իսրայելում: Բայց այս անգամ փառքը չդրսևորվեց այնպես, ինչպես Մովսեսի ժամանակ: Այն չեկավ հանկարծակի և զորավոր կերպով, այլ վերականգնման միջոցով:

Այս վերականգնման ընթացքը սկսվել էր տարիներ առաջ Սամուել մարգարեի կողմից: Աստված հանձնարարել էր նրան՝ պատրաստել ճանապարհը՝ կոչ անելով ժողովրդին՝ վերադառնալ դեպի Աստված: Նրա ուղերձը բոլոր ճշմարիտ մարգարեների սրտի աղաղակն էր.

> «Այն ժամանակ Սամուելն Իսրայելի ամբողջ տան հետ խոսեց՝ ասելով. «Եթե դուք ձեր ամբողջ սրտով դարձել եք Տիրոջը, ձեր միջից հեռացրե՛ք օտար աստվածներին… և ձեր սրտերը պատրաստե՛ք Տիրոջ համար և միայն Նրա՛ն պաշտեք, և Նա կազատի ձեզ»:
>
> Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 7.3

Պատիվ, որը վիրավորեց Աստծուն

Երբ Դավիթը թագավոր դարձավ, գրավեց Երուսաղեմը՝ պարտության մատնելով փղշտացիներին: Որից հետո նա փորձեց վերադարձնել տապանակն իր օրինական տեղը: «Եվ Դավիթը խորհուրդ արեց հազարապետների և հարյուրապետների և բոլոր իշխանների հետ» (Ա Մնաց. 13.1): Նրանք խորհուրդ արեցին հավաքել ողջ Իսրայելն այս իրադարձության համար: «Եվ ամբողջ ժողովքն ասաց, որ այնպես անեն, որովհետև այս խոսքը ամբողջ ժողովրդի աչքին ուղիղ երևաց» (4-րդ խոսք):

Ուշադի՛ր կարդացեք, թե դրանից հետո նրանք ինչ արեցին.

> «Եվ դրին Աստծո տապանակը մեկ նոր սայլի վրա և այն վերցրին Աբինադաբի տնից…»:
>
> — Բ ԹԱԳԱՎՈՐԱՑ 6.3

Ինչո՞ւ իսրայելցիները որոշեցին տապանակը վերադարձնել Երուսաղեմ «նոր սայլի վրա դրած»: Չէ՞ որ փղշտացիներն էին այն ուղարկել Իսրայել ճիշտ նույն ձևով:

Նրանք վերցրին տապանակն Աբինադաբի տնից: Երկու հոգի՝ Աքիովը և Ոզան, վարում էին սայլը: «Եվ Դավիթը և Իսրայելի ամբողջ տունը խաղում էին Տիրոջ առջև ամեն տեսակ մայր փայտերով (անգլ.՝ երաժշտական գործիքներով)…» (5-րդ խոսք): Մնացորդաց առաջին գրքի 13.8-ում գրված է, որ նրանք սա անում էին ողջ զորությամբ: Սակայն տեսե՛ք, թե ինչ տեղի ունեցավ:

> «Եվ երբ որ եկան Նաքոնի կալը, Ոզան ձեռքը մեկնեց Աստծո տապանակին և բռնեց այն, որովհետև եզները ծռել էին այն: Եվ Տիրոջ բարկությունը բորբոքվեց Ոզայի դեմ, և Աստված զարկեց նրան այնտեղ այս հանցանքի համար, և նա մեռավ նույն տեղը՝ Աստծո տապանակի մոտ»:
>
> — Բ ԹԱԳԱՎՈՐԱՑ 6.6,7

«Նյու Քինգ Ջեյմս» Աստվածաշնչում *«հանցանք»* բառի վերևում հղում կա: Այն թարգմանաբար նշանակում է նաև *«անարգանք»*: Եվս մեկ թարգմանության մեջ գրված է. «Աստված զարկեց նրան այնտեղ նրա անարգանքի համար»:

Զարմանալի է՝ ընդամենը մեկ սերունդ առաջ խորանի դռների մոտ, որտեղ դրված էր տապանակը, երկու տղամարդ շնություն էին գործում: Նրանց անարգանքը շատ ավելին էր այս մարդու գործածից, ով տապանակն ուղղելու համար ընդամենը մեկնեց ձեռքը: Այդ անբարո քահանաներն իրենց վարքի համար անմիջապես չդատվեցին, սակայն Ոզան դատվեց: Ինչո՞ւ: Հեղիի որդիների դեպքում Աստծո փառքը հեռացել էր: Ոզայի դեպքում այն վերադառնում էր: Որքան ուժեղ է Աստծո դրսևորված փառքը, այնքան ավելի արագ և խիստ է Նրա դատաստանն անարգանքի համար:

Վախենալով Աստծուց

> «Եվ Դավիթը տրտմեց (անգլ.՝ զայրացավ), որ Տերը հարվածով հարվածեց Ոզային… Դավիթը վախեցավ այն օրը Տիրոջից և ասաց. «Տիրոջ տապանակն ինչպե՞ս մտնի ինձ մոտ…»»:
>
> — Բ ԹԱԳԱՎՈՐԱՑ 6.8,9

Դավիթը, նրա առաջնորդները և Իսրայելի ժողովուրդը մեծ ձգտում ունեին: Նրանք մեծ պատրաստություններ էին տեսել Աստծո տապանակն Իսրայելում վերականգնելու համար: Ժողովուրդը նվագում էր ողջ զորությամբ՝ տանելով տապանակը: Նրանք համոզված էին, որ պատվում էին Աստծուն՝ տանելով այն նոր սայլի վրա դրված: Դավիթը հատուկ ընտրեց այն երկուսին, ովքեր տանելու էին սայլը: Այնպես որ, կարելի է հասկանալ Դավթի զարմանքը, երբ Աստված սպանեց այդ ընտրյալ մարդկանցից մեկին:

Սակայն նրա զարմանքը շուտով վերածվեց բարկության: Դավիթը, հավանաբար, մտածում էր. *«Ինչո՞ւ Ասպված արեց սա: Ինչո՞ւ Նա ոչ միայն չընդունեց մեր ցանկությունը, այլև մերժեց այսպիսի դպրաստրանով»:* Դավիթը երևի մտածեց. «Ես արեցի այն ամենը, ինչ գիտեի Աստծուն պատվելու համար, իսկ իմ արածը դատապարտվեց Նրա կողմից՝ անարժան համարվելով»: Ավելի երկար մտածելուց հետո նրա զայրույթը վերածվեց վախի: Նա սկսեց վախենալ Աստծուց: (Այս վախը նման չէ Աստծո երկյուղին: Աստծուց վախեցողները ետ են քաշվում Նրանից, բայց Աստծո երկյուղն ունեցողները մոտենում են Նրան: Մենք դեռ կխոսենք այս մասին): Դավիթն, անկասկած, զարմանում էր. *«Եթե իմ լավագույնը դպրաստրանի արժանացավ, ապա ինչպե՞ս կարող է Տիրոջ տապանակը մնալ ինձ մոտ»*:

Ամեն անգամ, երբ հիասթափություն կամ զայրույթ եմ ունեցել Տիրոջ հանդեպ, ես անմիջապես ասել եմ ինքս ինձ, որ պատճառն իմ գիտելիքի և հասկացողության պակասն է, քանի որ Աստծո ճանապարհները կատարյալ են: Ես գիտեմ, որ կարելի է շատ եռանդուն լինել, բայց առանց գիտելիքի: Ձգտումն ու եռանդը, որոնք զսպված չեն իմաստությամբ և գիտությամբ, միշտ փորձանք են բերում: Սրա հետ մեկտեղ սովորել եմ, որ ինքս եմ պատասխանատու Աստծո գիտությունը փնտրելու հարցում (տե՛ս Առակ. 2.1-5):

Անտեսված պատասխանատվություն

Դավիթը զայրացած էր Տիրոջ վրա, սակայն այդ դատաստանը Դավթի և նրա առաջնորդների վրա եկավ հասկացողության պակասի պատճառով: Մովսեսն ասաց.

> «Եվ սրանք են այն պատվիրանները, կանոնները և դատաստանները, որ ձեր Տեր Աստված պատվիրեց ձեզ սովորեցնելու համար, որ անեք այն երկրում, որ մտնելու եք նրան ժառանգելու համար, որպեսզի քո Տեր Աստծուց վախենաս…»:
>
> — ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 6.1,2

Մովսեսը պարզ ասաց. «Աստծուց վախենալու համար պետք է և՛ իմանալ Նրա ճանապարհները, և՛ հնազանդվել դրանց ամեն ինչից առավել»: Այս պատվիրանն ուղղված չէր միայն Իսրայելի զավակներին, Աստված թագավորին նույնպես հատուկ պատվերներ տվեց.

> «Եվ լինի, որ իր թագավորության աթոռի վրա հենց որ նստեց, գրի այս օրենքների օրինակն այն գրքից, որ ղևտացի քահանաների մոտ է: Եվ այն իր մոտ մնա, և իր կյանքի բոլոր օրերում կարդա, որպեսզի սովորի Իր Տեր Աստծուց վախենալ…»:
>
> — ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 17.18,19

Թագավորը պետք է ամեն օր կարդար Աստծո Խոսքը: Ինչո՞ւ: Աստծո իմաստությունը և պատիվը պետք է հաստատվեին նրա սրտում, որպեսզի նա մեծարեր Աստծո ճանապարհներն ավելի, քան մարդկային գաղափարները: Այսպիսով Դավիթը և իր առաջնորդները կարող էին խուսափել իրենց գործած սխալից:

Դավիթը և նրա մարդիկ հավաքվեցին, որպեսզի խորհրդակցեն, թե ինչպես պետք է վերադարձնել տապանակը: Այստեղ նշված չէ, որ նրանք խոհրդակցեցին Աստծո գրած Խոսքի հետ, որը նրանց փոխանցել էր Մովսեսը: Եթե Դավիթը և քահանաները կարդային Աստծո Խոսքը, նրանք կհասկանային, որ Աստծո տապանակը կարող են տանել միայն ղևտացիները. նրանք չպետք է տանեին այն սայլով,

այլ պետք է տանեին ձողերով՝ իրենց ուսերի վրա դրած (տե՛ս Ելից 25.14, Թվոց 4.15, 7.9): Գիտության պակասը դրդեց իսրայելցիներին՝ տանել Աստծո ներկայությունը հեթանոսների կամ աշխարհի նման: Փղշտացիները ոչինչ չգիտեին այդ մասին, երբ տապանակը սայլով ետ ուղարկեցին, բայց Իսրայելին տրված էր Աստծո Խոսքը: Այդ իսկ պատճառով նրանք հաշվետու էին դրա համար:

Նրանք Աստծո Խոսքի միջոցով չփնտրեցին Նրա խորհուրդը, և արդյունքում Աստծո փառքը կրկին իջեցվեց եղծանված մարդու մակարդակին: Ահա թե ինչու իսրայելցիները պատվեցին Աստծուն այնպես, ինչպես Աստծո գիտությունը չունեցող մարդիկ: Նրանք Աստծուց ոգեշնչվելու փոխարեն կրկնօրինակեցին մարդուն: Նրանք իրենց կարծիքով նախանձավոր էին, բայց Աստծո տեսանկյունից նրանց կիրառած մեթոդներն անարգանք էին Աստծո հանդեպ:

Ո՞րն է մեր ոգեշնչման աղբյուրը

Այսօր մենք գործում ենք նույն սխալը: Երբեմն մեր ծառայության հետ կապված գաղափարները հորինվում են որոշ մարդկանց կողմից: Մենք որոշումներ ենք կայացնում՝ գաղափարներ ստանալով մեր սահմանափակ իմաստության ջրհորից, որն անգիտակցաբար կրում է աշխարհի մշակույթի ազդեցությունը: Այս ամենը մշտապես մեր աչքի առջև է: Ավելի հեշտ է օգտվել այդ հասանելի հնարավորություններից, քան սպասել Աստծո կամքի հայտնությանը: Թեև մշտապես նոր և թարմ գաղափարներ են ի հայտ գալիս, բայց, այնուամենայնիվ, գիտենք, թե որտեղից է մեր ոգեշնչումը: Մենք Աստծո գիտությունը փոխեցինք վերստին չծնված մարդկանց մարտավարությամբ:

Ինչպես նշված է Սուրբ գրքում՝ երաժշտությունը մեծ դեր է խաղում Տիրոջ ներկայության համար: Այն կարող է բացել և պատրաստել մարդու սիրտը: Մի քանի տարի առաջ «Ժամանակակից քրիստոնեական երաժշտության» ոգեշնչման աղբյուրը մեծ մասամբ հանդիսանում էր աշխարհի դիվային երաժշտությունը: Եթե աշխարհում ընդունված էր ծանր ռոքը, ապա եկեղեցին նվագում էր նույնը: Երբ

ռեփը գրավեց աշխարհի ուշադրությունը, քրիստոնյա երաժիշտները կրկնօրինակեցին այն: Իհարկե, երգերի բառերն այլ էին, բայց ռիթմը և մատուցման ձևը նույնն էր:

Ոմանք վիճարկում են այս կարծիքը. «Բայց մենք օգտագործում ենք երաժշտությունը՝ կորածներին հասնելու համար: Մենք պետք է այնպես մատուցենք երաժշտությունը, որպեսզի մեղավորները կարողանան ընդունել այն»: Միգուցե սա ճիշտ է որոշ դեպքերում, բայց երբ երիտասարդներն ամբողջովին լցված են աշխարհով, նրանք հակված են անարգելու այն, ինչն ամենից շատ է անհրաժեշտ իրենց:

Ես այնքան շնորհակալ եմ, որ այսօր կա հրաշալի, ճշմարիտ երկրպագությամբ լցված քրիստոնեական երաժշտություն, որը ոչ միայն ազդեցություն է թողնում եկեղեցում, այլ նաև աշխարհում: Թող Աստված շարունակի բարձրացնել աստվածապաշտ երիտասարդ քրիստոնյա երգիչների, ովքեր փոխզիջման չեն գնա՝ օգտագործելով աշխարհիկ մեթոդները, այլ, իրենց ճշմարիտ երկրպագությամբ, կմոտեցնեն մեզ Աստծո սրտին:

Մարդկանց դուր է գալիս, երբ իրենց զվարճացնում են: Ամերիկացիների մեծ մասը շաբաթվա ընթացքում քառասունհինգ ժամ հեռուստացույց է դիտում: Որոշ եկեղեցիներ փորձել են գրավել մարդկանց նույն կերպ, ինչպես աշխարհը: Եկեղեցում մենք սովորել ենք գրավել մարդկանց՝ զվարճացնելով նրանց: Այստեղից ծագել է այնպիսի մի շարժում, որը շատերն անվանում են «կորածների հանդեպ զգայուն» եկեղեցիներ: Քարոզելով այդպիսի մի քանի եկեղեցիներում՝ պարզեցի, որ կորածների հանդեպ զգայուն այդ շարժումը հաճախ անզգա է Աստծո հանդեպ: Այդ եկեղեցիները կարող են մեծ բազմություն հավաքել, բայց արդյո՞ք արժե դա անել Աստծուն վիրավորելու գնով:

Ես քարոզել եմ այնպիսի եկեղեցիներում, որոնք ամեն տարի հազարավոր դոլարներ են ծախսում իրենց անդամներին զվարճացնելու համար: Նրանց երիտասարդները խաղում են փինբոլ, օդային հոկեյ, սեղանի ֆուտբոլ և նույնիսկ «Նինթենդո» ընկերության խաղերը: Իսկ հետո եկեղեցու առաջնորդները զարմանում են, թե ինչո՞ւ Աստված չի գործում երիտասարդների կյանքում և շփոթված են դեռահասների հոլիութ-

յան դեպքերի քանակից: Հաճախողների թիվն ավելանում է, բայց ո՞ւր է Հոգու պտուղը, որը պետք է դրսևորվի այս երիտասարդների կյանքում:

Այս մշակութային ներշնչանքը միայն առաջնորդների վրա չի ազդում. շատ հավատացյալներ նույնպես դրա ազդեցության տակ են: Օրինակ՝ մեր հասարակության մեծամասնությունը հարգում է իշխանությանն այն դեպքում, երբ այն համամիտ է ժողովրդի հետ: Կան պաստառներ, որոնց վրա գրված է. «Մի՛ հավատացեք իշխանություններին»: Միայն աշխարհիկ մարդիկ չեն, որ նման վերաբերմունք ունեն. որոշ եկեղեցիներ նույնպես ունեն այս մտածելակերպը: Նրանք պատվում և հնազանդվում են իշխանավորներին միայն այն դեպքում, երբ վերջիններս համաձայն են իրենց հետ: Կարելի է մտածել, որ Աստծո արքայությունը վերածվել է ժողովրդավարության: Տագնապալի է, որ լիազորված իշխանության հանդեպ նման վերաբերմունք է ձևավորվում, որովհետև մարդիկ պատվում են Աստծուն միևնույն անտարբերությամբ: Եթե նրանց դուր է գալիս այն, ինչ Աստված անում է, ապա նրանք փառաբանում են Նրան, հակառակ դեպքում՝ մարդիկ տրտնջում են:

Այս ցուցակը գրեթե անվերջանալի է: Խնդիրն այն է, որ Տիրոջը ծառայելու մեթոդների մեծամասնությունը մենք կրկնօրինակել ենք աշխարհից: Ի՞նչ ենք անելու, երբ գա վերջը: Ինչի՞ կվերածվեն մեր ճանապարհները:

Զգտե՛ք Աստծո գիտությանը

Շատերն են այսօր աղաղակում Աստծուն, որ Նա վերականգնի Իր փառքը: Նրանք աղոթում են վերջին անձրևի համար (տե՛ս Զաքարիա 10.1): Նրանք հնազանդվում են Աստծո մաքրման ընթացքին և չեն տրտնջում, երբ անցնում են փորձությունների միջով: Նրանք չեն տրտնջում այն հոգևոր անապատի համար, որով անցնում են: Շուտով նրանք կցնծան, որովհետև Աստված չի պահի Իր փառքը նրանցից, ովքեր ծարավ ունեն Իր հանդեպ:

Այս մարդիկ ամբողջովին տարբերվում են նրանցից, ովքեր

ձգտում են հարմարավետությանն ու հաջողությանը: Մյուսները մեջ-տեղում են. նրանք ձգտում են Աստծո ներկայությանը, սակայն առանց Աստծո գիտությունն ունենալու Դավթի պես նախան-ձախնդիր են: Նրանք փնտրում են Աստծուն իրենց ձևով, իրենց իսկ իմաստությամբ: Այդ մարդիկ դեռ պետք է հասկանան այն Աստծո փառքի և սրբության նշանակությունը, Ում իրենք փափագում են:

Մենք չպետք է անտեսենք Սուրբ գիրքը, որն ուղղում, խրատում և հստակեցնում է մեր ճանապարհը՝ տանելով սրբության: Կարդացե՛ք Ովսեի խոսքերը.

> «Եկեք և ետ դառնանք Տիրոջ մոտ, որ Նա պատառեց, և Նա էլ կբժշկի մեզ: Նա զարկեց, Նա էլ կպատի մեզ: Նա մեզ կկենդանացնի երկու օր հետո, երրորդ օրը Նա մեզ կկանգնեցնի, և մենք կապրենք Նրա առջև»:
>
> — ՈՎՍԵ 6.1,2

Այս մարգարեական հատվածը նկարագրում է, թե ինչպես է Աստված մաքրելու Իր եկեղեցին, որ պատրաստի այն Իր փառքի համար: Նա պատառել է, բայց Նա էլ բժշկելու է: Մեկ օրը Տիրոջ համար հազար տարվա նման է (տե՛ս Բ Պետր. 3.8): Տիրոջ հարությունից անցել է երկու օր (երկու հազար տարի): Աստված վերականգնելու է Իր տաճարի փառքը, և մենք կանգնած ենք դրա շեմին: Երրորդ օրը վերաբերում է Քրիստոսի հազարամյա թագավորությանը. Նա կապրի և կթագավորի մեզ հետ: Ովսեն շարունակում է՝ սովորեցնելով մեզ, թե ինչպես պետք է ապրենք և ինչի պետք է ձգտենք, որպեսզի պատրաստ լինենք Նրա փառքի դրսևորմանը:

> «Եվ կճանաչենք և է՛լ կհետևենք ճանաչելու Տիրոջը: Արշալույսի պես պատրաստ է Նրա ելքը, և Նա պիտի գա մեզ համար անձրևի պես՝ վերջին անձրևի պես, որ ոռոգում է երկիրը»:
>
> — ՈՎՍԵ 6.3

Ովսեն հավատացնում է մեզ, որ Նրա փառավոր գալուստը պատրաստ է արևածագի պես: Կա որոշված ժամանակ անկախ այն բա-

նից՝ պատրաստ կլինե՞նք, թե՞ ոչ: Մենք պետք է ձգտենք ճանաչել Տիրոջը: Դավիթը և նրա մարդիկ քաղցած էին Տիրոջ ներկայությանը, սակայն չունեին գիտություն Նրա մասին: Եթե Ոզան գիտություն ունենար, ապա այն կկանխեր նրա բոպեական մահը: Այսօր ոչինչ չի փոխվել: Աստծո Խոսքը զգուշացնում է մեզ.

> «Որդյա՛կս, եթե Իմ խոսքերն ընդունես և Իմ պատվերները պահես քեզ մոտ, որ ականջ դնես իմաստությանը և սիրտդ ուղղես հանճարին, երբ որ հասկացողությանը կանչես և ձայն տաս հանճարին, եթե դու նրան որոնես ինչպես արծաթը և գանձերի նման նրան պտրտես, այն ժամանակ կհասկանաս Տիրոջ երկյուղը և Աստծո գիտությունը կգտնես»:
>
> — ԱՌԱԿԱՑ 2.1-5

Այս հատվածը պարզ ցույց է տալիս կյանք տանող ճանապարհը: Եթե ինչ-որ մեկն ասեր, որ ձեր տանը տասը միլիոն դոլար կա պահված, դուք անդադար կփնտրեիք, մինչև որ գտնեիք այդ կարողությունը: Եթե պահանջվեր, դուք գորգերը կպոկեիք հատակից, կկոտրեիք միջնորմերը, և նույնիսկ կքանդեիք ամբողջ տունը մինչև հիմքը՝ գումարը գտնելու համար: Որքա՜ն ավելի կարևոր են այս կյանքի խոսքերը:

Երբ մենք ոգեշնչվում ենք աշխարհից, մենք դիմում ենք մարդկանց և գուշակների իմաստությանը: Այդ դեպքում մենք Աստծո երկյուղի մասին պատկերացում ենք կազմում միայն մարդկանց տված հրահանգներից: Երբ չկա Աստծո գիտությունն ունենալու ձգտում, մենք կհայտնվենք Ոզայի կարգավիճակում: Իսկ ինչ կարգավիճակում էր Ոզիան. նա լի էր բարի մտադրություններով, բայց անարգում էր Նրա փառքը:

Վերջին օրերում, երբ Աստծո փառքն ավելի մեծ լինի, կլինեն դեպքեր, որոնք նման կլինեն Անանիայի և Սափիրայի դեպքին: Սա ո՛չ Աստծո փափագն է, ո՛չ էլ Իր փառքի վերականգնման նպատակը: Նման դատաստանը տեղի է ունենում այն պատճառով, որ մարդիկ արժանի հարգանք և պատիվ չեն ցուցաբերում Նրա փառքի մեծության հանդեպ: Եթե Աստծո փառքի ներկայության դեպքում լինի անհարգալից վերաբերմունք, ապա որքան մեծ լինի Աստծո փառքը, այնքան մեծ կլինի դատաստանը:

Հաստատված սրտեր

Կրկին վերադառնալով Հակոբոսի գրքին՝ մենք գտնում ենք միևնույն զգուշացումը.

> «Արդ, եղբայրնե՛րս, երկայնամիտ եղեք մինչև Տիրոջ գալուստը: Ահա մշակը երկայնամիտ եղած սպասում է երկրի պատվական պտղին, մինչև որ առաջին և վերջին անձրևն առնի: Երկայնամիտ եղեք դուք էլ, հաստատեք ձեր սրտերը, որ Տիրոջ գալուստը մոտեցել է»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 5.7,8

Ուշադրություն դարձրեք, որ Հակոբոսը պատվիրում է մեզ համբերատար լինել: Այս բառը հունարենում բառացիորեն նշանակում է «դիմանալ և չհուսահատվել»: Դրանից հետո նա ասում է. «…հաստատե՛ք ձեր սրտերը…»: Այլ խոսքով՝ «աստվածային կարգ ու կանո՛ն հաստատեք ձեր սրտերում և պահպանե՛ք այդ կարգ ու կանոնը»: Հակառակ դեպքում մենք կարող ենք դատվել Նրա փառքի դրսևորման ժամանակ: Ե՛վ Պողոսը, և՛ Պետրոսը սովորեցնում են մեզ, թե ինչպես հաստատել մեր սրտերը.

> «Ուրեմն, ինչպես Քրիստոս Հիսուսին Տեր ընդունեցիք, Նրանո՛ւմ գնացեք՝ արմատացած և Նրանում շինված և հավատքում հաստատված, ինչպես որ սովորեցիք՝ աճելով Նրանում գոհությունով»:
>
> — ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 2.6,7

Երբ կա հնազանդություն Հիսուսի իշխանության հանդեպ, մենք կարող ենք ամուր կառչել այն բաներից, որոնք Սուրբ Հոգին սովորեցրել է մեզ Աստվածաշնչի միջոցով: Պետրոսը կրկին հաստատում է սա հետևյալ խոսքով.

> «Ուստի ես զանցառու չեմ լինի ձեզ (անգլ.՝ մշտապես) հիշեցնելու սրանց համար, թեև գիտեք և հաստատված եք այս ներկա ճշմարտությունում»:
>
> — Բ ՊԵՏՐՈՍ 1.12

Պետրոսն ասում է. «...մշտապես հիշեցնելու...»: Նա գիտեր, թե որքան կարևոր է հաստատված լինել ներկա ճշմարտության մեջ: Պետրոսն իր անձնական փորձառությունից գիտեր, թե որքան հեշտ է հեռանալ ճշմարտությունից: Նա՝ որպես աշակերտ, ով հայտնություն ստացավ Հիսուսի մասին և ուրացավ Նրան այդ աներևակայելի հայտնությունից մի քանի ամիս անց, գիտեր, թե ինչպես կարելի է շեղվել ճշմարտության ճանապարհից:

Միայն Աստծո գիտությանը ձգտելը բավական չէ: Եթե ցանկանում ենք հարատևել այդ ճշմարտության մեջ, ապա պետք է ապրենք դրանում: Շատ հաճախ մենք կառչած ենք մնում այն գործերից, որոնք Աստված անում էր անցյալում, և այլևս չենք վերապրում Նրան ներկայում: Մենք Աստվածաշնչից դեռ մեջբերումներ անում ենք և գեղեցիկ խոսում, բայց այլևս քաղցած չենք Նրա ճանապարհները ճանաչելու համար:

Մենք պետք է վերադառնանք մեր առաջին սիրուն և աշակերտի բնավորությանը: Երբ մենք առաջին անգամ հանդիպեցինք Նրան, Աստվածաշունչ էինք կարդում և քարոզներ լսում այն սպասումով, որ մեր սիրելի Տերը կհայտնի Իրեն ավելի մեծ զորությամբ: Բայց գնալով ձեռք ենք բերում այսպիսի վերաբերմունք. «Եկե՛ք տեսնենք, թե ինչ է ասում այս ծառայողը»: Մեր վերաբերմունքի թաքնված դրդապատճառը քարոզվող խոսքի ճշմարտությունն անտեսելն է և մեր դժկամությունն այսպես արդարացնելն է. «Ես արդեն գիտեմ այդ» կամ «Ես այս ամենն անցյալում արդեն լսել եմ»: Նման վերաբերմունքի մեկ այլ ախտանիշն այն է, երբ լսում կամ կարդում ենք, որպեսզի տեսնենք այն, ինչ ցանկանում ենք՝ փոխարենը փնտրելու Աստծո ճանապարհները և ձգտելու, որ Նա մեզ ավելի խորը հայտնություններ տա: Աստծո Խոսքը զգուշացնում է.

> «Նրա համար պետք է մեզ առավել ևս ականջ դնենք այն մեր լսած բաներին, որ միգուցե պակասվենք (անգլ.՝ ետ մնանք)»:
>
> — ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 2.1

Մեր եկեղեցիներում շատերը ետ են մնում, քանի որ նրանք հաստատված չեն Աստծո գիտության մեջ: Նրանք կորցրել են Աստծո գիտությունն ունենալու ցանկությունը: Առաքյալներն ու մարգարեները նախապես ասացին այս նահանջի մասին և ջանք չխնայեցին զգուշացնելու համար, որ հաստատ մնանք, որպեսզի երբ գա վերջը, մտնենք Աստծո ուրախության մեջ:

Սարսափելի է մտածել, թե ինչ է տեղի ունենում, երբ մարդիկ կարգ ու կանոնի մեջ չեն լինում: Շատերը բաց կթողնեն Աստծո փառքի օրհնությունը, իսկ մյուսները կենթարկվեն դատաստանի:

Դավթի վերականգնած խորանը

Երբ Դավիթը տեսավ, թե ինչ կատարվեց Ոզայի հետ, նա վերադարձավ Երուսաղեմ և սկսեց ջանասիրաբար փնտրել Տիրոջ գիտությունը: Երեք ամիս անց նա հայտարարեց.

> «Ոչ ոք վեր չառնի Աստծո տապանակը, բացի ղևտացիներից, որովհետև Տերը նրանց ընտրեց, որ կրեն Աստծո տապանակը և Նրան ծառայեն հավիտյան»:
>
> — Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 15.2

Այդ ժամանակ ոչ ոք չհավաքվեց Դավթի ասածը քննարկելու համար: Երբ Դավիթը պարզեց, թե Աստծո Խոսքն ինչ է պատվիրում այդ հարցի վերաբերյալ, նա համարձակությամբ հավաքեց Իսրայելի ժողովրդին և առանձնացրեց Ահարոնի ժառանգներին ու ղևտացիներին: Նա ասաց քահանաներին.

> «Դուք եք ղևտացիների տոհմերի գլխավորները. սրբե՛ք ձեր անձերը դուք և ձեր եղբայրները, որ Իսրայելի Տեր Աստծո տապանակը վեր տանեք Նրա համար իմ պատրաստած տեղը: Որովհետև սկզբում դուք չլինելու համար մեր Տեր Աստվածը մեզ հարված տվեց, որովհետև Նրան չխնդրեցինք, ինչպես որ կարգն է»:
>
> — Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 15.12,13

Կարգն այսպիսին էր, որ քահանաները սրբվեին և կրեին տապանակը, այսինքն՝ Աստծո ներկայությունը: Հաշվի էր առնվում ինչպես գործընթացի արտաքին կողմը, այնպես էլ ներքին: Այս անգամ տապանակը բերվեց Երուսաղեմ ու դրվեց Դավթի պատրաստած խորանում, և ևս մեկ անգամ Աստծո փառքը վերականգնվեց Իսրայելում: Նրա ներկայությունը կրելու կարգը գտնվում է մեր սրտում: Մենք պետք է պատրաստենք մեր սիրտը, որովհետև Աստված հայտնելու է Իր փառքը երկրի վրա այնպես, ինչպես երբեք չի հայտնել: Նա հռչակում է.

> «Բայց կենդանի եմ Ես, որ ամբողջ երկիրը Տիրոջ փառքով պիտի լցվի»:
>
> — ԹՎՈՑ 14.21

Երբ Աստված սա ասաց, Նա տրտմած էր, որովհետև Իր ժողովուրդը չէր հավատում և չէր հնազանդվում Իրեն: Այս խոսքի իմաստն այն էր, որ կգա ժամանակ, երբ Իր ժողովուրդը կվախենա Իրենից և այդ պատճառով անպայման կհնազանդվի Իրեն: Այս հավատացյալները կդրսևորեն Նրա փառքը, որովհետև նրանք կլինեն Աստծո փառքի տաճարը: Ավելի ուշ Աստված խոսեց Եսայի մարգարեի միջոցով.

> «Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, որովհետև լույսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա: Որովհետև ահա խավարը ծածկել է երկիրը, և մառախուղն՝ ազգերը, բայց քեզ վրա ծագում է Տերը, և Նրա փառքը երևում է քեզ վրա: Եվ ման են գալիս ազգերը դեպի քո լույսը, և թագավորները՝ դեպի քեզ վրա ծագած պայծառությունը»:
>
> — ԵՍԱՅԻ 60.1-3

Ուշադրություն դարձրեք, որ Եսային ասում է. «Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա»: Մենք արդեն գիտենք, որ փառքը նկարագրվում է որպես վերջին անձրև: Աստված խոսեց ինձ հետ աղոթքի ժամանակ և համեմատեց Իր վերջին անձրևի թափվելը Նոյի ջրհեղեղի հետ: Աստվածաշունչն ասում է. «…մեծ անդունդի բոլոր աղբյուրները ճեղքվեցին և Երկնքի պատուհանները բացվեցին» (Ծննդ. 7.11):

Աստծո վերականգնված փառքը կծագի նրանց վրա, ովքեր պատրաստել են իրենց սրտերը Նրա համար: Աստծո փառքը կթափվի աշխարհի բոլոր ազգերի վրա, ոչ մի քաղաք անմասն չի մնա Նրա Հոգու վերջին անձրևից:

Աստված ասում է, որ Իր ժողովուրդը կրկին կվայելի Իր փառքը, և Իր լույսը կգրավի նույնիսկ անհավատներին: Ամովսն ասում է.

> «Այն օրը պիտի կանգնեցնեմ Դավթի ընկած խորանը, և պիտի նորոգեմ նրա պատռվածքները, պիտի կանգնեցնեմ նրա քանդվածները և նրան պիտի շինեմ, ինչպես վաղեմի օրերում»:
>
> — ԱՄՈՎՍ 9.11

Աստծո փառքը կվերականգնվի եկեղեցում և կգերազանցի այն փառքին, որ Դավթի օրերում էր: Հակոբոսը, խոսելով եկեղեցու առաջնորդների հետ, մեջբերեց այս խոսքը՝ վերագրելով այն վերջին օրերին: Նա ասաց.

> «Շմավոնը պատմեց, թե ինչպես Աստված սկզբից այց արեց, որ հեթանոսներից ժողովուրդ առնի Իր անվան համար: Եվ սրա հետ միաբանվում են մարգարեների խոսքերը, ինչպես էլ գրված է. «Սրանից հետո կդառնամ և Դավթի վայր ընկած բնակարանը կշինեմ, և նրա քանդվածները նոր կշինեմ և կկանգնեցնեմ նրան, որ մարդկանց մնացածները Տիրոջը խնդրեն, և այն բոլոր հեթանոսները, որոնց վրա Իմ անունը կոչված է,– ասում է Տերը,– Նա, որ այս բոլորն անում է»: Հավիտենից հետո հայտնի են Տիրոջն Իր բոլոր գործերը»:
>
> — ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 15.14-18

Հակոբոսը Սուրբ Հոգու օգնությամբ տեսավ հավատացյալների այն մեծ հունձքը, որոնք մտնելու են Երկնքի արքայություն Աստծո փառքի վերականգնման ժամանակ: Հակոբոսի խոսքը մարգարեական էր, բայց նա չավարտեց Ամովսի ուղերձը, քանի որ հատկապես վերջին մասը վերաբերում է մեր ժամանակներին: Կարդանք Ամովսի ուղերձի ավարտը.

> «Ահա օրեր պիտի գան,– ասում է Տերը,– որ հերկողը կհասնի հնձողին, և խաղող կոխողը՝ սերմ ցանողին, և սարերը քաղցու կկաթեցնեն, և բոլոր բլուրները կհալվեն»:
>
> — ԱՄՈՎՍ 9.13

Աստված ասում է, որ հունձքն այնքան առատ կլինի և մշակն այնքան գործ կունենա, որ չի կարողանա ավարտել աշխատանքը մինչև հերկողի գալը, ով պատրաստելու է դաշտը նոր ցանքի համար: Աստվածաշնչի անգլերեն «Նյու Լիվինգ» թարգմանությունն (NLT) այսպես է.

> «Ժամանակը կգա,– ասում է Տերը,– երբ հացահատիկը և խաղողը կաճեն ավելի արագ, քան դրանք կարելի կլինի հնձել»:

Աստված նկարագրում է անչափ առատ հունձք: Փա՜ռք Աստծուն: Սպասե՛ք հենց այսօրվանից, որովհետև այն արագորեն մոտենում է: Ժամանակը կարճ է: Մի՛ ընդդիմացեք Նրա մաքրագործող աշխատանքին և մի՛ անտեսեք Տիրոջ գիտությունը:

Երբ սկսեցի գրել այս գիրքը, ես քաջատեղյակ էի, թե որքան կարևոր և ժամանակին է այն: Այս գիրքը Հոգու աղաղակն է, որ հասցվում է եկեղեցուն: Ուղերձը հետևյալն է. «Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը՝ պատրաստելով Նրա ժողովրդին Նրա փառքի համար»: Մինչ Աստված վերականգնում է Իր փառքը, եկե՛ք իմաստուն լինենք և սովորենք Դավթից և իր մարդկանցից: Այս իրադարձությունները գրի են առնվել ոչ միայն պատմական նկատառումներով. Խոսքն ասում է. «Նրա համար ինչ որ գրվեց, մեր սովորելու համար գրվեց…» (Հռոմ. 15.4):

Այժմ, երբ հիմք դրեցինք ժամանակները հասկանալու համար, եկե՛ք սովորենք Տիրոջ երկյուղով ապրելու կարևորությունը:

Աստծո երկյուղն ունեցող մարդը դողում է
Նրա Խոսքից և Նրա ներկայությունից:

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՏԵՍՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Երանի՜ թե նրանց սիրտն էլ այնպես լիներ, որ Ինձնից վախենալով Իմ բոլոր պատվիրանները պահեին ամեն ժամանակ, որպեսզի իրենց համար բարի լիներ և իրենց որդիներին էլ՝ հավիտյան»:

— ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 5.29

Մենք հաճախ ենք ուղերձներ լսում Կորնթացիների եկեղեցուն ուղղված Պողոսի առաջին թղթից: Քարոզիչները հաճախ են հղումներ կատարում Աստվածաշնչի այս գրքից, հատկապես՝ Հոգով լցված հավատացյալների շրջանակներում: Կորնթոսի եկեղեցին հիմնադրվել է մոտավորապես մ.թ. 51թ.-ին (Պենտեկոստեի օրվանից շատ տարիներ անց): Այն շատ բաց էր հոգևոր պարգևների համար, այդ իսկ պատճառով, առատորեն վայելում էր դրանք: Ի տարբերություն որոշ ժամանակակից եկեղեցիների, Սուրբ Հոգու օծությունն ուժեղ էր այդ եկեղեցու անդամների կյանքում:

Կորնթոսի եկեղեցուն ուղղված Պողոսի երկրորդ թուղթն այնքան հաճախ չի հիշատակվում, որքան առաջինը: Այս նամակն ուժեղ շեշտ է դնում աստվածային կարգ ու կանոնի, Տիրոջ երկյուղի և Նրա փառքի հետագա վերականգնման վրա: Այն իր մեջ ուժեղ և ցնցող ուղերձ է պարունակում ժամանակակից հավատացյալների համար: Քննելով դրա մի մասը՝ մտապահե՛ք, որ Կորնթացիների երկրորդ թղթի ուղերձն այն մարդկանց համար էր, ովքեր քաջ ծանոթ էին օծությանը և գործում էին հոգևոր պարգևներով:

Հին ուխտի փառքի տարբերությունը Նոր ուխտից

Կորնթացիներին ուղղված երկու նամակներում էլ Պողոսը հաճախ հիշատակում էր Եգիպտոսից Իսրայելի զավակների դուրս գալը և անապատում Աստծո փառքի դրսևորումը: Նրանց փորձառությունը վերաբերում է նաև մեզ, որովհետև այն բաները, որ կատարվեցին իսրայելցիների հետ ֆիզիկական աշխարհում, դրանք հոգևոր աշխարհում մեր վերապրումների խորհրդապատկերներն ու օրինակներն են: Պողոսը շեշտում է.

> «Այն ամենն օրինակի համար էր նրանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրվեց, որոնց դարերի վերջը հասավ»:
>
> — Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 10.11

Պողոսի առաջին նամակը կարգ ու կանոնի բազմաթիվ հիմնական տարրերի մասին էր, որ պետք է հաստատվեր Աստծո ժողովրդի սրտում: Նրա երկրորդ նամակում նա խոսում էր այն մասին, որ Աստված ցանկանում է դրսևորել Իր փառքը և բնակվել Իր ժողովրդի սրտում: Պողոսը սկսեց համեմատել անապատում դրսևորված Աստծո փառքն այն փառքի հետ, որ դրսևորվեց Նոր ուխտի ժամանակ:

Հակադրելով սրանք՝ նա գրում է.

> «Օրենքի այդ հին համակարգը, որը փորագրված էր քարի վրա, մահվան էր տանում, սակայն այն սկսեց այնպիսի փառքով, որ Իսրայելի ժողովուրդը չէր կարողանում նայել Մովսեսի դեմքին: Որովհետև նրա դեմքը փայլում էր Աստծո փառքով, թեև նրա պայծառությունն արդեն մարում էր: Արդյո՞ք մենք չպետք է ավելի մեծ փառք ակնկալենք, երբ Սուրբ Հոգին կյանք է տալիս»:
>
> — Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.7,8, NLT

Լինելով Սինայի վրա՝ Մովսեսը տեսավ Աստծո կերպարանքը և խոսեց Նրա հետ, ինչպես մարդը խոսում է իր ընկերոջ հետ: Երբ Մովսեսն իջավ սարից, նա ծածկեց իր երեսը, քանի որ նրա երեսի փայլը

վախեցնում էր մարդկանց: Մովսեսի դեմքի փայլը ցույց էր տալիս, որ նա եղել էր Աստծո ներկայության, այսինքն՝ փառքի մեջ:

Նոր ուխտի մեջ Աստված չի ծրագրում, որ մենք արտացոլենք Նրա փառքը, այլ՝ որ Նրա փառքը երևա մեր մեջ: Այլ բան է արտացոլելը և բոլորովին այլ բան՝ դրա մեջ բնակվելը: Ահա Աստծո վերջնական նպատակը:

Ահա թե ինչու Պողոսը կարող էր ասել.

> «Փաստորեն առաջին փառքն ընդհանրապես փառավոր չէր, եթե համեմատենք այն Նոր ուխտի անհաղթահարելի փառքի հետ»:
>
> — Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.10, NLT

Թեև Հին ուխտի փառքը չի կարող համեմատվել Նոր ուխտի փառքի հետ, սակայն այդ փառքն այնքան ցնցող էր, որ Պողոսն անընդհատ կրկնում էր. «…Իսրայելը չէր կարողանում հառել իր հայացքն անցնող բանի ավարտին» (13-րդ խոսք, NLT): Սակայն հետո Պողոսն անմիջապես ողբում է.

> «Բայց նրանց միտքը կուրացավ (անգլ.՝ կուրացած էր)…»:
>
> — Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.14

Որքա՜ն ողբերգական է, որ նրանք չէին կարողանում տեսնել հենց այն, ինչն այդքան անհրաժեշտ էր նրանց: Պողոսը զգուշացնում է մեզ, որպեսզի մենք նույնպես չհայտնվենք այդպիսի դժվարին կացության մեջ:

Այնպես որ, մենք պետք է հարցնենք. «Ինչպե՞ս էին նրանց մտքերը կուրացել»: Պատասխանելով այս հարցին՝ մենք ձեռք կբերենք այն գիտությունն ու իմաստությունը, որոնք մեզ անհրաժեշտ են: Նրա փառքի մեջ ապրելու համար մեզ անհրաժեշտ է այն, ինչ մենք չունենք:

Մեր պատասխանը ստանալու համար պետք է վերադառնանք այն ժամանակաշրջանը, որի մասին խոսում էր Պողոսը:

Տիրոջ երկյուղի և Աստծուց վախենալու տարբերությունը

Իսրայելը նոր էր դուրս եկել Եգիպտոսից. Մովսեսն առաջնորդում էր ժողովրդին Սինա սարի մոտ, որտեղ Աստված դրսևորելու էր Իր փառքը:

> «Եվ Տերն ասաց Մովսեսին. «Գնա՛ ժողովրդի մոտ և սրբի՛ր նրանց այսօր և էգուց, և թող իրենց հանդերձները լվանան և երրորդ օրվա համար պատրաստ լինեն, որովհետև երրորդ օրը Տերը ամբողջ ժողովրդի աչքի առջև Սինա սարի վրա պիտի իջնի»»:
>
> — ԵԼԻՑ 19.10,11

Այս ուղերձը մարգարեական էր, քանի որ այն նաև վերաբերում է մեր օրերին: Նախքան Աստծո փառքի դրսևորվելը, մարդիկ պետք է սրբեին իրենց անձերը: Նրանք պետք է նաև լվանային իրենց հագուստները: Հիշե՛ք, որ մեկ օրը Տիրոջ համար հազար տարվա նման է: Տեր Հիսուս Քրիստոսի հարությունից անցել է գրեթե երկու հազար տարի (երկու օր): Աստված ասաց, որ երկու հազար տարվա (երկու օրվա) ընթացքում Նրա եկեղեցին պետք է սրբվի կամ առանձնացնի իրեն աշխարհից՝ պատրաստվելով Նրա փառքին: Մեր հագուստները պետք է մաքրվեն այս աշխարհի պղծությունից (տե՛ս Բ Կորնթ. 6.16, 7.1): Մենք պետք է դառնանք Նրա անարատ հարսնացուն: Երկու հազար տարի անց Նա կրկին կդրսևորի Իր փառքը:

Այժմ կարդացե՛ք այն մասին, թե ինչ կատարվեց երրորդ օրվա առավոտյան.

> «Եվ եղավ երրորդ օրը՝ առավոտը ծագելիս՝ որոտումներ և կայծակներ էին լինում, և մի թանձր ամպ կար սարի վրա, և շատ սաստիկ փողի ձայն, և բանակի մեջ եղած ամբողջ ժողովուրդը զարհուրեց: Եվ Մովսեսը դուրս հանեց ժողովրդին բանակից Աստծո առջև, և նրանք սարի տակ կանգնեցին: Եվ Սինա սարը բոլորովին ծխում էր, որովհետև Տերը նրա վրա իջավ կրակով, և նրա ծուխը հնոցի ծխի պես էր դուրս գալիս, և ամբողջ սարը սաստիկ դողում էր»:
>
> — ԵԼԻՑ 19.16-18

Աստված հայտնեց Իրեն ոչ միայն տեսանելի, այլ նաև լսելի կերպով: Երբ Մովսեսը խոսեց, Աստված պատասխանեց նրան այնպես, որ լսեին բոլորը: Այսօր մարդիկ հաճախ են անփութորեն խոսում Աստծո մասին՝ որպես ընկերոջ, ասես Նա պարզապես իրենց ծանոթներից մեկն է: Եթե նույնիսկ մի ակնթարթով տեսնեինք այն, ինչ տեսան Մովսեսն ու Իսրայելի զավակները, ապա բոլորովին այլ կարծիք կունենայինք Նրա մասին: Նա Տերն է, և Նա չի փոխվել: Ուշադի՛ր կարդացեք, թե ինչ կատարվեց մարդկանց հետ այն ժամանակ, երբ Աստված եկավ.

> «Եվ ամբողջ ժողովուրդը տեսնում էր որոտումները և կայծակները և փողի ձայնը և սարի ծխելը: Եվ ժողովուրդը տեսավ և ետ քաշվեց ու հեռու կանգնեց: Եվ ասաց Մովսեսին. «Դո՛ւ խոսիր մեզ հետ, և մենք կլսենք, բայց Աստված թող չխոսի մեզ հետ, որ չմեռնենք»: Եվ Մովսեսն ասաց ժողովրդին. «Մի՛ վախեցեք, որովհետև Աստված ձեզ փորձելու համար է եկել, այնպես որ, Նրա վախը ձեր առջև լինի, որ չմեղանչեք»»:
>
> — ԵԼԻՑ 20.18-20

Ուշադրություն դարձրեք, որ ժողովուրդը դողաց վախից և ետ քաշվեց: Նրանք այլևս չէին ցանկանում լսել Աստծո ձայնը: Նրանք չէին էլ ցանկանում նայել Նրա փառքի ներկայությանը կամ լինել դրա մեջ. նրանք անկարող էին դիմանալ դրան:

Մովսեսն ասաց նրանց՝ մի՛ վախեցեք՝ քաջալերելով՝ վերադառնալ Աստծո ներկայության մեջ: Նա բացատրեց, որ Աստված եկել է իրենց փորձելու համար:

Ինչո՞ւ է Աստված փորձում մեզ: Որպեսզի պարզի, թե ինչ կա մեր սրտո՞ւմ: Իհարկե՝ ո՛չ: Նա արդեն գիտի, թե ինչ կա մեր սրտում: Նա պարզապես փորձում է մեզ, որ մենք կարողանանք իմանալ, թե ինչ կա մեր սրտում: Ո՞րն էր այն փորձության նպատակը, որին հանդիպեցին իսրայելցիները: Նրանք պետք է իմանային, թե արդյո՞ք վախենում են Աստծուց: Եթե իսրայելցիները վախենային Նրանից, ապա չէին մեղանչի: Մեղքը գալիս է այն ժամանակ, երբ մենք հեռանում ենք Աստծուց:

Մովսեսն ասաց՝ մի՛ վախեցեք: Հետո նա ասաց, որ Աստված եկել է, «որ Նրա վախը ձեր առջև լինի»: Այս խոսքը ցույց է տալիս, որ *Աստծուց վախենալը* և *Աստծո երկյուղն ունենալը* տարբեր բաներ են: Մովսեսն ուներ Աստծո երկյուղը, իսկ ժողովուրդը՝ ո՛չ: Կա մի ճշմարտություն. եթե չունենք Աստծո երկյուղը, ապա մենք կվախենանք Նրանից Նրա փառքի դրսևորման ժամանակ, որովհետև ամեն ծունկ կծռվի Նրա առջև՝ եթե ոչ աստվածային երկյուղից, ապա՝ վախից (տե՛ս Բ Կորնթ. 5.10,11):

> «Եվ ժողովուրդը հեռու կանգնեց, և Մովսեսը մոտեցավ այն թանձր խավարին, ուր որ Աստված էր»:
>
> — ԵԼԻՑ 20.21

Տեսե՛ք, թե որքան տարբեր էին նրանց արձագանքներն Աստծո փառքի հանդեպ. Իսրայելը ետ քաշվեց, բայց Մովսեսը մոտեցավ: Սա նման է մեր ժամանակվա հավատացյալների տարբեր արձագանքներին:

Բազմաթիվ նմանություններ

Կարևոր է, որ հասկանանք՝ իսրայելցիներն այնքան էլ չէին տարբերվում ժամանակակից եկեղեցուց:

➢ *Նրանք դուրս էին եկել Եգիպտոսից,* ինչը փրկության խորհրդապատկերն է:

➢ *Նրանք վերապրել էին Աստծո հրաշքները և օգուտ քաղել դրանցից,* ինչպես շատերը եկեղեցում:

➢ *Նրանք դեռ ցանկանում էին ապրել իրենց հին կենսաոճով,* բայց առանց եգիպտական գերության: Որքան հաճախ ենք սա տեսնում ժամանակակից եկեղեցում: Մարդիկ փրկվում և ազատագրվում են, սակայն սրտով այդպես էլ չեն թողնում աշխարհիկ կենսաոճը, թեև հենց այդ էլ տարել էր նրանց գերության մեջ:

➢ *Նրանք փիրացան անօրենների հարստությանը, որն Աստված պահել էր արդարների համար:* Աստվածաշնչում գրված է. «Եվ նրանց հանեց արծաթով և ոսկով…» (Սաղմ. 105.37): Սակայն նրանք Աստծո այս օրհնությունն օգտագործեցին կուռք շինելու համար: Մի՞թե մենք չենք անում նույնն այսօր: Մենք լսում ենք ֆինանսական հրաշքների մասին, սակայն հաճախ ամենաօրհնված մարդիկ, ի վերջո, իրենց ամբողջ սերն ու զորությունը նվիրում են նյութական և ֆինանսական օրհնություններին, այլ ոչ թե այն Տիրոջը, Ով իրենց օրհնեց:

➢ *Նրանք վերապրեցին Աստծո բժշկարար զորությունը,* քանի որ Աստվածաշունչն ասում է, որ երբ նրանք դուրս եկան Եգիպտոսից, «…նրանց ցեղերում տկար մարդ չկար» (Սաղմ. 105.37): Այն, ինչ կատարվեց այդտեղ, ավելի զորավոր էր, քան այսօրվա ամենամեծ հրաշքների ծառայությունները: Մովսեսը դուրս եկավ Եգիպտոսից երեք միլիոն ուժեղ և առողջ մարդկանց հետ: Կարո՞ղ եք պատկերացնել երեք միլիոն բնակիչ ունեցող մի քաղաք, որի հիվանդանոցներում նույնիսկ մի մարդ չկա: Իսրայելցիները չորս հարյուր տարի ծառայեցին զրկանքների մեջ: Պատկերացրե՛ք, թե ինչպիսի՜ բժշկություններ և հրաշքներ տեղի ունեցան, երբ նրանք կերան Զատկի գառը:

Իսրայելցիների համար խորթ չէր Աստծո փրկարար, բժշկարար, հրաշագործ և ազատագրող զորությունը: Իրականում նրանք չէին թաքցնում իրենց ուրախությունը, երբ Աստված շարժվում էր Իր հրաշքներով: Նրանք պարում և փառաբանում էին, ինչպես և մենք մեր Հոգով լցված հրաշքների ծառայությունների ժամանակ (տե՛ս Ելից 15.1,20): Հետաքրքիր է նշել, որ հրաշքները գրավում էին իսրայելցիներին, որովհետև նրանք օգտվում էին դրանցից, բայց սարսափում և ետ էին քաշվում, երբ դրսևորվում էր Նրա փառքը:

Մի՞թե այսօր մենք տարբերվում ենք նրանցից: Մենք դեռ ձգտում ենք հրաշքների՝ հուսալով՝ Աստծուց կրկնակի բաժին ստանալ հրաշքների ծառայությունների ժամանակ: Բայց ի՞նչ տեղի կունենա, երբ դրսևորվի Աստծո փառքը: Այդ ժամանակ Նրա փառավոր ներ-

կայության մեջ կբացահայտվի, թե ինչ կա մարդկանց սրտում: Մենք կարող ենք հրաշքների մթնոլորտում աննկատ ապրել մեղքի մեջ, բայց մեղքը չի կարող թաքնվել Նրա դրսևորված փառքի լույսի մեջ:

Ի՞նչը կուրացրեց մարդկանց

Քառասուն տարի անց հին սերունդը մահացավ անապատում, իսկ Մովսեսը նոր սերնդի համար կրկնեց այն, ինչ տեղի էր ունեցել սարի վրա, երբ Աստված դրսևորեց Իր փառքը:

> «Եվ եղավ, երբ որ լսեցիք այն ձայնը խավարի միջից՝ սարը կրակով վառված ժամանակ, ինձ մոտ եկաք դուք, այսինքն՝ ձեր ցեղերի բոլոր գլխավորները և ձեր ծերերը, և ասացիք. «Ահա մեր Տեր Աստվածը մեզ ցույց է տալիս Իր փառքը և մեծությունը, և Նրա ձայնը լսում ենք կրակի միջից: Այս օրը տեսանք, որ Աստված մարդու հետ խոսեց, և մարդը ողջ մնաց: Եվ հիմա ինչո՞ւ մեռնենք, (որովհետև այս մեծ կրակը մեզ սպառելու է), եթե մենք մեր Տեր Աստծո ձայնը կրկին լսելու լինենք, կմեռնենք… Դու մոտ գնա և լսիր ամենը, ինչ որ մեր Տեր Աստվածն ասում է, և դո՛ւ ասա մեզ ինչ որ մեր Տեր Աստվածը քեզ հետ խոսի, և մենք կլսենք և կկատարենք»»:
>
> — ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 5.23-27

Նրանք աղաղակում էին. «Մենք չենք կարող մոտենալ Նրա փառավոր ներկայությանը, ոչ էլ կանգնել Նրա ներկայության մեջ և ապրել»: Նրանք ցանկանում էին, որ իրենց փոխարեն լսեր Մովսեսը, և խոստացան հնազանդվել նրան ու անել այն ամենը, ինչ Աստված ասեր: Իսրայելը հազարավոր տարիներ փորձեց այդպես ապրել, բայց չկարողացավ հնազանդվել Նրա խոսքերին: Մի՞թե այսօր մենք տարբերվում ենք նրանցից: Արդյո՞ք մենք չենք վերցնում Աստծո Խոսքը մեր հովվից և քարոզիչներից, բայց խուսափում Աստծո սարից: Մի՞թե մենք չենք վախենում լսել Նրա ձայնը, որ բացահայտում է մեր սրտի դիրքը: Նման սրտի դիրքը ոչնչով չի տարբերվում Իսրայելի զավակների սրտի դիրքից:

Մովսեսը շատ հիասթափվեց Իսրայելի պատասխանից: Նա չէր

կարող հասկանալ, թե ինչու նրանք ծարավ չէին Աստծո ներկայությանը: Ինչպե՞ս նրանք կարող էին այդքան հիմար լինել: Ինչպե՞ս կարող էին այդքան կույր լինել: Այս իրավիճակից մտահոգված՝ Մովսեսը եկավ Աստծո առջև՝ հուսալով, որ Նա ինչ-որ կերպ կուղղի այդ իրավիճակը: Բայց տեսե՛ք, թե ինչ տեղի ունեցավ.

> «Եվ Տերը ձեր խոսքերի ձայնը լսեց, երբ որ դուք Ինձ հետ խոսում էիք, և Տերն ինձ ասաց. «Այս ժողովրդի քեզ ասած խոսքերի ձայնը լսեցի, նրանց ամեն ասածը լավ է»»:
>
> — ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 5.28

Ես համոզված եմ, որ Մովսեսն ապշած էր Աստծո պատասխանից: Նա երևի մտածեց. *«Ի՞նչ... ժողովուրդը ճի՞շտ է: Գոնե այս անգամ նրանք ճիշտ են: Ուրեմն նրանք իսկապե՞ս չեն կարող մտնել Աստծո ներկայության մեջ: Բայց ինչո՞ւ»:* Աստված ընդհատեց նրա մտքերը՝ պատասխանելով.

> «Երանի՜ թե նրանց սիրտն էլ այնպես լիներ, որ Ինձնից վախենալով Իմ բոլոր պատվիրանները պահեին ամեն ժամանակ, որպեսզի իրենց համար բարի լիներ և իրենց որդիներին էլ՝ հավիտյան»:
>
> — ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 5.29

Աստված ողբաց. «Երանի՜ թե նրանք այնպիսի սիրտ ունենային, որ վախենային Ինձնից...»: Ամբողջ ժողովուրդը կարող էր արտացոլել Աստծո փառքը և իմանալ Նրա ճանապարհները, ինչպես Մովսեսը, եթե նրանց սրտում լիներ ընդամենը Տիրոջ երկյուղը, ինչպես Մովսեսի սրտում էր: Բայց նրանց սիրտը դեռ խավարի մեջ էր, իսկ միտքը՝ կույր հենց այն բանի հանդեպ, որն այդքան անհրաժեշտ էր նրանց:

Ի՞նչը կուրացրեց նրանց: Պատասխանը պարզ է՝ նրանց սրտում չկար Տիրոջ երկյուղը: Սա վկայում է, որ նրանք անհնազանդ էին Աստծո պատվիրաններին և Խոսքին: Եթե համեմատենք Մովսեսին

Իսրայելի զավակների հետ, ապա միայն մեկ տարբերություն կգտնենք. Մովսեսն ուներ Աստծո երկյուղը, իսկ նրանք՝ ո՛չ:

Դողալ Աստծո Խոսքից

Աստծո երկյուղն ունեցող մարդը դողում է Նրա Խոսքից և Նրա ներկայությունից (տե՛ս Եսայի 66.2, Երեմիա 5.22): Ի՞նչ է նշանակում դողալ Նրա Խոսքից: Սա կարելի է սահմանել այսպես՝ «Հոժարությամբ հնազանդվել Աստծուն նույնիսկ, երբ փոխզիջման գնալը և Նրա խոսքին չհնազանդվելն ավելի շահավետ են թվում»:

Մեր սրտում պետք է հաստատվի այն ճշմարտությունը, որ Աստված բարի է: Նա չի վնասում Իր երեխաներին: Աստծո երկյուղն ունեցող մարդը գիտի սա, քանի որ ճանաչում է Աստծո բնավորությունը: Ահա թե ինչու նա կմոտենա Աստծուն նույնիսկ, երբ մյուսները սարսափահար փախչեն Նրանից:

Այսպիսի մարդը գիտակցում է, որ եթե ինքը Աստծո ձեռքերի մեջ է, ապա ցանկացած անսպասելի դժվարություն, ի վերջո, «կպտտվի դեպի բարին»: Հավատացյալների մեծամասնությունը մտովի կհամաձայնի սրա հետ, սակայն դժվար պահին է պարզ դառնում, թե ինչին ենք հավատում: Միայն փորձությունների կրակով անցնելիս կտեսնենք, թե ինչպիսի հավատք ունենք:

Այն դժվարությունները, որոնց բախվեցին իսրայելցիները, ցույց տվեցին, թե ինչ կար նրանց սրտում: Եկե՛ք ուսումնասիրենք, թե որքան տարբեր էին նրանց արձագանքներն Աստծո Խոսքի հանդեպ: Իսրայելի զավակները հնազանդվում էին Աստծուն, քանի դեռ շահ ունեին: Բայց զրկանքների պահին կամ այն ժամանակ, երբ շահ չէին ունենում, նրանք կորցնում էին Աստծուն իրենց տեսադաշտից և դառնորեն տրտնջում էին:

Դարերի ընթացքում Իսրայելն աղոթել էր եգիպտական կեղեքիչներից ազատվելու համար: Նրանք փափագում էին վերադառնալ Խոստման երկիր: Աստված ուղարկեց Մովսեսին, ով պետք է նրանց փրկիչը լիներ: Տերն ասաց նրան. «Ես իջա՝ նրանց եգիպտացիների

ձեռքից ազատելու, և նրանց այն երկրից մեկ լավ ու լայնարձակ երկիր՝ մի կաթ ու մեղր բխող երկիր… հանելու» (Ելից 3.8):

Մովսեսը գնաց փարավոնի մոտ և հռչակեց Աստծո խոսքերը՝ ասելով. «Թո՛ղ, որպեսզի Նրա ժողովուրդը գնա»: Բայց փարավոնը դրան հակառակ ավելի շատ նեղություն պատճառեց իսրայելցիներին: Եգիպտացիներն այլևս հարդ չէին տալու իսրայելցի ստրուկներին ահռելի քանակությամբ աղյուսներ պատրաստելու համար: Նրանք պետք է գիշերով իրենք հարդ հավաքեին, իսկ ցերեկը կրկին տաժանակիր աշխատեին: Թեև հարդ այլևս չէր բերվում, սակայն աղյուսների քանակը չկրճատվեց: Փարավոնի մոտ Մովսեսի ասած խոսքն ավելի ծանրացրեց նրանց վիճակը: Նրանք տրտնջացին և ասացին Մովսեսին. «Հեռացի՛ր մեզանից և հերի՛ք է խոսես փարավոնի մոտ. դու մեր կյանքն ավելի ես դժվարացնում»:

Երբ Աստված վերջապես ազատեց նրանց Եգիպտոսից, փարավոնի սիրտը կրկին խստացավ, և նա անապատում հետապնդեց իսրայելցիներին լավագույն կառքերով և զինվորներով: Երբ եբրայեցիները տեսան, որ եգիպտացիները միաբան դուրս են եկել իրենց դեմ, իսկ փախուստի ճանապարհ չկա Կարմիր ծովի պատճառով, նրանք կրկին տրտնջացին. «Սա այն խոսքը չէ՞, որ քեզ ասում էինք Եգիպտոսում, թե թող տուր մեզ, որ եգիպտացիներին ծառայություն անենք, որովհետև ավելի լավ է մեզ համար եգիպտացիներին ծառայություն անել, քան թե անապատում մեռնել» (Ելից 14.12, շեղագիրը հեղինակինն է):

Ուշադրություն դարձրեք «ավելի լավ է մեզ համար» բառերին: Ըստ էության, նրանք ասում էին. «Ինչո՞ւ հնազանդվենք Աստծուն, եթե դրա պատճառով մեր կյանքն ավելի է դժվարանում: Մեր կյանքը չլավացավ, այն ավելի վատացավ»: Նրանք անմիջապես իրենց նախկին ապրելակերպը համեմատեցին իրենց ներկա վիճակի հետ: Ամեն անգամ, երբ ներկան ինչ-որ բանով զիջում էր անցյալին, նրանք ցանկանում էին ետ վերադառնալ: Նրանք ավելի ձգտում էին հարմարավետությանը, քան Աստծո կամքին հնազանդվելուն: Նրանց մեջ Աստծո երկյուղի նշույլ անգամ չկար: Նրանք չէին դողում Նրա Խոսքից:

Աստված կիսեց ծովը: Իսրայելի զավակներն անցան ծովի չոր հատակով և տեսան, թե ինչպես իրենց կեղեքիչները մնացին ջրերի

տակ: Նրանք գոհացան Աստծուց Իր բարության համար, փառաբանեցին Նրան ու պարեցին Նրա առջև: Նրանք համոզված էին, որ այլևս չեն կասկածի Նրա բարության վրա: Բայց նրանք չգիտեին իրենց իսկ սրտերը: Եվս մեկ փորձություն եկավ, որը կրկին բացահայտեց նրանց անհավատարմությունը: Ընդամենը երեք օր անց նրանք կրկին տրտնջացին՝ ասելով, որ քաղցրահամ ջուր են ցանկանում և ոչ թե դառնահամ (տե՛ս Ելից 15.22-25):

Որքան հաճախ ենք մենք նույն կերպ վարվում: Մեր պղծություններից մաքրվելու համար դառը խոսքեր լսելու փոխարեն մենք ցանկանում ենք մեղմ և հաճելի խոսքեր լսել: Ահա թե ինչու Սողոմոնն ասաց. «…բայց սոված անձի համար ամեն լեղի բանը քաղցր է» (Առակ. 27.7):

Մի քանի օր անց Իսրայելի զավակները կրկին տրտնջացին, քանի որ կերակուրը վերջացել էր: Նրանք ասացին. «Երանի՜ թե Տիրոջ ձեռքով մեռած լինեինք Եգիպտոսի անապատում» (տե՛ս Ելից 16.1-4): Տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի կրոնական վարք ունեին նրանք:

Իսրայելցիները կրկին տրտնջացին քաղցրահամ ջուր չլինելու պատճառով (տե՛ս Ելից 17.1-4): Նրանք կրկին ու կրկին տրտնջում էին նոր դժվարությունների հանդիպելիս: Նրանք պահում էին Աստծո Խոսքը, քանի դեռ հանգամանքները բարենպաստ էին: Բայց երբ հնազանդությունը դժվարություններ էր պատճառում, նրանք անմիջապես տրտնջում էին:

Այլ սիրտ

Մովսեսը խիստ տարբերվում էր նրանցից: Նրա սիրտը շատ ավելի վաղ էր փորձվել: Խոսքն ասում է.

> «Հավատքով՝ Մովսեսը, երբ որ մեծացավ, չկամեցավ փարավոնի աղջկա որդի կոչվել: Ավելի լավ համարեց Աստծո ժողովրդի հետ չարչարվել, քան թե միաժամանակ մեղքի զվարճությունն ունենալ՝ ավելի մեծ հարստություն համարելով Քրիստոսի նախատինքը եգիպտացիների հարուստ գանձերից, որովհետև աչք դրած մտիկ էր տալիս վարձքի հատուցմանը»:
>
> — ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11.24-26

Իսրայելի զավակներն իրենք չէին ընտրել իրենց գերությունը: Մովսեսին տրվեց լավագույնը, որ աշխարհը կարող էր առաջարկել, բայց նա հրաժարվեց ամեն ինչից՝ Աստծո ժողովրդի հետ զրկանքներ կրելու համար: Նրա վերաբերմունքը խիստ տարբերվում էր Իսրայելի զավակների վերաբերմունքից: Նրանք ցանկանում էին վերադառնալ Եգիպտոս (աշխարհ)՝ շատ շուտ մոռանալով իրենց գերությունը: Նրանք միայն հիշում էին, թե ինչպես էին ճաշակում այն բաները, որոնք այժմ չկային Աստծո փորձության անապատում: Մովսեսն ընտրեց զրկանքները, «որովհետև մտիկ էր տալիս վարձքի հատուցմանը»: Ինչպիսի՞ վարձատրություն էր նա ցանկանում: Պատասխանը Ելից 33-րդ գլխում է.

> «Եվ Տերն ասաց Մովսեսին. «Վե՛ր կաց այստեղից դու և այն ժողովուրդը, որ Եգիպտոսի երկրից հանեցիր, և գնա՛ այն երկիրը, որի համար երդում արի Աբրահամին, Իսահակին և Հակոբին՝ ասելով. «Քո սերնդին պիտի տամ նրան»: Եվ քո առջև մեկ հրեշտակ կուղարկեմ և դուրս կանեմ քանանացուն, ամորհացուն, քետացուն, փերեզացուն, խևացուն և հեբուսացուն կաթ ու մեղր բխող երկիրը, որովհետև Ես ձեր մեջ վեր չեմ գնա, նրա համար, որ դու մի խստապարանոց ժողովուրդ ես. միգուցե քեզ ճանապարհին բնաջինջ անեմ»»:
>
> — ԵԼԻՑ 33.1-3

Աստված պատվիրեց Մովսեսին մարդկանց տանել այն երկիրը, որ Նա խոստացել էր նրանց, որը ժառանգելու համար նրանք սպասել էին հարյուրավոր տարիներ: Աստված նույնիսկ խոստացավ Մովսեսին, որ իրենց կուղեկցի Իր հրեշտակներից մեկը, բայց Ինքը չի գնալու նրանց հետ:

Բայց Մովսեսն ասաց. «Եթե Քո երեսը մեզ հետ չգնա, մեզ այս տեղից մի՛ հանիր» (15-րդ խոսք):

Ես ուրախ եմ, որ Խոստման երկիր մտնելու ընտրությունը առանց Աստծո չտրվեց Իսրայելի զավակներին: Եթե նրանք Աստծո փոխարեն նախընտրում էին Եգիպտոսում հարմարավետ կյանքը, ապա առավել ևս Խոստման երկիրը կընտրեին առանց Նրա: Հավանաբար

նրանք խնջույք կկազմակերպեին և կմեկնեին՝ առանց երկար մտածելու: Բայց Մովսեսի նպատակը Խոստման երկիրը չէր: Այդ պատճառով նա այլ կերպ պատասխանեց.

«Այդ խոստումը ոչինչ չարժե առանց Քո ներկայության»: Նա մերժեց Աստծո առաջարկը, որովհետև նրա ուզածը Տիրոջ ներկայությունն էր որպես վարձատրություն: Մտածե՛ք, թե որտեղ էր Մովսեսը, երբ Աստծուն ասաց. «…մեզ այստեղից մի՛ հանիր»: Որտե՞ղ էր այդ «այստեղ»-ը: Անապատո՛ւմ:

Մովսեսն ապրում էր նույն պայմաններում, ինչ պայմաններում որ ապրում էր ժողովուրդը: Նա օժտված չէր գերմարդկային կարողությամբ, ինչն ազատում էր իրեն այն դժվարություններից, որոնք կրում էր ժողովուրդը: Նա էլ էր ծարավ և քաղցած լինում մյուսների նման, սակայն մենք երբեք չենք տեսնում, որ տրտնջար նրանց պես: Աստված պատվիրեց Մովսեսին՝ դուրս գալ տառապանքի երկրից և հնարավորություն տվեց գնալ այն երկիրը, որի մասին նա երազում էր, բայց Մովսեսը հրաժարվեց:

Մեզ փորձելու Աստծո մեթոդներից մեկը հետևյալն է. Նա առաջարկ է անում մեզ՝ ակնկալելով, որ կմերժենք այն: Այդ առաջարկը սկզբում կարող է խոստումնալից լինել, բայց ի՞նչ գնով: Նույնիսկ կարող է թվալ, որ մեր ծառայությունը կմեծանա և առաջընթաց կունենա: Սակայն մեր սրտի խորքում գիտենք, որ դա ընտրելով՝ մենք հակառակ կկանգնենք Աստծո վերջնական ցանկությանը: Միայն նրանք, ովքեր դողում են Նրա Խոսքից, կընտրեն այն, ինչը ոչ շահավետ է:

Թագավորաց չորրորդ գրքի 2-րդ գլխում Եղիան երեք անգամ Եղիսեին պատվիրեց չհետևել իրեն: Երեք անգամն էլ ընդամենը հերթական փորձություն էր: Եղիսեի համար ավելի լավ կլիներ չհետևել Եղիային, բայց նա պնդեց. «…Կենդանի է Տերը և կենդանի է քո հոգին, եթե ես քեզ թողնեմ…» (Դ Թագ. 2.2): Նա գիտեր, որ երկնային վարձատրությունը շատ ավելի կարևոր է, քան իր ժամանակավոր հարմարավետությունը:

Արտաքնապես՝ նման, բայց ներքուստ՝ տարբեր

Մովսեսը և Իսրայելի զավակները արտաքնապես ոչնչով չէին տարբերվում: Ե՛վ Մովսեսը, և՛ նրանք Աբրահամի ժառանգներն էին: Ե՛վ Մովսեսը, և՛ նրանք դուրս էին եկել Եգիպտոսից՝ Աստծո հրաշագործ զորությամբ: Աստծո խոստումները և՛ Մովսեսի համար էին, և՛ Իսրայելի զավակների: Ե՛վ Մովսեսը, և՛ նրանք խոստովանում էին, որ ճանաչում և ծառայում են Եհովային: Բայց իրենց միջև եղած տարբերությունը թաքնված էր նրանց սրտում: Մովսեսն ուներ Տիրոջ երկյուղը, այդ իսկ պատճառով նա գիտեր Աստծո սիրտն ու ճանապարհները: Բայց քանի որ Իսրայելի զավակները չունեին Աստծո երկյուղը, նրանք կուրացած էին, և նրանց հասկացողությունը մթագնած էր:

Այսօր ամեն ինչ նույնն է: Քրիստոնեությունը գրեթե ակումբի է վերածվել: Դուք ձեր մանկությունից կարող եք հիշել բազմաթիվ խմբակներ կամ ակումբներ: Մարդիկ գնում են այնտեղ պատկանելիություն ունենալու համար: Լինելով ակումբի հովանու ներքո՝ դուք անդամների հետ միաբանված եք լինում ընդհանուր նախասիրության կամ գործի շուրջ: Ակումբի պատկանելիության տակ գտնվելով՝ դուք ձեզ ապահով եք զգում:

Այսօր կան մարդիկ, ովքեր դավանում են, որ քրիստոնյա են, բայց Աստծո հանդեպ այնքան երկյուղ չունեն, որքան անհավատ մարդու հանդեպ: Ինչո՞ւ նրանք պետք է վախենան՝ լինելով քրիստոնեական ակումբի ապահով անդամ: Փաստորեն՝ դևերն ավելի շատ են դողում Աստծուց, քան եկեղեցու որոշ մարդիկ: Հակոբոսը զգուշացնում էր նրանց, ովքեր դավանում էին, որ փրկված են, բայց չունեին Աստծո երկյուղը. «Դու հավատում ես, թե մեկ է Աստված: Լա՛վ ես անում. դևերն էլ են հավատում և սարսափում են (անգլ.՝ դողում են)» (Հակոբ. 2.19):

Այս մարդիկ նստած են մեր եկեղեցիներում, աշխատում են ծառայողական անձնակազմում և քարոզում ամբիոններից: Նրանք հասարակության բոլոր խավերից են՝ սկսած անապահով ազգային փոքրամասնություններից մինչև Հոլիվուդյան պերճաշուք կյանքով ապրողները: Նրանք դավանում են, որ փրկված են և սիրում են Աստ-

ծո խոստումները, բայց հեռատես չեն և Իսրայելի զավակների նման չունեն Աստծո երկյուղը:

Հուդան կանխատեսեց մեր ժամանակները և զգուշացրեց, որ մարդիկ կհաճախեն եկեղեցի և կդավանեն, որ փրկված են Աստծո շնորհքով՝ քրիստոնեական ակումբի անդամ լինելու շնորհիվ: Նրանք կհաճախեն հավատացյալների հավաքույթներին և առանց երկյուղի՝ ամբողջ ընթացքում կծառայեն միայն իրենց (Հուդա 12):

Մատթեոսի 7.21-23-ում Հիսուսն ասաց, որ կլինեն մարդիկ, ովքեր Իրեն Տեր և Փրկիչ կանվանեն, դևեր կհանեն և Իր անունով շատ զորություններ կգործեն, սակայն չեն ապրի՝ Աստծո կամքին հնազանդվելով: Հիսուսը նման վիճակը նկարագրում է որպես «որոմներ ցորենի հասկերի մեջ»: Անկարելի է հեշտությամբ տարբերել ցորենի հասկերը որոմներից: Ինչպես որ կատարվեց Իսրայելի զավակների հետ, Աստծո փառավոր ներկայության կրակը վերջնականապես կբացահայտի յուրաքանչյուրի սրտում եղածը: Ահա թե ինչպիսին կլինի եկեղեցու վիճակը հունձքի նախօրեին (տե՛ս Մատթ. 13.26):

Մաղաքիան մարգարեացավ, որ վերջին օրերին Աստված մարգարեական ձայն կուղարկի, ինչպես Նա վարվեց Սամուելի, Մովսեսի և Հովհաննես Մկրտչի դեպքում, որպեսզի պատրաստի Իր ժողովրդին Իր փառքի համար: Սակայն կլինեն ոչ թե մեկ, այլ բազմաթիվ մարգարեական ուղերձներ: Այս ուղերձների մեջ այնպիսի միաբանություն կլինի, որ կխոսեն ինչպես մեկ ձայն՝ կոչ անելով խաբված մարդկանց՝ ամբողջ սրտով վերադառնալ Տիրոջը:

Այսպիսով, աստվածային կարգ ու կանոնը կվերականգնվի Աստծո ժողովրդի սրտում: Այս մարգարեությունները ոչ թե դատաստանի ուղերձներ են, այլ՝ ողորմության: Այդ ուղերձների միջոցով Տերը կանչում է նրանց, ովքեր Իրենն են, որպեսզի նրանք խուսափեն դատաստանից: Մաղաքիան գրում է.

> «Ահա Ես ուղարկում եմ Իմ դեսպանին, որ ճանապարհի պատրաստի Իմ առջև, և հանկարծակի է գալու Իր տաճարի մոտ այն Տերը, Որին դուք որոնում եք… Եվ ո՞վ է Նրա գալու օրը տանողը, և ո՞վ է Նրա երևալու ժամանակ կանգնողը, որովհետև Նա հալեցնողի կրակի պես է և թափիչների օճառի պես»:
>
> — ՄԱՂԱՔԻԱ 3.1,2

Մաղաքիան չի նկարագրում եկեղեցու հափշտակությունը: Նա ասում է, որ Տերը կգա Իր տաճարի մոտ, այլ ոչ թե տաճարի համար: Ովսեն ասաց, որ երկու հազար տարի հետո Տերը կգա մեզ մոտ, այսինքն՝ Իր տաճարի մոտ՝ որպես վերջին անձրև: Խոսքն այստեղ Նրա դրսևորված փառքի մասին է: Դրանից հետո Մաղաքիան հարցնում է. «Բայց ո՞վ կարող է Նրա գալու օրը տանել»: Երկու մարգարեներն էլ հաստատում են, որ այս իրադարձությունը եկեղեցու հափշտակությունը չէ:

Մաղաքիան պատասխանում է իր հարցին՝ ներկայացնելով երկու հնարավոր վախճան Աստծո փառքի գալուստից հետո: Առաջինը՝ Աստված պետք է զտի և մաքրի նրանց, ովքեր *վախենում* են Իրենից (3,16,17-րդ խոսք): Երկրորդը՝ Աստված կդատի նրանց, ովքեր ասում են, թե ծառայում են Իրեն, բայց իրականում չեն *վախենում Իրենից* (տե՛ս Մաղաքիա 3.5, 4.1): Այս զտումից անմիջապես հետո նա ասում է.

> «Եվ դուք ետ կդառնաք և կտեսնեք արդարի և ամբարշտի տարբերությունը, Աստծուն ծառայություն անողի և ծառայություն չանողի տարբերությունը»:
>
> — ՄԱՂԱՔԻԱ 3.18

Մինչև այդ փառքի դրսևորումն անկարելի է զանազանել՝ Աստծուն ծառայողի և չծառայողի տարբերությունը: Կեղծավորությունը Աստծո փառքից չի կարող թաքնվել: «Ակումբային» մտածելակերպ այլևս չի լինի: Սա օգնում է մեզ ավելի լավ հասկանալ Հիսուսի խիստ զգուշացումը Նոր կտակարանի հավատացյալներին.

> «Բայց ասում եմ ձեզ՝ Իմ բարեկամներին՝ մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինը սպանում են և նրանից հետո ավելի բան չունեն, որ անեն: Բայց ցույց տամ ձեզ, թե ումից պետք է վախենաք. Նրանի՛ց վախեցեք, որ սպանելուց հետո իշխանություն ունի գեհենի մեջ գցելու, այո՛, ասում եմ ձեզ՝ Նրանի՛ց վախեցեք»:
>
> — ՂՈՒԿԱՍ 12.4,5

Աստծո երկյուղը մեզ պահում է խաբված մարդկանց կործանա-

բար ճանապարհներից: Մովսեսն ասաց, որ Աստծո երկյուղը մեղքից հեռանալու զորությունն է (տե՛ս Ելից 20.20): Սողոմոնը գրեց. «…Տիրոջ վախով մարդը կհեռանա չարից» (Առակ. 16.6): Հիսուսը, մինչև Աստծուց վախենալու մասին հորդորելը, հավատացյալներին զգուշացրեց կեղծավորության խաբուսիկ ծուղակի մասին.

«Որովհետև ոչինչ չկա ծածուկ, որ չհայտնվի, և թաքուն, որ չիմացվի»:

— ՂՈՒԿԱՍ 12.2

Երբ մենք մեր բարի անունը պահելու համար ծածկում կամ թաքցնում ենք մեղքը, ապա քող ենք դնում մեր սրտին: Սխալ է, որ մտածում ենք, թե այդ քողը ծածկում է այն ապականությունը, որ կա մեր կյանքում: Սա, ի վերջո, մեզ կդրդի կեղծավորության: Այնպես որ, այդպես վարվելով՝ մենք խաբում ենք ոչ միայն մարդկանց, այլ նաև ինքներս մեզ (տե՛ս Բ Տիմոթ. 3.13): Ինչպես Իսրայելի զավակները, այնպես էլ մենք կուրանում ենք և չենք կարողանում տեսնել:

Կեղծավորությունից մեր միակ պաշտպանությունը Աստծո երկյուղն է: Եթե ունենանք Աստծո երկյուղ, մենք չենք թաքցնի մեղքը մեր սրտում, քանի որ կվախենանք Նրանից ավելի, քան մահկանացու մարդկանց կարծիքներից: Մենք ավելի մտահոգված կլինենք, թե ինչ է մտածում Աստված, քան՝ թե ինչ է մտածում մարդը: Մենք ավելի մտահոգված կլինենք Աստծո ցանկություններով, քան մեր ժամանակավոր հարմարավետությամբ: Մենք ավելի կարժեքավորենք Նրա Խոսքը, քան մարդու: Եվ մենք կդարձնենք մեր սրտերը դեպի Տերը: Պողոսն ասում է.

«Բայց երբ որ դեպի Տերը կդառնան, այն քողը վեր կառնվի»:

— Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.16

Տիրոջ երկյուղը թույլ չի տա, որ մենք, հանուն անձնական շահերի, փոխզիջման գնանք Աստծո ճշմարտության հարցում:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՓԱՌՔԻՑ՝ ՓԱՌՔ

«Բայց երբ որ դեպի Տերը կդառնան, այն քողը վեր կառնվի»:
— Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.16

Ինչպիսի՜ զորավոր խոստում: Երբ մենք դառնում ենք դեպի Տերը, ցանկացած քող, որ խանգարում է մեզ տեսնել Նրա փառքը, վեր կառնվի:

Մինչև շարունակելը ցանկանում եմ շեշտադրում կատարել այս խոսքի ամբողջական նշանակության և իմաստի վրա: Մենք պետք է գնահատական տանք այս իրավիճակին, որովհետև հաճախ Պողոսի խոսքերի ամբողջ ազդեցությունը կարող է կորել մեր ներկա «ակումբային» մենտալիտետի պատճառով:

Հիսուսն ապշեցնող մի հարց տվեց, որից մենք այսօր հաճախ խուսափում ենք՝ շրջանցելով այն: Նա հարցրեց. «Ինչո՞ւ եք Ինձ Տե՛ր, Տե՛ր կոչում և չեք անում այն, որ ասում եմ» (Ղուկ. 6.46): «Տեր» բառը հունարենում *«կյուրիոս»*-ն է: Այդ բառը նշանակում է «գերագույն իշխանություն ունեցող»: Այն նաև սեփականատիրոջ իմաստն ունի:

Տերը տիեզերքի Արարիչը, Իշխանը և Տիրակալն է: Նա մարդուն՝ որպես գերագույն իշխան, դրեց պարտեզում: Մարդը լիազորված իշխանություն ուներ, սակայն նա իր իշխանությունը փոխանցեց սատանային (տե՛ս Ղուկ. 4.6): Խաչի վրա Հիսուսը փրկագնեց այն, ինչ կորած էր: Այժմ մենք ընտրության հնարավորություն ունենք: Մենք կարող ենք մեր կյանքի ամբողջ իշխանությունը փոխանցել Հիսուսին կամ պահել այն՝ մնալով այս կործանվող աշխարհի իշխանության տակ: Չկա՛ այլ տարբերակ:

Երբ մենք չենք վախենում Տիրոջից և չենք պատվում Նրան՝ որպես Տեր, մենք շարունակում ենք վերահսկել մեր կյանքի ինչ-որ մասը: Մենք կարող ենք դավանել Հիսուսին որպես Տեր, բայց մեր կյանքի պտուղներից կերևա՝ անարգում ենք Աստծուն, թե ոչ: Եթե երկյուղ ունենանք Աստծուց, ապա ամբողջությամբ կլինենք Նրա իշխանության տակ՝ որպես Տեր և Թագավոր: Այսպես Նա ամբողջական և անսահմանափակ կերպով կտիրի մեր կյանքում, և մենք կդառնանք Նրա ստրուկները:

Պողոսի, Տիմոթեոսի, Հակոբոսի, Պետրոսի և Հուդայի մասին Աստվածաշնչում գրված է՝ որպես ստրուկների (հայերեն Աստվածաշնչում՝ «ծառաներ», տե՛ս Հռոմ. 1.1, Կողոս. 4.12, Հակոբ. 1.1,2, Բ Պետր. 1.1, Հուդա 1): Խոսքն այն ստրուկի մասին է, ով կամովի ծառայում է պարտքի մարման համար: Նա նման չէ սովորական ստրուկի, ով ընտրություն չունի: Նրա ծառայությունը կամավոր է: Մենք ծառայում ենք՝ ելնելով Աստծո հանդեպ ունեցած սիրուց, վստահությունից և երկյուղածությունից: Մենք հոժարությամբ հանձնում ենք Նրան մեր կյանքերի վրա ունեցած բացարձակ իշխանությունը:

Ահա թե ինչու Պողոսը կարողանում էր խիզախորեն կրել այն կապանքները, փորձանքները և դժվարությունները, որոնք սպասում էին իրեն բոլոր քաղաքներում: Նա կարող էր վճռականորեն ասել. «Եվ հիմա ահա ես Հոգով կապված գնում եմ Երուսաղեմ…» (Գործք 20.22): Մի՞թե Տերն էր կապել Պողոսին: Իհարկե՝ ո՛չ: Պողոսը հասկացել էր, որ տառապանքներ է կրելու՝ Աստծո կամքը կատարելու համար: Բայց նա նախընտրել էր Աստծո ցանկությունն ավելի, քան իր հարմարավետությունը: Նա իր կյանքը հոժարությամբ դրել էր Հիսուսի բացարձակ իշխանության ներքո:

Պողոսը խոսում էր մեծ դժվարությունների մասին, որոնց նա հանդիպում էր. «Բայց ես մի բանի տեղ չեմ դնում և իմ անձն էլ պատվական չեմ համարում, որ ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը…» (24-րդ խոսք): Նա նվիրված էր անկախ այն բանից, թե ինչ գին պետք է վճարեր: Միայն Աստծո հանդեպ սերը և Նրա սուրբ երկյուղը կդրդեն

մեզ՝ ընդունել Նրան որպես մեր կյանքի Տեր: Այսպիսի նվիրում պահանջվում է բոլորից, ովքեր հետևում են Նրան (տե՛ս Ղուկ. 14.25-33):

Երբ Հիսուսը հարցրեց. «Ինչո՞ւ եք Ինձ Տե՛ր, Տե՛ր կոչում և չեք անում այն, ինչ ասում եմ», Նա իրականում ասում էր. «Մի՛ խաբվեք՝ Ինձ Տեր անվանելով, եթե դուք շարունակում եք ապրել այնպես, ասես ձեր կյանքը ձեզ է պատկանում»:

Խաբվածության քողը

Սավուղ թագավորի կյանքը կարող է ծառայել որպես խաբվածության օրինակ: Աստված Սամուել մարգարեի միջոցով հրաման տվեց Սավուղին: Նա կարգադրություն ստացավ հավաքել իր բանակը, հարձակվել Ամաղեկի վրա և ոչնչացնել ամեն շունչ ունեցող բան՝ մարդկանց, կանանց, երեխաներին և կենդանիներին:

Սավուղը չմերժեց Սամուելի կարգադրությունը՝ ասելով. «Ո՛չ մի դեպքում», բայց և չարեց հակառակը: Նման վարքը բացահայտ անհնազանդություն կլիներ: Փոխարենը՝ Սավուղն ընդունեց այն, հավաքեց իր բանակը և հարձակվեց Ամաղեկի վրա: Այս հարձակման ընթացքում սպանվեցին տասնյակ հազարավոր տղամարդիկ, կանայք և երեխաներ: Սավուղը խնայեց միայն ամաղեկացիների թագավորին: Միգուցե նա ցանկանում էր, որ ևս մեկ թագավոր ծառայեր իր պալատում՝ որպես հաղթանշան:

Հավանաբար նրա զորքը սպանեց նաև հազարավոր կենդանիների: Սավուղը խնայեց կենդանիների շատ փոքր մասը՝ լավագույն ոչխարներին, գառներին և երինջներին: Նա պատճառաբանեց իր արարքն՝ ասելով, որ մարդիկ կարող էին զոհաբերել դրանք Տիրոջը, և նույնիսկ ասաց, որ դա «ըստ Աստվածաշնչի» էր: Կողմնակի դիտորդի համար, ով չէր լսել մարգարեի խոսքը, Սավուղն աստվածապաշտ թագավոր կթվար. «Տեսե՛ք՝ նա զոհաբերում է Տիրոջը միայն լավագույնը»:

Հարձակման ավարտից հետո Տերը խոսեց Սամուելի հետ. «Զղջացի, որ Սավուղին թագավոր եմ արել, որովհետև Ինձնից ետ դառավ և Իմ խոսքերը չկատարեց…» (Ա Թագ. 15.11):

Հաջորդ օրը Սամուելը գնաց, որ հանդիմանի Սավուղին: Երբ Սավուղը տեսավ Սամուելին, խանդավառությամբ ողջունեց նրան՝ ասելով. «…Տիրոջից օրհնյալ լինես: Տիրոջ խոսքը կատարեցի» (13-րդ խոսք):

Ա՜յ քեզ բան: Անկասկած՝ սա Աստծո կարծիքը չէր: Քիչ առաջ մենք կարդացինք Նրա գնահատականը: Ի՞նչ տեղի ունեցավ այստեղ: Ինչպե՞ս միևնույն միջադեպը կարող է երկու տաբեր կարծիք առաջացնել: Սավուղն իսկապես հավատում էր, որ հնազանդվել էր Աստծուն: Ինչպե՜ս կարող էր նա այդպես մտածել: Հակոբոսն ասում է.

> «Բայց Խոսքը անո՛ղ եղեք և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 1.22

Երբ լսում ենք Աստծո Խոսքը և չենք կատարում այն, մենք խաբում ենք ինքներս մեզ: Ահա թե ինչպես կարող է ինչ-որ մեկը հավատալ, որ հնազանդ է, երբ իրականում անհնազանդության մեջ է: Այս հայտնությունը և՛ սարսափելի է, և՛ զգաստացնող: Խաբվածությունը քող է դնում սրտի վրա և թույլ չի տալիս, որ ճշմարտությունը ներս թափանցի: Որքան շատ է անհնազանդությունը, այնքան ավելի հաստ և անթափանց է դառնում մարդու սրտի քողը և այնքան ավելի դժվար է լինում հեռացնել այն:

Թույլ տվեք կրկնել որոշ կարևոր բաներ. առաջինը՝ Սավուղը չհակառակվեց և չմերժեց կատարել այն, ինչ հրամայված էր իրեն: Նա գնաց՝ կատարելու Աստծո հրամանը: Երկրորդը՝ նա սպանեց տասնյակ հազարավոր մարդկանց և խնայեց միայն մեկին: Նա սպանեց հազարավոր կենդանիների՝ խնայելով մի քանիսը: Նա, հավանաբար, կատարեց հրամանի 99 տոկոսը: Սակայն Աստված ապստամբություն համարեց նրա՝ գրեթե կատարյալ հնազանդությունը (տե՛ս Ա Թագ. 15.23):

Այսօր մենք կասեինք. «Ամեն ինչ լավ է, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց»: Միգուցե մենք նույնիսկ պաշտպանեինք Սավուղին՝

ասելով. «Ի վերջո նա կատարեց գրեթե ամեն ինչ: Երախտապա՛րտ եղեք այն բանի համար, որ նա արեց: Մի՞թե կարելի է մատնանշել հենց այն, ինչը նա չարեց: Նայե՛ք այն ամենին, ինչ նա արեց: Այդքան խիստ մի՛ եղեք խեղճ Սավուղի հանդեպ»:

Աստծո աչքերում մասնակի հնազանդությունը հավասար է Իր դեմ ապստամբելուն: Նման վարքը վկայում է Աստծո երկյուղի բացակայության մասին:

Մի անգամ ես Կանադայում էի և ծառայության էի պատրաստվում: Փառաբանության և երկրպագության ընթացքում Տիրոջ Հոգին այսպիսի հարց տվեց ինձ. «Գիտե՞ս, թե ինչ է կրոնի ոգին»:

Թեև գրել և քարոզել էի կրոնի ոգիների և այն մասին, թե ինչպես են նրանք գործում, ես անմիջապես հասկացա, որ իմ գիտելիքները սահմանափակ են: Ես սովորել եմ, որ Աստված հարցեր չի տալիս պատասխաններ ստանալու համար: Ես պատասխանեցի. «Ո՛չ, Տե՛ր, խնդրում եմ, ասա՛»:

Նա անմիջապես պատասխանեց. «Կրոնի ոգի ունեցող մարդն օգտագործում է Իմ Խոսքը՝ իր կամքը կատարելու համար»: Այլ խոսքերով՝ սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ մենք վերցնում ենք Տիրոջ ասած խոսքը և համապատասխանեցնում այն մեր ցանկություններին:

Ես ապշած էի այն իմաստությունից, որ Աստծո Հոգին հաղորդեց ինձ: Ես քննեցի Սավուղի իրավիճակն այս հայտնության լույսի ներքո: Ես տեսա, թե ինչպես էր Սավուղը կատարել այն, ինչ Աստված հրամայել էր իրեն, սակայն դա համապատասխանեցրել էր իր իսկ ցանկություններին: Նա կենտրոնացած չէր Աստծո վրա: Սավուղն օգուտ քաղելու և ժողովրդի առջև իր դիրքն ամրապնդելու հնարավորություն էր տեսել և օգտագործել այն: Անկասկած՝ նա չէր հնազանդվում Աստծո իշխանությանը և չէր դողում Նրա Խոսքից: Տիրոջ երկյուղը թույլ չի տա, որ մենք, հանուն անձնական շահերի, Աստծո հետ փոխզիջման գնանք: Այդ ժամանակ մենք կհնազանդվենք Աստծո Խոսքին անկախ այն բանից, թե ինչ գին պետք է վճարենք:

Ինչպիսի՞ հայելու մեջ եք նայում

Կրկի՛ն անդրադառնանք Հակոբոսի խոսքերին.

> «Բայց Խոսքը անո՛ղ եղեք և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով: Որովհետև եթե մեկը միայն Խոսքը լսող է և ոչ անող, նա նման է այն մարդուն, որ ուշադիր նայում է իր իսկական երեսին հայելու մեջ: Որովհետև նայելով՝ տեսավ իրեն և անցավ և շուտով մոռացավ, թե ինչպիսին էր»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 1.22-24

Հակոբոսն օգտագործում է այս օրինակը՝ նկարագրելու համար այն, ինչ կատարվում է մեր հոգում, երբ հնազանդ չենք լինում Հիսուսի իշխանությանը: Երբ մենք չենք դողում Աստծո Խոսքից և չենք հնազանդվում Նրան առանց որևէ պայմանի, ասես նայում ենք հայելու մեջ և հեռանում, իբրև չէինք էլ նայել, և կրկին վերադառնում, քանի որ մոռացել ենք, թե ինչպիսի տեսք ունենք: Մենք կարող ենք տեսնել, քանի դեռ հայելու առջև ենք, իսկ երբ հեռանում ենք, անմիջապես մոռանում ենք ամեն ինչ, ասես կույր լինենք:

Այժմ կարող ենք հասկանալ, թե ինչու են մարդիկ կարդում, լսում և նույնիսկ քարոզում Աստծո Խոսքը, բայց ապրում այնպես, կարծես՝ չգիտեն այն: Փաստորեն, նրանց կյանքն արմատական փոփոխության չի ենթարկվում: Սաղմոսերգուն նկարագրում է այն մարդկանց վիճակը, ովքեր հաճախում են Աստծո տուն, լսում Նրա Խոսքը, բայց չեն փոխվում: Նա ասում է. «…որովհետև նրանք չեն փոխվում և (անգլ.՝ դրա համար նրանք) Աստծուց չեն վախենում» (Սաղմ. 55.19):

Այս մարդիկ դավանում են, որ փրկված են, սակայն Աստծո զորությունը չի փոխում նրանց: Նրանք անսուրբ են, անշնորհակալ, չեն սիրում մարդկանց, անհնազանդ են և չներող: Սրա հետ մեկտեղ նրանք այնպիսի բնավորության գծեր են դրսևորում, որոնք ոչնչով չեն տարբերվում այն մարդկանցից, ովքեր երբեք չեն լսել Աստծո Խոսքը: Նրանք, հավանաբար, չեն ծխում, չեն խմում կամ չեն հայհոյում հեթանոսների պես, բայց նրանց դրդապատճառները նույնն են.

նրանք Աստծուն չճանաչող մարդկանց նման շահ սիրող են: Պողոսը նկարագրում է նրանց վիճակը՝ ասելով, որ նրանք անդադար լսում են, բայց այդպես էլ չեն կիրառում ճշմարտության գիտությունը (տե՛ս Բ Տիմոթ. 3.1-7,13):

Անապատում Իսրայելի զավակները կրեցին իրենց քողարկված սրտի հետևանքը: Նրանց սրտի քողը կոչվում էր խաբվածություն: Նրանք լսեցին Աստծո Խոսքը և տեսան Նրա մեծ զորությունը, սակայն չփոխվեցին: Նրանց հոգևոր աչքերը խավարեցին սուրբ երկյուղի պակասության պատճառով:

Առանց ճշմարիտ ապաշխարության այդ քողը հաստացավ, մինչև որ լիովին կուրացրեց նրանց: Այդ կուրությունն իր հերթին ձևավորեց նրանց անհատականությունը: Թեև իսրայելցիները շարունակում էին տոնել իրենց փրկությունը, բայց նրանք արդեն չէին հասկանում Աստծո նպատակները: Նրանք հեռացան և նույնիսկ վախեցան, երբ հայտնվեց Նրա փառավոր ներկայությունը: Նույնը կարող է կատարվել մեզ հետ, եթե ուշադրություն չդարձնենք Աստծո զգուշացումներին:

Պողոսն ասում է մեզ, թե ինչ տեղի կունենա, եթե մենք հնազանդվենք Հիսուսի իշխանությանը, երկյուղ ունենանք Նրա ներկայությունից և դողանք Նրա Խոսքից.

> «Բայց երբ որ դեպի Տերը կդառնան, այն քողը վեր կառնվի… Բայց մենք՝ բոլորս, բաց երեսով, Տիրոջ փառքն ինչպես հայելու մեջ տեսնելով՝ նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց»:
>
> — Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.16-18

Ինչպես Հակոբոսը, այնպես էլ Պողոսն օգտագործում է հայելու մեջ նայելու փոխաբերությունը: Սակայն մենք չենք նայում բնական պատկերի, այլ Աստծո փառքին, որը երևում է Հիսուս Քրիստոսի դեմքում (տե՛ս Բ Կորնթ. 4.6): Այս պատկերը հայտնվում է մեր սրտում, երբ մենք ոչ միայն *լսում ենք* Նրա Խոսքը, այլ նաև հնազանդվում նրան, որպեսզի *կատարենք* այն: Հակոբոսը հաստատում է սա.

> «Բայց նա, ով զգուշորեն քննում է անսխալ օրենքը՝ ազատության [օրենքը], և հավատարիմ է նրան և հարատևում է՝ այն քննելով, լինելով ոչ թե անուշադիր ունկնդիր, ով մոռանում է, այլ գործուն կատարող [ով հնազանդվում է], նա օրհնված կլինի իր կատարելով (իր հնազանդության կյանքի մեջ)»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 1.25, AMP

Ազատության կատարյալ օրենքը Հիսուսն է: Նա Աստծո կենդանի, հայտնված Խոսքն է: Հովհաննեսն ասում է մեզ. «Որովհետև Երեքն են, որ Երկնքում վկայում են՝ Հայրը և Բանը (կամ՝ Խոսքը) և Սուրբ Հոգին, և այս երեքը մի են» (Ա Հովհ. 5.7):

Երբ մենք ջանասիրաբար փնտրում ենք Հիսուսին, ուշադիր և հնազանդ ենք լինում այն խոսքին, որն ասվում է մեզ, մեր աչքերը առանց քողի են մնում: Այդ ժամանակ մենք կարող ենք ըմբռնել Նրա փառքը:

Հիշե՛ք՝ Նա ցանկանում է, որպեսզի մենք նայենք Իր փառքին: Նա ողբաց, երբ Իսրայելը աստվածային երկյուղի բացակայության պատճառով չկարողացավ կանգնել Իր փառավոր ներկայության մեջ: Միայն բաց սրտով մարդիկ կարող են նայել Նրան:

Նրա հայտնված Խոսքի հայելու մեջ նայելով Նրա փառքին՝ մենք Սուրբ Հոգու օգնությամբ փոխվում ենք՝ նմանվելով Նրա պատկերին: Փա՜ռք Աստծուն: Այժմ դուք կարող եք հասկանալ, թե ինչու է Եբրայեցիներին ուղղված թղթի հեղինակը գրում.

> «Նրա համար պետք է մեզ առավել ևս ականջ դնենք այն մեր լսած բաներին, որ միգուցե պակասվենք»:
>
> — ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 2.1

Յուրաքանչյուր հավատացյալի համար կա վերին կոչում՝ կերպարանակից լինել Հիսուս Քրիստոսի փառավոր պատկերին (տե՛ս Փիլիպ. 3.14, Հռոմ. 8.29): Բայց եթե մենք ջանք չթափենք Աստծո Խոսքին հնազանդվելու համար, ապա անպայման կշեղվենք այն ընթացքից, որ սահմանված է մեզ համար: Պատկերացրե՛ք, որ կապված աչքերով փորձում եք մեքենա վարել: Շարժիչը միացնելուց անմիջա-

պես հետո ձեր մեքենան դուրս կգա ճանապարհից: Եթե ձեր աչքերը կապված լինեն, դուք չեք կարողանա տեսնել, թե ուր եք գնում: Քանի դեռ մենք հնազանդվում ենք Աստծուն, մեր աչքերը բաց են:

Մեր ողջ էության առաջնորդող լույսը

Մենք փոխվում ենք այն պատկերի պես, որին նայում ենք: Եթե մեր հոգևոր աչքերը պատված են քողով, ապա Տիրոջ մասին մեր պատկերացումն աղավաղված է: Մեր երևակայության մեջ Նրա պատկերը նմանվում է եղծանված մարդու և ոչ թե անեղծ Աստծո, որը Նրա իրական պատկերն է: Այդ ժամանակ մենք քննում ենք Նրա ճանապարհներն այն մշակույթի աղոտ լույսով, որում ապրում ենք: Ահա թե ինչու Իսրայելը կարող էր զորավոր հրաշքներ տեսնել, բայց հետո վարվել այնպես, ինչպես այն ազգերը, որոնք չէին ճանաչում Տիրոջը: Հիսուսն ասաց.

> «Մարմնի ճրագն աչքն է: Արդ, թե որ քո աչքը պարզ լինի, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Բայց թե որ քո աչքը չար լինի, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Ուրեմն, եթե այն լույսը, որ քեզանում է, խավար է, ապա խավարը որքա՞ն ավելի»:
>
> — ՄԱՏԹԵՈՍ 6.22,23

Մեր մարմնի ճրագը աչքն է: Ճրագի փոխաբերությունը վերաբերում է ոչ միայն ֆիզիկական աչքերին, այլ նաև սրտի աչքերին (տե՛ս Եփես. 1.18): Մեր ամբողջ մարմինը հետևում է այդ ճրագի ըմբռնմանն ու հրահանգներին: Եթե մեր աչքերը նայում են Աստծո կենդանի Խոսքին (տե՛ս Եբր. 6.5), ապա մեր ողջ էությունը լցված կլինի Աստծո էության լույսով (տե՛ս Ա Հովհ. 1.5): Մենք շարունակ կերպարանակից ենք լինում այս ճշմարտության Լույսին: Այդպես մենք ապահով կլինենք և չենք շեղվի ճանապարհից:

Հիսուսը շարունակեց՝ ասելով, որ եթե մարդու աչքը նայում է չարին, ապա նրա ամբողջ էությունը լցված կլինի խավարով: Սա անհավատ մարդու խավարած սրտի նկարագիրն է:

Բայց ուշադրություն դարձրեք Նրա վերջին խոսքին. «Ուրեմն, եթե այն լույսը [այսինքն այն, թե ինչպես ես դու ընկալում Հիսուսին], որ քեզանում է, խավար է, ապա խավարը որքա՞ն ավելի» (Մատթ. 6.23): Հիսուսը սա չասաց անհավատների համար, այլ նրանց, ովքեր գիտեն Աստծո Խոսքը: Լույսն այն մարդկանց մեջ է, ովքեր գիտեն Աստծո Խոսքը: Հիսուսն ասաց, որ եթե մեր հասկացողությունը խավարած կամ քողարկված է սուրբ երկյուղի բացակայության պատճառով, ապա այդ խավարն ավելի մեծ կլինի, քան այն խավարը, որ պատում է ճշմարտությունը երբեք չլսած մարդուն (տե՛ս Հուդա 12,13, Ղուկ. 12.47,48):

Հիշե՛ք Աստծո ասած խոսքերն այն մարդկանց, ովքեր պնդում էին, որ ճանաչում են Նրան, սակայն չունեին Նրա երկյուղը. «…Քե՞զ ինչ, որ դու Իմ հրամանները պատմում ես և Իմ ուխտը բերանդ ես առնում: Եվ խրատն ատում ես և Իմ Խոսքը քո ետի կողմն ես գցում» (Սաղմ. 50.16,17): Այս մարդիկ դավանում են, որ հավատում են Նրա Խոսքին և նույնիսկ քարոզում են այն, բայց նրանց մեջ եղած լույսն իրականում թանձր խավար է: Նրանց աչքերը պատված են քողով, և նրանք այնպես են նայում Աստծուն, ասես Նա իրենց նման է՝ փոխարենը տեսնելու, թե իրականում Ով է Նա: Աստված ասում է. «Այս բաներն արիր դու, և Ես լուռ մնացի. կարծեցիր, թե Ես էլ քեզ նման եմ» (21-րդ խոսք):

«Գործե՛ք» ձեր փրկությունը

Պետրոսը քաջալերում է մեզ՝ ասելով, որ Աստծո կողմից «…ամենամեծ պատվական խոստումներն են տրված մեզ, որ նրանցով հաղորդակից լինենք աստվածային բնությանը՝ աշխարհի մեջ ցանկությունից եղած ապականությունից հեռու փախչելով» (Բ Պետր. 1.4): Հաղորդակից լինենք աստվածային բնությանը… ա՜յ քեզ խոստում…

Նա բացատրում է, որ այս խոստման իրականացումը և՛ պայմանական է, և՛ հարաճուն: Նա ասում է. «…որ եթե նրան մտիկ անեք, լա՛վ կանեք, ինչպես մի ճրագի, որ լույս է տալիս մութ տեղը, մինչև որ

ցերեկը լուսանա և լուսաբերը (անգլ.՝ առավոտյան աստղը) ծագի ձեր սրտում» (19-րդ խոսք): Պայմանը հետևյալն է. ուշադի՛ր եղեք ամենամեծ և պատվական խոստումներին: Իսկ զարգացումը տեղի է ունենում հետևյալ կերպ. Նրա փառքի լույսը կշատանա, երբ մենք դողանք և հնազանդվենք Նրան: Այն սկսում է արևածագի լույսի նման և շարունակում բարձրանալ փառքից՝ փառք, մինչև կեսօրվա արևի պես շողալը: Առակաց 4.18-ն ասում է. «Բայց արդարների ճանապարհը ծագող լույսի պես է, որ գնալով լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում»: Երբ գա կատարյալ օրը, մենք արեգակի պես հավիտյան կշողանք (տե՛ս Մատթ. 13.43): Մենք ոչ թե կարտացոլենք, այլ *կարչակենք* Նրա փառքը: Ալելուի՜ա:

Նրա հայտնված Խոսքի հայելու մեջ նայելով Տիրոջ փառքին՝ մենք «կերպարանակից ենք լինում [փոխվում ենք] Տիրոջ պատկերին փառքից դեպի փառք»: Այստեղ նկարագրվում է այն գործընթացը, որ Աստվածաշունչն անվանում է «գործել» մեր փրկությունը: Պողոսն այս մասին հատուկ հրահանգներ է տալիս փիլիպեցիներին: Կարդալով այդ հրահանգները՝ մտորե՛ք այն մասին, որ եթե Իսրայելն ուշադրությամբ հետևեր այս հրահանգներին, նրանք կենդանի կմնային և չէին մահանա անապատում:

> «Ուրեմն, ի՛մ սիրելինե՛ր, ինչպես ամեն ժամանակ հնազանդվեցիք ոչ միայն իմ ներկայությունում, այլ հիմա է՛լ ավելի՝ իմ բացակայությունում, ահո՛վ և դողալո՛վ գործեք ձեր անձերի փրկությունը»:
>
> — ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 2.12

Ես գիտեմ, որ Պողոսն այս նամակը ուղղել է փիլիպեցիներին, բայց այն ուղղված է նաև մեզ: Ամբողջ Աստվածաշունչը գրվել է Սուրբ Հոգու ներշնչմամբ, և այն որևէ մասնավոր մեկնություն չունի: Մենք այնպես պետք է կարդանք այս խոսքը, ասես Աստված այն անձամբ մեզ է ասում: Մինչև առաջ անցնելը, ևս մեկ անգամ կարդացե՛ք Փիլիպեցիների 2.12,13-ը:

Այս խոսքերը ցույց են տալիս, թե ինչպես է Աստծո երկյուղը զորացնում մեզ, որպեսզի հնազանդվենք Նրան ոչ միայն Նրա ներ-

կայության ժամանակ, այլ նաև, երբ Նրա ներկայությունը մեզ հետ չէ: Սուրբ գիրքը նկարագրում է Աստծո ներկայության երկու տարբեր տեսակ: Առաջինը՝ Նրա ամենագո ներկայությունն է, որը նշանակում է՝ Աստված ամենուր է: Դավիթն այսպես է նկարագրում սա. «Ո՞ւր գնամ Քո Հոգուց և Քո երեսից ո՞ւր փախչեմ: Եթե վերանամ Երկինք, Դու այնտեղ ես, և եթե դժոխքը փաթաթվեմ, ահա Դու այնտեղ ես» (Սաղմ. 139.7,8): Սա այն ներկայությունն է, որն, ըստ Աստծո խոստման, երբեք չի թողնի և չի լքի մեզ (տե՛ս Եբր. 13.5):

Երկրորդը՝ Աստծո դրսևորված ներկայությունն է: Այս դեպքում Նրա ներկայությունը մեզ համար իրական է դառնում ֆիզիկական աշխարհում: Հաճախ մենք զգում ենք Նրա սերը ծառայությունների ժամանակ: Զգում ենք Նրա ջերմությունը, երբ երկրպագում ենք Նրան: Զգում ենք Նրա զորությունն աղոթելու ժամանակ: Նման պահերին, երբ մեր աղոթքներն անմիջապես պատասխանվում են, երբ Նրա խոստումներն իրականանում են և վայելում ենք Նրա ուրախությունը, հեշտ է հնազանդվել Աստծուն: Բայց Աստծո երկյուղն ունեցող մարդը կհնազանդվի նույնիսկ դժվար պահերին, երբ Աստծո ներկայությունը չի քաջալերում նրան:

Երբ Աստծո երկյուղն անսասան է

Հիշե՛ք Հովսեփին՝ Աբրահամի ծոռին: Աստված Հովսեփին երազով ցույց տվեց, որ նա մեծ առաջնորդ է լինելու և նույնիսկ իշխելու է իր եղբայրների վրա: Բայց ի՞նչ կատարվեց խոստումը ստանալուց անմիջապես հետո: Եղբայրները, ում վրա Հովսեփը մեկ օր պետք է իշխեր, նախանձեցին և գցեցին նրան գուբը: Ընկնելով նման իրավիճակի մեջ՝ շատերն այսօր ապշած կհարցնեին. «Ինչպե՞ս Աստված կարող էր թույլ տալ դա»: Մի՞թե այդ երազը պարզապես Հովսեփին ծաղրելու համար էր: Նրանք անգամ կարող էին վիրավորվել Աստծուց: Նրանց վիրավորանքը սուրբ երկյուղի բացակայության հերթական դրսևորումն է: Սակայն Աստվածաշնչում ոչինչ գրված չէ այն մասին, որ Հովսեփը տրտնջում էր:

Եղբայրները Հովսեփին ստրկության վաճառեցին օտարականներին: Նա ավելի քան տասը տարի ծառայեց կռապաշտ Պետափրեսի տանը: Տասը տարի… պատկերացնո՞ւմ եք: Ամեն օր Աստծո տված երազը, հավանաբար, ավելի անիրականանալի և փուչ էր թվում: Այսօր մեզնից շատերը տասը տարի անց արդեն չէին վիճարկի Աստծո Խոսքը. այդ ընթացքում մենք պարզապես կհանձնվեինք: Սակայն Աստվածաշունչը կրկին ոչինչ չի ասում այն մասին, որ Հովսեփը տրտնջում էր: Նա չկորցրեց իր հույսը, չմոռացավ իր երազը և ոչ էլ հիասթափվեց: Նա ուներ Աստծո երկյուղը:

Ի տարբերություն Հովսեփի՝ Իսրայելի զավակները տրտնջացին և փնթփնթացին: Հովսեփը համբերատար սպասեց տասը տարի, իսկ իսրայելցիների համբերությունը սպառվեց մի քանի ամսից: Այսօր մեզնից շատերը տրտնջում են, երբ մեր աղոթքները չեն պատասխանվում մի քանի շաբաթվա ընթացքում: Համաձայնեք, որ Հովսեփը շատ էր տարբերվում մեզնից:

Հովսեփը մենակ էր հեթանոսական երկրում՝ հեռու այն ամենից, ինչ գիտեր և ինչ սիրում էր: Նա որևէ շփում չուներ հավատացյալների հետ: Չուներ եղբայր, որի հետ կարող էր կիսվել: Նրա տիրոջ կինը փորձում էր գայթակղել նրան: Պետափրեսի կինը, ով մետաքսե հագուստներ էր կրում և Եգիպտոսի լավագույն օծանելիքների բուրմունքն ուներ, ամեն օր խնդրում էր Հովսեփին, որ պառկեր իր հետ:

Ինձ դուր է գալիս, թե Հովսեփը ինչպիսի երկյուղ ուներ: Թեև նա դժվարություններ և հիասթափություն էր ունեցել, բայց մերժեց Պետափրեսի կնոջը: Եթե նա կորցներ իր աստվածային երկյուղը և վիրավորվեր Աստծուց, ապա, հավանաբար, ուժ չէր ունենա գայթակղությանը դիմակայելու: Նա կտրականապես մերժեց Պետափրեսի կնոջը. «…ինչպե՞ս գործեմ այս մեծ չարությունը և Աստծո դեմ մեղանչեմ» (Ծնն. 39.9):

Այսպիսով, Հովսեփը հայտնվեց Փարավոնի բանտում՝ Աստծուն հնազանդվելու պատճառով: Հասնելով այս վիճակին՝ քանի՞սը դեռևս կպահեին Աստծուն վստահելու և հնազանդվելու որոշումը: Շատերը կլցվեին դառնությամբ (տե՛ս Եբր. 12.15): Հովսեփը մնաց

բանտում ավելի քան երկու տարի: Սակայն մենք չենք տեսնում, որ նա տրտնջար կամ լցվեր դառնությամբ: Նույնիսկ բանտի խավարում և կապանքների մեջ Հովսեփը շարունակում էր վախենալ Աստծուց: Ոչ մի հիասթափություն չէր կարող հեռացնել նրան Աստծուց:

Ամենազորավորն այն է, որ այդ վշտի մեջ լինելով՝ Հովսեփը դեռևս ծառայում էր բանտում գտնվող մարդկանց: Դժվարությունների ժամանակ նա մխիթարում էր նրանց՝ մեկնելով երազները և պատմելով Եհովայի մասին:

Տրտունջը թույլ չի տալիս, որ փոխվենք

Հովսեփի սերունդը շատ էր տարբերվում նրանից: Նրանք հնազանդվում էին, երբ կատարվում էին իրենց ցանկությունները, և երբ Աստված դրսևորում էր Իր մեծ զորությունն իրենց օգտին: Երբ իսրայելցիները հուսալքված կամ թողնված էին զգում իրենց, նրանք անմիջապես անհնազանդ էին դառնում, ինչն արտահայտվում էր տրտունջով:

Այն մարդիկ, ովքեր վիրավորված են Աստծուց, սովորաբար այնքան էլ հիմար չեն, որ Նրան հակառակվեն: Փոխարենը նրանք հակառակվում են Նրա Խոսքին կամ առաջնորդներին: Ճիշտ է, Իսրայելի զավակները տրտնջում էին իրենց առաջնորդների դեմ, բայց Մովսեսն ասաց նրանց. «…ձեր տրտունջը մեր դեմ չէ, այլ՝ Տիրոջ դեմ» (Ելից 16.8):

Տրտունջը սպանում է: Այն ավելի շուտ կսպանի ձեզանում եղած Աստծո կյանքը, քան այլ բան: Տրտունջը միանշանակ ասում է Աստծուն. «Ինձ դուր չի գալիս այն, ինչ Դու անում ես իմ կյանքում, և եթե ես լինեի Քո փոխարեն, այլ կերպ կվարվեի»: Տրտունջը պարզապես անհնազանդություն է Աստծո իշխանության նկատմամբ: Այն ծայրաստիճան անհարգալից վերաբերմունք է, որն Աստված ատում է: Հովսեփը վախենում էր Աստծուց և երբեք չէր տրտնջում: Ահա թե ինչու է Տերը խրատում մեզ.

> «…Ահո՛վ և դողալո՛վ գործեք ձեր անձերի փրկությունը: Որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում կամենալն էլ, անելն էլ՝ Իր հա-

ճության պես: Ամեն բան գործեք առանց տրտնջանքի և վիճաբանություններիի»:

— ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 2.12-14

Աստված խստորեն զգուշացնում է մեզ՝ թույլ չտալ, որ տրտունջն արմատ գցի մեր սրտում: Հակառակ դեպքում մենք անպաշտպան կլինենք նրա հարձակումների դեմ: Տիրոջ երկյուղն այն զորությունն է մեզանում, որը չի թողնի՝ այդ կործանարար ուժը մոտենա մեզ: Առակաց գիրքը հաստատում է սա.

«Տիրոջ երկյուղը կենաց աղբյուր է մահվան որոգայթներից խույս տալու համար»:

— ԱՌԱԿԱՑ 14.27

Հովսեփն ապրում էր հոգևոր անապատում ավելի քան տասներկու տարի: Թվում էր, թե ըստ իր ցանկության ոչինչ չի լինում: Չկար ոչ մի բան, որ կարող էր զորացնել և քաջալերել նրան: Բայց կար մի աղբյուր, որից Հովսեփը խմում էր. այն իր սրտի խորքում էր: Այդ աղբյուրը տալիս էր այն զորությունը, որի կարիքը նա ուներ՝ դժվար և չոր ժամանակներում Աստծուն հնազանդվելու համար: Դա Աստծո երկյուղն էր:

Նա կարող էր խուսափել ատելության, վիրավորանքի, նախանձի, վրդովմունքի, զայրույթի և շնության ծուղակներից այդ աղբյուրի կենսատու ջրի շնորհիվ: Երբ մարդիկ ընկնում էին մահվան ծուղակի մեջ, Հովսեփը կարողանում էր խուսափել դրանից և ծառայել ուրիշներին նույնիսկ իր ամենադժվար պահերին:

Հովսեփն իմաստուն էր վարվում, որովհետև ուներ Աստծո երկյուղը: «Տիրոջ երկյուղն է իմաստության խրատը, և փառքի առջև խոնարհություն է գնում» (Առակ. 15.33): Տիրոջ երկյուղն ունեցող մարդիկ իմաստուն են: Դանիելը նշում է.

«Եվ իմաստունները պետք է փայլեն երկնքի հաստատության լույսի պես, և շատերին արդարության առաջնորդողները՝ աստղերի պես, հավիտյանս հավիտենից»:

— ԴԱՆԻԵԼ 12.3

Հովսեփի սիրտը վերջնականապես փորձվեց, երբ նա իր կյանքի ամենադժվար պահին հռչակեց Աստծո հավատարմությունը: Դրանից հետո երկար ժամանակ չանցավ, մինչև որ Հովսեփը փայլեց Եգիպտոսում իր իմաստության շնորհիվ: Նրա առաքինությունը չէր կարող չերևալ. այն երևաց ողջ այդ հեթանոսական երկրում:

Հետաքրքիր է, որ Հովսեփը բանտում հարգվեց՝ իր վարքի և իրեն շրջապատող մարդկանց հանդեպ ցուցաբերած լավ վերաբերմունքի շնորհիվ: Ծննդոց 40-ում գրված է, որ փարավոնի գլխավոր մատռվակն ու գլխավոր հացագործը նույնպես բանտարկված էին: Երկուսն էլ վատ երազ տեսան, և Հովսեփը մեկնեց դրանք: Նա հայտնեց մատռվակին երազի իմաստը.

> «…Սա է դրա մեկնությունը. երեք ուռը երեք օր է: Երեք օր հետո փարավոնը քո գլուխը կբարձրացնի և քեզ դարձյալ քո պաշտոնի վրա կդնի, և փարավոնի բաժակը նրա ձեռքը կտաս այն առաջվա սովորության պես, երբ որ նրա մատռվակն էիր»:
>
> — ԾՆՆԴՈՑ 40.12,13

Բայց հացագործի երազի մեկնությունը բարի չէր.

> «Եվ Հովսեփը պատասխանեց և ասաց. «Սա է դրա մեկնությունը. երեք սակառը երեք օր է: Երեք օր հետո փարավոնը քեզ վրայից վեր կառնի քո գլուխը և քեզ մի ծառից կկախի, և թռչունները քեզ վրայից կուտեն քո մարմինը»»:
>
> — ԾՆՆԴՈՑ 40.18,19

Եթե Հովսեփի սրտում թեկուզ մի փոքր տրտունջ լիներ, նա չէր ծառայի ո՛չ մատռվակին, ո՛չ էլ հացագործին: Եթե նա չծառայեր նրանց, նա կմնար բանտում մինչև իր կյանքի վերջը:

Իր կյանքի վերջին օրերին Հովսեփը միգուցե տրտնջար Աստծո թվացյալ անհավատարմության համար, եթե իրոք Աստծո խոստումը չկատարվեր Նրա երկյուղի բացակայության պատճառով: Բայց Աստված Իր հավատարմության շնորհիվ ազատեց Հովսեփին բանտի կապանքներից: Սահմանված ժամանակին փարավոնն անձամբ

գլխավոր մատռվակապետի խորհրդով կանչեց Հովսեփին՝ երազ մեկնելու համար: Եվ ողջ ազգն ազատվեց սովից, քանի որ մեկ մարդ՝ Հովսեփ անունով, վախենում էր Աստծուց:

Քսաներորդ դարի երկրորդ կեսին եկեղեցում բացակայում է Աստծո երկյուղը: Այդ իսկ պատճառով՝ մարդիկ նայում են մեզ նախատինքով և ոչ թե ինչպես փայլող աստղերի, ովքեր կարող են պատասխան լինել շատ կարիքավոր հասարակության համար: Մեր մեղքերի մասին հաճախ խոսվում է լրատվամիջոցներով, և այդ պատճառով մենք կորցրել ենք այն հարգանքը, որ հավատացյալները պետք է ունենան: Մենք չենք ցուցաբերել այն հավատարիմ և աստվածավախ հատկանիշները, որոնք ուներ Հովսեփը: Թող որ Աստված օգնի մեզ Իր շնորհքով:

Արձակելով Նրա փառքը

Հոբը ևս ծանր տառապանք կրեց: Նա նույնպես ցավոտ փորձության ենթարկվեց: Նա փորձեց հասկանալ իր տառապանքի պատճառը, բայց ընկավ հուսահատության մեջ: Նրա ընկերները եկան, որպեսզի խորհուրդ տային, բայց նրանց խոսքերը չօգնեցին գործին, այլ միայն ավելի շատ շփոթեցրին Հոբին: Նա իմաստություն էր փնտրում, բայց ապարդյուն: Աստված լուռ էր, երբ Հոբն ու իր ընկերներն անօգուտ փորձում էին հասկանալ Իր ճանապարհները: Աստված սպասում էր, մինչև նրանց կարծիքները սպառվեին: Այդ ժամանակ Նա Եղիուս անունով մի իմաստուն քարոզիչ ուղարկեց: Բայց դրանից հետո.

> «Այն ժամանակ Տերը պատասխանեց Հոբին փոթորկի միջից և ասաց. «Ո՞վ է դա, որ խորհուրդը նսեմացնում է անիմաստ խոսքերով: Մե՛կ գոտևորիր մեջքդ տղամարդու պես, և Ես քեզ հարցնեմ, ու դու Ինձ հասկացրու: Ո՞ւր էիր՝ Ես երկրի հիմունքը դնելիս: Իմացրո՛ւ Ինձ, եթե իմաստություն գիտես»»:
>
> — ՀՈԲ 38.1-4

Աստված այնքան է բացատրում, մինչև որ Հոբը ցնցվում է Աստծո հրաշալի իմաստությունից, հասկացողությունից և զորությունից: Նա համակվում է սուրբ երկյուղով և աղաղակում.

> «Գիտեմ, որ ամեն բան կարող ես, և Քո դիտավորությունը չի արգելվի: Ո՞վ է նա, որ խորհուրդը նսեմացնի անիմաստ խոսքերով: Իրավ, խոսել եմ, բայց չեմ հասկացել, ինձ համար անիմանալի են եղել, և ես չգիտեի… Ականջի լսելով ես լսել էի Քո մասին, բայց հիմա աչքս տեսնում է Քեզ: Այդ իսկ պատճառով նվաստանում եմ և զղջում հողի և մոխրի վրա»:
>
> — ՀՈԲ 42.2-6

Հոբը վախեցավ Աստծուց: Նա տեսավ Աստծուն և կերպարանափոխվեց: Նրա ֆիզիկական ցավն ու կորուստը չկրճատվեցին, բայց Աստծո երկյուղի ավելի մեծ զգացում ունեցավ: Իմաստությունը, որի կարիքը Հոբն ուներ, այդ երկյուղի մեջ էր: Ինչպես Հովսեփն էր ծառայում մարդկանց, այնպես էլ Հոբը սկսեց ծառայել նրանց.

> «Եվ Տերը դարձրեց Հոբի գերությունը, երբ որ նա իր ընկերների համար աղոթեց: Նաև Տերը կրկնապատիկ ավելացրեց Հոբի ամբողջ ստացվածքը: Եվ Հոբը մեռավ ծերացած և օրերից կշտացած»:
>
> — ՀՈԲ 42.10,17

Հոբը փայլեց ավելի մեծ իմաստությամբ և զորությամբ, քան երբևէ: Այսօր շատ մարդիկ շարունակում են պատասխաններ ստանալ կյանքի փորձառությունից: Մենք կարող ենք տեսնել, թե ինչպես է Աստված լրջորեն զգուշացնում մեզ.

> «Ամեն ինչ արեք առանց փնթփնթալու, բծախնդրության ու տրտնջալու [Աստծո դեմ] և վիճարկելու ու կասկածելու [իրար միջև]»:
>
> — ՓԻԼԻՊԵՅԻՆԵՐԻ 2.14, AMP

Ի՞նչն է մեզ կարողություն տալիս ապրել առանց այս կործանարար բաների. Աստծո երկյուղը: Երբ մենք վախենում ենք Աստծուց,

մեր սրտի վրա ոչ մի քող չի կարող լինել: Նայելով Նրա փառքին՝ մենք կերպարանակից ենք լինում այն պատկերին, որին նայում ենք:

> «Որ լինեք անբիծ և անարատ որդիներ Աստծո՝ առանց մեղադրանքի, այն կամակոր և ծռած ազգի մեջ, որոնց միջում երևում եք ինչպես լույս տվողներ աշխարհի մեջ՝ կյանքի Խոսքը պահելով…»:
>
> — ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 2.15,16

«Էմփլիֆայդ» Աստվածաշնչում այս խոսքն այսպես է թարգմանված.

> «Ում մեջ դուք երևում եք՝ ինչպես վառ լույսեր (ուժեղ փայլ արձակող աստղեր կամ փարոսներ) [խավար] աշխարհում»:
>
> — ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 2.15, AMP

Փա՜ռք Աստծուն հավիտյան: Մենք, որ վախենում ենք Աստծուց, շարունակ կերպարանակից ենք լինում Նրա պատկերին, մինչև որ շողում ենք վառ լույսերի պես այս խավար աշխարհում: Սա նկարագրում է այն հրաշալի փառքը, որ արձակելու է Նրա եկեղեցին այս վերջին օրերում:

Նախորդ գլխում մենք քննարկեցինք, թե ինչպես է հնարավոր այն աստիճան կերպարանափոխվել, որ մեղավորները մեր լույսով ընդունեն Քրիստոսին, քանի որ Աստծո փառքը շատ զորավոր կերպով կդրսևորվի մեր մեջ: Վերանայելով Եսայու ասածը՝ մենք պարզում ենք.

> «Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, որովհետև լույսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա: Որովհետև ահա խավարը ծածկել է երկիրը, և մառախուղը՝ ազգերը, բայց քեզ վրա ծագում է Տերը, և Նրա փառքը երևում է քեզ վրա: Եվ ման են գալիս ազգերը դեպի քո լույսը, և թագավորները՝ դեպի քեզ վրա ծագած պայծառությունը»:
>
> — ԵՍԱՅԻ 60.1-3

Աստված կդրսևորի Իր փառքը երկրի վրա: Նա արդեն ասել է, թե

ինչպես է անելու դա: «…Ես Իմ փառաց տունը պիտի փառավորեմ» (Եսայի 60.7): Նրա փառքի տունն Իր ժողովուրդն է: Նրա տաճարը նրանք են, ովքեր վախենում են Իրենից և սիրում Իրեն: Զաքարիան կանխավ խոսեց Տիրոջ փառքի մասին, որը դրսևորվելու էր Նրա ժողովրդի կյանքում: Նա ասաց.

> «Այսպես է ասում Զորաց Տերը. «Այն օրերը կբռնեն ազգերի ամեն լեզուներից տասը մարդ, այսինքն՝ կբռնեն մի հրեա մարդու քղանցքը՝ ասելով. «Գնանք ձեզ հետ, որովհետև լսել ենք, որ Աստված ձեզ հետ է»»:
>
> — ԶԱՔԱՐԻԱ 8.23

Զաքարիան չօգտագործեց մեր ժամանակակից տերմինաբանությունը: Այնպես որ, նա չէր կարող ասել, որ մարդիկ կբռնեն յուրաքանչյուր քրիստոնյայի քղանցքը: Նա տեսավ մեր օրերը և նկարագրեց այն իր բառապաշարով: Ամենացնցողն այն է, որ մենք արագորեն մոտենում ենք այդ օրերին: Ալելուի՜ա:

Վախենալ Աստծուց՝ նշանակում է հավատալ Նրան: Հավատալ Աստծուն՝ նշանակում է հնազանդվել Նրան:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՇՈ ՀԵՏ

«Տիրոջ մտերմությունը նրանց հետ է, որ վախենում են Նրանից, և Իր ուխտը սովորեցնում է նրանց»:

— ՍԱՂՄՈՍ 25.14

Այժմ կքննարկենք այն, ինչն, ըստ իս, Աստծո երկյուղով ապրելու ամենահետաքրքիր կողմն է: Սա յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի սրտի ցանկությունն է: Սա միակ բանն է, որ կարող է մշտապես բավականություն պատճառել մարդուն: Սա նաև արարչագործության դրդապատճառն է, փրկության նպատակը, Աստծո սրտի նպատակն ու գանձը, որ պահված է Իրենից վախեցողների համար: Որպես ներածություն՝ եկե՛ք կարդանք Առակաց գիրքը.

«Իմաստության սկիզբը Տիրոջ վախն է…»:

— ԱՌԱԿԱՑ 1.7

Ո՞ր իմաստության: Մի՞թե Սողոմոնը նկատի ունի գիտությունը: Ո՛չ, շատ գիտնականներ մեծարում են մարդուն և չունեն Աստծո երկյուղը: Մի՞թե այդ խոսքը վերաբերում է հասարակական և քաղաքական ձեռքբերումներին: Ո՛չ, քանի որ աշխարհի ճանապարհները հիմարություն են Աստծո համար: Մի՞թե խոսքը Սուրբ գրքի իմացության մասին է: Ո՛չ, թեև փարիսեցիներն օրենքի գիտակներ էին, բայց տհաճ էին Աստծուն: Պատասխանն Առակաց 2.5-ում է. «…հասկա-

նաս Տիրոջ երկյուղը, և Աստծո գիտությունը կգտնես»: Թո՛ւյլ տվեք ավելի պարզեցնել սա. դուք կմտերմանաք Աստծո հետ: Սաղմոսերգուն հաստատում է սա՝ ասելով.

> «Տիրոջ մտերմությունը նրանց հետ է, որ վախենում են Նրանից…»:
>
> — ՍԱՂՄՈՍ 25.14

Տիրոջ երկյուղն Աստծո հետ մտերիմ փոխհարաբերությունների սկիզբը կամ սկզբնակետն է: Մտերմությունը երկկողմանի փոխհարաբերություն է: Օրինակ՝ ես գիտեմ Միացյալ Նահանգների նախագահի *մասին:* Ես գիտեմ որոշ տեղեկություններ նրա ձեռքբերումների և քաղաքական դիրքորոշման *մասին*, բայց նրան չեմ *ճանաչում* և անձնական փոխհարաբերություն չունեմ նրա հետ: Իսկ նախագահի ընտանիքի անդամներն ու մտերիմները *ճանաչում* են Նրան: Եթե մենք նույն սենյակում լինեինք, ես անմիջապես կճանաչեի նախագահին, բայց նա՝ ո՛չ: Թեև ես Միացյալ Նահանգների քաղաքացի եմ և գիտեմ նրա մասին, բայց չէի կարող խոսել նրա հետ ընկերոջ պես: Նման վարքն իմ կողմից անպատշաճ և նույնիսկ անհարգալից կլիներ: Չնայած ես դեռ կլինեի նրա իրավասության և իշխանության ներքո՝ որպես նախագահի, և նրա պաշտպանության ներքո՝ որպես գերագույն հրամանատարի, բայց նրա իշխանությունը մեխանիկորեն մտերիմ փոխհարաբերություններ չէր ապահովի մեր միջև:

Եվս մեկ օրինակ՝ այսօր կան մարդիկ, ովքեր անչափ տարված են սպորտային կամ հոլիվուդյան աստղերով: Նրանց մասին խոսում են բոլոր ամերիկյան ընտանիքներում: Լրատվամիջոցները բացեիբաց տեղեկություններ են հայտնում նրանց անձնական կյանքի մասին հեռուստատեսությամբ, թերթերում ու ամսագրերում: Ես լսել եմ, թե ինչպես են երկրպագուները խոսում այդ մարդկանց մասին, ասես նրանց ընկերները լինեն: Ես նաև տեսել եմ, թե ինչպես են մարդիկ ապրումներ ունենում իրենց սիրելի աստղերի ամուսնական զույգերի խնդիրների պատճառով և թե ինչպես են նրանք տխրում, երբ իրենց սպորտային կամ հեռուստատեսային հերոսները մահանում են, ասես նրանք այդ մարդկանց ընտանիքի անդամը լինեն:

Եթե այս երկրպագուները փողոցում երբևէ հանդիպեին իրենց սիրելի աստղին, ապա նա նույնիսկ չէր ողջունի նրանց: Եթե երկրպագուները համարձակություն ունենային և մոտենային այդ աստղին, ապա կպարզեին, որ իրականում այդ անձնավորությունը շատ է տարբերվում այն պատկերից, որ իրենք ստեղծել են իրենց երևակայության մեջ: Աստղերի և երկրպագուների փոխհարաբերությունը միակողմանի է:

Իմ սիրտը տրտմում է, երբ տեսնում եմ նույն բանը եկեղեցում: Ես լսում եմ, թե ինչպես են շատ հավատացյալներ խոսում Աստծո մասին, ասես Նա իրենց ծանոթը լինի, որի հետ իրենց ազատ ժամանակն են անցկացնում: Նրանք անփութորեն ասում են, որ Աստված իրենց ցույց է տվել այս կամ այն բանը: Ասում են, թե ինչքան են ցանկանում զգալ Նրա ներկայությունը և ինչքան ծարավ են Նրա օծությանը: Հաճախ նորահավատ կամ դեռևս չհաստատված մարդիկ իրենց ոչ լիարժեք են զգում նման մարդկանց հետ շփվելիս, ովքեր ներկայանում են որպես «Աստծո մտերիմ ընկերներ»: Սակայն շատ կարճ ժամանակում կարելի է լսել, թե ինչպես են նման մարդիկ հակասում իրենք իրենց: Այդ մարդկանց խոսքերից ակնհայտ կդառնա, որ նրանց փոխհարաբերությունն Աստծո հետ ոչնչով չի տարբերվում երկրպագուի և աստղի փոխհարաբերությունից: Իրենց վարքից և խոսքերից ակնհայտ կդառնա, որ իրենք չունեն նման փոխհարաբերություն Աստծո հետ:

Տերն ասաց, որ մենք չենք կարող մտերմորեն ճանաչել Իրեն, մինչև երկյուղ չունենանք Իրենից: Այլ խոսքերով՝ Աստծո հետ մտերիմ շփում և ընկերություն չի սկսվի, քանի դեռ Տիրոջ երկյուղը հաստատված չէ մեր սրտում:

Մենք կարող ենք հաճախել ծառայությունների, առաջ գնալ, երբ քարոզիչները կոչ են անում մոտենալ բեմին, ամեն օր կարդալ Աստվածաշունչը և հաճախել աղոթքի բոլոր ծառայություններին: Կարող ենք շատ ոգեշնչող ուղերձներ քարոզել, շատ աշխատել՝ ծառայելով Աստծուն տարիներ շարունակ, և նույնիսկ արժանանալ հավատակիցների հարգանքին ու հիացմունքին: Բայց եթե երկյուղ չունենք

Աստծուց, մենք ընդամենը բարձրանում ենք կրոնական աստիճաններով: Ի՞նչ տարբերություն կա այդ կրոնական ծեսերի և աստղերին երկրպագելու միջև:

Ես գիտեմ մարդկանց, ովքեր կարող են ավելի շատ պատմել իրենց սիրելի աստղի մասին, քան իրենց կյանքի: Նրանք լցված են սենսացիաներով, փաստերով և մանրամասներով: Այս երկրպագուները կարծես հետևում են ուրիշների կյանքին փակ պատուհանից: Նրանք տեսնում են, թե ինչ տեղի ունեցավ, *որտեղ* և *երբ*, բայց չգիտեն, թե *ինչու*:

Աստծո ընկերը

Աստվածաշնչում Աստված ընկերներ անվանեց երկու մարդու: Այնպես չէ, որ Նա չուներ այլ ընկերներ, պարզապես Աստված հատկապես նշեց այս երկուսին՝ մտածված պատմելով նրանց ընկերության մասին: Ես համոզված եմ, որ Նա դա արեց, որպեսզի մենք օրինակ վերցնենք նրանցից և հասկանանք, թե ինչ է Աստված փնտրում ընկերոջ մեջ:

Առաջինը՝ Աբրահամն էր: Նա կոչվեց Աստծո ընկեր (տե՛ս Բ Մնաց. 20.7): Երբ Աբրահամը յոթանասունհինգ տարեկան էր, Աստված ուխտ կնքեց նրա հետ: Այդ ուխտի միջոցով Նա Աբրահամին խոստացավ տալ որդի, որը նրա սրտի փափագն էր: Մինչև այդ որդու ծնվելը, Աբրահամը մի քանի բավականին լուրջ սխալներ գործեց:

Սակայն ամբողջ այդ ընթացքում Աբրահամը հավատում և հնազանդվում էր Աստծուն և լիովին համոզված էր, որ Աստված կատարելու էր ամենն, ինչ խոստացել էր:

Երբ Աբրահամն իննսունհինը տարեկան էր, նրա կինը հղիացավ, և ծնվեց խոստացված որդին՝ Իսահակը: Կարո՞ղ եք պատկերացնել Աբրահամի և Սառայի ուրախությունն այդքան տարիներ սպասելուց հետո: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպես էին նրանք սիրում իրենց խոստացված որդուն:

Փորձությունը

Ժամանակն անցնում էր, և հայրն ավելի էր մտերմանում որդու հետ: Աբրահամի համար տղայի կյանքն իր կյանքից ավելի թանկ էր: Նրա մեծ հարստությունը ոչինչ էր այն ուրախության համեմատ, որ որդին պատճառում էր իրեն: Աստծուց տրված թանկագին որդին ամենակարևորն էր Աբրահամի կյանքում:

> «Եվ եղավ, որ այն բաներից հետո Աստված փորձեց Աբրահամին և ասաց նրան. «Աբրահա՛մ», և նա ասաց. «Ահա՛ ես»: Եվ Նա ասաց. «Ա՛ռ քո սիրած մեկ հատիկ որդուն՝ Իսահակին, և Մորիայի երկիրը գնա և այնտեղ նրան ողջակեզ արա այն սարերից մեկի վրա, որ Ես քեզ կասեմ»»:
>
> — ԾՆՆԴՈՑ 22.1,2

Կարո՞ղ եք պատկերացնել Աբրահամի զարմանքը, երբ նա լսեց այդ խոսքերը: Նա երբեք չէր պատկերացնի, որ Աստված նման բան կխնդրեր իրենից: Նա ցնցված էր: Հայրը և որդին անչափ մտերիմ էին: Այս անգին երիտասարդին այդքան տարիներ սպասելուց հետո Աստված խնդրեց ավելին, քան Աբրահամի կյանքը. Նա խնդրեց նրա սիրտը: Աբրահամը չէր հասկանում այս ամենի իմաստը:

Բայց նա գիտեր, որ Աստված չի սխալվում: Նա չէր կարող մերժել այն, ինչ Աստված պարզ ասել էր իրեն: Ուխտի մարդու համար կար միայն երկու ընտրություն՝ հնազանդվել կամ խզել ուխտը: Այս հավատքի մարդը նույնիսկ չէր մտածում ուխտը խզելու մասին, քանի որ նա աստվածային երկյուղ ուներ:

Մենք գիտենք, որ դա փորձություն էր, բայց Աբրահամը չգիտեր այդ մասին: Մենք չգիտենք, թե երբ է Աստված փորձում մեզ, քանի դեռ չենք անցնում այդ փորձությունը: Միգուցե հնարավոր է խաբել համալսարանական քննության ժամանակ, բայց ոչ ոք չի կարող խարդախությամբ անցնել Աստծո տված փորձությունը: Եթե մենք չենք սովորել կամ չենք կատարել մեր տնային աշխատանքը՝ այսինքն՝

սրբել մեր սրտերը և մեր ձեռքերը, մենք չենք կարողանա անցնել Աստծո փորձությունները, անկախ այն բանից, թե որքան խելացի ենք:

Եթե Աբրահամի ժառանգներն իմանային այն ամենի վերջը, ինչ Աստված անում էր անապատում՝ Սինա սարի ստորոտում, նրանք այլ կերպ կարձագանքեին: Աբրահամի սրտում կար այնպիսի մի բան, որ նրա ժառանգները չունեին:

Մեկ անգամ Աստված խնդրեց ինձ՝ թողնել մի բան, որն, իմ կարծիքով, Նա էր տվել: Ինձ համար այն ամեն ինչից կարևոր էր: Ես ցանկանում էի դա տարիներ շարունակ: Ես պետք է աշխատեի շատ հայտնի մի ավետարանչի հետ, ում ջերմորեն սիրում էի:

Ես և կինս առաջարկ ստացանք աշխատել այդ մարդու և նրա կնոջ աշխատակազմում՝ որպես նրանց օգնականներ: Ես սիրում էի այդ մարդուն: Բացի այդ, ես դա համարում էի որպես Աստծուց տրված հնարավորություն՝ կատարելու այն երազանքը, որ Աստված դրել էր իմ սրտում. իմ երազանքն էր՝ քարոզել Ավետարանը ազգերին:

Ես անգամ չէի մտածում, որ Աստված կպատվիրեր մերժել այդ առաջարկը, բայց Նա պարզ ասաց, որ ես հենց այդպես վարվեի: Այդ առաջարկը մերժելուց հետո ես օրերով լաց էի լինում: Գիտեի, որ հնազանդվել եմ Աստծուն, սակայն չէի հասկանում, թե *ինչու* Նա այդպիսի բան խնդրեց ինձնից: Այդ շփոթված վիճակից մեկ շաբաթ անց ես վերջապես աղաղակեցի. «Աստվա՜ծ, ինչո՞ւ պատվիրեցիր ինձ՝ դնել սա զոհասեղանի վրա»:

Նա անմիջապես պատասխանեց. «Որպեսզի տեսնեի՝ արդյոք դու ծառայում ես Ի՞նձ, թե՞ այդ երազանքին»:

Միայն այդ ժամանակ ես հասկացա, որ փորձվում էի: Փորձության մեջ ես չէի գիտակցում, թե ինչ էր Նա անում: Միակ բանը, որ թույլ չտվեց ինձ գնալ իմ ճանապարհով, Աստծո հանդեպ ունեցած սերն էր և երկյուղը:

Աբրահամն ապացուցեց, որ վախենում է Աստծուց

Ինձ դուր է գալիս, թե ինչպես Աբրահամն արձագանքեց Աստծո դժվար հրամանին: «Եվ Աբրահամն առավոտ կանուխ վեր կացավ…» (Ծննդ. 22.3): Նա չքննարկեց դա Սառայի հետ: Նա չտատանվեց: Նա որոշեց հնազանդվել Աստծուն: Կար ընդամենը երկու բան, որ Աբրահամը Իսահակից ավելի կարևոր էր համարում. դա իր սերն էր և երկյուղը Աստծո հանդեպ: Նա սիրում էր Աստծուն և վախենում Նրանից ամեն ինչից առավել:

Աստված պատվիրեց Աբրահամին երեք օրով ճանապարհ ընկնել: Այդպես նա ժամանակ ուներ մտորել այն բանի շուրջ, ինչ պատրաստվում էր անել: Եթե նրա սրտում թեկուզ մի փոքր անվճռականություն լիներ, ապա այդ ժամանակահատվածում կբացահայտվեր դա: Երբ նա և Իսահակը հասան երկրպագության որոշված վայրը, Աբրահամը զոհասեղան կառուցեց, կապեց իր որդուն, պառկեցրեց նրան զոհասեղանին և վերցրեց դանակը: Նա պահեց դանակն Իսահակի կոկորդին:

Այդ պահին Աստված խոսեց հրեշտակի միջոցով և կանգնեցրեց նրան հնազանդության քայլն անելիս. «Ձեռքդ տղային մի՛ դիպցրու, և նրան մի բան մի՛ արա, որովհետև հիմա իմացա, որ դու Աստծուց վախենում ես. քո մեկ հատիկ որդուն Ինձնից չխնայեցիր» (Ծննդ. 22.12):

Աբրահամն ապացուցեց, որ երկյուղ ունի Աստծուց՝ Նրա ցանկություններն իր ցանկություններից ավելի կարևոր համարելով: Աստված գիտեր, որ եթե Աբրահամն անցներ այս փորձությունը, նա կանցներ բոլոր փորձությունները:

> «Եվ Աբրահամն իր աչքերը վեր բարձրացրեց և նայեց, և ահա մի խոյ կար ետևի մացառներում՝ եղջյուրներով բռնված: Եվ Աբրահամը գնաց և խոյն առավ և նրան իր որդու փոխարեն ողջակեզ մատուցեց: Եվ Աբրահամն այն տեղի անունը Եհովա-Իրե կոչեց (անգլ.՝ Տերը կմատակարարի)…»:
>
> — ԾՆՆԴՈՑ 22.13,14

Փորձության ավարտի հետ մեկտեղ Աստված հայտնեց Աբրահամին Իր էության մի նոր կողմ: Նա հայտնեց Իրեն որպես Եհովա-Իրե: Աստծո բնավորության այս հայտնությունը նշանակում է «Եհովան տեսնում է»: Ադամից հետո ոչ ոք չէր ճանաչում Նրան այս կերպ: Աստված հայտնեց Իր սիրտն այս խոնարհ մարդուն, ով դարձավ Իր ընկերը: Տերն Իր սրտից և բնավորությունից այնպիսի բաներ էր հայտնում Աբրահամին, որոնք դեռ «գաղտնիք» էին մյուսների համար:

Բայց կարևոր է հասկանալ, որ Աստված չհայտնեց Իրեն Աբրահամին՝ որպես «Եհովան տեսնում է», սուրբ երկյուղի փորձությունն անցնելուց առաջ: Շատերը պնդում են, որ գիտեն Աստծո էության բազմաթիվ կողմերը և հատկությունները, սակայն նրանք երբեք չեն հնազանդվել Աստծուն դժվար պահերին: Նրանք կարող են երգել «Եհովա-Իրեն Իմ Աստվածն է, Ով հոգ է տանում ինձ համար…»: Բայց սա ընդամենը երգ է, քանի դեռ Նա չի հայտնվել որպես Եհովա-Իրե հնազանդության շնորհիվ: Քանի դեռ մենք չենք անցել Աստծո հնազանդության փորձությունը, նման արտահայտությունները բխում են մեր մտքից, այլ ոչ թե սրտից: Բայց այն պահին, երբ մենք խիզախում ենք մտնել հնազանդության դժվար անապատը, Աստված հայտնում է Իրեն որպես Եհովա-Իրե և որպես ընկեր (տե՛ս Եսայի 35.1,2):

> «Մեր հայր Աբրահամը չէ՞ որ գործերով արդարացավ՝ իր որդի Իսահակին պատարագ անելով: Տեսնո՞ւմ եք, որ հավատքը նրա գործերի հետ միասին գործեց, և այդ գործերով հավատքը կատարյալ եղավ: Եվ կատարվեց Գրքի խոսքը, որ ասում է. «Եվ Աբրահամը հավատաց Աստծուն, և արդարություն համարվեց նրա համար, և Աստծո բարեկամ կոչվեց»»:
>
> — ՀԱԿՈԲՈՍ 2.21-23

Ուշադրություն դարձրեք, որ Աբրահամն արդարացավ իր կատարած գործերի համապատասխան: Նրա հնազանդությունն իր սուրբ երկյուղի և հավատքի ապացույցն էր:

Վախենալ Աստծուց՝ նշանակում է *հավատալ* Աստծուն: *Հավատալ* Աստծուն՝ նշանակում է *հնազանդվել* Նրան: Հակոբոսը շեշտեց, որ Աբրահամը դարձավ Աստծո ընկերը՝ Աստծո երկյուղով լցված հնազանդության արդյունքում: Աստված պարզ ասում է.

> «Ընկերությունը Տիրոջ հետ պահված է նրանց համար, ովքեր վախենում են Նրանից: Նրանց հետ Նա կիսվում է Իր ուխտի գաղտնիքներով»:
>
> — ՍԱՂՄՈՍ 25.14, NLT

Սրանից պարզ չի կարելի ասել: Կրկի՛ն կարդացեք այս խոսքը Սաղմոս 25-ից և թաքցրե՛ք այն ձեր սրտում: Ինչո՞ւ են այսօր այդքան տարածված մակերեսային քարոզները: Ինչո՞ւ քրիստոնյաները չունեն մեր նախահայրերի լրջությունը: Սա եկեղեցում տարածվող հիվանդություն է, որը կոչվում է «Տիրոջ երկյուղի բացակայություն»:

Աստված ասաց, որ հայտնում է Իր գաղտնիքները նրանց, ովքեր երկյուղ ունեն Իրենից: Ո՞ւմ հետ եք դուք կիսում ձեր սրտի գաղտնիքները. պարզապես ծանոթների՞, թե՞ մտերիմ մարդկանց: Իհարկե՝ մտերիմների: Ապահով չէ գաղտնիքներ պատմել ուղղակի ծանոթ մարդկանց: Աստված էլ է նույն կերպ վարվում: Նա կիսվում է միայն նրանց հետ, ովքեր երկյուղ ունեն Իրենից:

Նա, ով գիտեր Աստծո ճանապարհները

Աստված Իր ընկերն է անվանում ևս մեկ մարդու՝ Մովսեսին: Նա մարդ էր, ով գիտեր Աստծո ճանապարհները: Ելից 33.11-ն ասում է. «Եվ Տերը խոսում էր Մովսեսի հետ դեմ առ դեմ, ինչպես մի մարդ իր բարեկամի հետ կխոսի…»: Մովսեսի երեսին քող չկար, քանի որ նա երկյուղ ուներ Աստծուց: Այդ իսկ պատճառով կարող էր խոսել Աստծո հետ մտերմորեն: Արդյունքը հետևյալն էր.

> «Նա իմացրեց Իր ճանապարհները Մովսեսին, Իսրայելի որդիներին՝ Իր գործերը»:
>
> — ՍԱՂՄՈՍ 103.7

Քանի որ իսրայելցիները չէին վախենում Աստծուց, նրանք չունեցան մտերիմ փոխհարաբերություն Նրա հետ: Նրա ճանապարհները և Նրա ուխտի գաղտնիքները չհայտնվեցին իսրայելցիներին: Նրանք ճանաչում էին Աստծուն այնպես, ինչպես ես՝ Միացյալ Նահանգների նախագահին: Ես գիտեմ նախագահին նրա ձեռքբերումների, արժեքավոր ներդրումների և գործերի շնորհիվ: Իսրայելը չէր հասկանում Աստծո դրդապատճառները, մտադրությունները և սրտի ցանկությունները:

Իսրայելը հասկանում էր Աստծո բնավորությունն այնպես, ինչպես այն դրսևորվում էր ֆիզիկական աշխարհում: Նրանք հաճախ ճիշտ չէին ընկալում Նրա մեթոդները՝ կարծելով, որ Աստված «խլում» կամ «պահում» է իրենցից այն, ինչ նրանք ցանկանում են, բայց չեն ստանում: Անհնար է ճանաչել Աստծուն՝ պարզապես հետևելով այն բաներին, որոնք Նա անում է ֆիզիկական աշխարհում: Նույն կերպ մարդիկ ճանաչում են աստղերին՝ լրատվամիջոցներով: Աստված Հոգի է, և Նրա ճանապարհները թաքնված են ֆիզիկական աշխարհի իմաստությունից (տե՛ս Հովհ. 4.24, Ա Կորնթ. 2.6-8): Աստված կհայտնի Իրեն միայն նրանց, ովքեր վախենում են Իրենից: Իսրայելի զավակները չէին ընկալում այն իմաստությունն ու հասկացողությունը, որ թաքնված էր Նրա գործերի ետևում: Այդ իսկ պատճառով, նրանք մշտապես շեղվում էին Աստծուց:

Ունենալ Տիրոջ երկյուղ՝ նշանակում է ճանաչել Աստծո ճանապարհները

Մովսեսը շատ հաճախ գիտեր, թե *ինչու* է Աստված անում այս կամ այն բանը: Աստվածաշունչը այս ներընմբռնողականությունը նկարագրում է որպես *խոհեմություն*: Փաստորեն, Մովսեսը հաճախ գիտեր, թե *ինչ* է անելու Աստված, քանի որ Նա նախապես հայտնում էր նրան Իր գործերը: Աստվածաշունչը սա անվանում է *իմաստություն*: Սաղմոսերգուն ասում է.

> «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է. բարի խոհեմություն է ամենի համար, որ անում են նրան…»:
>
> — ՍԱՂՄՈՍ 111.10

Երկյուղ ունենալ Աստծուց՝ նշանակում է հնազանդվել Նրան, նույնիսկ այն ժամանակ, երբ թվում է, թե իրավիճակը մեր օգտին չէ: Երբ մենք երկյուղ ունենք Նրանից, Նա մեզ *ընկեր* է անվանում և հայտնում Իր սրտի մտադրություններն ու ցանկությունները: Մենք սկսում ենք ճանաչել Նրան ոչ թե Նրա գործերով, այլ Նրա ճանապարհներով: Ուշադի՛ր կարդացեք, թե ինչ ասաց Հիսուսն Իր աշակերտներին Վերջին ընթրիքի ժամանակ՝ Հուդայի գնալուց հետո.

> «Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ: Այլևս ծառա չեմ ասում ձեզ, որովհետև ծառան չգիտի, թե իր տերն ինչ է գործում, բայց ձեզ բարեկամ ասացի, որովհետև ամեն ինչ, որ լսեցի Իմ Հորից, իմացրի ձեզ»:
>
> — ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.14,15

Ես լսել եմ, թե ինչպես է մեջբերվում այս խոսքը՝ որպես Տիրոջ հետ ընկերության խոստում: Սակայն այսպիսի ընկերության համար շատ հստակ պայման է դրված: Այն հետևյալն է.

> «…Եթե անեք՝ ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ»:
>
> — ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.14

Սաղմոսերգուի խոսքերով՝ Աստծո հետ այսպիսի ընկերությունը «նրանց հետ է, որ վախենում են Նրանից», նրանց հետ, ովքեր առանց պայմանների հնազանդվում են Նրա Խոսքին:

Տերն ասաց. «Այլևս ծառա չեմ ասում ձեզ»: Նրա աշակերտները երեքուկես տարում ապացուցել էին իրենց հավատարմությունը՝ որպես ծառա: Նրանք մնացին Հիսուսի հետ, երբ մյուս աշակերտները լքեցին Նրան (տե՛ս Հովհ. 6.66): Կար ժամանակ, երբ Հիսուսը վերաբերվում էր նրանց որպես ծառաների: Այդ ժամանակ Նա փորձում էր նրանց, ինչպես Աբրահամին և Մովսեսին: Եվ ահա սկսվեց մի նոր

քննություն. այժմ Նրա խոսքերը մարգարեական էին: Քննությունը բարեհաջող կավարտվեր, եթե աշակերտների հնազանդությունը անսասան լիներ վերնատանը: Այդ ժամանակ կհաստատվեր աստվածային կարգ ու կանոնը: Վերնատանը կպարզվեր, թե ինչ կա յուրաքանչյուրի սրտում:

Հիսուսն ասաց. «…որովհետև ծառան չգիտի, թե իր տերն ինչ է գործում, բայց ձեզ բարեկամ ասացի, որովհետև ամեն ինչ, որ լսեցի Իմ Հորից, իմացրի ձեզ [Իմ ընկերներին, ովքեր վախենում են Աստծուց]»: Աստծո ընկերները կունենան այս խոհեմության պարգևը, որովհետև Տերն Իր ծրագրերով կիսվում է Իր ընկերների հետ:

Աստված Իր ծրագրերով կիսվում է Իր ընկերների հետ

Աստված Իր սրտի դրդապատճառներով և մտադրություններով կիսվում է Իր ընկերների հետ, քննարկում Իր ծրագրերը նրանց հետ և նույնիսկ՝ վստահում նրանց:

> «…Արդյո՞ք կծածկեմ Աբրահամից Իմ ծրագիրը»:
>
> — ԾՆՆԴՈՑ 18.17, NLT

Տերը սա ասաց Աբրահամի ներկայությամբ այն սպասավոր հրեշտակներին, ովքեր Իր հետ էին: Հետո Աստված դիմեց Աբրահամին:

> «Այնպես որ, Տերն ասաց Աբրահամին. «Ես լսել եմ, որ Սոդոմի և Գոմորի ժողովուրդը ծայրաստիճան չար են և որ ամեն ինչ, որ նրանք անում են, անբարո է: Ես իջնելու եմ այնտեղ, որպեսզի տեսնեմ, թե արդյոք այդ զեկույցները ճիշտ են: Այդ ժամանակ Ես կիմանամ»»:
>
> — ԾՆՆԴՈՑ 18.20,21, NLT

Տերը հայտնեց Աբրահամին, որ վերահաս դատաստանն արդեն Սոդոմի և Գոմորի վրա է: Աբրահամը բարեխոսեց և խնդրեց արդարների կյանքի համար.

«Աբրահամը մոտեցավ Նրան և ասաց. «Մի՞թե Դու կկործանես անմեղին, ինչպես որ մեղավորին: Ենթադրենք՝ Դու հիսուն անմեղ մարդ գտնես քաղաքում, արդյո՞ք կկործանես այն և չես խնայի՝ հանուն նրանց: Չէ՞ որ Դու նման բան չես անի, չես կործանի անմեղին մեղավորի հետ… Չէ՞ որ դու այդպես չես վարվի: Մի՞թե երկրի Դատավորը չպիտի անի այն, ինչ ճիշտ է»: Եվ Տերը պատասխանեց. «Եթե Ես հիսուն անմեղ մարդ գտնեմ Սոդոմում, Ես կխնայեմ ամբողջ քաղաքը՝ հանուն նրանց»»:

— ԾՆՆԴՈՑ 18.23-26, NLT

Աբրահամը խնդրեց, որպեսզի Աստված խնայի մարդկանց կյանքը դատաստանից: Միայն ընկերն է այսպես խոսում թագավորի կամ դատավորի հետ, ով դատաստան անելու իշխանություն ունի: Եթե նման խնդրանքը լիներ ծառայից կամ ենթակայից, այն անհարգալից կլիներ: Բայց Աբրահամը, փաստորեն, բանակցում էր Աստծո հետ: Նա համոզեց Աստծուն՝ արդարների թիվը իջեցնելով հիսունից՝ տասի, և Աստված շարունակեց փնտրել տասը արդար մարդ Սոդոմում և Գոմորում: Պարզվեց, որ ժողովրդի չարության մասին զեկույցը ճիշտ էր, որովհետև այդ երկու քաղաքներում նույնիսկ տասը արդար մարդ չգտնվեց: Տերը գտավ միայն Ղովտին՝ Աբրահամի զարմիկին, և նրա ընտանիքին:

Աստված ցույց տվեց Իր ընկեր Աբրահամին այն, ինչ պատրաստվում էր անել: Նա վստահեց Իր ծրագիրն Աբրահամին, քանի որ նա Աստծո երկյուղն ուներ: Երկյուղի շնորհիվ նա դարձել էր Աստծո վստահելի անձնավորությունը:

Ապականված՝ աշխարհի կողմից

Միգուցե Ղովտը կարող էր արդար համարվել, բայց նա նույնպես աշխարհիկ էր: Նա նույնքան անտեղյակ էր վերահաս դատաստանի մասին, որքան այդ չար քաղաքների բնակիչները: Թեև Ղովտն արդար էր, սակայն չգիտեր, թե ինչ պետք է տեղի ունենար: Ղովտը խորհրդանշում է մարմնավոր քրիստոնյաներին, ովքեր չունեն Աստծո այրող, սուրբ երկյուղը: Նրանց շփումը Տիրոջ հետ շատ չի տարբերվում աստղերի և երկրպագուների փոխհարաբերությունից:

Սա երևում է նրանից, թե որտեղ էր Ղովտը որոշել բնակվել (Սոդոմի և Գոմորի բնակիչների հետ), ինչպիսի կին էր ընտրել, ինչպես նաև նրա մովաբացի ու ամոնացի սերնդից, որ ծնվեց արյունապղծության հետևանքով: Ղովտն ընտրել էր այն, ինչը սկզբում լավագույնն էր թվում իր համար, բայց վերջում պարզվեց, որ իմաստուն ընտրություն չէր կատարել:

Ի տարբերություն Ղովտի՝ Աբրահամն ընտրեց ապրել առանձնացված կյանքով: Նա փնտրում էր այն քաղաքը, որի Ճարտարապետը և Արարիչն Աստված է: Ղովտն ընտրեց ոչ թե առանձնացված կյանքը, այլ՝ անաստված մարդկանց հետ շփումը: Այդ մարդկանց անաստված ճանապարհները մշտապես ազդում էին Ղովտի արդարության վրա: Ղովտի անաստված կյանքով ապրելը, ի վերջո, տվեց իր պտուղը և՛ նրա, և՛ նրա ժառանգների կյանքում: Ղովտի չափանիշները թելադրվում էին ոչ թե Աստծո, այլ իրեն շրջապատող հասարակության կողմից: Ղովտը հայտնվեց այնպիսի վիճակում, «…որ անօրենների անառակ վարքից ձանձրացել էր, որովհետև այն արդարը, նրանց մեջ բնակվելով, տեսնելով և լսելով, օրեցօր իր արդար հոգին տանջվում էր նրանց անօրեն գործերով» (Բ Պետր. 2.7,8):

Դատաստանի օրը գողի նման կգար Ղովտի վրա, եթե չլինեին Աստծո ողորմությունն ու Աբրահամի ընկերությունը Աստծո հետ: Աստված ուղարկեց պատգամաբեր հրեշտակների, ինչպես որ ուղարկելու է պատգամաբեր մարգարեների, որպեսզի մարմնավոր քրիստոնյաներին զգուշացնի վերահաս դատաստանի մասին:

Շտապելով փախչել գալիք դատաստանից՝ Ղովտի կինը որոշեց ետ նայել: Նրան զգուշացրել էին, որ ետ չնայի, երբ Տերը կործանում էր չարիքով լի քաղաքները: Բայց աշխարհի ազդեցությունն ավելի ուժեղ էր Ղովտի կնոջ վրա, քան Տիրոջ երկյուղը: Ահա թե ինչու է Հիսուսը զգուշացնում Նոր կտակարանի հավատացյալներին. «Հիշե՛ք Ղովտի կնոջը» (Ղուկ. 17.32):

Աբրահամը երկյուղ ուներ Աստծուց: Նա Աստծո ընկերն էր: Ղովտի երկյուղը համեմատած Աբրահամի երկյուղի հետ՝ ոչինչ էր: Նրա կյանքում եղած Տիրոջ երկյուղն այնքան էր, որ նա կարողացավ

փախչել դատաստանից: Բայց Դավթի հետ գնացողները չկարողացան խուսափել դատաստանից:

Հետագայում Դավթը ցույց տվեց, որ չի ճանաչում ո՛չ Աստծուն, ո՛չ Նրա ճանապարհները: Հակոբոսը խստորեն դիմում է հավատացյալներին՝ ասելով.

> «Շնացողնե՛ր, չգիտե՞ք, որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ: Արդ, ով որ կարողանա աշխարհին բարեկամ լինել, իր անձն Աստծուն թշնամի կանի»:
>
> ՀԱԿՈԲՈՍ 4.4

Դուք չեք կարող սիրել աշխարհը և միաժամանակ լինել Աստծո ընկերը: Հակոբոսը նկարագրում է այն հավատացյալի վիճակը, ով դեռ ձգտում է շփվել աշխարհի հետ, ինչը շնություն և թշնամություն է Աստծո դեմ: Սողոմոնն ասում է.

> «Սրտի մաքրություն սիրողին, որ շնորհք ունի իր շրթունքի վրա, թագավորը բարեկամ է»:
>
> — ԱՌԱԿԱՑ 22.11

Միայն սրտով մաքուր մարդիկ են դառնում Աստծո ընկերները: Մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. *«Ի՞նչն է մաքրում իմ սիրտը: Իմ սե՞րն Աստծո հանդեպ»:* Այո՛, սերն Աստծո առջև մաքրվելու ցանկություն է արթնացնում, բայց միայն դա չէ, որ մաքրում է սիրտը: Մենք կարող ենք ասել, որ ջերմորեն սիրում ենք Աստծուն, բայց դրա հետ մեկտեղ դեռևս շարունակում ենք սիրել աշխարհը: Միլիոնավոր մարդիկ եկեղեցում այս ծուղակի մեջ են: Այդ ի՞նչ ուժ է, որ պահում է մեզ սրբության մեջ: Այս հարցին Պողոսը պատասխանում է պարզ և կոնկրետ.

> «Արդ, այսպիսի խոստումներ ունենալով, սիրելինե՛ր, մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով»:
>
> Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 7.1

Ճշմարիտ սրբությունը կամ պղծությունից մաքրվելը հասունանում կամ կատարյալ է դառնում Աստծո երկյուղով: «…Տիրոջ վախով մարդը՝ կհեռանա չարից» (Առակ. 16.6):

Բայց կրկի՛ն նայեք Բ Կորնթացիների 7.1-ի սկիզբը. «Արդ, այսպիսի խոստումներ ունենալով…»: Ինչպիսի՞ խոստումներ: Այդ խոստումները գրված են նախորդ խոսքերում: Եկե՛ք կարդանք դրանք.

> ««…Որովհետև դուք կենդանի Աստծո տաճարն եք, ինչպես Աստված ասաց, թե նրանցում կբնակվեմ և նրանցում ման կգամ և նրանց Աստված կլինեմ, և նրանք՝ Իմ ժողովուրդը: Նրա համար նրանց միջից դո՛ւրս գնացեք և բաժանվե՛ք,– ասում է Տերը,– և պիղծ բաների մի՛ դիպչեք, և Ես կընդունեմ ձեզ, և ձեզ Հայր կլինեմ, և դուք Ինձ որդիներ և աղջիկներ կլինեք»,– ասում է Ամենակարող Տերը»:
>
> — Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 6.16-18

Ահա թե ինչպես Աստված անապատում նկարագրեց Իսրայելի զավակների հետ բնակվելու Իր ցանկությունը: Նա ասաց. «…Ես եմ Նրանց Տեր Աստվածը, որ Եգիպտոսի երկրից հանեցի նրանց, որ նրանց մեջ բնակվեմ…» (Ելից 29.46): Եվ կրկին. «Եվ ձեր մեջ ման կգամ, և ձեզ համար Աստված կլինեմ, և դուք Ինձ համար ժողովուրդ կլինեք» (Ղևտ. 26.12): Այնուամենայնիվ, Նա նույն Աստվածն է և չի բնակվի պղծված կամ անսուրբ տաճարում:

Եկե՛ք հասկանանք այս ճշմարտությունների ամբողջական իմաստը մեր ժամանակների համար: Աստված ուրվագծում է մեզ հետ կնքած Իր ուխտի պայմանները կամ պահանջները, որպեսզի կարողանանք բնակվել Նրա փառքի մեջ: Մենք պետք է դուրս գանք աշխարհի համակարգից և առանձնանանք: Սա Աստծո երկյուղի և Նրա շնորհքի համատեղ աշխատանքն է: Ահա թե ինչու է Պողոսը Կորնթացիների 6-րդ գլուխը սկսում. «…դուք Աստծո շնորհքը զուր տեղը չընդունեք» (Բ Կորնթ. 6.1):

Մեկ այլ նամակում Պողոսն ավելի է պարզեցնում այս հարցը՝ խստորեն հորդորելով մեզ՝ ձգտել սրբության, այլապես՝ մենք չենք տեսնի Աստծուն:

«Հետևե՛ք… սրբության, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի: Զգո՛ւյշ կացեք, որ մեկը ետ մնացող չլինի Աստծո շնորհքից…»:

— ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12.14,15

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը խոսում է Աստծո շնորհքը զուր տեղն ընդունելու մասին: Մենք կարող ենք կորցնել այն: Նա շարունակում է՝ նկարագրելով, թե ինչի շնորհիվ է շնորհքը գործուն և պտղաբեր մնում մեր կյանքում. «Պի՛նդ բռնենք այն շնորհքը, որով պաշտում ենք հաճությամբ Աստծուն՝ ահով և երկյուղածությամբ» (28-րդ խոսք): Աստծո երկյուղը թույլ չի տալիս, որպեսզի մենք զուր տեղն ընդունենք Նրա շնորհքը: Այն հեռու է պահում մեզ աշխարհի հետ կապեր ունենալու ցանկությունից: Աստծո շնորհքն Աստծո երկյուղի հետ միասին սրբացնում կամ մաքրում է մեր սիրտը: Աստված խոստանում է, որ եթե մենք մաքրենք մեզ աշխարհի ապականությունից, Նա կբնակվի մեր մեջ Իր փառքով: Ալելուի՜ա:

Սուրբ երկյուղն Աստծուն պակիս է փառք,
պատիվ, երկյուղածություն, գոհություն,
փառաբանություն և մեծարանք,
որոնց Նա արժանի է:

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ՍՈՒՐԲ ԵՐԿՅՈՒՂԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Բոլոր իսաքի վախճանը լսենք. Աստծուց վախեցի՛ր և Նրա պատվիրանները պահի՛ր, որովհետև սա է ամեն բան մարդու համար»:

— ԺՈՂՈՎՈՂ 12.13

Մենք քննարկեցինք Տիրոջ երկյուղը: Սակայն հազիվ թե կարողանայինք ամբողջովին լուսաբանել այս հարցը: Տիրոջ երկյուղն այնպիսի թեմա է, որը չի կարող ամբողջովին բացահայտվել անկախ այն բանից, թե քանի գիրք է գրվել այդ մասին: Այս հայտնությունը շարունակական է: Այդպես է նաև Աստծո սիրո դեպքում: Առակաց 23.17-ն (NKJV) ասում է. «…եղի՛ր նախանձավոր Տիրոջ վախի համար ամեն օր»: Մենք չենք կարող Տիրոջ երկյուղի կրակը չափազանց շատ փափագել: Քանի որ անհնարին է ամբողջովին և մանրամասնորեն խոսել Տիրոջ երկյուղի մասին: Այն անգամ բարդ է սահմանել: Այն չափազանց ընդարձակ թեմա է, ինչպես և Աստծո սիրո զորությունը: Այն սահմանումը, որ ես առաջարկում եմ, մասնակի է և ցույց է տալիս ընդամենը Տիրոջ երկյուղի սկիզբը, քանի որ անհնար է բառերով նկարագրել այն, ինչ ներքուստ կերպարանափոխում է մարդու սիրտը: Ամբողջ հավիտենության ընթացքում մենք կաճենք Աստծո գիտության մեջ, և դրա հետ մեկտեղ կընդարձակվի նաև Նրա սուրբ սիրո և Նրա հանդեպ մեր սուրբ երկյուղի հայտնությունը:

Մարդու վախը հակառակ է Տիրոջ երկյուղին: Մարդու վախը որոգայթի մեջ է գցում (տե՛ս Առակ. 29.25):

Մենք մի փոքր քննարկեցինք այս «անսուրբ երկյուղը», քանի որ այն կապված է Տիրոջ երկյուղն ընկալելու հետ: Հաճախ ինչ-որ բան հասկանալու համար նախապես ուսումնասիրում ենք, թե ինչ չէ այն: Այս լույսի ներքո ես կսահմանեմ մարդու վախը:

Վախենալ մարդուց նշանակում է զգալ տագնապ, անհանգստություն, սարսափ, կասկածամտություն կամ երկչոտություն մարդկանց հանդեպ: Վախով բռնված մարդիկ կապրեն մշտապես զբաղված կյանքով, մշտապես կթաքնվեն վիրավորանքից կամ նախատինքից, շարունակ կխուսափեն մերժվելուց և ընդդիմանալուց: Նրանք այնքան են մտածում ինքնապաշտպանության մասին, որ շուտով անարդյունավետ են դառնում Աստծուն ծառայելիս: Վախենալով, թե ինչ կարող է անել մարդը՝ նրանք չեն տալիս Աստծուն այն, ինչին Նա արժանի է:

Աստծո երկյուղը բնութագրվում, բայց չի սահմանափակվում Նրա հանդեպ հարգանք և երկյուղածություն տածելով, քանի որ մեզ պատվիրված է դողալ Նրա ներկայությունից: Սուրբ երկյուղն Աստծուն տալիս է փառք, պատիվ, երկյուղածություն, գոհություն, փառաբանություն և մեծարանք, որոնց Նա արժանի է (ուշադրություն դարձրեք, որ Նա ոչ թե այս ամենին արժանի է, որովհետև մենք ենք այդպես կարծում, այլ Նա իսկապես արժանի է այս ամենին):

Աստված մեր սրտում և կյանքում գրավում է այս գերիշխող դիրքը, երբ մենք Նրա ցանկություններն ավելի արժեքավոր ենք համարում, քան մերը՝ ատելով այն, ինչ Նա է ատում և սիրելով այն, ինչ Նա է սիրում, դողալով Նրա ներկայությունից և Խոսքից:

Լսե՛ք սա և մտորե՛ք սրա շուրջ.

Դուք կծառայեք նրան, ումից վախենում եք

Եթե դուք վախենում եք Աստծուց, կծառայեք Նրան: Եթե դուք վախենում եք մարդուց, կծառայեք մարդուն: Դո՛ւք պետք է ընտրեք:

Այժմ դուք կարող եք հասկանալ Սողոմոնին, ով և՛ հաջողություններ, և՛ դժվարություններ տեսնելուց հետո կարող էր ասել.

«Բոլոր խոսքի վախճանը լսենք. Աստծուց վախեցի՛ր և Նրա պատվիրանները պահի՛ր, որովհետև սա է ամեն բան մարդու համար»:

— ԺՈՂՈՎՈՂ 12.13

Սողոմոնը ձգտում էր իմաստության իր ողջ կյանքի ընթացքում: Եվ նա ստացավ իմաստություն, որը նրան մեծ հաջողություն բերեց: Սակայն ծերության տարիներն անցան տառապանքի և անհանգստության մեջ: Տիրոջ երկյուղը մարեց նրա սրտում և նա այլևս չէր հնազանդվում Աստծո պատվիրաններին: Նա ամուսնացավ օտարազգի կանանց հետ և ծառայեց նրանց աստվածներին:

Իր կյանքի վերջում նա ետ նայեց և երկար մտորումներից հետո գրեց Ժողովող գիրքը: Այս գրքում Սողոմոնը քննում է առանց Աստծո երկյուղի կյանքը և ասում, որ ամեն բան ունայն է:

Այս գրքի վերջում նա հանգում է հետևյալ եզրակացությանը. կյանքի էությունն Աստծուց վախենալը և Նրա պատվիրանները պահելն է:

Տիրոջ երկյուղի օրհնությունները

Ես կոչ եմ անում ձեզ կարդալ ամբողջ Աստվածաշունչը և համաբարբառի օգնությամբ գտնել յուրաքանչյուր խոսք, որը կապված է Աստծո երկյուղի հետ: Դո՛ւրս գրեք այդ խոսքերը, որպեսզի հետագայում անդրադառնաք դրանց: Անձամբ ես դուրս եմ գրել ավելի, քան հիսուն համակարգչային էջ: Ես գտա շատ խոստումներ նրանց համար, ովքեր երկյուղ ունեն Տիրոջից: Թո՛ւյլ տվեք կիսվել դրանցից մի քանիսով:

Տիրոջ երկյուղը՝

Պատրաստում է մեր սիրտը պատասխան ստանալու համար:

«Նա, որ Իր մարմնի օրերում աղոթք և աղաչանք սաստիկ աղաղակով և արտասուքով մատուցում էր Նրան, որ կարող էր ազատել Նրան մահից, և լսվեց Իր *բարեպաշտության* (անգլ.՝ *աստվածավախության*) համար»:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5.7

Առատությամբ պարգևում է Աստծո մեծ բարությունը:

«Քանի՜ մեծ է Քո բարությունը, որ պահեցիր Քեզնից *վախեցողների* համար, և որ անում ես Քեզ հուսացողներին՝ մարդկանց որդիների առջև»:

— ՍԱՂՄՈՍ 31.19

Խոստանում է հրեշտակային պաշտպանություն:

«Տիրոջ հրեշտակը բանակ է շինում Նրանից *վախեցողների* չորս կողմով և փրկում է նրանց»:

— ՍԱՂՄՈՍ 34.7

Անընդհատ պահում է Աստծո ուշադրության կենտրոնում:

«Ահա Տիրոջ աչքը Նրանից *վախեցողների* վրա է և նրանց վրա, որ Նրա ողորմությանն են սպասում»:

— ՍԱՂՄՈՍ 33.18

Տալիս է այն ամենը, ինչ անհրաժեշտ է:

«*Վախեցե՛ք* Տիրոջից, ո՛վ Նրա սրբեր, որովհետև Նրանից *վախեցողների* համար պակասություն չկա»:

— ՍԱՂՄՈՍ 34.9

Մեծ ողորմություն է պարունակում:

«Այլ որքան որ բարձր է երկինքը երկրից, այնքան զորավոր է Նրա գութը Իրենից *վախեցողների* համար»:

— ՍԱՂՄՈՍ 103.11

Կերակուր է մատակարարում:

«Կերակուր տվեց Իրենից *վախեցողներին.* Նա հավիտյան հիշում է Իր ուխտը»:

— ՍԱՂՄՈՍ 111. 5

Պաշտպանություն է խոստանում:

«Ո՛վ Տիրոջից *վախեցողներ,* հուսացե՛ք Տիրոջը. նրանց օգնությունը և վահանը Նա է»:

— ՍԱՂՄՈՍ 115.11

Կատարում է մեր ցանկությունները և ազատում չարիքից:

«Իրենից *վախեցողների* կամքն անում է Նա և նրանց աղաղակը լսում և նրանց փրկում է»:

— ՍԱՂՄՈՍ 145.19

Տալիս է իմաստություն, հանճար և սովորեցնում է կառավարել ժամանակը:

«Իմաստության սկիզբը Տիրոջ *երկյուղն* է և Ամենասուրբին ճանաչելը՝ հանճար: Որովհետև քո օրերն Ինձանով կշատանան, և քո կյանքի տարիները կավելանան»:

— ԱՌԱԿԱՑ 9.10,11

Մեր վստահությունն է, և պաշտպանությունը՝ մահից:

«Տիրոջ *վախի* մեջ զորեղ վստահություն կա, և Նրա որդիների համար ապավեն պիտի լինի: Տիրոջ *երկյուղը* կենաց աղբյուր է՝ մահվան որոգայթներից խույս տալու համար»:

— ԱՌԱԿԱՑ 14.26,27

Խաղաղացնում է միտքը:

«Լավ է քիչը Տիրոջ *երկյուղով,* քան թե մեծ գանձը՝ խռովությունով»:

— ԱՌԱԿԱՑ 15.16

Կատարյալ բավականություն է պատճառում:

«Տիրոջ *երկյուղը* դեպի կյանք է տանում, և մարդը նրանով կուշտ կպառկի՝ առանց չարիքի հանդիպելու»:

— ԱՌԱԿԱՑ 19.23

Տալիս է հարստություն, պատիվ և կյանք:

«Խոնարհության և Տիրոջ *երկյուղի* վարձքն է՝ հարստություն և պատիվ և կյանք»:

— ԱՌԱԿԱՑ 22.4

Կպահի մեզ ճիշտ ուղու վրա:

«Եվ Ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ետ չդառնամ նրանցից՝ սրանց բարություն անելուց, և Իմ *երկյուղը* կդնեմ նրանց սրտերում, որ Ինձնից չհեռանան»:

— ԵՐԵՄԻԱ 32.40

Ապահով տուն է կառուցում:

«Եվ եղավ, որ մանկաբարձներն Աստծուց *վախենում* էին, և Նա նրանց համար տներ շինեց»:

— ԵԼԻՑ 1.21

Տալիս է հստակություն և առաջնորդություն:

«Ո՞վ է այն մարդը, որ *վախենում* է Տիրոջից: Ահա կսովորեցնի նրան այն ճանապարհը, որ ընտրել է»:

— ՍԱՂՄՈՍ 25.12

Թույլ է տալիս վայելել մեր աշխատանքի պտուղը և ունենալ լեցուն ու արժանապատիվ կյանք:

«Որքա՜ն երջանիկ են նրանք, ովքեր *վախենում* են Տիրոջից, բոլորը, ովքեր հետևում են Նրա ճանապարհներին: Դու կվայելես քո աշխատանքի պտուղը: Որքա՜ն երջանիկ կլինես: Որքա՜ն հարուստ կլինի քո կյանքը: Քո կինը կլինի պտղաբեր որթի նման, որ ծաղկում է քո տանը:

Եվ նայի՛ր քո բոլոր երեխաներին: Ահա նրանք նստած են քո սեղանի շուրջը, այնպես առողջ և կյանքով լցված, ինչպես մատղաշ ձիթենու ծառերը: Սա է Տիրոջ վարձատրությունը նրանց համար, ովքեր *վախենում* են Իրենից»:

— ՍԱՂՄՈՍ 128.1-4, NLT

Պատրաստում է հաջողակ առաջնորդներ:

«Եվ դու ամբողջ ժողովրդից կարող մարդիկ՝ Աստծուց *վախեցող,* հավատարիմ, ագահությունն ատող մարդիկ ընտրիր և հազարապետներ, հարյուրապետներ, հիսնապետներ և տասնապետներ դիր նրանց վրա»:

— ԵԼԻՑ 18.21

«Իսրայելի Աստված ասաց, Իսրայելի Վեմը խոսեց ինձ հետ, թե մարդկանց վրա իշխողը թող արդար լինի, Աստծո *երկյուղով* իշխի»:

— Բ ԹԱԳԱՎՈՐԱՑ 23.3

Ահա մի քանի խոստում նրանց համար, ովքեր երկյուղ ունեն Աստծուց: Խոստումներն ավելի շատ են, ուստի կոչ եմ անում ձեզ՝ գտնել դրանք Աստծո Խոսքը կարդալու և ուսումնասիրելու ժամանակ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Աստծո երկյուղը պետք է վառվի մեր սրտում՝ անկախ այն բանից, թե որքան ժամանակ է անցել մեր փրկությունից: Իրականում այն՝ փրկությունը ստանալու գլխավոր գործոնն է:

Պողոսը հայտարարում է. «…ովքեր ձեզանում աստվածավախ են, ձեզ ուղարկվեց այս փրկության խոսքը» (Գործք 13.26):

Առանց այս սուրբ երկյուղի մենք չենք զգա, որ փրկվելու կարիք ունենք:

Անկախ այն բանից, թե ինչ հոգևոր ընթացք եք անցել, ես քաջալերում եմ ձեզ՝ աղոթել ինձ հետ: Եթե դուք անցյալում չեք դավանել Հիսուսին որպես Տեր և չեք հնազանդվել Նրան, ապա ժամանակն է ձեր կյանքը Նրան հանձնել: Դուք արդեն լսեցիք Խոսքը, և ձեր սրտում հավատք բարձրացավ: Եթե Սուրբ Հոգուց հանդիմանություն զգացիք և պատրաստ եք դարձի գալ աշխարհից ու մեղքից և լիովին տրվել Նրան, ապա հիմա է ժամանակը: Ժամանակն է որոշում կայացնել՝ ամբողջովին Նրա իշխանությանը հնազանդվելու: Ժամանակն է այդ որոշումը հաստատել աղոթքով:

«Երկնային Հա՛յր, Հիսուսի անունով, ես խոնարհեցնում եմ ինձ և գալիս եմ Քեզ մոտ՝ Քո ողորմությունն ու շնորհքը փնտրելու համար: Ես լսեցի Քո Խոսքը, և այժմ իմ սրտում վառվում է Քեզ սիրելու, ճանաչելու և Քո երկյուղն ունենալու ցանկությունը: Խնդրո՛ւմ եմ, նե՛ր ինձ, որ մինչև Քեզ մոտ գալը ապրել եմ անարգ կյանքով: Ես ապաշխարում եմ այն անարգանքի և կեղծավորության համար, որոնցով ապրել եմ:

Ես գալիս եմ Քեզ մոտ, Հիսո՛ւս, որպես իմ Փրկչի և Տիրոջ: Դու իմ Տերն ես, և ես իմ կյանքն ամբողջովին Քեզ եմ տալիս: Լցրո՛ւ ինձ Քո սիրով և սուրբ երկյուղով: Ես ցանկանում եմ ճանաչել Քեզ ավելի

մտերմորեն, քան երբևէ ճանաչել եմ ինչ-որ մեկին: Ես գիտակցում եմ, որ Քո Սուրբ Հոգու կարիքն ունեմ և կախված եմ Նրանից: Խնդրո՛ւմ եմ, լցրո՛ւ ինձ Սուրբ Հոգով հիմա՛:

Տե՛ր, Դու Քո Խոսքում ասում ես, որ եթե ես դառնամ դեպի Քեզ ամբողջ իմ սրտով, ապա Սուրբ Հոգին կհայտնի ինձ Քո ճշմարիտ պատկերը և բնավորությունը, և ես կփոխվեմ փառքից՝ փառք: Ես խնդրում եմ Քո երեսը, ինչպես Մովսեսն էր խնդրում: Այս ծածուկ վայրում ես կփոխվեմ:

Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ Քեզ այն առատ ողորմության և շնորհքի համար, որ դրսևորել ես իմ կյանքում: Ես պալիս եմ Քեզ ամբողջ փառքը, պատիվը և գոհությունը այն ամենի համար, ինչ արդեն արել ես և դեռ պատրաստվում ես անել այժմ և հավիտյան, ամե՛ն»:

> «Եվ Նրան, որ կարող է անարատ պահել ձեզ և անկեղծ կանգնեցնել Իր փառքի առջև անբիծ ցնծությունով, այն մեկ իմաստուն Աստծուն և մեր Փրկչին փառք և մեծություն, զորություն և իշխանություն և՛ հիմա, և՛ ամեն հավիտյաններում, ամե՛ն»:
>
> ՀՈՒԴԱ 24,25

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ԱՍՏՑՈՒՆ ՄՏԵՐՄՈՐԵՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

Այս գիրքը, որ ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի **«Տիրոջ երկյուղը» դասընթացի** մի մասն է: **Կարդալով այս գիրքը և օգտագործելով հավելյալ ուսումնական նյութերը, որոնք հասանելի են կցված «DVD» սկավառակների միջոցով և առցանց, դուք կկարողանաք ուսումնասիրել այս դինամիկ և կյանք փոխող դասընթացի բոլոր մասերը**: Ամբողջ դասընթացը պատշաճ կերպով ուսումնասիրելու դեպքում, ձեր քրիստոնեական ընթացքն ավելի զորացված և հագեցած կդառնա, և դուք կկարողանաք ավելին անել Աստծո համար:

Ամբողջական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

«Տիրոջ երկյուղը» գիրք
Այս դասընթացի միակ տպագրված մասը՝ այս գիրքն է, որն այժմ ձեր ձեռքում է: Գրքի էլեկտրոնային տարբերակն առկա է նաև կցված «DVD» սկավառակ 1-ում՝ «eBook» և «PDF» ձևաչափերով:

«Տիրոջ երկյուղը» «DVD» սկավառակների հավաքածու
Կցված «DVD» սկավառակների հավաքածուն պարունակում է դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով (բոլոր նյութերը նույնպես կարելի է անվճար ներբեռնել առցանց):

«Տիրոջ երկյուղը» սերտողության և ամենօրյա ընթերցանության ձեռնարկ
Առկա է «DVD» սկավառակ 1-ում՝ «eBook» և «PDF» ձևաչափերով:

«Տիրոջ երկյուղը» աուդիո գիրք
«Տիրոջ երկյուղը» գրքի բոլոր 14 գլուխները, ընթերցված հայերենով, առկա են «DVD» սկավառակ 1-ում («MP3» ձևաչափով):

«Տիրոջ երկյուղը» տեսադասընթացներ
Բոլոր 8 դասերն առկա են «DVD» սկավառակներ 1 և 2-ում: Այս դասերը կարելի է նաև անվճար ներբեռնել առցանց:

«Տիրոջ երկյուղը» տեսադասընթացները՝ աուդիո տարբերակով
Բոլոր 8 դասերը՝ «MP3» ձևաչափով, առկա են «DVD» սկավառակ 1-ում:

«Երբ արթնանում են կին առյուծները» գիրք
Առկա է «DVD» սկավառակ 1-ում՝ «eBook» և «PDF» ձևաչափերով:

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ԱՍՏՑՈՒՆ ՄՏԵՐՄՈՐԵՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

Լրացուցիչ տեղեկություն
«Տիրոջ երկյուղը» դասընթացի վերաբերյալ.

«MP3» աուդիո ֆայլերը կարելի է բեռնել ձեր աուդիո ձայնարկիչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:

«PDF» ֆայլերը կարելի է բեռնել ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ: Դրանք կարելի է հեշտորեն կարդալ, տպել կամ կրկնօրինակել: Կարող եք նույնիսկ հատվածներ պատճենել տեքստից:

էլեկտրոնային գիրքը՝ տպագրված գրքի թվային ձևաչափ է: Այն կարող եք բեռնել ձեր պլանշետի, «iPad»-ի, համակարգչի կամ սմարթֆոնի մեջ:

«DVD» սկավառակներ: Եթե ինչ-ինչ պատճառով ձեզ չհաջողվի նվագարկել այս սկավառակները ձեր տեսանվագարկիչի վրա, փորձե՛ք բեռնել ֆայլերը ձեր համակարգչի մեջ և նվագարկել համակարգչի միջոցով: Եթե դարձյալ խնդիրներ ունենաք, ապա ցույց տվեք սկավառակները այնպիսի մարդու, ով հասկանում է համակարգիչներից: Թո՛ւյլ տվեք նրան՝ օգնել ձեզ՝ նվագարկել տեսանյութերը և օգտագործել դրանք ձեր ուսումնառության ընթացքում:

Այս դասընթացի բոլոր նյութերը նվեր են ձեզ: Կարող եք ազատորեն բազմացնել այս սկավառակը, պատճենել դրանում առկա նյութերը, ուղարկել դրանք էլ. փոստով՝ ձեր ընկերներին, պատճենել տեքստը և տեղադրել «Word» ֆայլերի մեջ, տրամադրել այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնել դրանք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել դրանցից: Տարածե՛ք այս նյութերն ամենուր, ուր մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

www.MessengerInternational.org
www.CloudLibrary.org

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ՓՐԿՈՒԹՅԱՆ, ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐԸ

Ի՞նչն է պակասում ձեր եկեղեցում, աղոթքներում և անձնական կյանքում:
Ինչի՞ շնորհիվ դուք ավելի մտերիմ փոխհարաբերություն
կունենաք Աստծո հետ:
Ի՞նչը կդարձնի ձեր կյանքն ավելի նպատակաուղղված
և կենտրոնացված:
Ինչի՞ շնորհիվ դուք կդառնաք Աստծո զավակ, ով առաջնորդվում է
Սուրբ Հոգով:

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

Ջոն Բիվերը գրքում բացահայտում է Տիրոջ երկյուղի անհրաժեշտությունը: Իր մեղմորեն հակադրվող ոճով նա քաջալերում է նորովի երկյուղ տածել Աստծո հանդեպ թե՛ առօրյա կյանքում, թե՛ երկրպագելիս: Աստված փափագում է, որ ճանաչես Իրեն: Կա միայն մեկ ճանապարհ, որով կարելի է խոր մտերմություն հաստատել Նրա հետ և լիովին վերապրել այն: Ցանկացած այլ մոտեցում անպայման կդատապարտվի:

Եթե մտերիմ փոխհարաբերություն ունենաք Նրա հետ, դուք կարող եք Աստծուն տալ այն պատիվն ու երկյուղածությունը, որին Նա արժանի է: Եվ այդպիսով կփոխվի ձեր ամբողջ կյանքը:

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ հանրաճանաչ գրքերի հեղինակ և հանրահայտ խոսնակ է: Նա և նրա կինը՝ Լիզան, ով նույնպես հանրաճանաչ հեղինակ է, հիմնադրել են «Ջոն Բիվեր ծառայությունը» 1990 թ.-ին: Այս ծառայությունն աճել է՝ վերածվելով բազմաբնույթ միջազգային գործունեության, ներառյալ՝ շաբաթը մեկ անգամ հեռարձակվող «Մեսինջեր» հեռուստատեսային հաղորդումը, որը դիտում են 214 երկրներում: Ջոն Բիվերը մի շարք գրքերի հեղինակ է, որոնց թվում են՝ «Կոտրել երկչոտությունը», «Սատանայի խայծը» և «Ծածկոցի տակ» գրքերը:

ԳԻՐՔՆ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ» DVD ՀԱՎԱՔԱԾՈՒ

Ներբեռնե՛ք այս և այլ նյութերը հետևյալ կայքէջերից.
www.CloudLibrary.org

teach reach rescue
Messenger International.
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և ենթակա չէ վաճառքի:

Հրատարակված է Դանիայում
Տպագրված է Իսպանիայում